



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.


պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

99
81



891.542-31

Ա-81

Անդրկան

ՀԱՏՈՐ ԵՐԿՐՈՐԴ

800
215-US

ԹԱՐԻՖ 1904

ԱՏՐՈՎԸ. ԹԵՂՄԱԿԱՆ ՑՊԱՐԱՆ


ՀԵՂԻՆԱԿԻ

առինասութիւններն առանձին տպագրեած կամ լոր շնչած այլ
եւ այլ պարբերական հրատարակութիւնների մէջ
վերականգնութիւնը կատարութիւն կատարութիւնը կատարութիւնը

1. «Ալմաս» Մուկույում 1892 թ. Բարխուղարևանցի տպ.
2. «Ալիչե-խանում» Տարազ Հանդիսի 1895 թ. № 31—35.
3. «Անիկուն» Զ. Հայր. լրագրի 1902 թ. № 141—162.
4. «Անիշտական» Դործ լրագրի 1903 թ. № 1.
5. «Բերսայի-Սուանելլ» Նոր-Նախճ. 1899 Ալագեան տպ.
6. «Երախտապահանձ» Աղբիւր Հանդիսի 1897 թ. № 11.
7. «Երախտիք» «» 1899 թ. № 1.
8. «Թուլումբաջիներ» Տարազ » 1893 թ. № 11-12
9. «Թուխչի» «» 1904 թ. № 19-21
10. «Թոփփուզ» » » 48-50
11. «Ժառանձնելու» Նոր-Նախճ. 1898 թ. Ալագեան տպ.
12. «Խառա-Երիս» Տարազ Հանդիսի 1893 թ. № 37-39
13. «Խել-Կարավես» Մուրծ Հանդիսի 1889 թ. № 5-8.
14. «Ծայտեալ-Սուլրան» Աղբիւր » 1898 թ. № 5-6
15. «Կաղ-Նազօ» Տարազ » 1893 թ. № 17-19
16. «Հարգացներ» » » 1897 թ. № 11-13
17. «Դադի» Մշակ լրագրի 1892 թ. № 70-71
18. «Եխոնց» Նոր-Նախճ. 1898 թ. Ալագեան տպար.
19. «Ռուկե-Ռողին» Դադափար Հանդիսի 1894 թ. № 2.
20. «Պարտիք» Զ. Հայր. լրագրի 1903 թ. № 162-176
21. «Զաւանիք» Թաւրիզում 1904 թ.
22. «Սարբազ» Տարազ Հանդիսի 1903 թ. № 2.
23. «Սեւ-Խաղաք» » 1898 թ. № 2-25.
24. «Սօֆբրա» Մուրծ » 1893 թ. № 7-8.
25. «Վիշապի-առազասր» Աղբիւր Հանդ. 1903 թ. № 10.
26. «Փաւա» Տարազ Հանդիսի 1898 թ. № 38.
27. «Վիլեալայի Գաղտնիք» Տարազ Հ. 1899 թ. № 2-25.
28. «Քոռ-Եղիկ» Թիֆլիս 1898 թ. Վարդանանցի տպար.
29. «Քիւլիան-բեկի» Տարազ Հանդիսի 1893 թ. № 14-16.
30. «Օրինական ժառանձ» Թաւրիզ 1903 թ. ||

ՀԱՅԱԿԱՆ-ՌԴ ՅԵՐԵՎԱՆ

31. «Նոււշան» Ողբերգութիւն 1890 թ. Պետերովզ
32. «Սառամ» » 1893 թ. Թիֆլիս
33. «Կունք» պէտմա Աղբիւր 1897 թ. № 1-3



20 APR 2003

Ը Տ Պ Ե Ց



ՎԻՔԻՎԵՍԼԱՅԻ

891.99
4-81

ԿՀ.

ԳԱՂՏՏՆԻՔԸ

Ա Հ Պ

Թ Ա Ւ Ր Ք Ւ Ա Յ Տ Ա Ր Կ Ա Ծ Ն Ե Ր Ի Ց

Ա Ր Տ Ա Տ Գ Ա Ռ Ո Ւ Թ Ե Ր Ե Ր

ԵՐԵՎԱՆԻ ԺՈՂՈՎՐԴՅԱՆ
ՀԱՅՈՐ ԵՐԿՐՈՐԴ

ԹԱԿԻԹԻԶ

Հարպատականի Հայերի Թեմական Արագատիպ
Աղղամենիկ Խղիսաբէթ Մերգաբէգեանցի Յիշատակներ

1904

27752

21.02.2013

ԵՐԿՈՒԻ ԽՈՍՔ

Ա. Պ. Տ. Ա. Տ. Պ. Ի. Ա. Ծ.

«Մուլճ» ամսագրի № 7—8 1893թ.

«Տարազ» հանդիսի № 2—27 1899թ.

ՎԻԿԻՔԵՍԱԼՈՅԻ ԳՈՂԱՑՆԻՔ վէպին, որի գլխաւոր գերակատարները սոֆթաներն են, հարկ համարեցի որպէս յառաջաբան տալ «Սոֆթայութիւնը» վերնագրով իմ պատմական տեսութիւնը, որը տպւեց 1893թ. № 7 - 8 «Մուլճում» :

Որպէսզի ընթերցողները նկատեն, թէ ինչով վերջացաւ սոֆթաների մղած ըէակցիան, վէպի վերջը կցեցի մի պատկեր «ԹՈՓՓՈՒԶ» վերնագրով, վերջին 1877 - 78 ոուս - թըքական պատերազմից :

Ա. Տ. Ա. Տ. Պ. Ի. Ա. Ծ.

18 նոյեմբերի 1903 թ. :
Թաւրիկ

ՅԱՌԱՋԱԲԱՆԻ

ՓՈԽԱՐԵՆ

ՍՊՈԹԹԱ

1879 թուականի տպրիլե միջերքում, մի ամպամած օր, կ. Պոլսում, Պալաթա-Արայում, Օսմանեան Լիցէի (Մէքթէպի-Առլթանիէի) ծառազարդ բակերում, անձրևի և խոնաւութեան տակ գասամիջոցի քառորդ ժամի հանգիստը, երբեմն թրչւելուց յետոյ, զինւորական թմբուկը ածեցին (զանգակ չի թոյլ արւում մի իսլամական Հիմնարկութեան մէջ) և աշակերտներս գասարան-գասարան բաժանելով զերակացուներիս հետ կամաց-կամաց գիմեցինք գասարան։ Եշակերտական, աւելի լաւ է պատճեկան, հանգարաքայլերը գիշերօթիկ ուսանողները կարող են հասկանալ, մանաւանդ երբ ստորին յարկի սանդուխներից բարձրանում էինք միջին յարկը և գասարանների մէջ եղած երկայն տախատկեայ յատակով անցքերից (կորիգոր) անցնում, մեր ոտնաձայնի աղմուկը թնդացնում էր աշաղին շինութիւնը, որտեղ կարիք եղած ժամանակի թիւրքաց կառավարութիւնը կարող էր տասներկու հաղարից աւել զօրք տեղաւորել։ Ո՞վ էր ուշք գարձնում զինաւոր վերակացուի ստորին օգնական յոյն Monsieur «Չանչափինցի» (ներողութիւն՝ իսկական

անունը չեմ յիշում) lentement-ներուն, որի կերպարանքը զգւանք էր պատճառում բոլոր աշակերտներին:

— Արամ, Արամ, ասաց Զերքեղ ընկերակիցս Օքան, արմուկով թես բոթելով, առև մեր Ապդրդ է-ֆէնդին այսօր ինչ մեծ մուշտակ է հագել: Մեզ զերայ ծիծաղում է, թէ շատ էք հագնուում, մրսկան էք, թոյլ էք: Մէկը իւր խօսքերը այսօր իրեն յիշեցնէ...

— Դու չես իմանում, մեծ մարդիկ ուրիշեն խրատ կրաան, բայց իրենք իրենց քարոզածի համառակը կրգործեն: Արագը զնում են խեղճերի համար:

— Սիստ չէ, մի լաւ մտիկ տուր: Յունեարի մէջ աշնան թեթե պայլազով ման եկողը, ապրելին մուշտակ է հագել:

— Արեի հիւանդ է, ասացի, ի՞նչ ես շա սպում: Հիմի նրա դասն է, կերթանք և կը հասկանանք բանը ինչումն է:

Սադրկ էֆէնդին ուսուցական սենակ մտնել չէր սիրում. նա մեծ մարդ էր, մանր-մժեղ արարածների քով գործ չունէր, ու զզակի վազեց մտու դասուրան: Ուսումնարանի անցքերը խո՛վերջ չունին, զնա՛: որ հասնիս: Եհա գաւիթում մի ուրիշ թուրք ուսուցչի հետ կանաչներ հագած և զլիին կանաչ փաթաթած մօլու, կամ ինչպէս այն օրերում սովորաբար առւմ էին — «Առֆթա»:

— Մի սրտ սփաթին մտիկ արա, ասաց կրկին անդամ Օքան, գժոխքի նման սե ու գեղին, մօրուքում տասը մազ չկայ, պեխուրն էլ կարծես միներն են կերել: Խ՞նչ են իմացել մեր խոջաները (թուրքական, արաբական և պարսկական լեզուների ուսուցիչներ),

ամէն օր հետները մի-մի պոչ կապած մոնում են դասարան:

— Առանց էն էլ շատ բան են սովորեցնում աշակերտներին, հիմի էլ զասարաններում դրանց հետամերով մասլահաթ են անելու, կարծես թէ իրենց ջամփների լւացարաններին կից եղած մէղեսէ լինի մեր ուսումնարանը:

— Արգ չկայ, կանոն չկայ... թէ գը-Ալվը (լիցէի առաջին ֆրանսիցի տեսուչը) այստեղ կը լինէր, դրանց կը սովորեցնէր մասլահաթ անելը: Նա մի անգամ գասընթացքում խօսակցութեամբ բռնել էր մի խոջայի, հանել ջէպից առար փալու, տւել ձեռքն և ասել — Գհա զահւախանա, մի ֆինջան զահւա խմիր և մինչեւ իրիկուն ինչքան քէյֆդ ուղէ մասլահաթ արա:

— Ափոս'ս, ես այդ ձեր գը-Ալվին չտեսայ: Իսյց մեր Սաւա փաշան ոչ մի մոլայի սիրտը չի կոտրիլ նրա վրայ բան խօսիլ թէ ոչ դուրս կանեն:

— Էշչ, սա էլ եղաւ տեսուչ... ուտէ, խմէ, հաստանայ... Ուրիշ բան չկայ: Գիտես ի՞նչ կայ:

— Խ՞նչ:

— Սուում են, որ քրիստոնեայ վալիներ են նըշանակելու, որտեղ որ շոտ քրիստոնեաներ են բնակչում և սրան էլ Կրէտէ, կամ Վրշիպելաքի կղզների վալի են նշանակելու:

— Յայտնի բան է, սրա նման մարդը միշտ առաջ կերթայ:

Կյա խօսակցութիւնները անելով մտանք դասարան և թուրքերէն դասագրքերս, տետրակնարս դրիշներս և թանաքամաններս վեր առած դիմեցինք Ապդրդ

էֆենդիի մտած զասարանը։ Պէտք է իմանալ, որ յիշեռմ առարկաներն աւանդում էին ֆրանսիացի ուսուցիչները (մէջները մէկ-երկու հայեր էլ կային), ֆրանսիական լեզով, իսկ թուրքաց և օժանդակ արաբերէն և ֆարասի լեզուները աւանդում էին թուրքիոջաները (մոլլա), և որովհետեւ աշակերտները թուրքերէնի մէջ առաջադէմ և յետագէմ էին լինում, այդ պատճառով երկու տեսակ գասարաններ կային. մինը՝ լեցեական գասընթացքի համար ֆրանսերէն լեզով, միւսը թուրքերէն և օժանդակ լեզուների։ Եց իսկ պատճառով թուրքերէն և օժանդակ լեզուների գասերի ժամանակ պարտաւոր էինք գասարաններս փոխել։ Խուրքերէնի զեցերորդ գասարանում էինք, դեռ երկու տարւայ կուրս էլ ունէինք շարունակելու։ Սազրդ էֆենդին սիպատակ գէմքով, շէկ մազերով և նոսր ու կարծ մօրուքով նիշար մարդ էր. նրա այդ օրւայ մըս այլ երեսը աւելի ևս գամանեցրէլ էր. նրա ժանդադոյն գէմքը։ Սովորականից գուրս էր նորա շարժմունքը, այդ պատճառով բոլոր աշակերտներս էլ լուրջ գէմք առած հանդարառութեամբ սպասում էինք հետեանքին։ Ոչ մի կողմից ձայն ծպտուն չկար, նա էլ զլուխը կոխած Խիկրի գրած ֆրանսիական յեղափոխութեան պատմութեան մի հատօրի մէջ, անթարթ կարգում էր։

Վենք՝ աշակերտներս մանաւանդ այդ գասարանցիներս, շատ չեինք ուշագրութիւն գարձնում մեր ուսուցիչների բարիութեան կամ կատաղութեան վրայ, որովհետեւ մեզ չեին կարող դուրս անել, նախ որ արդէն նրանք մեծ յօյս ունէին մեզ վրայ, որպէս իրենց հասցրած ամենալաւ աշակերտների և զիխաւորը՝ որ

ամեն մէկս մի-մի փաշայի, վէզերի, պալատական մեծ պաշտօնէի տանից էինք, կամ նրանց պաշտպանութեամբ ձրի զետեղւած այդ հիմնարկութեան մէջ։ Ըայց Ատղբարի էֆենդին էլ սովորական ուսուցիչներից չէր. նա, որպէս գերմանական ուսուցիչների մօտ կրթւած անձնաւորութիւն, գիտէր աշակերտներին դրաւել և իրեն յարգել տալ։ Դրա վրայ և աւելացրէք նրա գիրքը, որ ունէր մայրաքաղաքում՝ արտաքին դործերի նախարարութեան գիւանի պետի պաշտօնից նրան հեռացնելը գեռ երեք ամիս չկար։ Նա մեզ թարգմանել էր առջես թուրքերէնից ֆրանսերէն և ֆրանսերէնից թուրքերէն գանազան քաղաքագիտական թղթեր և ամէն բառի բացատրութիւնները պոլիտիկական նըշանակութեամբ պարզաբանում և մեզ պատրաստում էր, որպէս արտաքին դործերի նախարար ութեան ապագայ ծառայողներ կամ գեսպանատների և հիւպատոսարանների աւագ թարգման։

Ենցաւ հինգ րոպէ, էլ աւել, բայց նա խորասուզւած կարգում էր Խիկրի կենդանի նկարագրութեամբ պատկերացրած Ատրատի գործերի պատմութիւնը և ողեսորութեամբ կարդալուց չէր էլ զգում, որ գասարանումն էր։

Աշերջապէս աշակերտական մի կայտառ քրքիջ սթափեցրեց նրան և նա զլուխը շուռ տւեց մեր կողմը, ծալելով կարդացած թերթի երեսը։ Աշակերտական ցուցակի գիրքը առանց բանալու,

— Բոլորդ սցսե՞ղ էք, հարցրեց, որին միաբան գասարանը պատասխանեց։

— Բոլորս :

Համասաց, այսօր մոռացայ, գործ ունէի և
չկարողացայ քիթաբէթ (կանցելարիա) մտնել և ձեզ
համար մի յարմար բան բերել թարգմանելու : Ոչինչ,
այսուեղից այսօր քիչ կը թարգմանենք, ասաց և կրկին
բացեց Ծափէրի պատութիւնը :

—Ես կը թելազրեմ, բացէք տեղաբակներդ և
դրեցէք, յետոյ դուք կը թարգմանէք առանց իմ օգնու-
թեան, վերջը կը համեմատենք :

Ճակոբէնների կեանքից մի փոքր պատկեր թե-
րագրեց, որոնց պատութիւնը մեր կրտկոտ Փրանսիա-
ցի ուսուցիչները շատ մանրամասն մեզ սովորեցրել էին :

—Եֆէնդի, ասաց մի աշակերտ, Ճակոբէն բա-
ռը ենիշէրի որ թարգմանեմ թիւն վաս ունի : Ճակո-
բէն թուրքերէն գուհը դժւար է :

Սադրդ էֆէնդին ժապաց : Եցս ծիծաղից խրա-
խուսւած մի ուրիշ աշակերտ հեգնելով պատասխանեց՝

—Ենիշէրութիւնը կործանւեց, դու կարող ես
Ճակոբէն գրել : Մի ուրիշն էլ թէ

—Ենիշէրութիւնը թէև կուծանւեց, բայց նո-
րա տեղն առաջացաւ Սովորութիւնը : Հետեւապէս՝
ենիշէրութիւնը ջնջւեց աշխարհից : Սադրդ էֆէնդին
թէ կարգում էր և թէ լսում աշակերտաներին : Նրա
լոռութիւնը աւելի սիրտ աւեց և մի աշակերտ ասաց.

—Եֆէնդի, մեզ խոստացաք անցեալ դասին
խօսել Սովորութեան, նրա ծագման և նշանակու-
թեան մասին . չը կարելի խնդրել, որ կատարէք ձեր
խոստումը : Ենիք բոլորս ցանկանում ենք ծանօթա-
նալ այդ կարեռը հարցի հետ :

—Խնդրում ենք, էֆէնդի, եթէ կարելի է, ըս-

կսեցին ամեն կողմից թախանձել :

—Յետոյ, յետոյ կը պատմեմ :

—Արա թալզմանելը թիւն դժւար է... Այսօր
մի հետաքրքիր գործ էլ չունինք, ինդում ենք պատ-
մեցէք :

—Պատմեցէք, պատմեցէք, էֆէնդի, կրկնեցին
բոլոր աշակերտները :

—Ես, ասաց, հանդարտւեցէք, կը պատմեմ:
Խսկյն տիրեց լոռութիւնը և ամենքս անհամ-
բեր սպասում էինք :

—Դուռը կապիր, ասաց նա Օխախն, որ իս-
կոյն փակերուց յետոյ ուսուցչի աչքերին մտիկ տւեց և
փականքի բանալին էլ շուր տւեց : Դրսից անակնկալ
հիւր մեզ այլ ևս չեր կարող խանդարել :

—Ես ձեզ ձանացում եմ, ամենքդ էլ իսլամ էք,
կամ իսլամի հպատակ և տէրութեան այնպիսի ռայա-
ներ տասնեակ սերնդով, որ մենք երբէք կասկած չենք
կարող ունենալ :

—Ոչինչ, կասկած մի ունենաք, էֆէնդի, ա-
սացին ամեն կողմից :

—Ռոպէական լոռութիւնը գարձեալ տիրեց : Սո-
դրդ էֆէնդին չեր իմանում, որտեղից և թիւնպէս սկսէր:
Հազար, ուզուեց, ձեռքը ճակատին տարաւ :

—Հա՞ , թիւն էինք ասում :

—Սովորութեան մասին, էֆէնդի :

—Խօսքը այս չորս պատի մէջ, այսուեղից դուրս
չե դալ : Ես վստահ եմ ձեր ազնիւ խօսքին :

—Եզնիւ խօսք, անհոգ եղէք, էֆէնդի :

—Դիտէք թիւն կայ: Դուք, ամեն մինդ մի-մի

փաշայի և վեզերի որդիք էք, էգուց, էլօր ձեր ձեռքն
և անցնելու երկրի կառավարութիւնը: Դուք պետու-
թեան ներկայացուցիչներն էք և մեզանից աւանդ ըս-
տացած երկիրը և հարստութիւր թողնելու էք ձեր
յաջորդներին: Որպէս տէր երկրի, պէտք է նրա բոլոր
մանրամասնութիւնների հետ ծանօթ լինիք, որ կարո
ղանաք ամէն դէպքում պահպանել այս պետութիւնը
ներքին թէ արտաքին զանազան թշնամիններից: Զեր
գոյութեան ապահովութեան համար պէտք է ձեր ցժը
վազօրօք չափած և կշռած լինիք: Եշօր թէկ ես ու-
սուցիչ, գուք աշակերտներ էք, բայց խնդրում եմ, քիչ
դէնը զցէք այդ ձեր և մենք հաւասար ընկերներ դառ-
նանք ու դուք, ինձ լսելուց յիտոյ, դատահցէք, ինչպէս
որ կամենաք: Փոքր չք, ամենքդ էլ խելահաս էք և
արդէն երեսում ձեր երեսի վրայ պեխերն ու միրուքը...

Ըստ նեղացնում է, ներեցէք ինձ, ասելով
Ուագրդ էֆէնդին մուշտակը հանեց, աթոռի վրայ գր-
ցեց և երկու ռեւոլւէր գրանից հանելով՝ ուսուցչա-
կան ամբիոնի վերայ գրեց, Գրանսիական յեղափոխու-
թեան պատմութեան գլոբի մօտ: Աշերարկուի տակ Ուա-
գրդ էֆէնդին այդ օրը հագել էր սովորական սև սեր-
տուկի փոխարէն պարսկական ծաղկուն շալից խալաթ:
Խալաթի տակ կապած լայն երիզ գոտին քանդելուց
յիտոյ՝ բաց թողեց էնթարու երկայն փէշերը, որոնք
քիչ էր մնում գէտին հասնէին: Օսոցից հանեց մի ծա-
լովի թաղերի գատկ, հագաւ զլուխը և էնթարու լայն
զրպանից մի կանաչ երկայն փաթաթոց դուրս տարով
կապեց զլուխը:

Լուռ ու մունջ գիտում էինք այդ զգեստաւո-

րութեան տեսարանը, որոր թէկ մեր ծիծաղը զրգուում
էր, բայց մեր հետաքրքրութիւնը այն աստիճան էր
բորբոքւում, որ մեր ջղերը զսպած, սպասում էինք ա-
րարագութեան աւարտին: Երբ վերջացրեց զգեստաւո-
րութիւնը՝ բարձրացաւ ամբիոն և լուրջ դէմք առնելով
մտիկ տւեց չորս կողմը, ասաց.

— Ես էլ սոփթա եմ: Երբ սուրբ գործ է կա-
տարելու ձմարիա իշլամականը, պէտք է որ սոփթա
լինի, և պարտականութիւն ձանաչող միւսիւլմանը չկ
խոյս տալ այս կոչումից:

Եշ խօսելուց յիտոյ, նստեց աթոռի վրայ և
սեւուելները քննելով շարունակեց:

— Խալամական վարդապետութիւնն է այն պե-
տութիւնը, որ տիրում է մեր աշխարհին՝ այդ վար-
դապետութիւնից շեղւելը կը նշանակի քանդել, կործա-
նել մեր պետութիւնը: Եյդ վարդապետութիւնով տի-
րել են մեր պատերը այս անհուն տարածութեանը,
այդ վարդապետութիւնով պահպանել են դարերով ի-
րենց իշխանութեան տակ այնքան ազգեր և առանց
այդ վարդապետութեան չենք կարող մեր հարստու-
թեան գոյութիւնը պահպանել:

Թէ ինչի՞ գրա պատասխանը շատ հեշտ է
տալ, գուք շատ լաւ կարող էք ըմբռնել:

Դուք գիտէք, որ մեր սուլթանը խալիֆա է,
Ալլահի պատգամաբեր Մուհամեդի և նրա արժանը-
տիր յաջորդների Եբուբէքրի, Էօմերի, Շամի (Դա-
մասկ) և Բաղդադի խալիֆների յաջորդն է: Նա ոչ
թէ արապեան է այն երկրների, որոնց այսօր զէնքի
զօրութիւնով տիրած կառավարում ենք, այլ նա գը-

լուխ է ամբողջ իսլամականութեան։ Եցդ ծայրագոյն իշխանաւորի կեանքի և կարողութիւնն համար ազօթում է իսլամականութիւնը թէ Հնդկաստանում, թէ Թաթարստանում և կենդրոնական Ասիայում, թէ Աֆրիկէի ամբողջ ծովեղերքում և Սահարա անապատում, թէ Խրիմում, Կազանում, Ապանիայում, զերծապէս աշխարհի ամեն մի կողմը, ուր որ բնակւում են հաւաացեալները։ Մեր մարդարէի թիկունքով կրրած եղջերէի մորթը այսօր փռւած է նրա բազմոցի վրայ։ Նա ոչ թէ եւրոպական դահակալների նման լոկ կալւածատէր է, այլ նա իսլամականութիւնն զեկավարն է և Մուսամէդի աեղակալը։ Խրիբը պատկանում է «Բէյթ-իւլ-Մալին» (իսլամի համայնքին), ամբողջ իսլամականութիւնն, ոչ թէ Հինքեարին։ Խալամականութիւնը զարդարւած թագակիր կամ կալւածատէր իշխող չի կարող ունենալ, նրա պետը, խալիֆայական երկսայրի սուլը ձեռքին պիտի տիրէ ու պաշտպանէ իսլամը և նրա վարդապետութիւնը ընդհանրացնէ ամբողջ աշխարհքում։ Ահա այս է կրօնապետի ամենասրբազն պարտականութիւնը։

Քանի որ օսմանեան տռաջին իշխանները՝ Օսմանը, Օրխանը միայն իշխողներ էին Խիլէճիքի, Խոնիկի, Խուրսայի և ուրիշ գաւառների, նրանք հասարակ կալւածատէր բէգեր էին, համբալամութիւնը նրանց չէր կարող ճանաչել պետ կամ առաջնորդ։ բայց երբ նոքա տիրեցին ուխտատելիները՝ Մէքքէն, Մէգինէն և նրանց ճանապարհները բացին հաւաացեալների առաջ, երբ ձեռք բերին Մուհամեդի մեզ աւանդագած Ամանջակի-Շէրիֆը (նւիրական դրոշակը) Խրիսյի

Շէրիֆը, (Մուհամեդի վերաբկուն), խսկյն խոնարհւեց նրանց առաջ իսլամականութիւնը և ամէն կալւածատէր իսլամ իշխան՝ ստիպւած իւր ժողովրդից, ստիպւած զուրանի վարդապետութիւնից, գոուխը ծըռեց օսմանեան տան ինքնակալների առաջ, ոչ որպէս յաղթողի, այլ որպէս կրօնական պետի։ Առըրանը բացարձակապէս վարդապետում է թէ ով որ կամայ չկհպատակւում խալիֆին, նա բաժանւում է իսլամականութիւնից և այդ հերձւածին աշխարհի երեսից ջնջելը ամեն մի իսլամի պարտականութիւնն է։ Աէս Աէլիմ սուլթանը, շէրիաթի ոգուն համաձայն, աւեց իւր կալւածները համբալամական համայնքին, որի փոխարէնն ստացաւ խալիֆի, (իմամի-յաջորդի) գերազոյն գաւազանը։ Ահա չորս հարիւր տարի է, որ իսլամի հայացքը ուղղւած է Խոսֆորի կողմը, որտեղից նրանց պատգամ է տալիս Խալիֆը։

Եցսօր Մարոկում, Առւգանում, Հնդկաստանում, Բուխարայում, Կոկանգում, Աֆղանստանում, Բէլուջիստանում և ուրիշ երկրներում իսլամ իշխողներ կան, որոնք ունին ահազին կալւածներ, բայց եթէ չնն միացած մեր երկրի հետ, դորա պատճառը մեր և նրանց սահմանների մէջ եղած այլագաւան պետութիւններ են։ միացրու սահմանները և նրանք ժողովրդով, զինւորական ուժով, հողով և հարստութիւնով իսկյն կը միանան խալիֆի գրօշի տակ։ Խալամական ժողովրդից, որտեղ որ բնակւի չի հաշտւում ոչ մի իշխանի, բէգի, շէյխի հետ եթէ վերջինս չի խոնարհւում խալիֆի առաջ և չի ստանում նրանից իւր գիրքի հաստատութիւր։

Խաղիֆը մինչև այդ խաներին ու էմիրներին իրեն վոխանորդողի (նախիք) բարաթ չը տայ, ժողովուր-դը նրան չի հպատակել և ուրբաթ օրւայ խալիֆին յատուկ խուզբէի (Խալիֆի համար ազօթք) վերջաբա-նում չի յիշատակել այդ իշխանատրդիների անունը: Ռողոր մզկիթները որոնք գտնուում են մեր երկրից գուրս, ոչ ծոմապահութեան, ոչ հաւաքական ազօթք-ների վայր կարող է դառնալ իսլամ համայնքի համար, մինչև դրանց համար յատուկ լիազօրներ չը նշանակ-ին և սահմանեալ հրովարտակներ չը տրուին-չը դրւին խալիֆի կողմից:

ԱՀա իսալիքայութեան կոչումը, այս է իսալիքայութեան գեհութիւնը:

Ուրեմն լինել խալիք, լինել խալամութեան կրօնապետ, նստել եղջերւի մորթի վրայ, ունենալ Աննջազը-
բը-Ծէրիփը, Հարիւր քառասուն միլիոն խալամական
ժողովրդի անսահման հպատակութիւնն ու սէրը վայելիկ և խալամական վարդապետութեան՝ զուրանի և Ծէրիփաթի՝ Հակառակ կառավարել երկիրը—աներեւակացելի
հակասութիւն է. այդպիսի մի ընթացք չեր կարող նա-
խատեաւած չլինել երկնային վարդապետութեան մէջ:
Ճէնց այդ պատճառով մեր զուրանը, խալիքի իրա-
ւունքենրը որոշելուց յիշոյ, նրա առաջ կանգնեցնուու
է համարառու մի դասակարգ, մի ժողով, որը պիտի
զծէ ու որոշէ խալիքի ընթացքը: Եյդ դասակարգը,
այդ ժողովականները մեր կրօնի վարդապետութեան
քարոզիչներն են և նոյն վարդապետութրան ամենա-
ջերմ զինւորները մինչեւ աշխարհի վերջը: Եհա այդ
դասն է, որ մեր երկրում կոչում է Առջիթայ, այդ

դասակարգին է պատկանում ամեն մի իսլամ, որն ու-
սումնասիրած է զուրանի վարդապետութիւնը։ Ենք
այդ սովորակաների մի անհատն էլ ես եմ...»

Վի հարիւր տարի չկայ, որ եւրոպացիք, իւրենց իշխողների մօտ ժողովրդի իրաւունքները պաշտպանելու, հարկեր որոշելու, օրէնքներ գնելու համար մի-մի ժողով հիմնեցին, որ կը ըստում է պարլամենտ բայց նոքա չեն իմանում, թէ իսլամականութեան մէջ զուրանը սրանից հաղար երեք հարիւր տարի առաջ որոշել է խալիֆի, նորա իրաւունքների և զործունէութեան սահմանները, ամեն մի իսլամ անհատի և իսլամականութեան պաշտպանութեան և մշտնջենաւոր յարաւեւութեան համար հոգով ու սրտով զինւորւածների պարտականութիւնները: Մեր սարայը (պալատ) աշխարհըն է և նրա տուաստաղը երկինքը, որտեղ որ հաւաքւենք, այնտեղ էլ կարող ենք կացացնել մեր վը-ձիոր: Մեր գաշնագրութիւնը երկինք է, մեզ շնորհել առաքեալի ձեռքով, խալիֆը նրա մի տողն անգամ փոխելու իրաւունք չունի և մեզանում ամեն մի իսլա-մական, որ ծանօթ է զուրանի վարդապետութեան, բնորեալ է և նրա ձայնը սերովբեներն անգամ չեն կա-լող խեղդել... Առաջմանազլութիւն, այսինքն ժողովրդի և նրա իշխողների մէջ եղած գաշնագրութիւն, ունեցել է խալամը իւր սկզբնական քարոզութեան ժամանակ և խալամականութեան աշխարհի ամեն կողմը այնքան ա-րագ տարածւելու մի պատճառն էլ այդ իրաւունքների արդար բաշխումն է:

— Աւրոպական երեսփոխանական ժողովները օ-
րբնքներ են դնում, չարկեր են որոշում, բայց մեր ժո-
ղովագործությունը 2

դովլ այդ մասին մտածելու կարիք չունի, մեր Շէրիաթը (կրօնական օրէնք) անփոփոխելի է, պետական և հասարակական հարկերն այնուեղ որոշւած են, ոչ կարելի է աւելացնել և ոչ պակասացնել: Առջթայական իշխանութեան, այսինքն համ-իսլամական ժողովի պարտականութիւնն է հսկել թէ արդեօք մեր աշխարհում շէրիաթը խո չե՞ն ունասակ տալիս: Այսքանն էլ բաւական է: Առվթանի վէզիրների և նոյն իսկ Շէրիալիալամի կարգադրութեան վրայ բաւական է նրանց «օլմազ» (չէ կարելի) խօսքը, որ հռոմէական տրիբունէրի նետօ ի նման ոչնչացնում և անիրագործելի է թողնում խալիֆի կրօնքի հակառակ տւած մեծ-մեծ «իրազէները» (հրովարտակ) և չկայ աշխարհի վրայ մի գօրութիւն, որ կարողանայ գիմադրել այդ սօվթայական «օլմազին»:

Շէրիաթի համաձայն Խալիֆն է ընտրում, Հրաժար եցնում Շէրի-Խւլ-Խալամին (կրօնապետ իսլամական) և սաղրազամին (նախարարապետ): Այդ բացարձակ իրաւունքը չի կարելի ուրիշն տալ: Բայց ամէն գործի ծայրագցն վճիռը տալիս է անկախ Շէրի-Խւլ-Խալամը, որի մի տառն անգամ փոխելու իրաւունք չունի Առվթանը և Ապրազամը: Առվթանը ոչ կարող է վճռել և ոչ գործադրել: Բայց կարող են այդ երեքը միաձայն և միախորհուրդ վճռել և գործադրել հակառակ Շէրիաթի: Հենց այդ պատճառով դրանց վճիռները քննելու, ընդունելու կամ ժխտելու իրաւունքը Շէրիաթի հմուտ իւլէմաներին (Պուրանի ուսումնասիրողներին) է յանձնւած, վերջիներս ֆէթաներով (Պուրանի հատւածներով կամ ձադիսներով

բացատրութիւններով) նրանց գեղծմունքը յայտնում են սովորական կամարական վերջինները ժողովելով քննում են գործը և կայացնում վերջնական վճիռը: Իսկ այս վերջնական սովորական վճռի գործադրութեան համար պարտաւոր է և հետեւում է, զլուխը զոհ գնելով, ամեն մի իսլամական՝ երեխայից մինչև զառամեալ ծերը, նոյն իսկ ամենաթշլ կինը: Եհա այս է սովորական սարսափելի ցժը:

Խնչպէս ասացի, իսլամը թագակիր չունի, իսլամ անհատը տէր չի կարող ունենալ, իսլամը հպատակ չի կարող լինել և այս քանը ամեն մի իսլամ հպատացի գիտէ: Նա Առվթանին հնազանեցում է, որպէս իր առաջնորդին, իսկ երբ Խալիֆը իւր իրաւունքի սահմանից անցնում է, նա կորցնում է իւր նշանակութիւնը իսլամականութեան աջքում: Պուրանը մարդկանց ծննդի մէջ գասակարգ չի ճանաչում, իսլամի համար մի և նոյն է թէ Խալիֆը սերւած լինի Արքիշեան ցեղից, Խւլեան սերնդից, Ելիի ժառանգներից, Օսմանեան տանից, թէ քիւրդ ձասցի, կամ շէյխ Իբրիշ որդիներից: Նա պահնջում է միայն, որ այդ առաջնորդը Նէրիաթի սահմանած օրինաւորութիւնը ունենայ: Իսկ այդ օրինաւորութիւնը, յայտնի բան է՝ երկու մարդ չեն կարող ունենալ: Խալիֆը, ինչպէս վերև ասացի, պէտք է տէր լինի ուխտատեղիներին, Վէքքէին և Վէղինէին, նրան ճանապարհները բաց պիտի պահպանէ իսլամականութեան առաջ, Առվահմէթի աւանդները՝ Անչազը-Շէրիֆը և Խրիսյի Շէրիֆը պիտի ունենայ մօար, պիտի պահպանէ Շէրիաթը և պիտի սուրբ ձեռքին ապահով աշխարհի շուրջը այդ

փարզապետութիւնը։ Եթէ այս օրինական իրաւունքներից մինը պակասի, նու խալիֆ չի կարող ճանաչել և խլամականութիւնը այդ ժամանակ անհամբեր պիտի սպասէ Մէհմին, որ նա գայ և հաստատէ այդ բոլորը։

Ամէն մի խլամ խալիֆի փառքին հաւասար բաժանորդակից է, ամեն բարիք վայելում են բոլոր խլամները հաւասարապէս և խալիֆի հպատակները հպատակ են խլամականութեան, կամ ամէն մի խլամ անհատի ծառայելու պարտական են, որպէս իրենց կեանքի վրայ իշխողի։ Եյս սկզբունքներով կաթի հետ սնւել է ամեն մի խլամական, այս փարզապետութիւնով դասարակւել է մէգրէսէներում (գպրոց խլամական) և ջամիներում (ազօթարան) և նախորդների իրեն աւանդած այս իրաւունքներից և պարտականութիւններից մազաչափ անգամ չի շեղւիլ, քանի որ նրա երակներում եռալով վագում է արիւնը……

—Ուրեմն Առջթայութիւնը խլամականութեան նստած մի ինքնակոչ նոր դասակարդ չէ մի հրոսակային գունդ չէ այլ նա խլամականութեան հետ հիմնւած և հաստատւած մի ցյժ է, որ միշտ պահպանել է Շէրիաթի որոշած ծրագրով խլամական հասարակութեան իրաւունքը ներքին և արտաքին թշնամիների գէմ։ Առջթայութեան պահպանութեան համար ժողովրդից ոչ տուրք է պահանջւում, ոչ էլ ողորմութիւն, նրանք առանց ծանրանալու խլամականութեան ուսին, ապրում են հաւատացեալների տիրած, գրաւած և կատած վագրֆների (կայքերի) երած, գրաւած և կատած վագրֆների (կայքերի) երած, գրաւած և կատած վագրֆներով, որոնց գումարը միլիոններ է կազմում և

այդ կայքերի կապալը ստացւում է համարեա ամեն տեղ ոչ խլամ ժողովրդից։ Եյս գանակարգը զուրանը ծոցում, սուրը ձեռքին պաշտպանել է երկիրը. ժողովրդը, պետութիւնը, ընդարձակելով նրա տիրապետութեան սահմանները և եկամտի ազբւրները։ Եւ ո՞ր հշմարիտ խլամականը խցյա կը տայ այդ խմբեց……

Եյս ամէնից յետոյ հասկանալի է, որ Առջթայութիւնը նցն ինքն խլամականութիւնն է, իսկ խլամականութիւնը կազմւած է իրարից անբաժան երեք հաւասար տարերքից՝ ջերմեռանդ ժողովրդից, շէրիաթի վարդապետութեան ուսուցիչ, հսկիչ և տարածող իւլամաներից և խալիֆից։

Մի ժամանակ, խալիֆայութիւնը օսմանեան պետութեան ձեռքը անցնելու միջոցներին, զուրանի ուսուցիչները Շաղդագի, Շամի, Վահշիբէի և Կորդովայի խալիֆների, ամիրների և ուրիշ իշխողների զուրանի փարզապետութեան գէմ բռնած ընթացքից զրգւած, մտածեցին անձամբ մանել պիտական զինւորական զօրութեան մեջ, իշխել այնտեղ և սրի զօրութեամբ աներկիւղ ու զզել խալիֆներին շէրիաթի ընթացքով։ Եգիպտոսի մէմուկները մի այնպիսի դասակարգից առաջացած զօրութիւն էին, որոնք ժամանակին սարսափ էին սփռել աշխարհին. այդ դասակարգից էին նցնապէս օսմանեան ենիշէրները։ Հաւաքում էին Անասոլիայից, Հայաստանից և Սովորեստանից զանազան առողջակարմ պատանիներ, սովորցնում էին նրանց սուր շարժել յարձակւել բերդերի պարիսպների վրայ վառել, լափել թշնամու բնակութիւնը և յափշտակել հարստութիւնը, գերել կինը, որդիքը, աղջիկները, և

յաղթւածի աւարով ու աշխատութիւնով հանգիստ
ու երջանիկ ապրել:

Խալիք Եօմէրի իսլամին համար սահմանած կարգադրութեաններից ամենանշանաւոր կեան այն է, որ իսլամի զինւորը Ապարաացու նման ոչ երկրագործութեամբ և ոչ էլ արհեստներով պիտի պարապի: Ըստ-իւլ Մալը ռոճիկ է տալու զօրականին, որով նա պիտի ապրի, մի միայն զինավարժութեամբ և պատերազմներով պիտի զբաղի, որ խոնարհեցնէ իսլամի թրշնամի աշխարհը: Եւ այդ զօրութիւններին սուր շարժելու հետ սովորեցնում էին զուրանի վարդապետութիւնը, որոնք սոսկ կրօնական զինւորներ, կամ շերիաթի աշակերտներ էին: Եյս աշակերտներն էին այն ենիչերիները, որոնք երեք չորս տասնեակ տարիների ընթացքում տիրեցի ամբողջ Ծալիանեան թերակղզին, Ծուլզարիան Ոերբեան, Վարագազը (Չերնովորեան), Ռոսնիան, Ելբանիան, Որումինիան, Մաջարիստանը, Լեհաստանը, Վնիետիկը և այն: Եյտ ենիչերիների առաջ խոնարհեց հազարաւոր տարի աշխարհին տիրած Հռոմայեցիների արեելեան Ծիւզանդական կայսրութեւնը, այդ ենիչերիները մտան Եւստրիո, ստիպեցին Գերմանիայի կայսեր ամեն տարի հարկ տալ խորամականութեան խարիֆներին և վերջապէս այդ ենիչերիները տիրեցին Պարսկաստանը, Երաբիան, Եգիպտոսը, Միջերկրականի կղզիները և նրանց անունից սարսափահար մնաց Եւրոպան ամբողջ երեք չորս դար:

Բայց Ենիշերիները այն ասաիձան զօրացան, որ
նրանցից ոչ միայն օտար տղթերն էին սարսափում այլ
վերջին ժամանակները սկսեցին նրանք սարսափ գցել

նոյն իսկ իսլամականութեան մէջ : Երբ իսլամական բարձր հոգեւորական դասի վճիռների համաձայն ենի- չէրները մի երկու պարտազանց սուլթաններին գահից վեր առնեն, դրանից յետոյ էլ սկսեցին աներկիւղ իր- րոխտաւ նոյն իսկ այդ բարձր հոգեւորականութեան դէմ : Սուլթանները ենիչերի համար, աւելացրին այլագաւան ենիչերիների թիւը մեր հոգեւորական դասի կամքի հակառակ, վեր- ջիններն էլ սուլթաններին ընկծելու համար, շատ ան- գամ ենիչերին երի հետ միացած գոհից զլորեցին Շիւ- քեարներին: Վյդ կուսակցական հակառակութեան՝ դոչ գնացին իրար ետևից հինգ-տասը սուլթաններ, անթիւ իւլէմաններ, (կրօնական ուսումնական), վէզիրներ, Շէյխ- իւլ-իսլամներ և ենիչերի համար անունը սկսեց իսլամա- կանութեան ատելի գառնալը: Վերջապէս այն աստի- ճան շատացան այլագաւաններն ու անհաւատներն, որ ենիչերիների օջախներում իսկական իսլամի գոյութիւնն անգամ տարակուսելի եղաւ: Նրանք ոչ միայն սուլթան- ներին իրենց կամքի և քմքի համաձայն էին վարում, այլ ստիպում էին Շէյխիւլ-իսլամին, որ իրենց ցան- կութեան համաձայն վճիռներ կայացնի: Աշ համբերել անկարելի էր: Սուլթանը միացաւ սովորական կու- սակցութեան հետ, Շէյխ իւլ-իսլամը տւեց Ենիչերի- ներին կոտորելու վճիռը և այդպիսով ազատւեց երկի- րը այդ անսանձ և անկրօն օջախների ձիրանների լծից: Վյդ ժամանակ վճիռ կայացրին երբէք այլ ևս չհա- տառել զինւորական սովորական ձեռվ առանձին մար- մաից կազմւած, հսկի քաղաքական և զինւորական ոյ-

Ժերի վրայ, որպէս իսլամականութեան լիազօր երեսփոխանները կամ պատգամաւորները երկրի մէջ։ Եւ ենիշքրական աղաթի (շէֆի) պալատը յատկացւեց սովորութեան առաջնորդողներին և այն օրից մինչեւ այժմ կոչում է Շէֆս-իւլ-իսլամի դուռ։ Այդպէս էլ եղաւ։ Վշտ վերանորոգութիւնից յետք աչա լրացաւ յիսուն տարին, օրից օր աճեց և ձնխացաւ սովորութիւնը, ձեռքի մէջ անփոփելով երկրի կառավարութեան դեկր։ Վշտօր այդ սովորութիւնից գտնում են վեզիլների, պալատականների, կուսականների շարքում, երկրի ամեն դասակարգի մէջ, ապատ սփուած են պետութեան ամեն կողմը և կատարում իրենց սրբազնն պարտականութիւնները, վայելելով անթիւ բարիք։

— Բայց ի՞նչ են կամենում նրանք, պատճուն ի՞նչ է, որ այս վերջին երեք չորս տասի ընթացքում այնքան ստուարացաւ զրանց թիւը մայրաքաղաքում, ի՞նչ նիւթի մասին են վիճում զրանք այս վերջին ժամանակներում իրանց ժողովներում, հարցրեց ուսանողներից մէկը, համարձակ ոտքի կանգնելով։

— Վշտ մասին, էլ այսօր ուշ է, ասաց Սակրդ-էֆէնդին ժամացցցին մոիկ տալով, հինգ տասը րոպէից յետք թմբուկը կածեն և կը պարտաւորւենք հեռանալու Արիշ անգամ կը բացարկմ ձեզ։ Միայն այսպանը պէտք է իմանաք, որ մեր պետութեան մէջ գրանց ժողովները միշտ կայանում են, եթէ Ա. Պոլսում արգելքի պատահեն, Ծուրասայում չը հաւաքւեն. եթէ այնտեղ էլ արգելք լինի, Անդրիանապոլսում, Զմիւռնայում, Վշտիում, Գոնիայում, Խնդրանում, որտեղ որ կամենան։ Վշտ էլ պիտի դիտենաք, որ մեր պետութեան

բոլոր անկիւններումն էլ անպակաս են նրանց ժողովները և միշտ իրար հետ բերանացի յարաբերութեան մէջ են։ Ինչ վճիռ որ կայացնեն, իսկըն ամէն երկիր ականջից ակ ոնջ իրանց մէջ կը պատմեն և երբեք չի պատահել որ այդ վճիռը չերագործւի։

— Ենիշարութեան անկումից յետք դրանք նըշանաւոր գործեր ունեցել են, էֆէնդի, հարցրեց Զիան աչքերը յառելով սովորութիւնը աչքերին։

— Ինչպէս չէ. ինչպէս չէ։ Սուլթան Վաչմանդին նրանք ամենախիստ կերպով առաջնին անգամ դիմադրեցին, երբ վերանորոգող Սուլթանը իւր խորհրդատուների հետ մտածում էր մի կերպ թուլացնել սովորութիւնը և բոլորովին իւր ձեռքն անցկացնել վարչութեան դեկր։ Նա մտածէլ էր նախ սովորայութեան (իսլամ հոգեորականի) եկամուար՝ բոլոր վագրֆը (ջամիների անշարժ կայքերը, օրոնց եկամուտով կառավարուում և իսլամ հոգեորականութիւնը) տիրել և ապա քաղցածութեան մատնելով, թուլացնել և սորկացնել հոգեորական գասը։ Բայց սովորայութեան, ժամանակին նկատելով գործի գրութիւնը, նամանաւանդ որ չէին ել սիրում նրա եւրոպական արբապիտներին նմանելու սովորութիւնները, մի զիշեր երեք բարձ դրին թշւառ միապետի բերնին ու խեղգեցին, Խոսկիւգարի սորի դիսին, Զամլիջայի սարայում Սուլթան Վէջիդին էլ շատ աշխատեց սովորայական ցիժին դիմագրել բայց միշտ խոնարհւեց և երբեք նպատակին չը հասաւ։ Վշտ իսկ պատճառով հարթեցողութեամբ անցկացրեց կեանքը, Վուլանի վարդապետութեան հակառակ՝ ոգելից խմիչքները ընդունելով։

— Անչ հակառակութիւն կար, էֆէնդի:

— Սուլթան Մէջիղը ու զում էր, եւրոպական պետութիւնների պահանջման համաձայն, կրօնի ազատութիւն և հաւասարութիւն տալ մեր երկրներում: Այդպիսի մի ստորութեան իսլամականութիւնը չեր կարող համբերել: Բացի այդ, միշտ սահպում և թախանձում էր բարձր հոգեորականութեան, որ վճիռ տայ իւր մահից յետոյ որդուն՝ Մուրատ-էֆէնդիին գահակալելու, հակառակ իսլամական ժառանգական օրէնքների: Ովկ կը յանդգնէր այդպիսի հակաիսլամական պահանջներն ընդունել: Երբ զերջին անգամ նա եւրոպական դեսպաններին պատասխանել էր, որ համաձայնում է կրօնափոխ իսլամներին ներողամիտ աչքով նայել, եւ համբերելն անհնարին դառնալով: Փրարսիայից բերել տաած շամպանիա գինով թունաւորեցին նրան սօֆթաները: Թողնենք այս և վերջացնենք մեր խօսքը:

— Այսպէս, ուրիշն մեր պետութիւնը՝ իսլամականութիւնն է, իսլամական տմեն մի անհատ այս երկրում թէ ժողովուրդ է, թէ զինուոր է և թէ իշխան: Հաւասար ժողովրդական անդամներ են իսլամականութեան ժակները սօֆթաների, իւլէֆիների և Սուլթանի հետ, հաւասար զինուոր են բոլորը միասին իսլամականութիւնը պաշտպանելու համար, հաւասար վայելում են ամենքը պետական բարիքներին ու սահմանադրութիւնը և ամեն վարձկան-պաշտօնակալ օտարներին-եւրոպացիներին հաճոյանալու համար, իւր սեփական սնդուկները լցնելու տենչով, հոգի իրուին ձգտում է կործանել իսլամի գերիշխանութիւր, որն օրէնքներ էր ծրագրում ամբողջ աշխարհին: Ուր ձեզ պատմեմ, ո՞ր մէկը ձեզ յիշեցնեմ, դուք արդէն խելաչա էք և նկատում էք ամեն բան: Խալիֆ Սրուբէբը պետական ել ու մուտքի ամեն մի փարայի հաշիւը ներկայացնում էր հասարակութեան պատգամաւորներին, օրական ոռոգիկ սահմանալով հինգ փարա: Ում յայտնի չէ այդ պատկառելի ծերունիի նըշանաբանը: «Քանի որ ոյժս պատէ, պիտի ձգտեմ տարածել մարգարէի փարգապետութիւնը աշխարհիս շուրջը: Ընկերակիցներն, եթէ դուք պարտազանց գտնւիք, ես անողոք դատաւոր եմ լինելու ձեզ համար, իսկ երբ նկատէք իմ պարտազանցութիւնը, ազատում եմ ձեզ

շանակէ ջնջել իսլամ: կանութեան իրաւունքները: Ոչ ոք չի կարող զիջանել ու հաբերեր, տեսնելով մի այնպիսի խայտառակ ընթացք և ամեն մի իսլամ ունի այնքան զգացում և քաջութիւն իւր սրաւում, որ կարողանայ իւր նախնիքներից աւանդած իրաւունքները պաշտպաներ: Հասկացող իսլամը միշտ Շէրիաթի զինուոր է—սովոր:

Խոկ պարտաճանաչ Սովորան երբէք չի կարող զիջանել, որ պետութիւնը այլանգակեն եւրոպական նորածներութիւններով, իսլամը շեղեն շերիաթի շաւղից, հաւատացեալները ծանրաբեռնեն սոսկալի հարկերով և «Բէյթ-իւլ-Մալլ» կեղեքին աւազակաբար: Նայեցէք ձեր շուրջը և կը տեսնէք, թէ ինչպէս ամէն տեղ ոտնատակ է տրւած իսլամի սահմանադրութիւնը և ամէն վարձկան-պաշտօնակալ օտարներին-եւրոպացիներին հաճոյանալու համար, իւր սեփական սնդուկները լցնելու տենչով, հոգի իրուին ձգտում է կործանել իսլամի գերիշխանութիւր, որն օրէնքներ էր ծրագրում ամբողջ աշխարհին: Ուր ձեզ պատմեմ, ո՞ր մէկը ձեզ յիշեցնեմ, դուք արդէն խելաչա էք և նկատում էք ամեն բան: Խալիֆ Սրուբէբը պետական ել ու մուտքի ամեն մի փարայի հաշիւը ներկայացնում էր հասարակութեան պատգամաւորներին, օրական ոռոգիկ սահմանալով հինգ փարա: Ում յայտնի չէ այդ պատկառելի ծերունիի նըշանաբանը: Ընկերակիցներն, եթէ դուք պարտազանց գտնւիք, ես անողոք դատաւոր եմ լինելու ձեզ համար, իսկ երբ նկատէք իմ պարտազանցութիւնը, ազատում եմ ձեզ

ինձ հապատակւելու համար կատարած երգումից, կարող էք իմ գեմ դարձնել ձեր սուրբը։ Խալամի աշաւոր դանձին թէեւ ափրում էր Խօմէր խալիֆը, բայց իւր որդու համար ամբողջ մի-երկու շաբաթ մի վերաբերու չը կարողացաւ գներ, քանի որ իւր ոռջիկը ծախսել էր և օրինազանցաբար չէր կարող ձեռք մեկնել հասարակական դրամին, որի վրայ հսկում էր ամբողջ համայնքը։ Խոկ այսօր մեր պաշտօնակալները ինչպէս են վարւում հասարակական գյորի հետ, ինչպէս աւարի են մատնում երկրի հարստութիւնը, եկամուար և պետութեան դանձարանը։ Խաւական չէ որ տասնըհինգ տարւույ ընթացքում երեք հարիւր միլիոն ոսկի փոխարութիւն են արել եւրոպայից, որի տասն և հինգ միլիոն տոկոսիքի տակ ծանրաբեռնուած է պետութիւնը, զրաւ է զրւած երկիրը, զերի է վաճառւած ազգաբնակութիւնը, այժմ էլ վեւքեալան (Նախարարները) ծրագիր է կազմում իոլամի զաւակների արիւնով ներկւած և որով նւաճւած կալւածները ծախսել . . . :

Ի՞րու . . . բռ . . . կեսօրւոյ թմբուկը ածեցին և Առգըգ էֆէգին սկսեց արագ արտագ կրկին նախկին ձեւը տալ իւր զգեստներին։ Պէտք է յայտնեմ ձեզ ընթերցող, որ ամեն բան տարօրինակ էր մեր լիցէյում թուրքերէնի գասերը երկու ժամ էին տեսում։ Դ-ը Սալվ վր ֆայնսիացին սկզբում մի ժամ էր որոշել, բայց երբ նկատել էր, որ խօջաների մինչեւ գասարան մանելը, կալոշները հանելը, նստելը, զրիներ վեր տանելը, մինչեւ աշակերտների թանաքն ու եղեգնէ զրիչը պատրաստելը, միշտ քառարդ ժամից աւելի ժամանակ էր տեղ այդ պատճառով մի քառորդ աւելացել էր այդ դասե-

րին, որպէսզի հնարաւոր յինի թուրքերէն լեզուն իւր օժանդակ արաբական և պարսկական լեզուներով մի կերպ սովորեցնել աշակերտներին։ Բայց երբ կարող էին մէգրէսէների անկիւններում ծալապատեկ նստելով, իրանց ուսուցիչների հազար ու մի ծառայութիւնները կատարած և գաւազանի հարւածներով Պաւրանը բերան սովորած խօջաներու, զաս աւանդել հայհայանք և ծեծ վերջացրած մի գասարանում։ Դ-ը Սալվ վեց յետց դիրեկտորները յուսալով, որ դասի ժամանակամիջոցը երկարացներով կարելի է օգնել դասաւանդութեան, աստիճանաբար երկու ժամի էին հասցրել ու միշտ յուսակառը մնացել Երբէք չէին մատծում ազէտ և նախապաշարեալ խօջաներին փոխել որոնց ոչ թէ զասարան, այլ ուսումնաբանի պարտիզի շէմքից անդամներս թողնելը ամենամեծ յանցանք պէտք է լինէլ։

ՀԵՂԻՆԱԿԻ Ա.ՈՒ.ՆԶԻՆ ՀՐԱՏԱՐԱԿԱԾ

Վ Ի Պ Ա Կ Ա Ն

ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ԱԼՄԱԾ	թրքահայերի	կեանքից	գինն	է 2 լ.	10 դռ.
ԽԵՒ - ԿԵՐԵՊԵՏ	"	"	"	1 լ.	5 "
ՔՈՒ - ԵՎԻՒ	"	"	"	30 կ.	30 շՆ.
ՅՈՒՅՑ	"	"	"	30 կ.	30 շՆ.
ԺՐՈՅՆԳԴՆԵՐ	"	"	"	30 կ.	30 շՆ.
ԲԵՐՍԵՐ ԸԹԵՔԵԼ	"	"	"	25 կ.	25 "
ԹՈՒԼՈՒՄԲԱԶԻՆԵՐ	"	"	"	10 կ.	10 "
ՊԵՏԱԿԵՐՆԵՐ թրքահայերի	կեանքից			1 լ.	5 դռ.
ՎԻՒՋԵՐԵՐԸ ԴԵՂՏՆԻՔ	"	"	"	1 լ.	5 "

ՅՈՒՅՑՆ ՈՂՔԵՐԳՈւԺԻՒՆ	"	"	"	1 լ.	5 դռ.
ՍԵՐՐԵՓ	"	"	"	30 կ.	30 շՆ.
ԽԵԼԻՓՈՒԹ ՊԱՏՄԱԿԱՆ ՄԵՍՈՒԺԻՒՆ :				30 կ.	30 "

Դիմել Թիլիսի Կենտրոնական և Գուտտէմբէրդ Գրա-
վաճառանոցները և Կովկասի քաղաքների հայ գրա-
վաճառներին :

Գրավաճառները կարող են դիմել նոյնպէս.

TAURIS (Perse) ATRPET

որոնց կը լինի սովորական 20 ° զիջումն :

ՎԻԽՔԵԸԼԸՅԻ ԳԱՂՏՆԻՔԸ

ԲԱՑԻԱԾ Է
ԲԱԺԱՆՈՐԴԱԿՐՈՒԹԻՒՆ
ԱՏՐՊԵՏԻ
ԵՐԿԵՐԻ ԺՈՂՈՎԸՆԹԻՒ
ԱՌԱՋԻՆ ՎԵՅ ՀԱՏՈՒԹԻ ՀԱՄԱՐ

ՊԱՏԿԵՐՆԵՐ Տասը պատկեր թուրքահայերի կեանքից
գինն է 1 ր կամ 5 դր
ՎԻՒՔ. ԳԱՂՏՆԻՔ Վեղ թուրքայի արկածներից
գինն է 1 ր ո 5 դր
ԱԼՄԱՍ Աւազի առաջին հասոր Բարձր Հայոց կեանքից
գինն է 1 ր ո 5 դր
" Երկրորդ հասոր Բարձր Հայոց կեանքից
գինն է 1 ր ո 5 դր
ԶԱՒԱՀԻԹ Վերջին ռուս թրբու պատկեր, 1877—78 արկածներից
գինն է 1 ր ո 5 դր
ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆԵՐԻ Հաւաքածոյ թուրքահայերի
կեանքից գինն 1 ր ո 5 դր

Գլքերը լոյս կը տեսնեն անպատճառ 1904
թւականի ընթացքում:

Բաժանորդագինն է վեց հատորը միասին
 և բուրդի պոստի ծախսով:
 Բաժանորդագրութիւնը շարուրակում է մինչև Մայիս
սոյն 1904 թ.

Թիմել՝ TAUERIS Perse ATRPET

ՎԻՒՔԵԱԼԱՅԻ
ԳԱՂՏՆԻՔ
Ա
Ա. Մ Բ Ո Խ

Ապշարար Ռոսֆորի ամբողջ Եսիական ափը
 Բէյկողից մինչև Գաալ-ղիւղ գտնւած բոլոր բլուր-
 ներն ու բարձրութիւնները ծփում էին վարդ-մանի-
 շակագոյն փառահեղ արշալոյսի ալէծածան շղգերի
 տակ: Ուութ կապոյտ երկնականարից հետղշետէ հեռա-
 նում էին սոկիափայլ ասաղերը և լուսաբերն Խւնկիւդա-
 րի Չամիկջա լեռան գագաթից ուզում էր աւետել պա-
 ռաւ Շիզանդիոնին բարի լոյս: Վրեելքում հորիզո-
 նին կրակ էր առել կարմիր, մանիշակի, նարինջի, գե-
 ղին ու կանաչ հրեղէն բոցերով վառվում և ակամայ
 զբաւում էին մարդու աշքերը բնութեան գեղեցիու-
 թեան վրայ սքանչանալու համար: Հեռուն ազօտ
 լոյսի մէջ կարծես թէ ամպիկների հետ ծփում էր և
 ենքը հորիզոնը: Սարերի դալարագեղ լանջերը, բլուրնե-
 րի ու ու խրամանները, ձորերն ու հեղեղատները,
 մանաւանդ նորահարսի նման ծովի հետ մէզմ ձօձ-
 ւող բարակ ու բարձրագագաթ թուխ կանաչ, մայսն
 նոճինները կարծես ձեռք ձեռքի աւած հեղ պարում էին,
 քաղցրաշունչ զեփիւսի մեղմիկ սուլոցով բարձրացրած
 վետք. - ԳԱՂՏՆԻՔ

դրաւիչ ու ներգաշնակ շշունջի հետ։ Բարակ մէզի նման մանիշակի մի քօղ ծածկում էր Խւսկիւգարի և Շէյլերէյի բարձրութիւնների լանջերում գտնւած բիւրաւոր շինութիւնների երեսները, այդեստանների ծառերը, խլամական կանանց գէմքերը ծածկող շղարշի նման, որ աստիճանաբար ցնդում անշետանումէր։ Հանդարա ծովը իր հայերի նման հարթ ու արծաթափայլ մակարդակ երեսը կարծես սփռել, ապածել էր բլուրների ոտքերի տակ, որի մէջ անդրադարձել էր հորիզոնը իր սքանչելիքներով։ Ենթիւ նաւելրը շոգենաւերը, զրահաւորները մեզմ ծօճում էին ծովափում կապւած նաւակները ծովի հանգարա ալիքների հետ առաջ էին գալիս և ետ ետ էին բազիւում նաւամատցցներին կլոր - պար բռնողների նման։

Եցոր թէե նոր նոր էր թափանցում իմ սենեակը, բայց արդէն նկատում էի բոլոր առարկաները։ Ենշրաժէշտ էր սենեակիս օդը փոխել, ուստի կամաց իջայ մահճակալից և արեւելիան լուսամուտաին մօտենալով մի փեղկը կիսով չափ բացի։ Թէե գեռ մթնշող բայց արդէն կեանքը սկսել էր եռ գալ, բանւոր, դործաւոր գտար կպել էր դործին և Բռուֆորի վրայով սողացող գայիքներն ու նաւակները աջ ու ձախ սլանում էին քամուց էլ արագ։ Այդ բոլորը թալմ օդի հետ ինձ բոլորովին կազդուրեց, սթափեցրեց և քնի պէտք էլ չղգալով, թեքւեցի լուսամուտի գոգում և ագահաբար սկսեցի աչքս շոջել հորիզոնի այս ու այն կողմը և զիտել այն բոլոր փոփոխութիւնները, որոնք առաջանում էին հիւսիսից հարաւ Բռուֆորի ափերում արշալցուից մինչեւ արեւագալը։ Զինորու իր նաւակը

լքցրած առաս որսով, ուռկանը հաւաքած, քրաինքը ճակատին թիւավարում էր արագ արագ, որ մի բոպէ տռաջ հասնի Պար - խանէ (ձկոն մաքսատուն), իր գիշերւայ աշխատութեան վարձն ստանալու։ Պարտիզպանն ու այգեբանն նաւակներում բեռնաւորած իրանց բերքը, խնդրում, խրախուսում էին ժամ առաջ խկէլէին (նաւամատցյ) մօտենալու համար։ Խանութւորը վազում էր կրպակը բանալու, դործակատարը հեալով ցատկւատում էր, որ տիրոջից ստաջ կանգնի մագավինի գուռը, որմնադիրը, քարտաշը, դարբինը մտախոհ քայլերը առաջ էին փոխում և միւէզգինները մինարէների զլիսից աղօմքի էին հրաւիրում իսլամի հաւատացեալներին, որոնք թեւերը վեր քաշած, ազօթքները մինչալով ստաջ են վազում, ձննապարհներին չշմէների (աղքիւր) առաջ կանգնելով լւացւելու համար։ Օգր թէե թոշոններով լիքն էր, բայց երկրում տիրող ազմուեն ու ժխորլ չէին թողնում նրանց ձւլոցը և շոգենաւերի, շոգեկառքերի սուլիչները խլացնելու աստիճան շւացնում էին ամեն կորմից։

Հրաշալի է արեւագալին Բռուֆորի մակերեւոյթը։ Մրեգակի սոկեզեղուն անդրանիկ ճառագայթները անմիջապէս տարածում են Չամչայի բարձունքներից գէպի Բիւզանդական բլուրների զլիսին կան։ Գնած երկնամերձ մզկիթների և նրանց մինարէնեւի գագաթներին, որտեղից ապակինների, կամ արձիձէ ծածկցիթների վրայից անդրադառնալով անթիւ անհամար ճաճանչներ են արձակում։ Օռովի հայելանը մակերեւոյթը արեգակի աչք խտաղացնող ճառագայթների տակ մեղմիկ ծփանքներից ցոլալով բար

ձրացնում են անհամար ցոլքեր, որոնք ծփծփալով ծածանում էին ալիքների հետ: Արանց վրայոց սլանում էին ու անցնում այն բազմաթիւ նաւակները, բեռնաւորւած բնութեան առաւտապէս պարգեւած աւթիւ բարիքներով, որոնց սարերի ձիւնի նման սպիտակ և արեգական ճառագայթների տակ արծաթի նման փայլ առագաստները գեփիւռը ուռցրած մղում էր առաջ: Երբ լցոնի հետ կեանքն ու կենդանութիւնը կրկն վերագրածել և իրանց ծիծաղներով խնդացրել էին Ա. Պոլիսը, երբ ամէն կողմից դիմում էին ուրախ դէմքով լիացոս մարդիկ իրանց գործին կպչելու, տանկարծ գագարեց գեփիւռը, միջեցին նրա սուլոցները և հարաւից Արմարտ ծովի խորքերից հարաւային լոտոսի հետ բարձրացն սպիտակ և ապա մութ մութ տմողերը հետպհետէ տարածւեցին, բռնեցին ամբողջ երկնակամարը և թանձր թուխպը պատեց ողջ մայրաքաղաքին:

Առայլ հորիզոնը իր տիսուր պատկերով անմիջապէս հեռացրեց ժամանակաւորապէս բնութեան քնքոյշ տեսարաններով բերկած սրտիս ուրախութիւնը, թախիծն ու մտանջութիւնը գարձեալ պատեց քաղաքացիների հոգւոյն, որոնք իսկոյն մռայլացան: Թէկ ուզեցի կրկին քնել, բայց անկողնի մէջ գարում կարւեց և անհանգստութիւնս այն աստիճան սաստկացաւ, որ ձայն ուի ընկերոջս՝ Օխային, որը վեր կացաւ, հրամայեց ծառաներին, ջուր բերին լւացւելու: Քիչ յետոյ կաթնով սուրճ բերին մեղ, խմեցինք և իջանք պարտէզ: Այլտեղ գալերիաներում, թէկ բաց օդում փթթում էին գյոնգոյն քաղցրաբույր ծաղիկներ,

որոնք թէկ առաւոտեան պարզ օդին իրանց դիւրսկան հոտով հարբեցնում էին, բայց ջինջ օրւայ զւարթութիւնը չէին ներշնչում: Օխան նոյնպէս մի քանի կատակներ արաւ, բայց աւելի տիրութիւն, քան թէ ծիծաղ առաջ բերեց: Տիրութիւնը այն աստիճան սաստկացաւ, որ առաջարկեցի Օխային զրօսանքի գնալ, իսկապէս տանից զուրս գալու նպատակով:

Երդէն ժամը ինն անցած էր, երբ մենք փողոց գուրս եկանք և կամաց խօսերով զիմեցինք Ինչշկ - թաշի ստրայի կողմը և այնտեղից գլխաւոր պողոտայով գէպի Գարա - թաշ ուղղւեցանք: Փողոցներում անց ու գարձը սովորականից գուրս էր, ամեն մի անկիւնում կասկածելի տարագներով մարդիկ կարծես մասնաւորաբար կանգնել հսկում, սպասում էին: Եւկի շատ աչքի էին ընկնում սովթմտներ, կապայտ մասնաւոնդ մցոյդ կանաչ վերաբուներով և սպիտակ ու սակաւ կանանչ սպարօներով: Այդ բոլորը պյնպէս արագ և սրտատրով անց ու գարձ էին կատարում, որ կածրէս թէ չոգեկան անհանգստութիւն ունէին և անհամբէր սպասողական գիրքի մէջ էին: Թէկ Օխայի զանազան հարցերին կցկառւը պատասխաններ էի սալիս, բայց աչքերս չըրա գիւ գարձնելով զննում էի շուրջս կատարւածները: Ոի արագքայլ, մի ձիւոր, մի ծածկած կառք իսկոյն խլում էր հայացքս, հետաքրքրութեամբ հետեւմ էի ամեն մի արտասովոր առարկայի:

Թոռի - Խանէի (թնդանօթաձուլարան) մօսից ծանր քայլերով անցանք: Երկաթի վանդակներից զիտում էինք այնտեղ գալաւած բազմաթիւ թնդանօթները, որոնք իրանց նշանակութիւնը բոլորովին կորցրել

էին Գյուղապի թնդանօթների առաջ: Խջեցրել էին բերդերի բարձունքներից և որպէս անպէտք իրեր դարսել ձուլարանի ընդարձակ գաւթում: Այս ինչ մի մեծ աշուելի թնդանօթ էին դրել այդ գաւթի ծովեզրեայ կողմը, որի մէջ կարելի էր որպէս զնդակ բանացնել այդտեղ գտնւած հին թուրքական ձուլարանից գուրս եկած բոլոր թնդանօթները: Ո՞ի խումբ անգործ մարդիկ շըջապատել էին այդ թնդանօթը և ապուշ ապուշ դիտում ակերը, յատակի երկաթի րէյլաները շարժիչ ճախարակներն ու մեքենաները և գլխները շարժում բերանները բաց արած:

— Արամ, ասաց Օքիան ինձ, արգեօք քանի քանի հաղարաւոր ոսկի է ծախսւել այս թնդանօթները ձուրիլու համար: Որքան տանջանք, որքան մարդկային ջանք է դրծ դրւել մինչև սրանց վլուխ բերելը, եսկ այսօր, այսօր այն Գյուղապի թնդանօթները երեւելուց յետոյ քանի փարա արժեն...:

— Ո՞ի քանի տարուց յետոյ էլ այդ Գյուղապի թնդանօթը սրանց նման ետ կրնկնի, թէև նրանց համար հարիւր հաղարներով ոսկին են շաղ տեղի...

— Այդ շատ իրաւ է, ասաց ընկերակիցս, բայց ինչ պիտի անես, աշխարհի կարգն է. այսօր պիտի ունենաս, պիտի գործածես և երբ անպէտքանայ, նը շպրտես, նորը ձեռք բերես:

— «Ալշպլտես» ... բայց ինչ ես շպրտում, քանի հարիւր հաղար լիրա... Այդ գումարը, որքան հաղար մարդ արիւնք բլտինք են մաել, մինչեւ աշխատել են, վաստակել են: Արգեօք քանի քանի հաղար կին, որոնց ձեռքերից կարիւր շպրտում, մերկ են մնացել, որոնց ձեռքերից

նլւած փարաներով այս թնդանօթներն են ձուլել, դնեել ...

Մինչ մաքումս ես այդ թնդանօթների վեայ ծախսւած միլիօններն էի հաշւում, այդ գումարների առանեակ տարիներում բերելիք բարդ տոկոսները, հուզւից երեւեցաւ մի մեծ խումբ սովիթաների, որոնք աղմկելով դալիս էին Վալաթայի ձիաքարչի մեծ պողոտայով: Տարակյոս շրմնաց, որ այդ խմբին էին սպասում Ճանապարհին մեզ պատահած սովիթաները, որը առաջ գնալով անդադար բազմապատկւում էր հետեւողների և հետաքրքրողների աշագին խմբերով: Ժամանակ կորցնելու չէ, պէտքէ շտապել գէպի եա՝ Ռէշիկ թաշ և մի յարմար տեղ ընտրելով տեսարանը դիտել:

— Օքիա, ասացի ընկերոջս. շտապիր, գնանք Ռէշիկ թաշ, այս խումբը սարայ է գնում:

— Ո՞չ սրանք ինչպէս երեւում է, միյայտնի մեռել ունին, եկել են, որ թագին, ասաց ընկերս:

— Այս, մեռել ունին, բայց մեռելն անպատճառ Տոլմա - Բաղչէյումն է, ասացի, տես, բոլոր այն կողմն են թեքւում:

Տասն - քսան կարգ բարձրահասակ և ալեխանն մօրուսով մոլլաներ, սովիթաներ, հագնւած գոյնզգոյն մահուգից երկայն վերարկուներ, որոնց փէշերի տակից երեւում էին զանզբոյն ձողերով Շամի և Հալէպի մանիսաներից հայնւած էնթարիները, գլխները սպիտակ, գեղնագոյն և կանաչ մեծամեծ փաթաթոցներով առաջ էին զալիս ձորակից առաջացող հեղեղի նման: Ռոլորը թէև ոսքերին հագել էին գեղին մաս

և կարմիր բարում, կամ չստեր, բայց արագ արագ առաջ էին դիմում ջրվէժի նման մոնշելով և գոչզչալով։ Թէ մենք սրանց առաջից համարեա թէ վագելով առաջ էինք գնում, բայց շուտ շուտ ետ էինք գառնում, դիտում այդ սովթաների խումբը, որոնք կարծես մեզ հալածում էին։

Թէ երկինքը ամպացած էր, բայց անձրեփ կաթիլ գեռ չէր թափւել և շոք չկար, այնպէս որ միայն քայլելն էր մեզ յոգնեցնում։ Առղոմնակի փողոցներից, նեղ նեղ անցքերից անդադար խմբերը գալիս և տւերանում էին մեծ խմբին։ Մեր անցած մեծ պողոտան, որ երեսուն - քառասուն արշին լայնք ունէր, ամբողջ երկարութեամբը արդէն լցւել էր սովթաներով։ Բարձրեց նայելիս, փողոցի մէջ միայն մեծ մեծ ապարօջներով դլուխներ էին երևում կապցյա ու կանաչ ուսերի վրայ։ Այդ պողոտան ճոսֆորի ափերի հետ զուգընթաց օձաձև ուղղութեամբ, մի հենգ հարեւր քայլ հեռուն մեծ շինութիւնների ետեր թեքւում, ել բան չէր երեւում։ Արդէն պողոտացից անցնող բոլոր կառքերը, սայւերը, ձիաքարը, մինչև իսկ ձիաւորներն ու հետինները պարտաւորւեցին կանգնել, կամ կարողացողները փռքրիկ, կողմնակի նեղ փողոցներով գնացին իրանց նպասակին։ Մեր ետեր գալիս էին սովթաները և նրանց հետեղներին գերջ ըրկար։

Փողոցի մէջ մնալին ոչ միայն անյարմար էր, որոց հետեւ մենք չենք կարող որոշ բան տեսնել, այլ մինչև անգամ վտանգաւոր ուստի բարձրացանք զառիգերը, Արդիւլ - Վզիզի մօր շինել տւած նոր թաղի լոյն պողոտացից և Սառափեանցի տան դռան զանգակը հն-

շեցնելով ներս մոտանք։ Ամենից յարմարաւոր շինութիւնն էր, այնպէս որ սրանց պատշգամբից ազատ տեսնում էինք ոչ միայն Տոլմա - բաղչէն, այլև իր շրջապատի պողոտաները, ծովեզրի մուտքը և ելքը։ Մինչ մենք հասոնք Սառափեանցի տունը, սովթաներն էլ գոռում գոչումով առաջացան, շրջապատեցին Տոլմա - բաղչէն, այնպէս որ սրանց գլուխիւնից Բէշիկ - թաշի և Գաբաթաշի զառիվերների վրա գտնւած բոլոր տըների պատշգամբները և լուսամուտները լցւել էին կանց և տղամարդոց մեծ բազմութեամբ։

Ամբոխը սկսեց խոնւել սարայի հարաւային գլրան ու նրա դէմ գտնւած Մէջեգիէ մզկիթի միջի մեծ հրապարակում, նրա մի ծայրը առաջ գնալով գէպի հիւսիս, հասել էր մինչև Զրադանի և Ելլու - Քէօզքի պարտէզների շուրջը։ Ահագին ամբոխն այնքան արագ տարածւեց և շրջապատեց կրկին սարայները, որ ժամը տասնըմէկ գեռ չեղած՝ այդ կողմերի բոլոր փողոցներն ու պողոտաները, այնպէս էին լքցւած բազմութեամբ որ անցնելու հնար ոչ մի կերպ չէր կարելի գտնել Սարայների ել ու մուտքն էլ գաղարեցաւ։ Թէ կափիթների ել ու մուտքը արտաքին բակերի վրա ցցցի համար բաց էին, բայց ներքինները ներքին դռները փակած սոսկալի իրարանցումի մէջ էին։ Արտաքին ամեն դրան աջ ու ձախ կողմին պահապանները հրացաններով թէ կանգնած էին, բայց ներս ու դուրս մտնող իւլէմանների և սովթաների երկիւզներից և ոչ մի ծպտուն չէին հանում։

Ամբոխը հետպհեաէ խոնւում էր, Պալաթայի ձիաքարը մեծ պողոտացից մինչև Զրադանի հիւսիսային

պարտէզները մի մղոնից աւելի երկարութեամբ, մըջիւնի նման դժւրտում և այս պողոտայի հետ կցւած բոլոր երկորդուկան փողոցներն ել խիտ բազմութեամբ լցւած էր որոնց բարձրացրած աղմուկը թօւ - զշայի թաքսիմի գորանոցների հրապարակներից ել կարելի էր լսել:

Սարայի հարաւային դռնից երեք հարիւրիչափ սովորաներ ներս մտան և դրա տասնապատիկն ել դրսի դրան առաջ կանգնած աշխատում էին անցքը պահպանել: Վնընդհատ ներսից դուրս էին դալիս սովորաները սովորվ, ձեռքով ամբողջ մարմուկ շարժւերվ աեզեկութիւններ էին տալիս ու կրկին ներս՝ դաւիթը մտնում: Մի խուճը սպիտակամօրուս հաստափոր մոլլաներ հետեւում էին ներսից եկած պատգամաւորների համբաւներին ուշի ուշով և անդագար սալայտառակին խփում իրանց ձեռքերի գուազաների երկաթի ծայրերը, ահագին աղմուկ բարձրացնելով: «Օսերունիների ամէն մի շարժումը խռնւած ամբոխին յորձանքի նման այս ու այն կողմն էր տառանելով շարժում, որոնց սպիտակ տապարօշաւոր դուխներ փրփրալի ծովային ալիքների նման անվերջ ծածանւում էին: Արդէն Շոստորի Վսիհական, եւրոպական բոլոր ափերից ու բարձրութիւններից ժողովրդի գետակները ուղղ եցան սարայների կողմը, ամեն աեզից սրաստրոփ սպասում էին գործի վախճանին:

Սովորաների սարայները շրջապատելու լուրը Զարշին Բեկեղթէնը հասնելուն պէս, խանութպանները խսկոյն հաւաքել էին իրանց ապրանքները, կողպել կրպակները, դիմել առան իրանց ընտանիքի մօտ և պատրաստել որեւէ անակնկալ յարձակման դիմադրելու:

Սարսափելի երկիւղի մէջ էին ենիշերութեան բարբարոսութիւնները տեսած շները, թէև ենիշերիներին կոտորելուց կէս դար անցել էր. Խղճալիները գրկուում, համբուլուում էին իրանց սիրելիների հետ և մաքերում «մաք բարով» կարգում: Ըասերը իրանց կրպակների մէջ էին թագնւել, կասկածելով, որ կատաղած խուժանը ետ դառնալիս կարող էր աւարի տալ շուկան: Խոկ երիտասարդները առանց երկար ու բարակ խորհելու դիմում էին հանդիսավայրի շուրջը անցքերին ականատես լինելու: «Վալաթթիայի հարուսա սեղանաւորները թէև հաւաքել էին իրանց հարստութիւնը և զետեղել կասերի մէջ, բայց «Խաւեար - խանում» (բրոսա) սարսափելի աղմուկով ահազին բազմութիւնը շարունա կում էր օբլիցացիաների առ ու ծախսը, որի գինը այդ օրը անչափ ընկել էր:

Ոստիկանութիւնը կարծես քնած էր, (չէր էլ կարելի նրան մեղադիմել, քանի որ նա դիշերն էր գործում, ցերեկները հանգստանում), նախարարութիւնն էլ այնքան զբաղւած էր, որ Փառաչեղ Դրան լուսամուտներից անզամ չէր կարողանում դիտել ու լսել սուլթանի սարայների շուրջը կատարւած անցքերը: Աէրապերը պալատը շրջապատող զօրանոցների հրապարակներում զինավարժութիւններ էր անել տալիս, որպէսզի զօրքերին մարզէ և Բէլգրադն ու Թիֆլիսը նւաճելուց յետոյ, Վահենայի և Մոսկայի վրայ քայլէ: «Օսմալապետը զբահակիրներում ուումբեր էր բառնալ տալիս, որ Մեսաստապօլը, Օդեսան, Սուխումը ու մբակոծէ, Բալթիկ ծովով Բէլթրոպոլիի վրայ քայլէ: Պալատի նախարարն էլ իմօն - Խակէլէսիից և Թաւուք-

բազարից սարայի խոհանոցի համար մի քանի հազար հաւ գնելով էր զբաղւած, որից աշխատում էր մի լաւ բաժին իր սնդուկի համար ետ զցել: Ներքինապետը դէրւէների հետ բացառում, մեկնում էին Դուռի սուլթանէի երազը, ներքինիները մարտկում էին պալատական հարձերին ու աղախիններին կարդ վերականգնելու համար: Տօքինապահները և սենեկապահները սերթուիններն ու նրանց փայլուն կոճակները, ուսնոցներն էին սրբել տալիս, որպէսզի օրինակոն ձեւզգեստով ներկայանան իրանց հրամանակալին . . .

Վմբոխի խանւելուց կէս ժամ տւել անցել էր, բայց իրերի գրութիւնը ոչ սարայի աւագ արարողապետն էր, յայտնի, ոչ սարայի նախարարին: Մանկապահները և ներքինիները վազում էին պալատի երկար ու ձիգ սրաններում, նրբանցքներում, բայց ոչ ոք սիրտ չէր անում մանել ու խանգարել իր մեծաւորի անդրբութիւնը: Վերջապէս ստորին արարողապետներից մին, մի սենեկապահնի ու երկու թիկնապահների հետ գուրս եկան և մօտեցան սպիտակամօրուս մոլոների շարքին: Հինգ րոպէի չափ նրանց լսելուց յետոյ, վերադառն սարայի ներքե: Չանցաւ քսան րոպէ գուրս եկան սովորանի հետ մի խումբ սակէթէլով գարգարւած սենեկապահներ, թիկնապահներ և մասկաւիներ, որոնց տեսնելով ամբոխը էլ սասակացրեց իր աղմուկը և գորդիւնը: Մի քանի տասնեակ հազար մարդ ամբողջ պողոսան, թաղերը, պատշտմբները բռնած, միաձայն մոլաների հետ գուռում էին:

— Եաշա փաղիշահմ չոգ եաշա, սովորանիրը աւելացնում էին.

— Սուլթանին ենք ուզում տեսնել, սուլթանին ենք ուզում տեսնել, որոշ աղաղակում էին և բռնի ետ էին մզում պալատականներին, որոնք աշխատում էին լսեցնել: Սովորանիրը անվերջ աղաղակում էին.

— Կորչ բուսօֆիլ Մահմուդ Աէգիմը, միաբերան որոտագին կանչում էին խումբ խումբ մոլաներ:

— Մահմուդ - Աէգիմ բուլղարին մենք չենք ցանկանում, կորչ, աղաղակում էին սովորանիրը կարմրատակած բոցավառ աշքերով:

թարգմանել, որի բովանդակութիւնն հետևեալն էր.

«№ 7, շարունակութիւնը:

8²⁰ մայիսի, 75 թ.:

— Ո՞չ ասաց Օտեանը, դուք չեք կարող նպատա-
կի համել իւլէմներին (կղեր) ուժեղացնելով: Պիտի
զինւիք կղերի դէմ նախ պիտի տապալէք իւլէմական
ցիքը, պիտի ամփոփէք նրանց ձեր բոի մէջ, պիտի
ջնջէք սոֆթայութիւնը (կղերական ուսանողութիւն),
որպէս զի կարողանաք ապա հաստատել օրինականու-
թիւն և պարլամենտ: Մի երկրում երկու հակառակ
ցիովյառուջադիմութիւն չի կարելի անել

— Հե՛շտ, հե՛շտ ասում ես, ասաց Միդհատ փա-
շան,—տապալել իւլամի կղերը, ջնջել սոֆթայութիւ-
նը... Ի՞նչպէս կարելի է մի սցդպիտի ցժ ջախջախեր
ի՞նչպէս կարող ենք մի սցդպիտի գործ զլուխ բերել

— Ուրեմն և չի կարելի օրինադրական ցժ և
օրինականութիւն ստեղծել այս երկրում քանի որ ձեր
բոլոր արարքը շերիաթի հակառակ պիտի լինի, իսկ
կղերը պիտի նրան դիմադրէ...

— Կարելի է, և այն էլ միմիայն կղերի միջոցով
կարելի է, ասաց Միդհատը ոգեորւած: Մենք կաշխա-
տնք կղերին զանազան զիջումներ անել տալ աստի-
ճանաբար մեզ կարեւոր ֆէթւաներն առնել ժողովրդին

մեր խմբագրած օրէնքների ու կարգերի հետ հետզհե-
տէ վարժեցնել և ձգտել հասնելու նպատակի...

— Կղերը և ո՞չ մի քայլով զիջումչի անիր, ա-
սաց Օտեանը ծանրաբար: Նրանց ամենաթեթև զիջումը,
կըքայքայէ ու կըկործանէ իրանց վարդապետութիւնը
և այդ բանը, ներեցէք ինձ ասելու, որ կղերը շատ լաւ
գիտէ: Այսօր, եթէ իդրիսը և նրա համախոհները ձեզ
օգնում են, պատճառն այն է, որ սուլթանը հակառակ
զուրանի հրովարտակ է հրատարակեր և դուք կղերի
հետ միացած օրինազանց սուլթանի դէմ էք գործում:
Նրանք, որ իմամի-ազամից չեն քաշւում: Ալահի շքի
դէմ են գործում, ձգտում են խալիֆին տապալել մի-
միայն նրա համար, որ գա Խալամի վարդապետութեան
հակառակ է վարւել միթէ գուրք կարծում էք, որ զը-
րանք ձեզ կաջակցեն, Խալամի ոգուն հակառակ օրէնք-
րութիւններ կատարելու: Սովթանների, իւլէմների
հետ հանաք էք անում, նրանց իրանց ընթաց-
քից շեղելու միտումնի՞ր էք երեակայում... Զեր ցիցից
կօգտւեն, իրանց նպատակին կըհասնեն, ձեր կաշառները
կըլսովիեն, ինչպէս կուլ են տալիս էֆքտիի անսահման
եկամուտները և սուլթանի անշափ նւիրատւութիւննե-
րը: Գուցէ մինչև անգամ կընենդեն, բայց նոյն զիշերն
իսկ ձեր դէմ ֆէթւաներ կընքին և կըտարածեն եր-
կրի ամեն մի անկիւնը: Միթէ քառասուն-յիսուն տար-
ւաց փորձից չեք ցանկանում օգտւել... Ասացէք իւրն-
գրում եմ այս կէս դարի ընթացքում կղերն է ձեզ
զիշեր, թէ դուք՝ մինիստրութիւնը: Ո՞վ ում է խարեր
— Երկրուն էլ խարել խարւել են, բայց մինիստ-
րութիւնը աւելի, քանի որ նրանց հաշտեցրել է

ներկայումս պետութեան մէջ գործադրուող կարգերի հետ:
— Եւ զուք կարծում էք, թէ գործադրում են
պետութեան մէջ ձեր հրատարակած կարգերը:

— Ինչպէս, թէ կարծում էք, քանի որ այսօր
երկիրը կառավարում է այդ կարգերով...

— Ասար, ինչի՞ զուք ձեղ խարսում էք: 2է, որ
դուք ձեր կաշու վրայ փորձել էք այդ բանը առանեակ
տարիներով, իմ ներկայութեանը: Ասացէք, ինչքրում
էյ, էղիրնէի վալի եղած ժամանակ, կարողացաք միւֆ-
թիի կամքի հակառակ մի զինու արձակեք: 2էք յիշում
թէ մւֆթին ամեն մի քայլափոխում ի՞նչ ի՞նչ արգելք-
ներ էր բարձրացնում և գործերը ծանրացնում: Ասա-
ցէք, ինչդրում եմ այդպիսի միւֆթիները իրանց գո-
յութիւնները սուհապանելով վելայէթի վարչութեան
գիւտանում, կրթողնեն, որ ագմինիսարատողները կարո-
ղանան երկիրը հրատարակեած օրէնսդրութիւններով
և հրահանգներով կառավարել Մտահան արթիք այն
հոգեկան առնջանքները, օրէնքով, ամիսներով, որոնց
ձեզ ենթարկում էր այն ցանցառ կրօնամոլը և դո՞ք
հասրը չէնք գանում նրա առաջն առնելու:

— Բայց, ասայ, իսո՞ հետացնել աւի:

— Ի՞նչ նշանակութիւն ունի այդ հետացնել
առաջ, որ նա էղիրնէի ժողովի գիւտանց հրաժարւեց,
առաջ, որ նա էղիրնէի ժողովի գիւտանց հրաժարւեց,
Միթէ առանց պաշտօնի, նա գտաճեալ միև
նոյն գերը չըխաղաց, կամ թէ էղիրնէի նոր միւֆթին
նոյն գերը չըխաղաց, շեղւեց: Ասացէք, ինչդրում եմ,
նախորդի ընթացքից շեղւեց: Ասացէք, ինչդրում եմ,
կարողացել էք, թէ էղիրնէի վալի եղած շրջանում և
թէ Բաղդադ, մի հասարակական գործ դրուի բերեր

առանց նախապէս դրանց սիրտը գրաւելու: Այդ վե-
լայէթիներում զուք վալի էիք, բայց գործերի զեկը
միշտ իրանց՝ միւֆթիների ձեռքումն է հղեր, որոնք
միշտ իրենց ուղղութեամբ են ձեզ առաջնորդել: Մի-
մոռանաք Բաղդադում կղերի ձեր գէմ բարձրացրած
շփոթութիւնները Բաղդադ էլ խո՞ կրօնի գէմ բան չը-
կար, այնահեղ խո՞ ոչ-իսլամներ չէին բնակւում: բայց և
այնպէս զիտութեան արտադրութիւնները ընդուներ
նահապետականը թողներ յարմարաւորը գործածեր մի
խօսքով վերանորոգւել չըցանկացաւ ժաղովուրդը, քանի
որ այդ բանին գէմ էր կղերը:

— Այո՛, այդ բոլորը յիշում եմ, բայց և այնպէս
շըհլով, փաղաքշլով, սասակերով, կամաց կամաց մինչեւ
այսօր եղած վերանորոգութիւնների հետ հաշտեցրել
ենք կղերին: Արդէն կարեւոր քայլերն առնւած է, հետ-
զիսէ կրստիպենք, կրհամոզենք և գարճեալ վերա-
նորոգութիւնները առաջ կրտանենք: Մանսւանդ որ,
այդ բոլոր նորոգութիւնները, երբ հիմնենք զուրանի
վրայ, որ գիտես, թէ որքան առանձպահան է, աւելի
հսկայական քայլերով առաջ կերթանք: Արդէն փշրել
ենք կղերի աստամները նրանց հետպհետէ չէզո-
քացնում ենք, և օրից օր թուլացնում ազգեցու
թիւնը, ասաց Միդհատը գէմքը ծամածուելով:

— Այո՛, մի կողմից զուք կարծում էք, թէ թու-
լացնում էք, այն ինչ միւս կողմից նորանոր զիջումնե-
րով էլ աւելի զօրացում էք: Մինչև այժմ իր արժա-
նապատութեան համաձայն, թիւրք երիտասարդու-
թիւնը կղերի գէմ էր մարտնչում: Ժողովրդին քարո-
զում էր այդ պորտաբոյծների վարդապետութեան

խեղկատակութիւնները դրան էր ուզում տապալեր կայիսապառ չեղքացնել պետական և վարչական բոլոր գործերի մէջ, իսկ այժմ նրան ձեռք էր կարկառել և զօրբեղացնում էր: «Մանուկ-Թուրքիան» թունաւորուեց, երբ իրան նեցուկ իդրիսների և Խայրուղահների մէջ սկսեց որոնել մարդիկի, որոնք զուրանից և շերիաթից դուրս ոչ մի աշխարհայեցզութիւն չունին և քննադատութիւնն ու յառաջազիմութիւնը դժոխացին մեքենայութիւններ են համարում:

— Մասամբ իրաւացի է ձեր նկառողութիւնը Գրիգոր էֆէնդի՛, բայց քեզ նման խորհող քանի ընկերակիցներ ունես, ո՞չ միայն Կ. Պոլսում, ո՞չ միայն Օսմանեան լոյնածաւալ գաւառներում, այլ ամբողջ Համբարձմանառութեան մէջ: Մեր կուսակցութիւնը զօրեղացնելու, մեր հեռաւոր գաղափարին հասնելու համար, մենք պէտք է «քոմպումիսներ» անենք, մեր գաղափարները համբարձմացնելու, տարածելու համար, մենք պարտաւոր ենք ոռ այժմ իւլէմաններին ձեռք մեկներ, նրանց գործիք շնորհ նրանց զեմակով գործեր, մինչեւ մեր երիտասարդութեան կազմակերպութեան ամրապնդելը: Իսկ յետոյ, աստիճանաբար երբ լոյս, գիտութիւն և զագացումը առածւի, ինքնըստինքեան մոլաների իշխանութիւնը կըտապալի: Աշխարհի վրայ ոչ մի աել միանդամից արմատական գերանորոգութիւն չէ կատարւել մենք այդ բոլորը կըկատարենք աստիճանաբար:

— Սխալում էք, փաշա, իւլէմները ձեզ հետ կլինին, քանի որ դուք նրանց շաւզով ընթանաք, իսլամի ձերիաթեց մի քայլ շեղումն... նրանք ձեզ դէմ կը-

զինւեն: Փոխանակ օրից օր սովորացնութեան ատամները փշրելու, ձեր այս քայլով, նրանց քաջալերում էք, որ մի նոր ենիշէրական բանակ դանան պետութեան զինին:

— Մենք նրանց սանձելու մեծ զէնքեր ունինք:

— Նրանք զուրանը ձեռքերն առած՝ ձեզ կըսանձահարեն, կըստիպեն լոելու, հպատակւելու...

— Առ այժմ մենք մի կերպ սահմանադրութիւնը հրատարակենք ժողովրդի ձեռքը տանք երկրի զեկը ընդլայնենք գաւառական վարչութիւնների իրաւունքները, մեր ժողովուրդը տէր գառնայ երկրին, սանձի պալական ներքինիների և օդալգների կամացականութիւնները, այն ժամանակ ժողովուրդը ինքը կարող է մոլաներին ու միւզէրիսներին չեղքացնել վարչական աշխարհից:

— Դա յնորք է, խոլամ ժողովուրդը երբէք չի խլի իր կղերից քաղաքական վարչութիւնը անհնարին բան է, կրօնամոլութիւնը չի թոյլ տալ իր գաւառնեքի դէմ գործելու: Կյտ ձեր երազը կատարելու համար, նախ կարևոր է խլամ անհաներին մաքով, կուլտուրայով, թշւառ և խղճալի վիճակից՝ ճոխութեան և բարեկեցութեան հասցներ, որպէս զի նա զարգանալով, քննադատութեան կարողանայ ենթարկել ամէն բան, նոյն իսկ իր կղերի սովետական և անբնական քարոզութիւնները: Կյո դէպքում միայն ժողովուրդը կըկարողանայ կրօնական և կենսական հայացքները զանազանել իրարից և մզկիթի պատերի մէջ փոխադրել իւլէմների իշխանութիւնը: Կղերե ուժեղացնելու, ձեր բոնած քաղաքականութիւնը, Օսմանեան կայսրութեանը կոր-

ծանրան է մօտեցնում և որքան զօրեղ ձայն ունենան սովթաները հասարակական գործերում, այնքան պիտի շատապի այդ պատուհանը: Դուք համոզւած եք, որ ես սրտիս ցաւից ստիպւած, եկել եմ ձեզ զգուշացնելու, ցցյց տալու ձեր սիսալ բայլը: Չեր կամքն է, բայց ապագայում համոզւած եմ, որ կըզգաք իմ տառածների ճշմարտութիւնը:

—Ես հոգով համոզւած եմ որ փրկութիւնը քու տասած ճանապարհով միայն կարող ենք դաներ բայց անհնար է ներկայիս այդ կէտի վրայ կանգնել: Մենք ձգտում ենք հոգով, սրտով՝ այդ գաղտափարին, բայց ամբոխին այդ կողմը թեքելու համար, դեռ պարտաւոր ենք ցցյել այն փափուկ թելերը, ոլոնցով կաշ կանգւած են նրանց սրտերը, զգացու մները: Մենք փայփայելով այդ թելերը՝ մէկ-մէկ աննկատելի կերպով կարասում ենք և շատ չի անցնի, որ դժունք բոլորովին կըխռովագին:

—Բայց փոխանակ կարտելու, դեռ էլ նորանոր կապերով էք զօրացնում այդ կաշկանդւած սրտերը: Դուք եւրոպական յառաջադիմութիւն քայլերը զուրտնի այտմների հետ եք ձուլում, տասց վշտովին Յաեանը:

—Ոչ, ոչ, սիսուլում եք, տասց ժպտով Միդհամը:

—Ապագան ցոյց կըտայ, թէ ով է սիսուլում:
—Ապագան...

«Ասաց, ու լոեցին երկու բարեկամները այնպէս որ շատ չանցած՝ Օտեանը պարտաւորւած էր հետանալու: Երբ նա մի հինգ-տասք բոպեից յետոյ դուրս

գնաց, Միդհամը մրմիջաց.

—Ճատ իրաւ է Գրիգորի ասածը, բայց այսօր նպատակին համելու համար, պէտք է ժամանակի պահանջին հետեւել և ինչ միջոցով էլ որ լինի, ձեռք բերել կարեսը օրէնսլութիւնը, որպէս զի սահմանափակի պալատական նեղուերի զերիշխանութիւնը: Նշն նեղուերը, օդալգների հետ միացած խեղիատակների նըման խաղացնում են Վիւքեալային: Ամեն մի վերանորոգութիւն զիսից պիտի սկսել, նախ սանձահարենք այդ չմարմի ներքինիներին, այդ Սահմարայի անզուսպ խափշիներին, նրանց հետ լիտի օդալգներին, մնացեալը հետպէհատէ կարգի կընկնի ինքիրան:

—Զարմանում եմ, բէյ-ասաց այդ միջոցին ներս մանելով Սագգ էֆէնդին—որ դեռ ականջ էք կախում այդպիսի յիմարներին, Մեր իսլամական երկրին ձ la franea շաբոնով օրէնքներ ու կարգեր չե կարելի ձևեր, մենք պիտի իսլամի հոգուց ու զգացումներից բղխած կարգեր սահմանենք: Նուանց կրօնի խալիֆայութիւնը փրկութիւն չունի, իսլամի վարդապետութեան մէջն է մեր միակ ապաստարանը»:

Ե

ԽՈՐՀՈՒԹՅԱ

Երբներանդ մայիսի տասնեւեօթն էր, մի այնպիսի գեղեցիկ օր, որի հովասուն զեփիւոի մեղմիկ շնչնջոյների մելոդիական շուշները յաճախ բաղլուել է Բոսֆորի ափերում ապրող և կեանքը վարելու եղանակը գիտցող հասարակութիւնն ականջները, նրանց ներշնչելով կեանքի քաղցրութիւնները և երկար ապրելու, վայելելու ցանկութիւնները։ Պարզ և ջինջ էր երկինքը, արեգակի ճառագայթները պէծին էր տալիս կապուտակ երկնակամարը, շողշողացնելով երկրի երեսի, քաղաքի ամեն մի ծայրի փայլուն առարկաները և բաղմաթիւ անդրագարձ ճառագայթներով խտղտացնում զննող զմայլով աչքերը։ Սար ու սարահարթ, ձոր ու տափարակ, ամեն կողմ այնպիսի սքանչելի դալարով էին ծածկւել այնպիսի գոյնդգոյն փունջեր էին կաղմել Կ. Պոլսի բազմազան ապարանքները, ամառանոցները և եալիները, երկամերձ մուգ կանաչ նոճիների, չենարի և բաց կանաչ մրգաբեր այգեստանների ծառերի մէջ, որ մարդ ակամայ, ամէն մի հայացքով հրապուրում, դիւթւում էր, անվերջ աչքերը չորս կողմը շրջելով, չէր կարողանում հեռանալ այն բարձունքներից,

որոնց զլիից իրան ներկայանում էր ամբողջ Բոսֆորը իր կրկնակի ափերով։ Հապա օձապտոյտ ծովը եր մեղմիկ ալիքների ցողքով, իր հսկայ զրահաւորներով և արտգաշարժ զայիգներով, իր անվերջ ծփանքով զրաւում, պլշեցնում էր մարդու հայացքը, սրան քաշում, տանում, Մարմարայի խորքերն հացնում, նորանոր տեսարաններով, մութ մանիշակագոյն և մառախլապատշաճների լանջերով բարձրոցնում, սաւառնեցնում և Ի՞նչ խորհրդածութիւնների մէջ չէին մկում։

Այսպիսի մի քաղցր եղանակին, յայտնի բան է, Ղարաթա-Մորայի ահաւոր այզիներն ու բէօքերը՝ բանախնեղ խցեիներից Ճնշից ազգեցութիւն էին գործում։ Ես այդ ժամանակին պատրւակով կէս օրիցյեաց դարձեալ կարողացայ դուրս սովոր մեր լիցեի վանդակներից։

Արդէն մեծ-փողոցում, Խրիսթաքիի Շիտ ու Ռեգա-ի առաջ կանգնած, դիտում էի այն արձանները, որ կանգնեցնում էին ճարտարապետները և որոնք լիշեցնում էին գիւցազնական Յունաստանը։ Մեծ բաղմութիւն ճեմում էր Թէփէ-Բաշխից մինչև Թագսիմ և ամեն անցորդ մի քանի բոսէ կանգնում էր այդ արտասովոր անզրիները գիւղելու։ Իսկ կրօնամոլ թիւքերը թքում և հայհցելով անցնում էին։

— Այս ի՞նչ օրը մնացինք, մեր մայրաքաղաքը միթէ դարձեալ կուռքերով են զարդարելու այս կըռապաշանները։

Գնում ենք, զնում, վերջ չըկայ. Ժողովուրդը խռնուում է, քայլելու հնարաւորութիւն չըկայ։ Անվերջ իրար հուկից սահելով անցնում էին կառքերը լոնդոնները ու քուպէնները, որոնց մէջ զցկելը, կամ խմբերը

ժայտալի խօսակցութիւններով և քնքոյշ հայտաքներով չեռանում էին, աեղի տալով իրանց հետեւրդներին: Ամեն կողմ մաքուր հագուստներ, յարմարաւոր տարազներ, փայլուն և պսպղուն կոճակներով, ուսնոցներով համազգեսաներ վլստում էին և բոլորի գէմքը ուրախ, ժպտալի և յուսալի: Ամեն մի քայլափոխի ծաղիկներ ու փնջեր էին առաջարկում և ամեն ձեմող աշխատում էր թարմ ծաղիկներով զարդարել կուրծքը: Խումբ խումբ յցներ, երաժիշտներին առաջները խսոնած, անյնում էին փողոցի միջով, մոնելով այս ու այն գիւնեաները և սրճարանները, մի մի բաժակ խմիչք ընդունելու: Կանայք իրանց երեխաների հետ, վերակացունելը գիշերօթիկ աշակերանների հետ, խումբ խումբ գիմում էին անտառների, զբոսավայրների կողմերը և ամեն կողմից երաժշտութեան քաղցր ձայներ՝ եղանակները քաշում էին զբոսնողների քայլերը:

Թագսիմի-դշայ (Ճմեռանոց զօրքերի) մեծ հրապարակում զօրա կանները մարզում էին Աւճի-ալայի (որսորդական գունդ) զինւորներին: Ի՞նչ հիւնարներ չեին բանացնում, ի՞նչ արագ արագ թոիչքներ, սոսիւններ, դառնալ, թեքւել, կռանար, սողալ, պառկել ու կանգներ, ի՞նչ աշխայժով և ի՞նչ նրբութեամբ էին կատարում: Կամայ-ակամայ աչքերս դառնում էի նրանց կողմը և դիտում էին անվերջ: Խեղճ զինւորները արիւնքրաբինքի մէջ կորել էին, այնքան ցատկրաել էին, որ կակաչ նման կարմրել էին, շնչառութիւնները քիչ էր մնում դադարի, այն ի՞նչ դաժան զօրապետները դեռ նորանոր հրամաններով տանջում էին նրանց և չորչարում, որ վարժեցնէին տոկալու: Հերիք չէր խեղճ զինւոր-

ների թանձր բրդէ հագուստի ջերմութիւնը, մի իսլամական նորաձեռնութիւն ևս մացրել են, թշւառների գրեխներին կանաչ չալմա են փաթաթել:

Զանձրանալ թէւ չէր կարելի, բայց սիրտս նոր բան էր ուզում և քայլերս շարժում էին առաջ առաջ: Թաշ-զլայի առաջ նշյալէս մարզութիւններ էր կատարւում, բայց նկատելի էր ամեն տեղ մի արտասովոր իրարանցում: Ոչ միայն գնդի բոլոր զօրականները կատարելապէս մաել էին իրանց գերը այլ նկատելի էր, որ զինւորներին բաժանեած էր փամփուշաներ և ամեն մի զօրանոցի արհեստանոցներում մեծ արագութեամբ փամփուշտներ էին պատրաստում:

Դեռ մթնելուն շատ օր կար, այն ինչ ծովն էլ իր կողմն էր ձգում իմ քայլերս: Իջանք Տոլմաբաղչէ մի քանի ընկերներով և պալատի մորմարեայ ծովափում սկսեցինք ձեմել: Յանկարծ տեսանք, որ Ոսկեղիցից մի քանի զրահաւորներ գուրս եկան, իրարից կէս կէս վերաս հեռաւորութեամբ և ուղղւեցան գէպի Սև-ծովը: Ընկերներիցս մէկը կատակելով ասաց:

— Զրահաւորները զնում են Սև-ծովը որ Սևաստապոն ու Օդէսսան ոմբակոծեն և գեաւուրներին ցըց տան, որ չի կարելի խալիքաթի ներքին գործերին մի-ջամտել:

Այդ այն ժամանակն էր, որ Բօսինայում և Հերցեգովինայում ժողովուրդը ապստամբել էր և Բուլղարիայում սարստիներ էր կատարւում: Միւս ընկերս, որ վրահասու չէր, թէ կատակ էր անում առաջնը պատասխանեց:

— Ոչ մայիս ամսին միշտ գուրս են հանում
Վ.Ի.Ֆ. Գ.Ա.Տ.

զքահաւորները, փորձեր կատարելու և Երեք դրանք
նեղուցից չեն գուրս դնալ:

Երբ այդ աեցք էլ ձանձրացած վերագառնա-
լու էինք, յանկարծ պալատական քսանը-չորս թիակնե-
րով մը նաւակ նկատեցինք, որ սրբնթաց մօակնում էր
պալատական նաւամատացցին: Սպասեցինք մի բոգէ
Հետաքրքրութիւններիս բաւականութիւն տալու հա-
մար, բայց մի այնպիսի այլաղէմ նեգր ներքինի գուրս
եկաւ այդ նաւակից, որ մեր ծիծաղը զսղել չըկարո-
ղանալով ետ դարձանք Լեցէի կողմը: Օխտամուրի ծո-
րում մի խումբ պալատական թիկնաղահ ձիւորներ
մեզ հետեւցին և երբ ետ դարձած գիտում էի, յան-
կարծ նկատեցի Զիային, որ մօտիցա անցնելիս այնպէս
նշան արաւ, որ հասկացայ, թէ բան ունի ասելու, ուս-
տի ընկերներիցու բաժաննելով ետ դարձայ և զիմեցի
Հասան-բէզի տունը:

Երեք մոյր մանելուն մօտ, ներս մօտաւ Զիան
այլակունւած, արիւնով աճքերը լցւած: Ինձ տեսնե-
լուն պէս գուստը պինդ կողպեց և ինդուած ձայնով
ասաց:

— Երամ, Երամ, ի՞նչի ես տասն և ի՞նը տար-
ւան եմ, ոչ թէ քսանը իննը, երեսունը իննը, ի՞նչի՞ ե-
րեսիս մազ ու միրուք չըկայ, որ խօսքս, ասածս ազգե-
ցութիւն ունենայ և մարդիկ վստահին ինձ: Ե՛, այս
ի՞նչ կրակ է, այս ի՞նչ պատուհաս է, ձաքում է սիր-
որս և ես միջոց չունիմ, որ կարողանամ նպատակիս
հասնել Հնարք չեմ զանում, որ կարողանամ համոզել:

— Բայց ի՞նչ է պատահէր, ախար ի՞նչ է եղէր, որ
այդպէս վրդովելի ես:

— Ա՛շ, երանի՛ թէ մի հնար լինէր և ես կա-
րողանայի հաւատացներ համոզել այդ յիմար, տխմար
արարածներին, որ ես չեմ սխալում, այլ իրանք են
սխալում, այլ իրանք են կոյր և թմրած, իսկ մեր
թշնամիները չեն քնում, գիշեր ցերեկ դպրաններ են
լրացնեմ:

— Բայց գործը բացատրի՛ր, հասկանանք ի՞նչ կայ:
— Ի՞նչ պիտի հասկանաս, հասկանալուցդ ի՞նչ
օգուտ, երբ մեր ձեռքում՝ ոչ մի միջոց չըկայ նպատա-
կի հասնելու: Ես իսպառ կըսելագարւեմ, կըմեռնեմ
եթէ զիշերս գործադրւի այն, ինչ ինձ այսօր առաւօտ
յայտնել էին սոյն նամակով: Բնագիրը պալատումն է.
կարգա, գա պատճէնն է:

— Բայց ո՞ւր էին սրարշաւ գնում քիչ առաջ,
ասացի աչքերս յուսահատ պատանու գէմքին սևեռելով:

— Կարգա, ամեն բան հոտիացիր: Թէև ես այժմ
պաշանական եմ, հրամայողներիս իշխանութեան տակ,
բայց քեզանից ծածկելու երկիւղ չունիմ: Կարգա, որ
հասկանաս, թէ ի՞նչ զիճակումն եմ:

«Աղիղ բարեկամս, աղնիւ պատանի:»

«Աշա մի ամիս է, որ ականաահս եմ, ականջ-
ներովս լսում, թէ ինչ է կատարւում և գարանւում այս
անգութ բոնաւորի տանը, որի գաղանութիւնների մա-
սին շատ լաւ ծանօթութիւններ ունին արքունիքում: Սովորաների աջակցութեամբ, սէրասքեարի (սպարա-
պետ) բազմոցը ձեսք գցելուց յետոյ, զիշեր ցերեկ ո-
րոգայթներ են պատրաստում և օրական Միդհատի,
թէշիգի և Խայրուլլահի հետ ամբողջ ժամեր առանձ-
նանում, ամենագաղտնի խորհուրդների, որի նպատակը

միայն այս գիշեր ինձ պազէց: Գուցէ դիտէք, որ ամբողջ երկրի բոլոր դաւասները, աւտններն ու մինչև իսկ մզկիթ ունեցող գիշերը պատճառավորների միջոցով հարցեր էին ուղարկւած, խալամի համայնքից լսելու, թէ ժողովուրդը ի՞նչպէս է կամենում վարւել իր գցըը փշացնող իր իրաւունքները կապառղ և իր շերիտթը ունետակ տեղ խալիթի հետ: Ինչպէս լսեցի, մոլուս Կղրիսի և Խայրուլլահ էֆէնդիի խօսակցութիւններից, ամեն տեղից ժողովուրդը համակերպել է Կղրիսի տւած ֆէթւային, ամեն մի մզկիթի իմամի ժողովուրդց սատրապւած հանրապրութիւն է սահցւել իմամի—ազամի գէմ որի համաձայն վճիռ էլ պիտի կայացնէ, կամ արդէն կայացրել է Խայրուլլահը: Ջտու պարզ էր, թէ դարանը ում համար էին պատրաստում բայց անշափ ցաւում եմ, որ միայն այս գիշեր, այն էլ ինչ գիշերից յետոյ միայն կարողացայ սոյն հաստատ տեղեկութիւնները իմանալ որը շատապում եմ ձեզ հաղորդելու, քանի որ, ինչպէս գիշերս գնդապեա և թիկնապահ Կղզեթ-բէզի խօսքերից կարողացայ ըմբռներ, գուք մուտք ունիք արքունիքում և կարողանում էք ամեն բան հասցնել նուիրական տկանջներին:

«Որպէս զի իմանաք, թէ որքան ծշրիտ են իս տեղեկութիւնները, նախ ձեզ պատմեմ ձեր սրտի և հոգու մօտ առարկաների մասին, որից կարող էք հետացնել մնացեաների հաւասարիքը: Ինչպէս սրտառչոր բորբոքումներով պատմում էր Կղզեթ-բէզը, գուք նրա ձեռքից լոլել էք, վաղուց պալատականների կողմց իրան խօստացւած Փաթիմէ սուլթանէին: Կամ աւելի ձիշոր ձեր քրոջ Զէմիէ սուլթանէի թախան-

ձանքների և ձեր մի քանից յաջողակ գործերի մասին, տասն ու հինգ օր առաջ հիւնքեալը ձեզ խօստացել է տալ նորան: Կղզեթը, որ մինչև այդ օրը ամենասկերիմ թշնամին էր Հիւսէն-Աւնիի փաշայի (սպարապետ), այդտեղ յայսերը փշրւելուց յետոյ, գաւաճանելով իր վեհապետին, ամեն սխննդրէ սարուկն է գարձել Աւնիի: Սրան ապացոյցը այն է, որ պարագում ձեր ներկայացրած բոլոր թղթերի պատճէնները մի երկու ժամկց համում են Աւնիի ձեռքը: Այնպէս որ Միդհատի տան լլահերը, որի գրւածներն Աշմէդ աղայից երկու անգամ ստացաք և ընդօրինակելով տւիք ձեր արքունիքը, արդէն ձերբակալելով, խեղդւեց և իրիկուն Բոսֆորի ձկներին կեր թափւեցաւ, իսկ Աշմէդ աղային քշել հն, բայց չզիտիմ ուր: Հետեւ աբար արդէն զուր էք որոնում Աշմէդ աղային հօթն օրից ի վեր: Դեռ աւելին, արդէն ներիքնապետներից երեքը Կղզեթի հետ և սրա միջոցով կաշառւած են, այնպէս որ ձեր մուտքը պիտի գւարեցնեն արքունիք, իսկ ձեր քրոջ ականջին ոչ մի խօսք չափիտի կարողանաք հասցնել: Հաւասացած եմ, որ քանի օրէ այս բոլոր ինքներդ արդէն զգացած էք:

«Աւելին յայտնեմ թէ և այս բանը սասարիկ ծանրը լինի և գուք Ճնշէք նրա ազգեցութեան տակ, բայց պարաքս կատարած լինելու և ձեզ վազօրօք բգդուշացնելու համար պիտի իմացնեմ որպէս զի նախ ձեր կեանքը պաշապանէք ձեզ սպառնացող վտանգից, յետոյ ձեր հոգեկցին իմացնէք, որ վստահ եմ թէ անմիջապէս կարող է մտնել հօրը մօտ և երեքիդ կեանքին էլ սպառն այսող վտանգից փրկել: Գուք վստահ եմ, որ ձանաչում էք, թէ այդ ալբանացի արիւնուուշտ Կղզեթը

որքան անգութ ու կատաղի մի գաղան է։ Նո նպատակին համելու համար միջոցների մէջ խարութիւն չի անիլ։ Այնպէս գաղանացած է, որ կարող է մութ տեղից, եաւելցդ անգամ մի գաղցն իրել կրզք։ Փաթիմէին ձեռքից չեհանելու համար, Փաթմէի միջոցով փառքերի հասնելու համար, նո պատրաստ է ձեռքերը թաթախել ոչ միայն թոյլ կանանց, այլ մինչև իսկ կաթնակերների արիւնում։ Անփորձ ես, հոգեակա, ես անմեղութիւնդ ճանաչում եմ վատաշի՞ր և հաւատացիր այս տողերին, համոզվի՞ր, որ սրբ զրոյը քեզ նըման Պաղստանի մի կորիւն է, քեզ արիւնակից է և երբէք տմարդի չի վարւել իր կեանքում։ Պուցէ, եթէ պարագաները նպաստեն, իմ գաղցնա փշէ չարազործի թեւերը... Բայց մինչ այդ՝ քեզ անշրաժեց է զգուտ ֆիար։

«Զիարծես, թէ այս լուրերը, լսելով մի որ և է այլ աղբնւրից, եկել եմ քեզ զրաւելու, կամ սրանցով քու գէմ որևէ գարան եմ յարում։ Երբէք, այդ միջոցին քու լեռնական եղբայրը երբէք չի զիջանիլ դիմելու, այլ վախենում եմ մինչև անգամ, որ քեզ էլ Հասան բէդի յետեից ըլզրին, որ ինչպէս քեզ զրել էր, Մալթէգների ծիրաններում հեծում է, իսկ թէ պիտի կարողանայ, վերագանայ, ինձ համար կասկածելի է... Այս բոլորից յետոյ ես համոզւած եմ, որ պիտի զգուշնաս, պիտի աչքերդ բաց անես, լիսցոյս ընկնես այն կռւի դաշոր, ուր քեզ հետեւում է, ալբանացի իզզէթը։ Զեմ կարծիր, որ դու վախենաս, վհասիս, ընդհակառակը աւելի մէծ քաջութեամբ պիտի մարանչես այն հակառակուզիդ դէմ, որ դաղանի քեզ հետեւում է։

«Քեզ զգուշացնում եմ, ոչ թէ միայն քու կեանքի համար, այլ քու այն պարտականութիւնները կատարելու համար, որն ստանձնել ես, որի համար և խօսացել է քեզ մեր իմամը իր զստեր՝ Փաթմէի ձեռքը։ Հոգեակա, արիսցի՞ր, մի գախենալ, զգուշացի՞ր, բայց ետ վախչիլը մեր սովորութիւնների շարքը երբէք չէ մտել։ Իզզէթը Աւնիի հետ մաերմանալով, գաշնակցելով, աւելի մեծ ոձիր գործելու են պատրաստ ուժ։ Աւնին ոչ պալատական օրիորդների ծիրանների տակ ստրկացող է, ոչ էլ ներքինների ընկերակցութեան կարստ, նո մի մեծ վրէժ է լուծերու, մի սոսկալի եղեռնագործութիւն է կատարելու։ Միդհամի ու Անիի հաշտութիւնը բոլորովին այլ պատակի համար է։ Ես հաւատացած եմ, որ զու այնքան խակ չես, որ ըլշականաս, զու պիտի բմբռնես, թէ ինչ խաղ է պատրաստում և ինչ նպատակի են ձգտում... Թէ ինչ միջոցով և կամ երբ, գեռ որոշ յայտնի չէ միայն անպատճառ այս գաղաններու վճռել են իրանց ձեռքերը թաթախել նւիրական արիւնում... այն էլ շատ կարծ ժամանակամիջոցում, զու ցէ այսօր, կամ վաղը...»

«Յա՛ ում եմ, որ անձնապէս չեմ կարող գոլ քեզ տեսնել. և երկար բացատրութիւններ տար, մանոււանդ որ ինչպէս քեզ վրայ սպարապետը լրտեսներ է նշակած, որոնք ամեն մի քայլափոխութ նրան զեկուցանում են, նոյնպէս իմ վրայ պակաս չեն քննող աչքերը։ Ուստի վստահ եմ, որ սցին տոմսակս քեզ հասնելուց յետոյ, դու իսկցին Ճանապարհ կըբանես, այս բոլորը մի կերպ աշխարհի երկպագութեան կենդրոնի ականջներին հասցնելու։

«Մի քանի անգամ խօսակցութիւնների մէջ լը-
սկը էի, բայց կատարելապէս հասկացայ. այսօր Աւնին
Իզգէթին հաստատապէս խօսք տւեց, որ Մուրադ է-
ֆէնդին գահակալելուն պէս, ամեն միջոց գործ կդնէ,
որպէս զի Փաթիմէ սուլթանէի մօր՝ Սրմայի խոստումը
կատարէ և Խզգէթին հասցնէ իր տեհնչանքին. Ուրեմն
պիտի արդէն գուշք ըմբռնէք, թէ Խզգէթը ի՞նչ գեր է
խաղում այժմ պալատում. նա ամենից սիրւած թիկ-
նապահն է և սուլթանի գիւտնի քարտուզարը ամենա-
գաղանի յանձնաբարութիւնները դրա ձեռքով է կա-
տարւում:

«Կարծում եմ, թէ ձեզ յայտնի պիտի լինի Զե-
միլին՝ ձեր քրոջ և Սրմայի յարաբերութիւնները. Խզգէ-
թի խօսքի համաձայն՝ Սրմայի սիրտը պատուում է
նախանձից և ատելով ատում է ձեր քրոջը. այնպէս որ
ներքինի էմինի միջոցով եբր տեղիկացրել է Խզգէթին,
թէ ինքը ամեն միջոցի կըդիմէ, խօսքը առաջ կըտանէ
և երբէք չի զիջանել որ Զեմիլին եղբայրը իր աղջկայ
հետ ամսւանաց: Եյս մասին ես շատ քիչ բան միայն
կարողացայ ըմբռնել քանի որ խօսակցութիւնները այ-
րաբանական էին և արդէն Աւնին ու Խզգէթը իրար
մտքերը գուշակում էին. կցկառւը նախադասութիւնն.
րից աւելի չէի կարող հասկանալ քանի որ մաւթ էր
ինձ համար շատ բան: Եթէ չիմ սխալում, Փաթիմէն
համաձայն չէ իր մօր հետ, թէն. Խզգէթի շրմունքնե-
րից այդ կէտի մասին շատ լակոնական բառեր էին մի-
այն թռչում:

«Կերջացնելով զեկուցումն, յըս ունիմ, որ ձեզ
հասցնեմ և մնացեալը գուշք կաշխատեք կարգի բերել

Վատահեցէք թղթաբերիս և եթէ կարեսր բան ունիք
հարցնելու, երկու տողով նրա հետ ինձ զրեցէք: Կա-
րեսր դէպքում նրան կրկնն կ'ուղարկեմ ձեր տունը. նա
էլ մեր լիուներից է, քաջ և ազնիւ տղամարդ:

«Հաւատացած եմ, որ այս բոլորը ուր որ հար-
կըն է զեկուցանելուց յետոյ, չէք մոռանալ իմ մասին
ևս յիշել ես լիսցոյս եմ, որ ինձ վարձատելու համար,
սպարաբապետի գոնից կ'ազատեն. կըմաննեմ. գոնէ պա-
լատական զինւորականների շարքը, եթէ արժան չըդաս-
ւեմ թիկնապահների խումբը մանելու: Ներցէք, որ
հանգամանքներս չին ներում, անունս յայտնելու, թէն
այդ բանը շատ շուտով ձեզ կ'իմացնեմ անձամբ, երբ
գուշք խայտառակեք գաւագիրներին և չարագործներն
սուանան իրանց արժանի պատիմը:

«Ճատպեցէք, արիացէք և աներկիւզ գիմեցէք
ուր հարկն է, քանի որ այս եղեռնագործները, գաղա-
րութիւնները կարած, գիշեր ցերեկ ձգտում են իրանց դը-
ժուխային զարհուելի խորհուրդը գործադրելու»:

— Ենչ արիբ, մինչեւ այժմ ի՞նչ գործ աեսար,
հարցը ես Զիսյին թղթի ընթերցումից յետոյ:

— Ոչինչ ոչինչ բառի բուն նշանակութեամբ:
Ի՞նչ կարող եմ անել, երբ ամեն գուռ փակւած է ինձ
համաւ: Երեք անգամ մօտեցայ աւագ արարողապետին,
երեք անգամին էլ մերժում ստացայ— «խորհրդի են
նստած, զբաղւած են». ասաց ու ճանապարհ դրեց:
Նտմակը ծրաբեցի, կնքեցի, տւի մի աւագ արարողա-
պետի, որ ուղղակի նւիրականի աչքերին մօտեցնէ, բայց
նա, թէն ինձ խոստացաւ ինդիրս բառացի կերպով
կատարել, տաւ աւ յանձնեց զլիաւոր քարտուզարին սու-

վորական կարգերի համաձայն։ Քանի անգամ թէշեդ տուցի սերքինսապէտի մօտ գնացի, քրոջս տեղեկութիւն ուղարկեցի, բայց նրանից ստացած պատասխաննիրից նկատեցի, որ թէշիդն էլ գաւաճանել եր։

Վերջը։

Վերջին յօյսս զրել եմ մի փորձ ևս կառարելու և պալատի վերատեսչի հետ տեսնելով, ինեղել մրասին ներկայանալու Ալլահի շքին։

Ուր էիր շտապում այն խմբի հետ։

Երբ զրահաւորները գուրս հանեցին Ոսկեղջեր ծոցից, խկոյն մօտեցայ արքունիքի թէրահաւատ վերատեսչին ու քարտուղարին, ցըց տւի զրահաւորները և բացարեցի, թէ ահա, արդէն Վիւքեալան (մի նիստութիւնը) իր քսանների խորհրդի առաջին նշանը տաց։ Նրանք թէ թէրահաւատաբար վերաբերեցին բայց խկոյն ներս մասն, ներկայացան ծովի ու շամաքի համատանակալին։ Թէ ինչ խօսեցան՝ ինձ յայտնի չէ, բայց խկոյն մի ծրաբ տէին, որ ներկայացնեմ ծովակալ թէշիդ-փաշային, որը փօխանակ անձամբ ներկայանալու մի ծրաբով ինձ վերաբարձրեց պալատ։ Բայց արդէն ուշ է, թոփ լրաբերու, առաւտօնեան զեկուցում բերողը, խօսաման համաձայն ըլվերագարձաւ։ Խնչակո երեսում է, այդ գաղանները շատ են շտապում ևս վերադառնամ որ գուցէ կարողանամ վերատեսչի հետ ներս մաներ, խոփ գու, հոգի, կեցիր այստեղ գուցէ զիշերն ինձ շատ պէտք գուս։ Առ այժմ ցտեսութիւն։ Ալլահիքում (Հիւրանոց) առանձին մնացի, միայն մի փոքրիկ սպասաւորի հետ։ Էօմեր թէզը և մնացեալ չէրքէվները զինւած, ձիաւորւած, հետեւցին Զի-

ային։ Թէեւ մենակ մնալուս համար շատ տխրեցի, բայց երբ մօտեցայ շանիշիրին, աչքս ընկան ծովի վրայ ծրփացող զրահաւորները ևնչափ ուրախացայ այդ գէպքից, քանի որ փողոցներումն էլ արդէն սովորականից դուրս շարժումներ էին նկատուում։

Ամբողջ Յօսփորի երկարութեամբ շարւած ութաս զրահաւորները զիշերային խաւարի մէջ ծփում էին, իրանց տչք խաղացնող փայլերով և հրավառ լուսաւորութեամբ։ Այդ զրահակիրները՝ մինչև իսկ զրբանց առագաստները և սնկերի ամենաբարձր կատարները լուսաւորւած էին, ծրագալյջի յատուկ ջահերով և նաւաստիները նաւերի վրայ, սիւներից հորիզօնական գծով կունւած առագաստային ձողերի վրայ, անգագար բարձրանում իջնում կարծես մարզութիւններ էին կատարում և կամ սուլթանի անց ու դարձեն սպասում իրանց զինւորական ողջոյնը մատուցաներու։ Հեռուն Հայգար-փաշայի ծովեզրեայ բարձունքում Սէլմիկ վիթիւարի զօրանոցի շուրջը նոյնպէս ահապին լուսաւորութիւնը կար, որն անդրագարձել էր ծովի ջրի մէջ և ինչպէս զօրանոցը, նոյնպէս ծովը ծփում էին լուսաշողող բոցերի մէջ։

Արտասովոր լուսաւորութիւնների շողբերը, ակամայ ձգում էին մարդու հայտցըը և վայրենական արագութեամբ աչքերը շըջել տալիս աջ, ձախ։ Ամեն մի բլրի զլիսի և ծովափին աչքի ընկնող զօրանոցները սոսկալի բոցափառութիւնների մէջ շողզողելով պատերազմող բանակի դիրք էին ստացել։ Մանաւանդ որ Թաշ-զլայի, Թագսիմի զօրանոցների զօրքերի մարզութիւնների ձայնը կանչւացները արդէն հասնում

Եին ակսնջիս: Այսու այն փողոցներից զօրքերը գին-
ւած շաբախ անցնում էին ահապին աղմուկներով և
Բէշեթաշի, Գաբաթաշի ու Օրթաքէօյի բոլոր փողոցնե-
րում տնկառատ հեծերազօրները խումբ խումբ եր-
թե եկութեան մէջ էին:

Նստեցայ շանիշերը և սկսեցի գիտել: Հորիզոնում
Բոսֆորը, երկու Հիսուսներից մինչև Մարմարա ծովը,
Սարայուքուրնի հրանդանը և Քաղքեղոնը ամբողջա-
պէս բացուում էր աչքի ասած: Քաղաքը և քաղաքա-
ցիք անհոդ, անտարբեր ամեն մարդ իւր բոյնը քաշւած,
ամեն հոգի իր հանգստութեան և բաւականութիւնների
անձնատուք եղած, երանց կեանքն էին վարում և կար-
ծես, ոչ ոքի չէր հետաքրքրում, թէ ինչ էր կատարում
զօրանոցներում: Բարկանեան թերակղզում խառնա-
կութիւններ լինելը, արգէն աշխարհ հոչակւած էր,
ամեն մարդ, առանց կասկածելու, համոզւած էր, որ
Միշտափի, Աւնիի ու Թէշիկ փաշայի զինուորական և
ծովային ցոյցերը ուղղւած էին դրանց դէմ և, բացի
այդ, ուղրում էին երսպական այն պետութիւնների դէմ
ցոյց անել որոնք անպայման պահանջում էին, որ
Օսմանեանները զիջանին այդ մանր մանր ազգութիւն
ներին:

Եւ ում հարկաւոր էր գիտենար, թէ ի՞նչ էր
կատարում: Քանի որ ամեն մի տան պատշաճից,
Գաբաթաշի զարիվերի և ապառաժի դագսթի բոլոր
բնակարաններից, քամին բերում էր քաղցր երաժշտու-
թեան հրձւալք երգերի ու բացականչութիւնների ձայ-
ները: Ամեն մի մաշտականացու, իր փոքրիկ ազանդեր-
քե սեղանը սփռուծ, շիլովն (ձռկ) ու պլասը, վարուն-

գըն ու աղցանը կարգին շարած, մաստիկայի շիշը և
մասնոցանման գաւաթը առաջ դրած՝ ջրի թասերի
հետ, ուտում էին, խմում, երգում էին ու ոգեսրւում:
Երբեմն երբեմն էլ պարտէզների միջից, վարդի սիրտ-
հար սոխակի երդն էլ նրանց ձայնին միախառնելով
զեփիւսի մեզմիկ սուլցների հետ՝ մի սքանչելի ներ-
գաշնակութիւն էին կազմում:

Մինչև կէս զիշեր այդ աստեղազարդ կապոյտ եր-
կնքի զմայլացնող շողշողումներով և զօրանոցների ու
զրահակիրների բոցավառութիւնները և շարժումները
տարիճանաբար սաստիկանում էին: Ալևս անհնար էր
տանից դուրս գալ իսկ Զիան ու հօրեղբօրորդին ը-
վերագրածոն: Թէ՛ փաքրիկ ընկերակիցս ինձ ընթերիք
բերեց, բայց համարեա թէ միշտ քնած էր և միա-
կութիւնս ինձ այնքան ախորհցրեց, որ երբ կէս զիշե-
րից յետց հարաւային ամպերն սկսեցին կուտակւելով
երկինքը ծածկել երաժշտութեան ձայները դադարել
ես էլ պարաւորւեցի ընկած տեղս անզգայաբար քը-
նելու: Երբեմն երբեմն կատաղի ձայները թէկ վոգո-
վում էին, բայց թմրութիւնս չէր թոյլ տալիս երկար
ժամանակ գիտելու փողոցների համանման ահսարան-
ները:

Առշալցոյի մօտ, սկսեց թնդանօթների արձա-
կումը, որոնց ձայնից խսկցն զարթեցի: Զրահակիրներից,
ամրոցներից ու զօրանոցներից փայլատակւում էին և ո-
րոտում աշեղ բոմբիւնով թնդանօթները: Վայն մի
մարտկոցից հարիւր ու մի անգամ որոտացին թնդա-
նօթները:

— Խորհուրդը կատարեցին, ասաց ներս մանե-

լով, Զիան, սուլթանին գահընկից արին, դաֆէսը գրին:

Զ

ՍՈՒԼԹԱՆԻ ՎԻՃԱԿԸ

Աւթ օրից յետոյ գարձեալ Բէշիգթաշ՝ Զիայենց առանն էի: Մի գեղեցիկ պարափղի վրայ նայող փոքրիկ գահիճումն էինք, ուր ընդհանուր թախիծ էր աիրում, ոչ ոք չէր ուզում մի որ և է շարժումով խանգարել միւսների մասնութիւնները: Գահիճում բարձր բաղմոցի վրայ նստած էր մի խանում, լէղդինուհու տարագոփ գլուխն էլ Գաղստանի լեռնու հիների նման ըսպիսակ շղարշով էր պատած, այնպէս որ ցանցառ շրջարշի տակից դէմքը կատարելապէս երկում էր: Տիկինը երբեմն այնպիսի վշտարեկ հայացք էր ուզում, որ ակամայ մարդ խորասուզում էր երեակայութիւնների մէջ, որոնք վայրկենական արագութեամբ անընդհարար այնպէս էին սահում մոտքի միջով, կատարելապէս տիրեցնում էին և մոայլում: Լուռ էին բոլորը, իսկ այդ լսութիւնը աւելի էր արտայատում, աւելի էր զգացնել տափսու քան թէ բառերն ու ձայները: Թախիծըն այնպէս էր բոլորիս վրայ ծանրացել, որ մինչեւն գաղամ հառաջանքները աշխատառում էինք խեղդել կոկոր-

դի մէջ: Խանում այնպիսի գիրք էր բանել, որ թէկ ոսկու, մետաքսի, մարգարիտի ու գոշարի մէջ չէր լողում, իր ոտքերի տակ մի համեստ Սալոնիկի կարպետ էր փոած, բազմոցը Գամասկեայ պարզ կտորով էր ծածկւած, բայց անչափ վեհ էր երկում, քան թէ տառջին անգամ որ սոսկումնի էի նրան ներկայացել:

Քաղաքավարութեան համար, նոր շրթունքները շարժեց և հարցրեց:

— Գառնուկա, Ե՞նչպէս ես.

— Ծնորչակալ եմ, տռացի մեղմ ձայնով, շփոթելով, շատ լաւ եմ:

Կրկին լուսթիւնը, նորից խուլ հառաջանքները, գարձեալ զիառումները և մաքի թռիչքները շարունակեցին իրանց գերը: Վերջապէս տիկինը հանգստութիւնը կոցրած, ոտքի ելաւ և սենեակի մէջ գանգաղ քայլերով մրմիջաց:

— Այսպէս է, որգեակի, այսպէս, աշխարհի բոլոր վայեկները, ասաց հոգեվառ հառաջելով: Աւթ օր առաջ սուլթանէ էի, իմ ոտքերիս, տակ խոնարհում էին Օսմանեան վեհապանձ գահի շուրջը պատող շաղկրտաները, սոզունները, իսկ այսօր, այսօր...

— Փառք առ' ի հաղար փառք, վրայ բերեց եօմեր բէդը: Ամու աղջեկ (Հօրեղբօր), ամու աղջեկ, փառք առւր, որպէսպի այն խաղաղութիւնը, երջանկութիւնը, որ չըվայեկցիր պալատում գտնես քո հայրենի անակում:

— Միշտ փառք, մրմիջեց Ֆէմիլէն, միաժամանակ լոելով, նորա կուրծքքը անչափ բարձրանում իջնում էր, նորա խուլ հառաջանքները սիրտ էին ծակում, նո-

բա հայացքը երբեմն մի աեղ յառած պլշում էին, երբեմն էլ կատաղի շարժումնվ փայլիրում էին, կարծես բորբոքւած վագրի նման ուղում էր յարձակւել տիրիկեցի գաղանների վրայ բզկտելու:

— Վայ քեզ աշխարհի պետի սիրելի, ահա քո վերջը... կմկնն շնչաց տիկինը դառն մաքերով յափշտակւած.—Քսանը չորս ժամ էլ ըսպահեցին պալատում... Խսդյն մունեափիկով. քաղաքացիներին պարտածուրտի հրաւիրեցին և մեզ մէկ—մէկ ոշխարի նման սրան—նրան բաժանեցին, ապարանքներից դուրս մըղեցին... Թշւառ կիներ, արդեօք երբեկցէ ձեզ խաղաղութիւնը համակրու է: Երեք չորս տարեկան հասակից պալատի պատերի մէջ փակւեցէք, երեսուն տարեկան գրեթեան գուրս թափւեցէք, ընկէք, ո՞վ է իմանում, ի՞նչպիսի մարդկանց ձեռքը: Ո՞չ ի՞նչ սոսկալի օր էր գաժան ներքինիները մի կողմից կողբատում էին թըշւառներին, խոստանալով լաւ լաւ փեստոներ, վերակացուհիները միւս կողմից, անխիղճ պաշտօնականներն էլ դրանը նստած յափշտակում էին թշւառների վերջին զարգերը, պալատական յիշառակները, առարկելով, թէ դրանք սէրայի վերաբերեալ առարկաները են: Մոլորած խղճալիները, դադիի, մուհաքէմի, ներքնապետի և խիզախ դաշիճների ճանկերից աղատելու համար, ի՞նչ զոհողութիւններ չէին յանձն առնում: Եյն խառնաշփոթին ում պէտքն էր, ո՞վ էր լսում տկարի ձայնը, ո՞վ ականջ պիտի զնէր յուսահատի աղիողում ձիշերին: Տղօռէներն հազիւ առիթ էին ձեռք բերել զրպանները տրզելու:

«Եշ, դաժան գտղան մնչեց քիչ լոելուց յե-

ոյց տիկինը ահ նենդաւ որ իրին քո տիրոջը, քեզ այն ապականութիւնից, նեխւած գարշութիւնից մինչև իր գահի բարձունքը հասցնողին ի՞նչպէս գաւածանեցիր: Ո՞հ, որքան ստոր արարած է մարտը, որքան ապերախտ... որքան գարշելի: Բէշիդ, ո՞չ Բէշիդ չէ քո անունը, իրիս է, սագայէլ է, գեռ էլ ստոր: Ախար քո գինը Ափրիկէում իշեց, խոզից էլ էժան է, այնաեղից, այն խոպան փայրից քեղ արարած աշխարհի երկրագութեան բարձունքին, հիխանսպեաներից երկրագւելու արժանացնողին, այս անհուն բարիքների տիրացնողին ի՞նչպէս գաւածանեցիր: Ո՞հ, աշխարհի բախտը ի՞նչ հրէների ճիրաններումն է, հիւնքեարի սուլմանները ի՞նչպիսի գաղանների պատուհասին ենթածախ:

«Ո՞չ միայն թոյը փիրուն կիներն են այդ զիճակում, այլ իրանք՝ աշխարհի սարսափն ու օհչասը իրանց իշխանութեան մէջ ունեցող մեծ իմամներն էլ այդ ստորաքարշ լոկիր գաղանների ձեռքերում խաղուիկ են... Դեռ ութ օր չըկայ ալեոր ներքինապեախին կառափնել աւեց և քեղ յանձնեց, անիծեալ Բէշիդ, այդ մեծ պաշոը ամբողջ պալստն ու իր կեանքը...»

«Ամեն մի ակնթարթիս, աչքիս առաջ կտնկնած է այն սոսկալի տեսարանը, այն զարհուրելի տրկոծը, տիրազրուժ Աւնին: Յանկարծ ահազին բազմութեամբ ներս մատաւ այն սրահը որտեղ չարաբախտ հիւնքեարը իր զաւակներին, փաքրիկներին հաւաքած, ուրախ, զըւարթ կատակներ էր անում... Սոսկալի է... ո՞չ, ո՞չ մարդիկ չեն, գաղաններ են... Գաղանից էլ անդութ, քանի որ գաղաններն էլ կարեկցութիւն ունին, գաղանգիւթիւնը գուշ.

ներն էլ յաւակցող սիրո են կրում։ Երկու անդամ հրամայեց, որ չի ուզում այն հրեշի երեսը տեսնել, բայց . . դաւաճանները, մեծից փոքրը, բոլորը, ուրացել էին նրան, նրանից երես էին գարձրել կարծես ժանախտով բըռ-նւած լիներ, բոլորի զգւանքին ու ատելութեան էր արժանացել։ Հակառակ նրա անդառնալի հրամանին՝ ներս մտաւ Ճիւաղը։ Այն ի՞նչ քստմնելի ժամ էր, այն ի՞նչ պժգալի արարածներ էին։

— Յանկարծ բոլոր լուսամուտների վարագոյրները միաժամանակ քաշւեցան, լուսամուտների փեղկերը բացւեցան։ Ըոլոր զինւորական նաւերի, դշլաների թնդանօթները ուղղւած էին պալատի վրայ. բոլոր զինւորները, լուսաւորութեան մէջ, հրացանները ձեռքերը կազմ ու պատրաստ։

— «Իսլամի իւլէմների ֆէթւայով, համիլամ - կանութեան ցանկութեան և Շէյխ-իւլ Իսլամի վճռով՝ սուլթան Մուլատ ե. գահ բարձրացաւ և ձեզ հրամայում է բարեհածել վանդակ մանելու, ասաց լրբութեամբ Աւնին, սուլր քաշելով—Հակառակ գէպքում, ահա՛ տեսէք, մի բոպէում, մի նշանով պալատի հիմքը արեի տակ կըրացւի»։

— «Բանեցէք, զարկէք, այդ շան աստմները փորը թափեցէք, սատկացրէք» . . որոտաց թշւառ հիւնքեարը, բայց ոչ ոք չըշարժւեց իր տիրոջ հրամանը գործադրելու։

— «Իմ առիւծիս մի մօտենաք, իմ առիւծիս մի դիպէք, զոռում էր խեղճ թագուհին, բայց ո՞վ էր նրա խօսքերին ուշք գարձնողը։ Երբ բորբոքւած նա վերցրեց սեղանի փոայից ատրճանակը, քաջարար պաշտպան-

ւելու, կամ մեռնելու . . ո՞չ, ապերախտ մարդիկ . . Աւնին մօտեցաւ, բանեց թեկերից և նրա գազան ընկերակիցները թշւառին քաշէքաշ խալաթով ու բարուծներով գուրս հրեցին, տարան . . .»

Լոեց, յուզուեց տիկինը, ընկաւ բազմոցի վրայ. նրա աչքերը փակւեցին, մի քանի ժամանակ նւազածի նման մնաց անշարժ տեղն ու տեղը։ Յեայ ընկողմանած մրմիջեց.—Գուցէ ձանապարհներ կարող աւազակներին, տուն քանդող գողերին, ժողովրդի գէղերին կրակ տւող սրիկային, մարդասպանին այնպէս ըլքաշըշէին, շանարդէին, ինչպէս քեզ քաշըշեցին, տարան . . . Տարան, ո՞վ գիտէ ուր . . . արդեօք ձանապարհին քաշեցին, խեղդեցին, կտրահեցին, թէ աեղ հասցնելուց յեայ. . .»

Նա գարձեալ մի առ ժամանակ լսեց։ Նո մտածում էր, նրա աչքերը, մկանները անընդհատ փոփոխում էին, կարծես նրա աչքերի առաջ տեսարաններ էին կատարւում, եղեւնական արկածներ էին անցնում։ Նա ցնցւում էր, սարսափում, փայլում էին աչքերը կատաղութիւնից կամ թուլանում, մարում։ Բայց չէր կարողանում գաղարել, մի քանի բոպէ անցնելուց յեայ նա կրկին մննչեց։

— Աւնին կիրաւ իմ առիւծիս զլուխը, Աւնին նրան ասապալեց, սիրաը յօշոտեց, վրէժը լուծեց . . . Հապու առիւծիս վրէժն ո՞վ պիտի լուծէ։ Ալս, Հասան, Հասան, ո՞ւր ես Հասան, եղբայր, հասիր, է՛չ, երեցի՞ր, է . . . Ալս, ախտէր, միթէ գու էլ Աւնու ձանին ընկար։ Ախտէր ջան, զոնէ ոսկորներդ գտնէի, հողին յանձնէի։ Հասան, Հասան, եթէ գու մեզ մօտ լինէիր, իմ առիւծի ձանկից արջը ողջ չէր աղատաւիլ։ Հասան, Հա-

սան, գուրս արի յօշտիր այս արջին, ոտքիդ տակ զլորէ սրա զիակը, որպիս զի ես, ևս խաղաղ հողւով իջնեմ զերեզման: Թշւառ սուլթան, չասանին կորցնելու օրից, բախտ էլ շուռ եկաւ: Երկու անբուժելի զէրք, սոսկալի է, անտանելի է... Խեղդւում եմ, կարծես թունաւորած լինեմ ձայնս կտրում է...»

— Հերիք է, ֆէմիլէ, հերիք է, ասաց Էօմէր բէզը վշտալի սրտով: Ես այսօր աշողի մօտ էի, նա նայեց ու տսաց.— «Պրգայ, անհոդ եղէք, մինչեւ ութ օրը կըհասնի»:

— Այդ աշողն ո՞վ է, ասած տիկինը, խնդրում եմ, զնա, նրան ինձ մօտ բեր: Ո՞հ, զրանք էլ խաբեբայ են, զրանք էլ շաղակատ են, միայն կողոպտելու, քերթելու համար են...: Գարձեալ մելամաղձութեան մէջ յափշտակւեց տիկինը և քեզ լւելուց յետոյ շնչաց.

— Մո զիկը, քնքոյշ լարերը, ճարտար մատները, յափշտակւած երեակայութիւնը, անշունչ տախտակները, մետաղները ե՞րբ կարող են այն ողբն ու կոծը, այն ներդաշնակութիւնը նւագել, այն աղիողորմ մրմունջները, հառաջանքները, Ճիշերն ու գոչեւնները բարձրացներ, ինչ որ այդ ժամկն երեք չորս հարիւր մատաղահաս կանայք, միանւագ ձայն ձայնի տւած կոծում ողբում ու սղում էին: Ո՞չ, չեին երգում, ո՛չ չեին կանչում, այլ ոգի գառած, հալւում, մաշւում, սղոցւում, խարտում փոշի գառած, երկինք էին համբառում... Այդ խմբական մեղեղին, այդ վշտի նւազը, ահաւոր սրահներում, նրբանցքներում, սուզ ու մորմօք էին տարածում: Մեղմ քնքոյշ էին այդ ողբի ձայները, կարծես բոլորի թռքերը մաշւել, խարիստալւել էին բոլորի ոոկոր-

ները, քայքայւել էին մոկրն ու մկաններն և հիւէներ դարձած օգի մէջ ծածանւում էին:

«Եւ յանկարծ ներքինիների սագայէլական լուսապոտ ձայները, որոտումները, լախտերի ծայրերի յառակի մարմարներին զարկելու շրիկոցները, դոների արտգ արագ բաց ու խուփր իրանց ճանչիւններով թրիկոցներով, պահապանների սանոցով՝ լնդհատում էին այդ սրտմաշուք ողբերը...»

— Ափսոս, ծովը չի երեսում, Էօմէր բէդ, մի կանգնիր, ծովը թող միշտ աչքիս առաջ լինի. Նրա ալիքները իրանց անվերջ ծածանումներով, վիշտս էլ իրանց հետ տանում հետացնում են հորիզոնի հեռաւոր խորքերը, ուր ահաւոր լիոնները, սքանչելի տեսարաններով, մարդու աչքը զրաւելով, մոռացնել են տալիս վշտերը և սրտերը յուսապերելով, կեանքը բազցրացնում են... Քաղցր կեանք, տպրել էլ ինչի՞ տպրեմ, ինչի՞ս է պէտք կեանքը, երբ առիւ ծո զրուեց, կորիւնս (Հասանս) աներեւյթացաւ:

— Ի՞նչպէս թէ «Էլ ինչի՞ս է կեանքը», ֆէմիլէ, ուրեմն զոնէ իմ զերջին օրերս էլ չի՞ս միթարւելու: Երիտասարդութեանս ժամանակ քեզ գրկիցս խլեց խալիֆը (նա Ալլահի պատկերն է աշխարհի վրայ, ամեն բան նրանն է), իսկ այժմ, այժմ երբ բախտը քեզ կրկին զիրկս զցեց, միթէ ըլպիտե երջանկացնես քո ամուսղին: Միթէ քո դժւանքին, փայփայանքին ըլպիտի արժանացնես այս վիրաս, որ Գաղստանի լեռներից մինչեւ այստեղ ձքից քաշ տւիր:

— Իրաւուք ունիս, ամուսղայ, ճակատագրին պիտի հնագանգնէք: Մենք մաւսուլման ենք և հաւա-

առւմ ենք, որ մեր գիճակը սկզբից նախասահմանել է Ալլահը: Եւ այժմ Ալլահի կամքովք զնազանդելու պարտական եմ: Քեզ բախտաւորելու համար ամեն զոհողութիւն կատարելու եմ:

Էօմէր բէզը յուզւեցաւ, նա չէր կարող այս խօսքերը անտարբեր լսել նա խկցն դուրս գնաց սիրտը հովացնելու: Զէմիլէն Էօմէրի վիճակւած կինն էր լինելու, իրանց կրօնական և տոշմական սովորութիւնների համաձայն, այնպէս որ արդէն փոքր ժամանեակից իրար վրայ այդ հայեացքով էին մաիկ տւել նրանք: Բայց մեծ գաղթականութեան ժամանեակ, երբ Զէմիլէի ծրնողները Դաղստանից գետի Տաճկաստան ճանապարհ ընկան, Զէմիլէի մայրը, Հակառակ Էօմէր բէզի Շախանձանքներին և իրանց բարեկամների խորհրդներին, յամառեց ու ըրտեց աղջկանը տսելով:

— Իմ աղջկան ուզողը անհաւասի հողեց դուրս կըդայ, Խալիֆաթի սահմանը ինձ կըհետեւ ու ապա կըստանայ:

Դաշիճ կինը իր կամքը առաջ տարտւ և ըստեց Զէմիլէին Էօմէրին, այնպէս որ վերջինս էլ Ճարահատ, տուն, տեղ ծնողներ և ազգականներ թողեց ու հետեց Զէմիլէին: Բայց արդէն ուշ էր, Էօմէր բէզի կ. Պոլս Հանելուց մի տարի առաջ, Զէմիլէն արդէն սէրպէն սէրպիում օլալըդ էր: Կտառզի լենականը, ապառաժների որդին, արիւնկզակը, իր սիրելուն ձեռք բերելու յոյսով քսան տարու չափ սպասել էր, տանջւել էր, վերջապէս հասել էր նպատակին: Այս ուրախութեանը, տենչանքին հասնելուց յետց, զգացած բերկրանքը նա չէր կարող սառնասրառութեամբ տանել, նա թուլացել

էր, նա բարի էր դարձել, նա երջանիկ աշխարհումն էր իրան երեւակայում: Թէկ նրանց նիքեահը (դաշն) կապւած էր, Զէմիլէն Էօմէրի կինն էր, բայց իսլամի շէրիաթը անչափ մարդագննին է, այնչափ նրբագննին, որ գեռ երեք լուսին Էօմէրն ու Զէմիլէն իրարից բաժան էին ապրելու:

— Խեղճ կիներ, ասաց քիչ լոիլուց յետց Զէմիլէն, տանջւելու և առօրելու համար աշխարհ եկած թշւառներ, արդեօք հանգիստ գտաք. արդեօք ձեզ իրանց կին առնողները տուն, տեղ, գոնէ համեստ սեղան ունին: Չեր ձեռքերը, որոնք պալատում դադարման էին գատապարտւած, այսօր տաքի, պաղի, աղիի ու կծուի մէջ գիմացան: Եօթութ հարիւր կին արձակւեցան, բաժանեցան. արդեօք դրանք ի՞նչ անկիւններ պլորւեցան... Բայց լաւ է, գոնէ աղատւեցան այն փականներից, այլ ևս չեն տեսնելու ներքինի դաշիճների գերերը: Ազատութիւնը կրթեթեացնէ նրանց վիճակը:

«Տան հաղար լիրանոց շողակ գիտերովս հազիւ կարողացայ կաշառել դաշիճն և կեանքս գնելը Ով գիտէ, եթէ քիչ ու, դար Զիաս, Էօմէր բէզը, իմ գիտակս էլ անյայտութեան անդունքը պիտի զլորէին, կամ մէկից կաշառելով, ինձ նրա հետ ամուսնացնէին և յաւիտեան տանջանքի գատապարտւէի...»

«Այս, առիւծս, արծւիկս, անիրաւ արջը, այն խոզի ընկերը, ի՞նչպէս յանդգնեց, ի՞նչ սրաով իր ձիրաները քու արիւնովդ ներկեց... Աղիզ-սուլթան, միթէ այդ էր քու Ճակատագիրը: Ուրեմն, Ալլահը աշխարհի սահմանելուց առաջ՝ այդպէս էր վճռել, որ քո Ճառաները իրանց ձեռքով քեզ յօշոտեն և ի՞նչ յանցանքիդ

Համար... Ոչ Ալլահը այդպէս անգութ ճակատագիր չէր կարող գծած լինել ոչ, նախասահմանութիւնը այդպիսի վճիռ չէր կարող կայացրած լիներ, այդպիսի գաժան գործեր միայն գաղանաբարոյ մարդիկ կարող են կատարել. Ալլահը իր շքին. իր բարիքներին արժանացածին չէր գցիլ... մարդիկ նրան գաւաճնեցին:

—Այս, քոյրիկ, ես այժմ հաւատում եմ, որ ճակատագիր չըկայ, ասաց Զիան, նախասահմանութիւնը չըկայ: Ես որքան վիճել եմ, արա հակառակը պնդեր, բոցց այժմ համոզւած եմ մենք կցը եինք և չենք ըմբռնում:

Այդ միջոցին ներս մտաւ Էօմէր բեզը և մի տոմսակ առաջարկեց Զիային, որ ուրախութեամբ թրռաւ տեղից, յափշտակեց. պատահեց ծրարը և ոկտեց լոիկ կարգալ:

—Փառնուկս, հողեակս, ի՞նչ նամակ է, ո՞րտեղից է:

—Քոյրիկ, ասաց Զիան զւարթագէմ պալատից է, Փաթիմէից է, պէտք է, որ ես զնամ նա ինձ կանչել է:

—Ճանաչնում ես գերը, ծածուկ նշան կայ, չը լինի նոր դարսն սարքենք քեզ համար:

—Ոչ, մանուանդ որ պարատից դուրս ենք տեսնելու և բոլորվին առանձին ենք լինելու:

—Փառնուկս, ես վախենում եմ, ոիրաս տրոփում է, զգաց զգուշացիր մինչև իսկ շապիցը, քանի որ մարդկանց վրայ չկ կարելի վստահիք:

—Քոյրիկ, մի՛ ատէք մարդկանց, մի՛ նախատէք մարդկանց, մի քանի յարերի համար...

—Մի քանի չէ, հողեակս, մի քանի չէ, միլիօն-

նէր, միլիօնաւոր մարդիկ աշխարհի ամեն մի անկիւնում ամեն մի մզկիթի իմամի ժողովուրդ համախօսական թերթեր են ստանում, իսրայում և կնքում են, թէ իրանք իրանց խալիֆին չեն ուզում, նրա գոյութիւնը իրանց վարդապետութեան ոգուն հակառակ են գտնում և խալիֆայութեան գահը նրա ձեռքից խլեռփ ուրիշն յանձնելին են պահանջում: Եւ այդ միլիօնաւոր անհամաների մէջ մէկը չի գտնում: Որ գայ և զգուշացնէ իրանց իմամին:

—Զգուշացրին, բայց նա չըհաւատաց և իր սիրելի գաւաճաններից չուզեց բաժանւել, ասաց բորբոքւած Զիան: Յետայ ինձ գառնալով ասաց.

—Դու կըմնաս մինչեւ իմ վերագառնալ:

—Ոչ, ասացի, ուշ է, պէտք է լիցէ, վերագառնալ:

Ու միասին դուրս ելանք: Այդ հրաւելը անջափ հետաքրքրում էր ինձ, եթէ հնարաւորութիւն ունենայի, կընկերացէի, բայց այդ բանը նա անկարող էր թոյլ տալ քանի որ առաստակով իրան հրամայել էր Փաթիմէն, բոլորովին առանձնութեան մէջ տեսակցել: Երբ բաւական առաջացանք և արդէն ճանապարհներս բաժանւեց...

—Զիա ասացի, ի՞նչ էլ որ պատահի, շատապիր ինձ տեսնել և մի քանի բառերով աեղեկութիւն տալ: Եթէ եգուց մինչեւ Ճաշ տեղեկութիւն չըհացնես, պարտաւորուած կըլինիմ դուրս գալ լիցէից և ձեզ մօտ գալ:

—Գիշերս կամ առաւօտ, եթէ չըմեռայ, քեզ տեղեկութիւն կըհացնեմ:

Բայց և այնպէս ամբողջ գիշերը Զիան և նրա

Փաթիմէն մոքիցս, երևակայութիւնիցս դուրս չեկան:

Ե

Ե Ա. Ի Է Ր Ի Զ Զ Է Թ Ը

Թէև Զիսյից բաժանւեցի և ուզեցի գնալ Լիցի, բայց հետաքրքրութիւնս ինձ ասստիկ տանջում էր, անպատճառ ցանկանում էի լսել, թէ ինչ հետեւնք կունենայ այդ տեսութիւնը: Եա դառնալու ըրկարողացայ զիջանել առանց կանգ առնելու դիմեցի նպատականդիս: Ամբողջ զիշերը տնրնդհատ ու երազիցս ըշհռուցան Զիսն ու Փաթիմէն, կարծես թէ իմ հարազանելու լինէին, թէև վերջինի երեսն անգամ տեսած չէի: Երբ հետեւալ օրը Ճաշից դուրս եկանք, դոնապանը գարձեալ ինձ կանչեց և ես համոզւած, որ Զիսն էր կանչողը, արագ քայլերով դուրս վագեցի: Արդէն մի ժամից աւելի նա սպսսել էր ինձ և հեռւից նկատելուն պէս ասաց: — Գնանք:

— Գնանք, ասացի և յետ դառնալով բաձրացայ ննջարան վերաս փոխւելու: Սիրոս անհամբեր, ասստիկ բարախում էր: Դուրս գալուն պէս Զիսն թէս մտաւ և Թագսիմի կողմը ուզգւեցանք:

— Հան ի՞նչ կայ մեր աղայ, իրիկունն ի՞նչ արիր, ասա տեսնեմ:

— Ոչինչ չըկայ, ամեն բան յաջող է և կարդին: — Փաթիմէին տեսար, ի՞նչ ասաց, ի՞նչ էր կանչել:

— Նա ինձ յայտնեց, որ ծանր մնամ և բոլորովին չըկասկածեմ ատրբերւող լուրերից: Նա ամենայն քաջութեամբ կըդիմազրէ, բոլոր արգելքների առաջը կառնէ և նպատակին կըհասնի: Բացի այդ նա յայտնեց, որ ինձ համար խնդրել է մայր-սուլթանից, որ իր թիկնապահների կարգն անցկացնէ և ասաց, որ առաւոտ խնդիրք ներկայացնեմ:

Ինչպէս յայտնի է Մայր-սուլթանը Փաթիմէի մօրը՝ Սըրմայ սուլթանէին տոռւմ էր, այնպէս որ իզզէթի Սըրմայի միջոցով կատարեալ տւած խնդիրքը՝ նրա գործը բոլորովին ներհակին էր հասցրել Այն ինչ Նըլլը-Ալայից (թուր կապելու հանդէսից) յետոյ, կատարեալիք հարսանիքների կարգին, մայր-սուլթանը անցկացրել էր և Փաթիմէի անունը, որ ասանհինդ տարւան էր և ժամանակին անցուցած: Մայր սուլթանը թէս խոստացել էր, որ ինքը քննել կըտայ և եթէ խալիֆն էլ բարիհանձէր, իգելթին կըբախտաւորացնէր, բայց եթէք անգամ առանձնակի կանչել էր տւել և Փաթիմէի կամքըն էր հարցրել պալատում դժութիւն ունեցող կարգերի համաձայն: Փաթիմէն ինքը բան չէր պատմեր, այսքան էր միայն ասել որ հայրը երան նշանել և տւել էր, հայրական այդ վճռի դէմ ո՛չ միայն նաչէր կարող տըրտնջալ այլ սիրով հետեւելու մտադիր էր, որպէսզի եղեմում չըկշացնէ հանգուցեալի հոգին և ինքն էլ Ալլահի շէրիաթի գէմ չըմեղանչէ ներքինի թէշիգը և ընկերակիրներից շատերը արդէն հաստատել էին մայր-

սուլթանի մօտ հանգուցեալ սուլթանի խօսքերը: Արպէս զի նենգութիւնների և խիստ միջոցների ըրդիմեն, ֆաթիմէին ապսպրել էր, որ լոի, մօրը դէմ շատ չըվեծէ: Այսպէս որ այժմ ֆաթիմէն իզզէթի քթից բռնած խաղնում էր և խօստավանեցնում էր, այն բոլորը՝ ինչ որ անցել էր պարատում վերջին դէպքերի ժամանակ և այդ անմիտը ամեն բան իր ձեռքով գրում էնքում և հասցնում էր ֆաթիմէի ձեռքը: Մինչև անդամ խօստավանել էր իր յարաբերութիւնները Աւնիի և Միդհատի հետ: Ֆաթիմէին թէե այդ բոլորը կատաղացնելու աստիճան բորբոքում էր, բայց զանազան մեքենայութիւնների զոհ չըդնալու համար, ուզում էր այդ միմային առաջքաշեր թէ նրանցից կարեւոր տեղեկութիւններ քաղելու մաքով, հօր ապանձան պատմութեան մանրամասնութիւնների հետ ծանօթանալու համար և թէ իզզէթին քնննելու դիտմամբ:

— Ո՞հ, ինչ զգւելի պատկեր է, այդ ինչ աստիճանի ստորութիւն է...

— Աչա մեր կանանց վեճակը, ոչ միայն հասարակ մայկանացւոն, այլ մինչև անդամ ֆաթիմէի նման մի շահնդուստր գոտապարտուած է կամայականութիւնների և որպէսզի կեանքը փրկէ, նպատակին հասնի, պարտաւորւած է կեղծելու, նենդելու... Բայց այդ թուզ, զա հին ցաւ է, այժմ ինձ տառ, ինչ ծրագիր կազմեմ, որ կարողամամ այս սոսկալի անդունդից աղատել սիրելիիս:

— Ուղիղը ծանր կացութիւն է բացի համբերելուց և սպասելուց, ես մի ուրիշ եք չեմ կարող մասածեր Պիտի սպասէք նպաստաւոր դէպքի, որպէս զի կարո-

դանանուք նպատակի հասնել...

— Բայց հակառակորդս չի սպասում նա զիշերցերեկ ձգտում է, միջոցների է դիմում, անշարժութիւնը, համբերութիւնը միայն իշուն վայել է...

— Բայց ինչ կարող ես աներ, Գաղատան չես, որ փախցնես, տունդ տանես, հետեւողին գնդակահար անես, քիւրդ չես, որ փախցնելուց յետոյ, վրաներդ հաւաքես, մի ուրիշ հովիտ, կամ սարահարթ քաշւես: Հասարակ մի քաղաքացին աղջիկ չե, որ գնաս, սպասնաս կամ համոզես: Հետեւաբար սպասելուց, համբերելուց ջոկ՝ միջոց ըրկայ:

— Այս, բարեկամն եթէ սրտիս խորքերի վերքին ծանօթ չըլինէիր, այդ խօսքերդ բնաւ չէին այրել թոքերս, բայց ...

— 2ըդիտեմ, թէ ինչ ազգեցութիւն կարող է թողնել իմ խօսքերը. միայն թէ զուտ ճշմարտութիւնն է, և ուրիշ եք չեմ կարող կարծեր որ գտնւի:

Զիան հառաջեց և լոեց այնպէս երկար ժամանակ, նա այնքան խրւած էր այդ տիտուր մոքերի մէջ, որ իմ ներկայութիւնն էլ մոռացել էր և մեքենաբար առաջ էր գնում: առանց զիտենալու, թէ ուր: Ոլոր մոլոր քայլեսով իջնում էինք Թաշ-Ղլայի ձորից և երբ գազային լուսաւորութեան կենդրոնական կայսրանի աշաւոր երկաթի կաթսաների կողքից անցնում էինք, մեզ գիմուռուց մի չերքէզ որ աչքերով չորս կողմը զննելուց յետոյ, մօտեցաւ և մի ծրար տալով ասաց.

— Բէյ, իրիկւան կըգամ պատասխանը ստանալու:

Զիան թէե նրան շատ լաւ ճանաչում էր, բայց

ոքոշացի ՅԱ տառ

քնից սթափւողի նման անպաշ կտրած, մի վայրկեան տատանւեց և ապա ծրաբն առնելով, զլիով նշան արւեց, որ գնայ: Իսկոյն սթափւեց թմրութիւնից և ծրաբը բաց անելով, երբ նկատեց ձեռագիրն ու կնիքը, մրմիջաց.—Նրանն է, շտապենք և կարգանք:

—Միթէ թղթաբերին չե՞ս ճանաչում, որ կասկածեցիր, ստուգեցիր:

—Ճանաչում եմ, բայց և այնպէս զգուշութիւն պէտք է: Շտապենք:

Մենք արագ քայլերով հասանք և Զիան դեռ ընստած սկսեց բարձր կարգալ.

Թիւ 11

²⁷ ₈ յունիսի 1876 թ.

«Մի քոնի օր է, առաւօտ վաղ երեսում են մեր գաւթում երկու մալթէզներ և մի յզն ու ամբողջ ժամեր սպասելուց յետոյ, անյօյս շւարած հեռանում: Դրանք ծածկաբար—այդու խորթերում աղայի *) հետ տեսնում և երկար խորհրդակցելուց յետոյ, խոտորնակ ճանապարհներով, երբեմն պարտիզի կողմանակի դռներով ճանապարհ են դրւում: Այդ մասին նախորդ նամակներում միշտ լսել եմ, քանի որ ոչ մի բան չէի հասկանում և չէի կարողանում ըմբռնել դրանց խորհրդաւոր այցերի նպատակը: Իսկ այսօր մասամբ ինձ պարզւում

* Ամեն մի թրբական մինիստր իր տան աղան ունի, Սրանք տերոջ փոխանորդաբար հեւրեր են ընդունում, տնական և տնտեսական գործերն են վարում, կաշառի բանակն որոշում, ընդունում, պաշտօններ բաշխում, մինիստրի անձամբ կատարել չըկարողացածը, կարգադրում են: Աղան մինիստրի ոչ պաշտօնական լիազօրն է, ամենակարող և անսանձ:

է, որ նոր գաւ է սարքւում և այն էլ եթէ չեմ սրխալումքո մասին է, կամ ձեր տան համար է:

«Ինչպէս նախորդ թղթերովս ձեղ զգուշացրել եմ վստահ եմ, որ գուք տռանց տատանւելու հետեւում եք խորհրդիս: Յամենայն գէպս զգուշութիւնից չեք վստաւիր: Այս մալթէզները, անպայման երկուսով են գտիս, որոնց առաջնորդում է երրորդ յշնը. փողի խնդիր ունին, պարտիզան ալբանացիները, յայտնի բան է, ինձ ոչինչ չեն տսեր բայց մեր տղերքը աղայի խօսքերը լսել են, որ տսել է յշնին.

—Թէ ինձ չեն հաւատում, թող գիմեն փաշյին: Ես նրանց մի փարա էլ չեմ տայ, մինչեւ որ խօսացածները չըկատարեն:

«Երեսում է, որ գրանց յանձնարարութիւն է եղած և խօսացւած է աւանս. այն ինչ առանց աւանս վճարելու, կամենում են, որ գրանք գործը դլուխ բերեն, ապա ստանան վարձը: Իսկ այդպիսի կսկածաւոր և վտանգաւոր գործերը, դուք զիտէք, որ առանց աւանսի չեն գործադրւել: Մալթէզների մասին կասկածում եմ: Նրանք թէե մալթէզների արագներում շտայնդուցն են շարժւում, բայց աւելի կրէտեցների են նման. մանաւանդ որ յունարէն են խօսում: Վերջին անգամ երբ բորբոքւած հեռացել են, աղան տսել է.

« Մինչեւ այդ չերքեզին չըսատկացնեն, փարա չեն ստանալ: Այս խօսքերից ես գուշակում եմ, որ ամեն բան ուղղւած է ձեր տան կողմը: Մանաւանդ որ մալթէզները հեռանալուց շատ չանչած՝ իզգէթն եկաւ մի ժամ աւել աղայի հետ խօսակցութիւն ունեցան, զերծ Աւնիի մօտ մտաւ և ուրախ ուրախ հեռացաւ:

«Անպայման մի չերքէզի հաշիւ են ուզում տես-
նել և սպանել տալ: Այդ չերքէզը կամ մալթէզների
Ճանկում գտնւած եղբայրու է, որին տաելով առում է
Աւնին և կամ դու ես, որ քեզ գէմդաւ է ուզում սար-
քել իզգէթը: Եղբօրդ նամակից յայտնի է, որ մալթէզ-
ները նրան խոսացել են կեանքին չըդիպել այժմ
Բնչ հանգամանք կարող է սախակել որ նրա կեանքի
գէմ ձեռք բարձրացնեն: Նրան հեռացնելու պատճառը
արգէն պարզւեց: Այժմ որ զործը դու-ի բերին և վար-
իչեցրին հիւքեարին, ել ի՞նչից սախաւած հասանի գէմ
պիտի զինւեն: Ուրեմն մալթէզներին նոր զործ է յան-
ձնւած, դուք պիտի անչափ զգոյց լինիք:

«Բացի այդ, Հասանի գործը տրվէն կատարւած վերջացրած են, նրա մասին ինչ որ խոսացւած էր, չեմ կարծում, որ մինչև այժմ հատձգեին։ Ուրեմն կամայ տկամայ, ես ստիպւած եմ կասկածելու, որ այս դաւը սարքում է թզգեթի ծրագրով քո դեմ։

Այս բանը գրելով, երբէք չեմ ել մտածում
ձեզ վհատեցնել, կամ խորհուրդ տալ, ես կենաք ձեր
մոքից ընդհակառակը, ես մտածում եմ ձեզ զգուշաց
նելով, որ և է վատնիքից փրկել: Ես համոզւած եմ, որ
գուք աւելի մեծ եռանդով կըշարունակէք ձեր սկսածնե-
րը և օր առաջ կրծանաք նպատակի համեյու:

Գիշերս ուշ ժամանակ իզզեթը դարձեալ եկաւ:
Աւնին երեխ գիտէր և նրան անշահեր սպասում էր
Գալուն պէս առանձնացան և ես պարաւուրեած էի
վարագըլների մօտից ել հեռանալու. նրանք երկու ը-
ռանձնացան և ուրախ ուրախ դուրս թռաւ իզզեթը:
Մնաք բարեից յեաց, կրկնին ետ դարձաւ իզզեթը

աւելագրեց.

—Խնդրում եմ քառանգաբ փաշա, Հետեւնքը
կարող է վատ լինել:

— Ես կասեմ, որ աղան վերջացնէ գրանց հաշի-
ւը, անհոդ եղիք, ասաց տեղից զեր կենալով Ընին և
ուղղեց կանանոց:

«Բայց իզգէթը չըբաւականանալով փաշայի խոստումով, աղայի սենեակիր մտաւ և տպա հեռացաւ։ Աղան սհաման էր երկում՝ իզգէթի անընդհատ թախանձումներից, երեսի խեղճը ցաւում է, որ Աւնիի գանձը ցրւում է այդպիսի փուչ գործերի համար և այնպիսի մարդկանց ձեռք է անցնում, որոնցից ինքը մաս հանելու անկարող է։ Վեհրջացնելով զեկուցումն խոստանում եմ, որ երբ աւելի հիմնական փաստ ունենամ, կըշտապիմ անմիջապէս լրացնել թեղեկագիրս։ Նոյնը»

Նամակի ընթերցանութիւնը ախուր տպաւո-
րութիւն թողեց Զիսյի փրայ և նա բազմոցի փրայ
տարածւած, նամակը լոելիցն կրկին կարգաց, տեղ
տեղ կանգ առնելով և խորհելով։ Երբ սնմառնչ նա
անձնաառու եր եղած իր խորհելին, ասացի.

—Ինչի՞ ախրեցիր. ընկծէ եցար, թէ վախենում ի՞ս

—Աչ մէին ել չէ, եղբօրս մասին եմ մտնծում:

թէվների նաւը: Այժմ երբ Աւնին նպատակին հասաւ, երեկի մտածում է իզգէթից ազաւել, քանի որ նա հոգով չետանում է, չի ցանկանում մալթէզներին վճարելով, հասանին իսպառ կորցնել: Աւնին հասանից վախենալու բան չունի, այն ինչ երեկի մտածում է, նրան իրան գործիք շինել և իզգէթից ազաւել: Հասանը, իրան գործիք շինել և իզգէթից ազաւել: Հասանը, պատժէ անմիջապէս, իսկ դաւաճան իզգէթը կորչելու պէտք է, Աւնին մտածում է, որ էլ աշխարհում մարդ չպէտք է, որ կարող է աներեցնել, մածկել իր արարքը և դեռ յօւսար, որ կարող է իր զոհի ձեռքերով վարդ քաղել և ազաւել իզգէթից: բայց մըթէ մեր Վիւքեալայի մէջ նրանից իւելքները կան:

այն ինչ երեկի մեծ վճար են պահանջում դրտ համար մալթէզները, իսկ իզգէթը չունի, որ վճարէ և Աւնին չի կամենում եղբօրս կորցնել տալ: Ես սկզբում չէի հաւատում, մինչև իսկ կառկածում էի, որ Աւնին այդ սատիճանի լիմար լինի, որ ենթագրէ, թէ կարող է աներեցնել, մածկել իր արարքը և դեռ յօւսար, որ կարող է իր զոհի ձեռքերով վարդ քաղել և ազաւել իզգէթից: բայց մըթէ մեր Վիւքեալայի մէջ նրանից իւելքները կան:

— Այդ խո շատ լու է, յաջողեցնում է եղբօրդ գարձը. Էլ ինչի՞ ես ուրեմն ախրել մտածում:

— Նրա համար, որ եղբայրս սոսկալի միջավայրումն է, մալթէզների ձիրաներում, որոնք ամեն մի ժամ կարող են նրան մահացնել: Իզգէթը մի սոսկալի նենդամիտ արարած է, որ կարող է գուշակել Աւնիի միաքը և ուրիշ միջացների զիմել Եթէ նա համոզւած լինի, թէ Աւնին, չի ուզում վճարել մալթէզներին, չի ցանկանում եղբօրս սպանել տալ նա ինքը կաշխատի փող գտնել և իր կամքը տռաջ տանել Այն ժամանակ մենք կորած ենք, հասանի ոսկորները ծովի ձկներին կեր կըդառնայ:

Այս մաքերով տանջւեց Զիան ամբողջ օրը և երբ զիշերը պատրաստում էինք Պէրա զնալ մի քանի մարդ տեսնել, խորհրդակցելու համար, չէրքէզ թըդթարերը կանխեց և բերեց հետեւալ նամակը:

²⁸ յունիսի 1876 թ.

«Այսօր մալթէզները կրկին երեւցան: Ամբողջ մի ժամ աղան նրանց չետ անցկացրեց այդին մէջ և ընայելով, որ կողմնակի կերպով չետեւցի, բայց

լրտեսներս անդամ մի բառ չըկարողացան լոել: Վերջը
մալթէզները պնդեցին ու այգում այնքան սպասեցին,
մինչև դուրս եկաւ Աւնին կանանոցից: Թէև յօն ա-
ռաջնորդող շատ թախանձեց, որ իրանց ներկայացնեն
սպարապետին, բայց նրան մերժեցին, ասելով որ փա-
շան չե ցանկանում ոչ ոքի երեսը տեսնել:

«Երբ Աւնիի հետ կառք նստած դուրս եկանք
և այդիների կողմից մեծ պողոտան մատնք, մալթէզնե-
րի առաջնորդ յոյնը ճանապարհներս կտրեց, ինդիրք
տալ ձեւացնելով: Փաշայի կարգադրութեան համաձայն
ձիւոր առաջնորդները նրան հեռացրին գոռալով:

—Խնդիրքդասպարապետի դուռը տար, ներկա-
յացուր:

«Յայտնի բան է, ո՞չ յցնը, ո՞չ էլ մալթէզները
սպարապետի դուռը չեկան, բայց Աւնին, ամբողջ ճա-
նապարհի երկարութեամբ, որքան որ աղմուկ կամ դը-
ղղիւն պատահում էր, գաղտագողի շուրջն էր նայում
դողդողալով: Այսօր իր առանձնասենեակում քանի քա-
նի խնդրատուներ որ ընդունեց, բորբին նախապէս-
տնտղում էր, կասկածելով մի դուցէ մալթէզներն են
ծպտւած:

«Այս օրերս էլ սպարապետի դուռը Փրանդըս-
տան է գարձեր օրեկան քսաներեսուն եւրոպացիներ,
շետապաւորներ են ներկայանում Աւնիին: Ամենքն էլ
ծրարներ, խնդիրներ, նյարներ և զէնքերի նմուշներ են
ներկայացնում: Պատերազմի հոտ են առեր, ամենքը ի-
րանց ապրանքն են առաջարիւմ և իւրաքանչիւրն
ուզում է մեր գանձարանը կողոպտել: Թէ ինչ կըպա-
տահի, սպագայում ձեզ մանրամասն կիմացնեմ: Նոյն»:

«Յ. Գ. Յոյս ունիմ, որ ձեր խոստմանը համա-
ձայն, զրաբերիս հետ կըպատասխանէք ձեզ տրւած
հարցերին և կորոշէք՝ թէ ինչ կէտերի մասին աւելի
կարեոր է տեղեկութիւններ ձեզ հասցնել: Նոյն»:

—Ես չասացի, իրինեց Զիան աչքերիս մէջ նայե-
լով, իմ կարծիքս իմանալու համար, ես չասացի, որ
Աւնին չի ուզում վճարել չըպիտի վճարէ մալթէզնե-
րին, որպէս զի նրանք բաց թողնեն եղբօրս: Եղբայր,
մենք ննչքան որ աշխատենք, ինչ միջոցների որ դի-
մենք, կանանց չենք կարող հասներ, նրանք կարծես թէ
սատանաների հետ կապ ունին և թափանձում են ա-
մեն մի գաղտների խորքերը: Այս բոլորը երեք-չորս օր
առաջ Ֆաթիմէն աեղեկացել էր և ամէն բան այնպէս
նրբութեամբ ըմբռնել, որ կէտ առ կէտ նրա յայտնած-
ները զործողրւում է: Աչա Իզզէթի գաւաճանութեան
հետեանքը տե՛ս, տե՛ս, Աւնին ինչ խորամանկութեամբ
ուզում է օձիքն աղատել այդ յանդուդն թիկնապահ-
պալատականի ձեռքից:

Ը

ՆԵՐՔԻՆ ՊԱՅՄԱՆՆ

Հարունակութիւն 16 նամակի.

² յունիսի 1876 թ.

«Եյօր զարձեալ առաւօտ վաղ Աւնին սպարապետի դուռը չըհասած, Թիստակ էֆէնդին եկաւ. Ամբողջ մի ժամ գութում զբօսիցին, անհամբեր սպասելով. անհընդատ տչքերը չուած, գերեից, պատուհանից դիտում էի, թէ ինչպէս նա հանգառութիւնը կարւած անդադար բոլթա էր տալիս, մայթերը մաշում, կնճռոտ և մատախուհ դէմքով: Երբ գերջապէս սպարապետի կառքը տեսաւ, նա մի կոզմը քաշւեց, որ իրան չընկատէ վերջինս և կամաց-կամաց առաջանալով վեր բարձրացաւ: Սպարապետը գեռ կարեւոր թղթերը տչքից չէր անցկացրեր որ հարցրեց՝ թէ—Թիստակ էֆէնդին չէ եկել:

«Ինձ չէր պատկանել պատասխանել աւագ թիկնապահը ասաց, որ չէ տեսել Եյօ խօսքը արտասահնեց վայրիեան չ'անցած, զոնապանները իմացրին, թէ Թիստակ էֆէնդին, ցանկանում է ներս մտնել:

«Խսկոյն ներս հրաւիրեցին: Երկար ժամանակ այդ միջնորդը պարտաւորւած էր նստել իրան առա-

ջարկած բազմոցի վրայ և սպասել մինչեւ սպարապետը կարողացաւ մի քանի կարեւոր թղթեր աչքի անցկացնել և ընկերակիցներիս տալով հրամայեց, տանել այլի այլ գիւտանապետների յանձնել: Վերջապէս մի թերթ թուղթ ձեռքն առնելով, վերից վայր զննեց, դէմքով մի քանի զարմացական և աղշտծի ձեւեր անելով ասաց:

— Թիստակ էֆէնդի, այս քու նշանակած գներից անչափ, անհամեմատ պակաս գներ են մեզ առաջարկւած:

Միջնորդը, որ գեռ իրան հրամցրած սուրճը չէր խմեր ֆինջանը կամացուկ պնակի մէջ դրեց և ակնոցները ուղղելով ասաց.

— Փաշա-էֆէնդիս, եթէ ձեր շնորհը ինձանից չըպակասացնէք, անկասկած ինձ կըյատնէք ձեզ առաջարկւած տեսակների գները: Ես վստահ եմ, որ գուք համոզւած էք, թէ ձեզ ամենայն ծառացութիւնս մատուցանելու համար, ամեն միջոցի պատրաստ եմ գիմելու, համոզելու ինձ վստահած ֆիբրմաներին, որ զեղողութիւններ անեն, որքան որ հարկաւոր է:

— Գուք գիտէք, Թիստակ էֆէնդի, որ այսօր մի քանի տասնեակ եւրոպական ու ամերիկական գրքարաններն իրանց պարտասահնութիւնն են յայանում այն էլ անհամեմատ մեծ տարրերութիւնով: Մի միլիոն հրացան է պէտք, զրոյ համաձայն և միւսները: Վեց հարիւր միլիոն վամփուշտ է պէտք, յիսուն միլիոն տոպրակ: Սրանք խաղանելիք չեն, այնպիսի գներ որոշեցէք, որ հարաւոր լինի համաձայնութիւն կայացներ:

— Ասացի, որ ամեն բան ձեզնից է կախւած,

եթէ գուք բարեհաջիք, ձեզ ծառայելու պատրաստ եմ...

— Լաւ, բայց գուք հինգ հինգ լիրա զին էք առաջարկել Մարտինի և վինչեստեր հրացանների համար, այն ինչ մի անզլիական ընկերութիւն, ահա երեք ամիս է, միջնորդներ է ուղարկում միենոյն սիստեմ հրացանի համար՝ երկու լիրա առաջարկութեամբ:

— Ես որոշ ոչինչ չեմ կարող ասել բայց ինքներդու, եթէ քննէք նրանց առաջարկած և մեր ներկայացրած հրացանները, տարբերութիւնը կընկատեք: Հինգ լիրայով գնւած հրազնի արժանաւորութիւնը, երբէք չէ կարող ունենալ երկու լիրայով գնւածը: Թուք միայն ընարութիւնը արէք, մեր գործարանի ապրանքների և ուրիշների առաջարկածներից ընարեցէք կարեորագոյնը, պիտանին, յետոյ ինքներդ էլ գնահատեցէք: Ամեն բան ձեզանից է կախւած...

— Բայց ես ուրիշի ապրանքը ի՞նչպէս գնահատեմ, ասաց Աւնին քմծիծաղով:

— Տէրս, թէկ ես ամերիկական ֆիլմների լիազօրն եմ, բայց վսաւհ եղիք, որ իմ վեհապեսիս չեմ դաւաճանիլ Առաջներս մի սոսկալի անդունդ է բաււում, ես յօյս ունիմ, որ գուք զիտենալով մարտիկի ձեռքի զէնքի առաւելութեան արժանաւորութիւնը, կըգնահատեք, ինչպէս որ արժէ:

— Ես ձեր արժանաւոր հպատակութեան մասին կասկած չունիմ, բայց ենձ ասա, գների մասին գործարանատերների որոշումը:

— Գինը որոշ է, հինգ օսմանեան լիրա. մնացեալ ինչպէս որ կամենաք. զիջում, զեզդ, որոշեցէք, ինչպէս կըբարեհաջէք:

Այս խօսքերը մի այնպիսի եղանակով արտասանեց Ռիստակ Էֆէնդին, որ Աւնին զլիի ընկաւ և ասաց լլջութիւն կեղծելով.

— Լաւ, այս իրիկուն մեր տանը ժողով ունինք, արի այնահեղ քեզ հետ վերջացնենք. այժմ զլուխս խառն է.

— Միշտ տիրոջս ծառայելու պատրաստ եմ, ասաց ու ոաք ելու Ռիստակ Էֆէնդին:

«Այդ զիշերը որոշեալ ժամանակին Ռիստակ Էֆէնդին մատւ մեր տան բակը: Դունապաններին ապրուած էի, իսկոյն ինձ աեղեկութիւն բերին: Դուրս ելաց և այդ միջնորդ երկաթածախին տռաջնորդեցի սպարապեաթ առանձնասենեակը: Այնքան ստորութիւններ արաւ, այնպիսի բառեր շուպյեց, սպարապեաթին զրաւելու համար, որ ոչ միայն աւելորդ, այլ մինչեւ անդամ ինձ ստորութիւն եմ համարում արձանագրելու: Թէկ Աւնին այնպիսի կնձիուներ էր անում, որ ուզում էր ասել այդ անհաւատին, թէ նրան անշափ գուր էր գալիս, որ իրան այդպէս փքացնում էր: Վերջապէս բանըն այնտեղ հասաւ, որ Աւնին ինձ նշան արաւ առանձնարանից գուրս գնալու, ուր յայտնի բան է գուան տակն էի կանգնած: Երբ գուրս ուզեցայ գնար, Աւնին ետևիցս կանչեց.

— Այ տղայ, ոչ ոքի ներս չըթողնես, դրան յետից տեղ չըհեռանաս:

«Իսկ ինքը միջնորդի հետ մտան զաղտնարանը: Որքան որ շունչս վսպած գուան տակից ականջներս սրած աշխատեցի բան լսել անկարելի գործաւ: Ամբողջ երկու ժամ տեհց դրանց խօսակցութիւնը և ոչ ոք այդ

գողտնիքին վկայ չեղաւ: Թէ ինչ դաշն կապեցին, պարզ
է, բայց պայմանները աշխարհից ծածուկ մնաց, միայն
Ալլահին է յայսնի: Երբ Ռիստակ էֆէնդիի հետ գուրս
եկան առանձնասենեակը, զանգուկը տւին, ներս մնայ:

— Ասա, մեզ ընթրիք բերին, ասաց Աւնին բա-
ւականութնամբ:

«Եմբողջ ժամանակը հոյը պյուղիսի բերկրու-
թեան մէջ էր զգում ինքնիրան, որ անփերջ ծիծաղե-
ներով տանում էր Աւնիի կոտակիներին ու սրախօսու-
թիւնները և մինչեւ վերջը զլուեն էր թեքում: Յանձն
էր առնումներու հասցէին ուղղած ամեն մի ստոր ա-
ծական: Գեռ ընթրիքը չեին վերջացրել, երբ ծառանե-
րը լրու բերին: Թէ Միհքատ փաշայի կառքն երեեց:
իսկոյն Աւնին դաշլիճ գնաց, Ռիստակին պատւիրելով,
որ գնայ հիւրասենեակ՝ աղայի մօտ նստի, մինչև իրան
ժողովի կանչելը:

«Ժողովի ժամանակ ես գործեալ պալտաւուուած
էի գուրսը, գուոն առաջ հսկելու, որ ոչ ոք չըխանգա-
րե, կամ գուան տուածից ականջ չըդնէ, ներսը կոտար-
ած խորհրդակցութիւններին: Վյու իրիկուն անհա-
մասաւ մեզմ անցաւ ժողովը և մի ժամկո ինձ ներս
կանչելով հրամացեցին, որ ներս հրաւիրեմ Ռիստակ է-
ֆէնդին: Պանապաններին նշան տւի, իսկոյն զնացին
և հրաւիրեցին միջնորդին: Սովորութեան համաձայն
ներս առաջնորդեցի և կրկին զրան առկ կանդած ըս-
պասեցի, որ գուրս առնեմ:

— Ռիստակ էֆէնդի, ախոր մի վերջական բան
ասէք, այս անշանի բարձր գին էր որոշել, ասաց Ռիւշ-
տին (սաղբազամը):

— Պետութեան սիւներիդ առաջ խոնարհւելիս,
խնդիրս այս է, թէ ձեզ յայտնի լինի, որ ես ձեր ամենա-
ստոր ծառան եմ և վեհապետիս շահերը օտարի
(Ալլահը հեռու պահի.) երբէք չեմ ծախիլ: Ինձ տըր-
ւած իրաւունքը ձեզ զրաւոր առաջարկել եմ և նորին
զերազանցութեան սպարապետի հրամանի համաձայն՝
հինգ և տասը տոկոս միայն զեղջելու արտօնութեան
հեռագիրս էլ արդէն խնդրազբավ ներկայացրել եմ ձեր
քաղցր հայեցողութեան:

— Այդ իմացանք, գիտենք, ուրիշ բան, ուրիշ
բան առաջ սադբազամը:

— Զեր ուրբերի հոյը լզելու անգամ անարժանը
յայտնեց, ինչ որ կարող էր:

— Դու մի հեռազիր ևս տուր, իրանց յայտնիր,
թէ թանկ է, մենք չենք կարող այդքան զին տալ գու-
ցէ էլե կրպիջանեն:

— Տէրս, ասաց Ռէշի փաշան՝ ծովակալը, ար-
դէն ութ օր է, այդ մասին հեռազրւել և պատասխան-
ները ստացւել է:

— Ախար միլիօնների գործ է, շտապելու կարիք
չըկայ, ասաց Ռիւշի փաշան Գիւէք, որ այն ֆրան-
սիացի գործարանատէրից ուղակի պալտաւում թուղթ
և առաջարկութիւն է ստացւել՝ երկուս ու կէս լիրացի
ամեն մի հրացանը, սուլթանը այն պայմանը՝ գիտենա-
լուց յետոյ, գժւար թէ համաձայնի աւել տար ասաց
կակազելով սադբազամը:

— Ճատ իրաւացի է, ասաց Հիւսէին-Աւնի փա-
շան, գուք գնացէք, Ռիստակ էֆէնդի, վաղը, կամ միւս
օրն արիք սպարապետութեան զուռը, այնահղ ձեզ

կրյայտնենք մեր որոշումը

— Ծառայ եմ, ասաց գուրս գալով հայր, որի
հետ ես ել գուրս եկայ գահլիձից:

«Ժողովը երկար տևեց, վիճաբանութիւնները
շատ բորբոքւեցան, այնպէս որ աղմուկները լուսմ էի,
բայց յայտնի բան է, ոչինչ չէի ըմբռնում: Կէս զիշերից
երկու ժամ անցած ցրւեցին ժողովականները և Աւնին
ուրախութիւնը չոկարողանալով զսպեր երբ նրան ա-
ռաջնորդում էի կանանց՝ ասաց.

— Մինչև այս յամառներին Համոզեցի, իմա ել
ինձ հասաւ: Առաւօտ Թիստակ էֆէնդիին աչքալցու-
տուր և միւժդիդ պահանջիր: Մեր ժողովը մասնագէտ-
ների ուսած վիայութիւնների համաձայն վճռեց Մար-
տինի և Վինչեստեր Հրացաններով զինել զօրքերին:
Այժմ մնում է խալիքը, տեսնենք նո կրհամաձայնի և
գործարանատէրերն ել կըզեջանեն մեր առաջարկած
գնով շնել ու յանձնել: Ասա՛ Թիստակին, որ ինդիրը
ծածուկ պահի, երկու օր չերմենայ ինձ սպարապե-
տի դրանը:

«Ինչպէս երեւում էր, Թիստակ էֆէնդի նազար-
եանը՝ այդ ստոր հայր ամբողջ զիշերը չէր կարողացել
քնիր մինչև առաւօտ այնքան էր տանջւել մամուռնե-
րով, որ թորմշած դէմքով, կարմրած աչքերով զէմս ե-
րաւ լրւաբացին՝ երբ գեռ ես նոր էի լւացւել նա-
խընթաց զիշերւայ սապրազամի սառը սառը պատաս-
խանները, ցուրտ ընդունելութիւնը և Աւնիի մի կեր-
պով ժողովից գուրս հանելը, այդ հայր փռաց շատ
խիստ ներգործութիւն էին ունեցել: Երւեի ենթագրել
էր, թէ երան ծուզակն էր զցել Աւնին գործը ուրիշ

յանձնելու համար: Այդ ծերուկը, որ յիսուն տարեկանի
մօտ է, յողնիլ չըղիաէ, երես պահէր քաշւիլ՝ բողորովին
չի ել մասածում: Ինձ տեսնելուն պէս՝ ծիծաղն երեսին
մօտեցաւ, շատ խոնարհ թէմէննայով և ասաց.

— Արդիօք նոր հրաման չունիք ինձ իմացնելու:

«Խնդրուկս չըկարողացայ զսպեր ասացի: — միւժ-
դէ, միւժդէ տուր, իսկըն ծոցից մի փոքր քսակ հա-
նեց և ինձ երկնցուց, աւելացնելով:

— Խնդրում եմ, այս չնչին գումարը մի՛ մերժէք:
իսկ երբ գաշնագիրը կնքենք, չնորհ արէք մեր զրասեն-
եակը, որպէս զի արժանաւորապէս ձեր միւժդէն վճա-
րինք: Աւրիշ ոչինչ չասաց:

— Սակայն միայն, որ վճռել են ձեր գործարա-
նի զէնքերը գնել և յետոյ յարեց: — որ մարդ չիմանայ
գաղանիքը և երեք օր յետոյ ներկայանաք սպարապե-
տի դուռը:

«Այս խօսքերն այնպէս ուրախացրին նրան, որ
իսկըն մնաք բարե ասելով, երիտասարդի քայլերով քո-
վիցս գուրս գալրվ, երբ ետեիցն դիտում էր, նա կը-
կին ետ դարձաւ և թէմէննաշներով կրկնեց:

— Բէյս, անպատճառ ձեզ կապասեմ զրասե-
նեակում:

«Ծիծաղելով նրան զլուխ տւի և սկսեցի մտա-
ծել թէ ինչ է կատարւում շուրջա: Ահազին միլիօննե-
րի առուտուր է լինում ամբողջ պետութեան զանձա-
րանն են ուզում գատարկել և այն էլ մի թզուկ հայի
ձեռքով: Խորհերս ինձ շատ հեռացրին խնդրից և երբ
ուշքի եկայ, քննեցի ինձ բաշխւած մուժդէն, տեսնեմ
տասը հատ օսմանեան լիրա: Ասկիները քսակից բուռս

դատարկած նայեցի, նայեցի ու հառաչեցի.—Ընդհանուր աւարից, միլիօններից ինձ էլ այսքան բաժին ընկաւ:

Ամբողջ երկու օրը ծովակալ Բէշիդ փաշան մեր գոնից չըհեռացաւ. ժամերով առանձնանում և մռայլած դուրս են գալիս: Ինչ որ է, մի բան ունին վիճելի մի խնդիր կայ և անպայման նազարեան թիստակի գործն է—հրացանների հարցն է: Ինչպէս ինձ թւում է, Աւնին առիւծի բաժին է ուշում կուլ տալ թէշիքը մռնչում է վազրի նման, բայց արդէն ընկճնւած է, քանի որ Միդհատի հետ թիւշտին թեքիլ են ըսպարապետի կողմը: Այս ենթագրութիւնս հաստատեց և այն փաստը, որ երիկուն Թիստակին կանչել աւին և նա նրանց հետ առանձնացաւ մի ժամի չափ և դուրս եկաւ մռայլած: Երբ մօտեցաւ, ես կամացուկ նշանացի հարց տվի:

—Դարձեալ էգուց—միմնջեց: Երեկի համաձայնութիւնը գեռ կատարեալ չէ սրանց մէջ, ուստի ըշտապելու է, Զիա-բէյ, գուցէ հնարը դանեք և բեկանել տաք այս զաղանի պայմանագիրը, որով ուղում են կողոպտել պետութիւնը և կործանել երիկիոր:

«Նազարեանի մեկնելուց մի ժամ չանցած, երբ արդէն Թէշին էլ հեռացել էր, ներս մտաւ բարեկամդ իզզէթը, քիթը-մռութը բոլորովին ոլորած: Մրա գալուց այնքան էլ չուրախացաւ Աւնին, բայց քաղաքավարութեան, կամ աւելի ծիշան ասած դրան խարելու դիտամբ քաղցրալի հայեացքով տասց.

—Բարով, զաւակս, բարով եկար դառնուկս, ի՞նչպէս ես, ի՞նչ ունիս, մռայլել ես:

—Զեր շնորհիւ, ձեր հրվանիի տակ, միշտ փառք եմ տալիս և թռչկոտում:

—Այսօր քեզ գայմագամի (գնդապետի օգնական) աստիճանի առաջարկը ասորագրեցի, առաւոտ կը ներկայացնեմ ողորմութեան գահոյքի ակնարկին:

—Զեր ստրուկն եմ, ինչպէս կամենաք. ինչպէս որ բարեհաճիք:

—Ես ուրախ եմ, ասաց Աւնին լրջացնելով գէմքը. հոգովս ցնծում եմ երբ հայրենակիցներիցս մէկին շնորհների մէջ եմ աեսնում:

—Այդ բոլորը ձեր բարեսրտութեան, ձեր հոգու վեհութեան արագափայլն է:

—Էհ ի՞նչ կայ, ի՞նչ նորութիւն ունիս, քիչ արխուր ես երեսում...

—Ոչինչ մի այնպիսի բան չըկայ: Ինձ ինչ կըպահասի, քանի որ ձեզ նման աէր ունիմ:

—Չէլքէթ, չէլքէթ: Բայց և այնպէս ոչքերդ ասում են, որ վիշտ ունիս:

—Ոչինչ, բան չըկայ, ասաց իդգէթը հառաչելով:
—Այսօր հերթապահ էի՞ր.

—Մայր թագուհու մօտ մի քանի մարդիկ ներկայացան, մի ի՞նչ որ ֆրանսիացու մասին նշաններով խօսում էին ներքինիները, բայց չըկարողացայ պատճառըն ըմբռնել:

—Ի՞նչ մարդիկ էին, եթէ տեսնես՝ կարո՞ղ ես ճանաչել:

—Գէմքերը լաւ չընմարեցի, բոլորովին մեր երկրին անձանօթ մարդիկ էին թւում:

—Ո՞վ էր դրանց առաջնորդում:

— Մայր թագուհու զանձապահը՝ Խրիստաքին։
— Այդ յշնը էլե՞ է քիթը կոխել մեր գործերի
մէջ. ևս այդ սպանդագործին խլատ կըտամ, այսպիսի
գործերի մէջ միջամտելու հայոր։

— Ուրիշ, ուրիշ՝ ի՞նչ արին։

— Խրիստաքին մի ֆրանսիացու հետ մտաւ
իշաղասիի (ներքինսպետ) օդան։

— Այս, այդ անիծեալ նեղիերը, այդ չըմարդի
ներքինիները։ Քանի մէկ դրանք պիտի միջամտեն երկ-
րի վարչութեան գործերին։ Դրա համար, իրիկուն մը-
ռայլել էին և այն անիծւածները, ասաց քթի տակ ըս-
պարապետը և լուռ խորհերի մէջ սուլդեց։ Փիչ յետոյ,
ինքն իրան զսպելով յարեց։

— Բայց և այնպէս, իզզէթ-բէյ, որդիս, հարկա-
ւոր է հետեւ այդպիսի դէպքերից օգտաւելու է, պէտք
է համարձակ աշխատել և զերահասու լինել...

— Այս, բայց, ախար այդ անիծւած Սահարայի
զաւակների նենդամութիւնից շատ բան չի կարի ըս-
քոներ, մանաւանդ որ նրանք ել մեզ լրտեսում են։

— Այս, Ալլահ, երբ պիտի սանձնեն այդ բո-
լորը երբ պիտի կարդիրը վերտկանդնեն...

«Գարձեալ իրեց լռութիւնը, հառաջները և
արձանի նման կրկնակի վարագոյների մէջ կանգնած
ևս արձանի նման կրկնակի վարագոյների մէջ կանգնած
լսում էին թէ ինչպէս ծանր ծանր շնչում էին երկու
իալբանացի հայրենակիցները և ինչպէս աքնում էին ի-
րար խարել։ Վերջապէս Աւնին ձանձրացած իզզէթի
ներկայութիւնից ասաց։

— Բայց և այնպէս, սիրոդ չըբացի՛ր, վեշտ
ինձ չըյայտնեցիր։

Մարդ ամեն կողմով չի կարող բախտաւոր
լինել եթէ մի վիշտ, ցաւ չունենայ, կեանքից անչափ
շուտ կըձանձրանայ, կըզլւի։ Իմ ցաւս ու վիշտս միե-
նոյն է, որ ձեզ մասսամբ յայտնի է, ինձ սպառնում է,
կամ յաւիտենական տանջանք, թէ այս աշխարհում և
թէ հանգերձեալում, և կամ երանութիւն երկուսի
մէջ էլ...

— Բայց քեզ խոստացւած է, ուրեմն ինչի՞ ևս
յուսահատւում ես ամեն միջոցի զիմել եմ և հաւա-
տացած եմ, որ...

— Մայր-սուլթանը երեկ նորից Զիային իր թիկ-
նապահների մէջ է ընդունել և նրան խոստացել է, թէ
«Հայրական տուրքը» ոչ ոք չի կարող ետ առնել։

— Եյտ մի մատ տղային չըկարողացաք տապա-
լեր չէրքեզի ծափ առաջ խեղճացաք։ Պարապը շրջապա-
տող զօրականների խմբերի մէջ մի անձնանւելու ալբա-
նացի չըկայ, միթէ բոլոր հայրենակիցներս մեղկացել են։

— Եյտ շատ ճիշտ նկատողութիւն է, բայց...

— Ել ի՞նչ, բայց...

— Ճնար չենք գտնում։

— Ուրեմն ձեր մէջ մարդ չէ մնացել քիշ է մը-
նում, որ իմ այս սպիտակ մօրուսից առանց ամաչելու,
թեւերս քաշեմ և գաշցն փայլեցնեմ։

— Եյտ հեշտ է, բայց հետեւներից ...

— Բոլոր հետեւների պատասխանատուն ես
եմ... բայց և այնպէս, ի՞նչ զիտես՝ թէ Մայր-սուլթա-
նը այդպէս է ասել։

— Ճիշտ ըս զիտեմ, միայն թէ նեղիերից մէկը
պատմում էր.

— Տիմար, ուզեցել է քթիցդ բռնել
— Ես էլ բռնւողը չեմ, միայն կասկածում եմ:
— Որ այդպէս է, յարմար առեթ է, պէտք է
հանդամանքից օգաւել: Դու ինձ ասել ես, որ Ֆաթիմէ
սուլթանէն քեզ հետ է: Կարող ես նրան թախանձեր
որ ներկայանայ թագուհուն և սիրաը պարզէ:

— Յոյս ունիմ:

— Որ այդպէս է, այս լուսառիթ է: Քնա Փա
թիմէ սուլթանին տես և ուզարկեր Մայր-սուլթանի
մօս: Առաջ մի խնդիր գրեր և ներկայացեր նորան: Նախ
իմ այս ծրարս Մայր-սուլթանին տար, սա կըբանայ քո
առաջ բոլոր գոները: Եյսեղ յիսուն հազար լիրայի
փոխանակագիր կայ, այնպէս որ ոչ ոքի չես հաւաաար
ոչ ոքի չես յանձնիր այլ անձամբ իրան կըներկայացնես:
Զգոյշ ըրկորցնես, մարդու ըրյանձես, սա միջոց է քեզ
նորան ներկայանալու: Վապա կըտաս և քու խնդիրը:
Ես վատահ եմ, որ Մայր-սուլթանը չի մերժիլ եթէ
Ֆաթիմէն համաձայն է:

— Եղդ մասին կասկած չունիմ: Թսաց իզզէթը
զլիսակոր:

— Ես էլ երեկոյեան, կամ վաղ առաւօտ ներ-
կայանալու, եմ մայր-սուլթանին քեզ երգւում եմ հօրս
գերեզմանով, որ անձամբ նրանից խնդրեմ, թախանձեմ,
հաճեցնել տամ: Երբ նա ցանկանայ, սուլթանի հը-
րովարտակը իսկոյն կըկնքւի, զու ապահով եղեր:

« Իզզէթը կարեոր թղթերը ձեռքին դուրս ե-
կաւ և ես երբ վարագոյրը բարձրացրի, նա զարմա-
ցած աչքերիս նայեց: Զգացի, որ նա կարող է կասկած
ունենալ իմ մասին, իսկոյն մի այնպիսի համեստ կեր-

պով գետին նայեցի, որ նա հանգստացած սրառվ հե-
ռացաւ:

« Այս բոլորից յետոյ, էլ տարակոյս չունիմ, որ
Աւնին ամեն միջոց գործ է գնելու, որ հաստատել տայ
նազարեան Ծիստակի առաջարկած գաշնազիրը, պա-
տերազմական մթերքները մատակարարելու համար:
Մայր-սուլթանից էին քաշւում, նրան էլ բաժին ու-
ղարկեցին: Եյս ամենը աչքի առաջ ունենալով, վստահ
եմ, որ միջոցներ ձեռք կառնէք, Փաթիմէ-սուլթանէին
կըտահնէք և նրա, կամ ներքինապեաի միջոցով ամեն
բան ժամանակին կըպարզէք ուր հարկն է, որպէսզի
կարողանաք ձեզ սպառնացող վտանգի առաջն առնել
և այս չըրագործներին արգելք հանդիսանալ, որ ա-
ռանց նպատակներին հասնելու փշուին:

« Հաւատարիմս, որից ստացել էք նախորդ
զեկուցումներս, այս գիլը ձեզ հասցնելիս, բարեհաճե-
ցէք, մի քանի խօսքով ինձ միամտացնել: Դարձեալ նա,
որին յցս ունիմ, որ շուտով ահսնէք ձեր յարկի տակ»:

« Մայր-սուլթանի գրանն ունեցած պաշտօններդ
ձեր առաջ բացած է շատ գուներ, միայն թէ կարողա-
նաք վտանգութիւն ներշնչել: Ձեզ գրւած փաստերիս
վրայ վտանգեցէք և համարձակ, աներկիւղ առաջ գը-
նացէք, պնդեցէք:





Գ. Ա. Պ Տ Ն Ի Ք Ը

— Եյս բոլորը հասկացայ, ասի Զիային: Յետո՞յ.
— Յետոյ, էլ ի՞նչ յետոյ.
— Գու ի՞նչ արիր. ինչ ի՞նչ բան զլուխ բերիր:
— Ի՞նչ որ կարող էի, արի, ուր որ պետք էր,
զիմեցի. ում որ հարկաւոր էր, յայտնեցի և Զաքարիա-
յի նման բոլորն էլ լռեցին, ապշեցան ու պապանձեցան.
— Մայր-սուլթանն էլ, հարցրի ազքերին նայելով:
— Փաթիմէն նրան անձամբ պատմեց և իսկա-
կան նամակը ներկայացրեց.
— Եւ ոչի՞նչ.
— Ոչի՞նչ քանի որ աչքովս տեսայ, իզզէթը ե-
կաւ, մեծ ուրախութեամբ նրան զիմաւորեցին և իրիկ-
նագէմ Խրիստաքիին կանչեցին, որը գնաց Բանկ-Օսման-
եան և յիսուն հազար լիրան ստացաւ.
— Ուրեմն աճուրդ չեղաւ, պայմանագիրը վա-
ւերացաւ:

— Եյսօր առաւօտ վաղ իրագէն (հրովարտակ)
արւել է, արտաքին գործերի մինիսարն էլ դաշնագիր-
ները վաւերացնելով ուղարկել է Հ. Ամերիկական Մի-
ացեալ-նահանգների գեսականատուն, ամեն բան վեր-

ջացած է: Բնդշանուր կողոպուա է, անսանձ օգտւում են:
— Իսկ Մայր-սուլթանը ի՞նչ է պատա իսան
տւել:

— Իզզէթին ասել է, որ ինսդիրը չընկրկայցնէ,
սպասէ մինչև պատեհ առիթի ներկայանալը ... Բայց
ես այդ մասին կասկած չունիմ, ոչինչ չեն կարող տնել:
— Հապա ի՞նչ ունիս.

— Այն, որ եթէ ֆրանսիացիների խնդիրքը գը-
լուխ գար, ես էլ...

— Բնդշանուր աւարեց քեզ էլ բաժին կը հաս-
նէր ... Արդէն սկսել ե՞ս ... Ախար երկու ամիս հազիւ
կայ գործի ձեռք զարկելով, արդէն սկսել ես բաժին
կորդիկու ձգտել: Էլ ի՞նչ իրաւունքով մեղադրում ես
իրհասունքաւասուն աարով ծառացողներին ...

— Ոչ, ես ոչ թէ մաս ու բաժնի էի ձգտում,
այլ ուղում էի օգտակար հանդիսանալով մեծաւորնե-
րիս՝ վարձատրութեանը արժանանալ:

— Մի՛ ծածկիր, մի՛ ծռիր, քիչ առաջ այդ էիր
մտածում:

— Գու արդէն իմ մասին միշտ այգպիսի կաս-
կածներ ես տածում:

— Եյդ ոչի՞նչ, ես համազմունքս չեմ կարող փո-
խել բայց գու ինձ ասա, այս իրիկուն անպատճառ
սպասում ես: Եթէ կասկածելի է, ես գնամ:

— Ոչ, նրանից չեռագիր ունեինք, Աշեանի
հասցէնք:

— Ուրեմն անպայման, պիտի գա՞յ:

— Եւել գեռ մայր ըստուծ, նա կարծում էմ
տուն կը մտնի: Քըրս ուրախութիւնից վեր վեր է

թռչում: Նա երկու ժամ աւելի է, որ գնացել է մաքսատուն և այնտեղից նաւակ նստած շրջում է ծովի երեսին Էօմբ-բէզի հետ: Ահ, պիտի տեսնես, թէ ինչ պէս ժրացեր քաջալերւել է ամփիս-որդին: Ուղիղ որ սէրը մեծ ոյժ է: Գրեթէ քսան տարի է, որ նա այս սէրուց առողութած թափառել է տուն, աեղ ամեն բան թողած: Ցաւալին այն է, որ թէւ նիքհաչ եղած են, բայց մեր օրէնքի համաձայն դեռ իննը ամփս չեն կարող ամուսնական առաջաստ մանելի պէաքէ սուլթանի մահից իննը լրւսին բոլորի, որպէսզի կարողանան իսկապէս այր ու կին գառնալ:

— Զեր յիմար ու անմիտ կարգերը բայց չեմ, կարծում, որ Էօմբը բէզը այնքան էլ խոտակրօն լինի...

— Քնդշակառակը, նա օրէնքի պատւերներից և ոչ մի մազաչափ չի շեղւիլ...

— Բայց ուր մնացին. ես կարծում եմ, որ մինչ չիմա նաւը հասաւ էլ գատարկեց էլ:

— Ես էլ կարծումեմ, բայց ինչ որ մի բան պատահած պիտի լինի, որ այսքան ուշացան:

Ճրագները վառւերց էլ մի ժամ անցած, դարձեալ մարդ չերեկցու: Երբ արգէն տարակուսւած մը-նացել էլնք, կանանցից մի ծառայ եկաւ և ասաց, որ Զէմիլէ սուլթանէն վերագարձել է, մեզ էլ ուղում են ընթրիք ուղարկել: Զիան ըշհամբերից, վաղեց կանանց, կէս ժամից հազիւ վերագարձաւ և մենք նըստանք լնիմբելու: Ախար ի՞նչ է պատահել որ ինձանից ուղում էին ծածկել ես խորհում էի, երբ Զիան ինձ հարցրեց:

— Նաւի մէջ մարդ կարող են բանտարկել

ոդաշել նաւապետը այդպիսի իշխանութիւն ունի:

— Զեմ հանկանում ասի:

— Եղբօրս այդ նաւով Զանագդաղէից անցներու հետագիրն ատացանք. իսկ ոչ նաւից գուրս է եկել և ոչ էլ նաւում գտել են քոյրս ու Էմբը բէզը:

— Կարելի է դիմումի գուրս չի եկել:

— Ներս է մտել նաւի ամեն կողմը շրջել է Էօմբը բէզը:

— Այժմ Էօմբը որտեղ է:

— Եղբօրս է որոնում:

— Որ այդպէս է, պէտք է գուրս գալ և կամուրջի Սիրքիջիէ կողմերը շրջել:

Արդէն սիրտս ստատիկ նեղացել էր, այդ տաթից օգտւելով գուրս եկանք ոգ ծծերու: Բայց մինչեւ կէս զիշեր ոչ մի հետաքրքիր բանի ըրպատահելով պարտաւորւթած տուն վերագարձանք: Տան շէմքին մեզ գիմաւորեց Զէմիլէն հարցնելով:

— Զիան ջան, ոչ մի տեղեկութիւն չէս բերում:

— Ոչի՞նչ, ոչի՞նչ:

— Ամիկ աղիդ տեսանր.

— Ոչ Էօմբ-բէզը մեզ ոչ մի տեղ ըրպատահեց:

Գեա ներս չէինք մատծ, երբ մի ձիաւորւթած երուկ չէրքէզ կանգնեց մեր գրան առաջ և ձիուց իշտւ, — Զիան Բէյ տաց, շատ կարեռ լինելու պատճառութ, պարտաւորւթած այս տարակայ ժամին եկայ ձեր գուռը բաղիւելու: Ուրախ եմ, որ ինձ ըրպատաւորացրիք ձեղ անհանդիսա անելու:

Զիան հասկանալով, թղթաբերին հանեց երեք ոսկի տեղ, շնորհակալութիւնը յայտնելով, ասլսպրելով

միանգամայն, որ առաւօտ հանդիպի պատասխանը տանելու: Խսկյն ներս մտանք և սկսեցինք կարդար:

Թիւ 17. յունիսի 1876թ.

«Նախնթաց դրութիւնս չաւարտած, ինձ եկան կանչեցին պաշտօնատեղիս: Արդէն Ռիստակ էֆէնդին ուրախ ուրախ թրեւ է գալխս պարտիգակում և զւարժանում պտղալի ծառերի գոյնզգոյն բերքերից, որոնք թէւ խակի, բայց իրանց գեղեցիկ տեսքով աչք են դրաւում: Աւնին ամեն միջոցի գիմել է, Աւնաւուտ ողարտիզպաններից և այգեպաններից ամենաճարտար արհեստաւորներին փակել է այս կալւածքում և սախպել է, որ Զէշեննէթի տեսք տան իր ապարանքի ծառատաններին: Պէտք է ասած, որ այգեպանները լաւ վայելում են նրան առատաձեռնութեան շնորհները և իրար գլուխ են կոտրում տիրոջ աչքին զուր գալու համար:

«Ես շտապեցի հասայ այդ հային, որը ինձ դիմաւորելիս այնպիսի ծամածուութիւններ արաւ, որ ես զգւանքս ըլիտողացայ բռնել և ասի:

— Ինձ ինչի՞ էիք հարցրել:

— Մենակ այս այգեստաննի քաղցրութիւնն անգամ վայելելը ձանձրալի է: Ընկերի կարիք գտացի:

— Վատ ընկեր էք ընտրել, ասացի, ես ձեզ չեմ կարող զբաղեցնել և գւարթացնել էֆէնդի:

— Ինչի՞ բէյս, երեխ գժգոչ էք, կամ անախորժ լուր ունիք ինձ հաղորդելու:

— Ընդհակառակը, այսօր փաշաս՝ սպարապետը ուրախ վերադարձաւ պալատից և արդէն, ինչպէս զգում եմ, ձեր գործը կարգադրել վիրք չըբռնեն: Նրանք ամերիկացի են, խիստ ծշապահ, ազատասէլ...

«Այս լուրը թէւ մեծ ուրախութիւն պատճառ անհաւատի հոգուն, բայց ամեն կերպ ինքն իրան զսպեց, սառնասրատութիւն կեղծելով: Քիչ յետոյ եկան յայտնեցին, որ փաշան մեզ կանչում է: Խսկյն մտանք ընդունարանի դահլիճը, ուր ոտքի վրայ հային ընդունելով՝ ասաց:

— Ճնոր չաւորում եմ, արդէն ձեր առաջարկած պայմանագիրը մինխտրութիւնը ընդունելով, սուլթանի հրովարտակին էլ արժանացաւ: Կարող էք ապահով լինել և հեռազերել, որ սկսեն պատրաստութիւնները:

Անշափ երախսապարտ եմ տիրոջս անհուն շնորհից, ասաց մինչև գետին գլուխը խոնարհելով: Ես պատրաստ եմ ձեր բոլոր հրամանները ձշտութեամբ կատարելու:

— Առաւօտ ես կարգադրութիւն կանեմ, որ չըրս հինգ մասնագիտ զինւորականներ պատրաստւեն ձանապարհ ընկնեն և գնան Ամերիկա, գործարաններում հըրացանները քննելու և ընդունելու նիշերը դրօշմելու: Դու նրանց կարեոր յանձնարարականները կըպատրաստես:

— Ձեր հրամանների համաձայն, տմեն բան կըպատրաստեի:

— Այդ մարդկանց ըլպիտի նեղացնեն և ազատթոյլ պիտի տան, որ գործարանում շօջեն, ընդունելութիւնները կատարեն և նկատողութիւններն անեն:

— Անպայման, ամեն բան կըկարգադրեմ: Միայն ինդրում եմ, դրանց զդուշացնէք, որ անտեղի պահանջներ չանեն և անպատւաբեր գիրք չըբռնեն: Նրանք ամերիկացի են, խիստ ծշապահ, ազատասէլ...

—Աշող եղի՞ր, կրպատւիրւի ամեն բան... Մի-
այն գու գրի՞ր սրանք որքան որ էլ լինի, արևելքցի
են. թող կարգին հիւրանոցներ վարձեն սրանց համար,
Ճաշերի և ընթրիքների մասին խնամք ունենան...

—Գրանք աւելորդ է ասելը, այդպիսի հիւրասի-
րութիւնների մասին կասկած պէտք չէ, նրանք զիսեն
և ես որդուս արդէն կրզրեմ:

—Ուրեմն էլ բան չե մնալ:

—Չեր որոշման համեմատ պայմանների պատ-
ճէնները:

—Պայմաննագիրի պատճէնը արտաքին գործե-
րի միջոցով, գեռպանատուն կուղարկւի, բայց կան մի
քանի կէտեր...

—Ինչպէս որ հրամայեք.

—Վաղը գուք կըստանաք, բայց առաւօտ նո-
րից եկէք ինձ մօտ, միւս թերթի առթիւ...

—Գլուխ վրայ...

—Այն գրաւականի հաշւին փոխադրւած գու-
մարների մասին կարդագրութիւններս կրդան, կր-
բաժանես համաձայն փոխանակազրերիս:

—Ճառութեամբ:

—Կեզծիքներից զգուշանաս և թւերը, գաղտ-
նագրերը համաձայն քեզ արւած պատճէնի ստուգես:

—Ամենայն սրբութեամբ:

—Առաւօտ ըրմուանաս, կանուխ գաս, որ ես
գնալու եմ:

—Չեր ծառան եմ ասաց կրիեակի խոնարհու-
թիւններով ու գուրս զնաց անօրէնր:

«Երբ ես նայեցի փաշացի գէմքին, իմանալու

համար, թէ ինչ է հրամայում, նկատեցի որ ինքն իրան
մըմնջում է: Նո սովորաբար աղօթքներ է մըմնջում
զանազան ձեռնարկութիւններից առաջ, բայց այդ մըր-
մուջները աղօթքի նման չեն, նա խորհում էր: Նա
տատանւում էր: Աւշագնաց երկար ժամանակ նա զը-
րուիր աանում, բերում, քննադատում էր: Երկու րո-
պէ աւել աւեկց այդ աեսարանը և վերջապէս ասաց:
«Գեաւուրի վրայ պահանջ ունենամ, անով-տեղով, ազ-
գով-տակով բնաջինջ կանեմ ու կստանամ: Այս խօս-
քերից յետոյ մենք ճանապարհ ընկանք Միզհատի տու-
նը, որտեղ իգրիսը Խայրուլահը և իրանց արբանեակ-
ները մեղնից վաղ էին շտապել: Փողովը գարձեալ
գոնիսկ էր:

«Ես էլ միւս թիկնապահների հետ նախասե-
նեակում ծխում և հսկում էինք: Մեզ ընկերակցում է-
ին նոյնպէս երեք չորս սովորաներ, որոնք զբաղւած է-
ին մի թղթի արտագրութեամբ, որ նրանց իգրիսն էր
յանձնել: Պէտք էր առաջարկւած մի հարցի պա-
տասխանը ստանային Կ. Պոլսի յայտնի կղերից, ուստի
շտապում էին արտագրել: Քսանից աւել արտագրւած
օրինակները ծրարւում և հասցէնները զրելով, արտագրին
բակում կանգնած սովորաներին էին յանձնում պատկանե-
լուն ուղարկում, պատւիրելով, որ շտապին պատասխանները
բերելու: Մի կողմից արտագրւում էր հարցերի թեր-
թիւը, միւս կողմից դուրս էին տալիս ծրարւած: Հե-
տաքրքրութիւնիցի, հարցերը կարդացի, որն արտագրելով
մա-
տիսով ձեզ եմ հասցնում:

Հարց. Կարելի է ամբողջ մեր երկրի գաւու-
ների ժողովրդից ընտրւած պատգամաւորներից մի

ժողով գումարեր, որ երկրին վերաբերեալ գործերին փահասու լինի, խալիֆի բոլոր գործերին՝ խորհրդակցի և իր որոշումները տայ: Այսպիսի մի համայնական ժողով խալիֆի շերիաթին հակառակ խո՞չ չի:

«Այս հարցերը աւարտելուց յիտոյ, պատասխաններին առանց սպասելու, մոլու-իդրիսի տւած ֆէթւան սկսեցին նոյն ձեռվ արտագրել և հասցէնեներով ճամբել ապազրելով որ զրա պատասխանն էլ շուտով շտագենք բերել:

Ահա պատասխանի էլ պատճէնը:

Պատասխան. Քանի որ սուրբ գրութեան հըպատակ ենք և ոս կառավարում է ամբողջ արեգերքը (զրա մասին բոլորովին կասկած չըկայ), ուստի նախասահմանութիւնը ոչ միայն արդեկք չէ դրեր այլ զրականապէս հրամայել է ունենալ մի այդպիսի խորհրդատու ժողով: Խմբանի ընտանիքը (ԱՌ զլ Ղուրանի) սուշիայում 153-րդ այեաթում պարզ հրամայւ ած է, այն էլ խալիֆների առաջնորդին և մեր օրէնքների բանալին—թէսուլին: «Ալահի անսպառ ողորմութիւնով զու (Մահմէդ) ժողովքի վրայ գթասիրտ ես, խոկ եթէ դու սէզ և խասասիրտ յինէիր, այն ժամանակ ճշմարիտ որ նրանք քեզանից կըհեռանային: Այս պատճառվ նրանց թշրուտութիւն արա, նրանց համար Ալլահց ներողամութիւն խնդրիր: Նրանց հետ խորհուրդ արա և եթէ մի բան վճռէք, ոյսը Ալլահի վրայ դրէք, քանի որ Ալլահը յաւսացաղներին սիրում է»: Ուստի խալիֆը պետութեան վերաբերեալ բոլոր հարցերում, պարտաւոր է ժողովի վճռին հպատակւելու: Նւաստո՞ օրէնքի սպասաւորներից այս վճիռը դրեցի

սուլթանների սուլթան՝ Մուրադ Ե. Խալիֆի բարեբախտ ամիրապետութեան առաջին տարւայ գահակալութեան օրերում (որին Ալլահը երկայն օրեր պարգևէ, իրան ապաւինողների վրայից շնորհն և հովանաւորութիւնը անպակաս անէ), Մոլլա Խդրիս:

«Մինչեւ կէս զիշեր ստացւած բոլոր պատասխանները հաստատեցին Խդրիսի ֆէթւան: Թէ ինչ վերջաւորութիւն պիտի ունենայ այս կատակերգութիւնը, կարող էք երեւակայել և թէ ինչ անելու է, ինքներգ մտածեցէք: Երբ կէս զիշերի մօտ գուրս եկանք, Աւնին ուրախութիւնից թուզում էր: Այնպէս կառք նստեց, որ կարծես տամնութ տարեկան պատանի լինէր: Անվերջ նա երազումէր, բոլորովին յափշտակւած, նա իրան երանութեան շէմքումն էր կարծում: Երբ տուն հասանք, ընդունարանի պարտիզից նրան կանանցն էին առաջնորդում ասաց հրձւալի:

—Վերջապէս Խդրիսից առանք այս ֆէթւան: Այժմ վստահ կերպով կարելի է ասել որ երկիրը կազատւի օղալզների և նեզր ներքինիների նենգամիտ մեքնայութիւններից և պատասխանատու մինիսարութիւնը երկիրը կըհասցնէ ցանկալի բարօրութեան ու բարգաւաճման: Այժմ վերջ կըտրւի ամեն ահսակ ճընշումների, միջամտութիւնների և հետախոյզութիւնների, ազտու և անկախ...

«Այս խօսքերը այնպէս էր արտասանում, որ կարծես ինքը ազատւել էր երան թեկը սեղմող կապանքներից և արձակ շունչ էր քաշում: Այնպէս էր շնչում, որ կարծես սրտի վրայ բեռնաւորած մի ահագին ծանրութիւնից ազատւել կամ վոհմը լուծել էր:

«Հետևեալ առաւօս վաղ գարձեալ եկաւ թէ շիդը՝ ծովակալը և ամբողջ երեք ժամ գաղանարանից դուրս չեկան. մի բան գրում էին, միայն ընկարողացաց հասկանալ՝ թէ ինչ էր: Միայն թէ Ոիստակ էֆէնդին էլ եկաւ և նրան մեզ մօտ երկուր սպասեցնելուց յետոց, ներս կանչեցին: Ամբողջ մի ժամ էլ մնաց և ապա բոլորս միասին դուրս գալով, գնացինք սպարապետի գուռ: Հայը սասահիկ յօդնած և քայլայւած դուրս եկաւ այնպէս որ ես կարծում եմ, թէ նրան անախորժ թըդթրի ստորագրել տախն: Մեծ ճգնաժամ է, մի կողմից պատերազմական պատրաստութիւններ, միլիոնաւոր ծախսեր, միւս կողմից ներքին վերանորոգչական հարցեր:

«Հա՛, սպարապետի գոնից ուղում էի նամակս ձեզ հասցնել բայց հաւատարիմն ուշանալու պատճառով շատում եմ լուսանցքում աւելցնել Մալիէի (Փինանսների) վերատեսուչն եկաւ սպարապետի գուռ: ամբողջ մի ժամ է, որ աշագին գոռում-դոչըւն կայ սպարապետի առանձնասենեակում, թէշիդ փաշան էլ դեռ ներսն է: Ես կարծում եմ, որ փողի խնդիր է, ըստ պարապետը անցապաղ պահանջ է գրել իսկ Մալիէի վերատեսուչը մերժում է: Այս կատակերգութիւնը տեսնենք ինչպէս է վերջանարու: Արդէն Միդհատի ետեից մարդ ուղարկեցին և անհամբեր սպասում էնք:

«Աղմաւկին վերջ ընկայ, քիչ է մնում որ ծեծ կեն, Միդհատն էլ եկաւ: Երկուր գաղանի խորհուրդից յետոց ցրւեցան: արդէն յետինք է: Մալիէն սաստիկ սպրդնած գնաց, ինչպէս երեւում է նրան խղճացրին և ստիպեցին խոնարհւելու: նամակս ծրարեցի,

մենք էլ տուն ենք գնալու, իսկ հաւատարմաժարս ըլկայ: Ամենախոնարհ յարգանքներս»:

Անհամբեր բացինք երկրորդ թերթը:
Թիւ 18. 517 յունիսի 1876 թ.

«Մալիէի վերատեսչին այնքան են Ճնշեր, որ ստացել են բոլոր պահեստի գումարների սաացականները: Մինչև անգամ պետական գանձարանին յանձնած որբերի ու այրիների գումարները կարողացել են կորպիւր երեք հարիւր յիսուն հազար լիրա գումար այսօր յանձնել են Օսմանեան բանկին, որպէսզի նա էլ փոխանցնէ «Մարտինի» և «Վինչեստեր» ընկերութիւնների հաշիներին՝ որպէս գրաւական: այն ինչ այդ գումարները, ինչպէս նախորդ թւերով յայտնել եմ, արդէն թիստակի ձեռքով բաժանւում է Մայր-սուլթանի, ներքինապետի, սագրազմի, խարիծին նազրի և Ջէյն-իւլիսլամի մէջ: Կառո-կառոր փաստերը արդէն երեւում են: Մօտ հարիւր սովոր մեր տանից փոխանակազմերով հեռացան: յայտնի բան է, այդ բոլորը բարդւեցան սպազայում ստացւելիք հրացանների վայ: Բայց գեռհնարը ընկայ, որ պարզւի, թէ ամեն մի հրացանի համար որքան գումար գործարանատիւր գրապանն է մըտ նելու և որքան մեր աւարառուների: Ապագան այդ պարագաները կրպարզէ:

«Այս իրիկուն բոլորովին թիստակի հետքը ըլկայ մեր գոնիւրում նա թէ փողը ստացաւ բանկ-օտառումանից և թէ գաղնագիրը գեսպանատնից: թէշիդ-փաշան եկաւ մթանը և կէս ժամի չափ գաղանարանում քաշըւեցան Աւնիի հետ, բայց մեր գաղանի բորբռում մից թողեց խեղճ ծովակալը ու հեռացաւ: ինչպէս նըմից թողեց խեղճ ծովակալը ու հեռացաւ:

— Բայց, ասացի նշան տալով կանանցի կողմը:
— Ես չեմ դիմանալ նրա ողբին ու կոծին, նա-
մակը ուղարկենք և մենք հեռանանք: Հիմի հարս կը-
խելագարւի, քոյրս կըցնորւի... Գնանք...

Եւ դուրս եկանք արշալցուի շողբերի հետ ու
դիմեցինք դէպի Ստամբոյ: Գաբաթաշ մեծ պողոտա-
յով գնալիս անդադար դիմաւորում էին մեզ ձիաւոր
թիկնապահները, որոնք պալատից Ստամբոլի կողմն
էին արշաւում և կամ հակառակ: Կամուրջի վրայ էինք
երբ «Վագթ» լրագրի ցրւիչը գոռում էր—նոր լուր,
նոր եղեռն, նոր պատուհաս:

— Ի՞նչ կայ, ի՞նչ բան է, հարցրի ցրւիչից:

— Հետաքրքիր, ամենահետաքրքիր, 2էրքէղ-Հա-
սանի միջնադէպը, գոռում էր անվերջ աչքերը չորս
կողմը շրջելով: Կամուրջի վրայ դեռ հատ հատ մար-
դիկ էին անցնում և լրագով հետաքրքրւողները քէչ է-
ին, բայց ցրւիչը գոռում էր— «Վագթ» «Բասիրէթ»
2էրքէղ-Հասանի եղեռական միջնադէպը: Գնեցի լրագի-
րը և 2էրքէղ Հասանի դէպի արձանագրութիւնը ա-
ռանց կարգալու, փերջն աչքից անցկացրի.—Հասանին
սպարապետի դրանը կախեցին:

Սրա վրայ քայլերս ուղղեցինք դէպի սպարապե-
տի գոռում:



ՄԱՅՐ-ԸՈՒԼԹՈՒՆԻ ԱԶԴԻԾ

Արտգ քայլերսվ շտապեցինք, Մահմուդ-փաշա-
յի փողոցից ծուելով մասնել Զադմագչըլար և զասի-
վերից բարձրանալով ուղղւեցանք դէպի սպարապետի
գոռում: Թէե արել նոր էր ծագել բայց ահաւոր բաղ-
մութիւն հրապարակը բռնել էր, մեծ անց ու դարձ
կար և աղմուկն ու ժիւրը խրցնում էր: Հրապարա-
կում ուտելիք-խմելիք ծախողները մի քանի հարիւրակ-
ներով գոռում էին, գովարանում իրանց բարին և աշ-
խտառում ժրդովրդի, յաճախօրդների ու զքը գրաւել: Որը
տաք-տաք խաշ էր բղաւում, միւսը հէրիսաւ, երլորդը
իշկէմբէ, չորրորդը սուուղ և անհնդատ մի անախորժ
համերգ տիրում էր ընդարձակ հրապարակին, ուր մըր-
ջենների նման զժվառում էր բազմազան տարագներով
և վառ գոյնի հագուսաներով ամբոխը:

Կախազանի կողմը ահաւոր բաղմութիւն էր
խոնւել ուր իրար հրմշակելով և քաշքւելով հազեւ-
կարելի էր առաջ գնալ: Այդ խոնւած ամբոխի մէջ
մանելը տւելի քանթէ վանդաւոր էր, այնահզ ճը-
խելու ճմշւել և ոտքի տակ արորւելն աչքի առնելով
միայն կարելի էր ներս սովոր: Թէե արել որ էր բար-

ձրացել, բայց արդէն խումբ-խումբ քաղաքի ամեն մի թաղից վազում էին սպարապետի գուռը և այդ հրապարակի շուրջը գտնուած փողոցները սովորականից մի քանի անգամ աւելի բազմամարդ անցուգարձ ուներ: Համբերելու ժամանակ չէր, սիրտ էլ չըկար, զգուշանալու մասին երթեր չէր կարելի մտածեր, ուղղակի ճեղքելով ամբոխը, հրելով ու հրմանելով առաջ գնացինք: Բայց արդէն կախաղանի չորս կողմը կրկնակի զինուորների խումբը հրացանները ձեռքերին շղթայւած կտնդնել էին, բացի ցցերի վրայ կապած բոլորածե պարանից: Էլ առաջ գնալ անհնար էր և զինուորների ետևիցը նրանց արանքներով տեսնում էինք Հասանին մի պատռուած շապիկով կախւած:

Նրա չոր գէմքը շատ փոխոխութիւն չէր կրեր նրա աչքերը թէև փակւել էին, նա չէր այլակերպւել միայն սմքել էր, առանց գունատւելու: Ինչպէս նկատելի էր, նրան մեռած էին կախել, ոչ թէ առողջ, այնպէս որ նրա լեզուն անգամ գուրս չէր ընկել և շրմունքները չէր բացւել: Տասն և ութ տեղ վէրքերը համարեցինք մի քանի անգամ և առանց մի բառ փօխարկելու ետ գարձանք: Թէև Զիան զինուորական զգեստ էր հագած, թէև նրա կուրծքից թիկնապահի ժապաւենները ձօնում էին, բայց ոչ ոք ուշք չէր դարձնում և ոչ ոք չէր ուզում մեզ ճանապարհ տար, պարտաւորւած էինք ամբոխը ձեղքելով անցներ, քրտինքի մէջ կորած:

Երբ արդէն գուրս եկանք ամբոխի խառնւածքից, Զիան յողնած, քրտնած, թուլացած թէերիցս կախընկաւ և նրան քաշ տալով հագիւ Սուլթան-Բայազէթի հրապարակը հասցրի, ուր ձի վարձելով իջանք Սիրքէ-

ջէ: Այստեղից նաւակ նստանք և ուղղւեցանք տուն: Ճանապարհին այնպէս Զիան անմռունչ խորասուզւած էր, որ նրան տեսնողը կարող էր հիւանդի նմանացնել երբ ես սկսեցի նրան մվիթարելու համար մի քանի խօսք կակաղեր ասաց.

— Ես իմ մասին մոռացայ, քանի որ մոլոր ել եմ, թէ ինչպէս մվիթարեմք բողջս և հարսիս: Թողինձ, ընկճւիմ այս վշտի տակ: Թող ուշաթափւիմ, միայն թէ ըստեսնեմ, չըլսեմ ես այդ կանանց մորմոքները, ուրոնց սփոփելու ոչ ոյժ ունիմ, ոչ էլ միջոց: Ա-իս, այս բնչ սոսկալի վիճակ է:

Մտանք այն սենեակը, ուր կօմերի հետ նստած էր Զէմիլէն, վշտաբէկ սուլթանէն, որքան որ աշխատում էր կրքերը զսպել քաջ երևել և սիրտ տալ սգյ սաւանում պատւած հարսին, հնար չէր լինում, արտասուբներն ու հառաջները նրան խեղդում էին: Իսկ հարսը միաբերան—Հասան, Հասան էր կրկնում և կուրծքը ծեծում, մազերը փետում: Զիայի մուտքը մասամբ մեղմացրեց հարսի ողբը, բայց քիչ յետոյ, նա վշտից մոլորւած այնպիսի ողբ սկսեց, որ մեզ բոլորիս շւարեցրեց: Թէ օրն ինչպէս սահեցաւ ըզդիտեմ, բայց ուշքս հաւաքածս ժամանակ արդէն իրիկնադէմ էր: Ուղիղ է, բարեկամ և ծանօթ կանայք հաւաքւելով, շուտով բաժանեցանք ողբացողներից, բայց Զիան առանձնութեան մէջ, առանց արտասուքի, աւելի խիստ տպաւորութիւն էր թողնում:

— Երեխ, սոկորներն էլ չեն տալու, որ թաղէնք, ասաց Զիան:

— Ոչ, ասաց կօմեր բէդը, մի յուսահատւիլ, ար-

գէն կարդագրուծ էն, որ զիշերս տուն բերեն, յւանք.
մաքրենք և հողին յանձնենք սօվորական յարգանքով:
Այդպէս էլ եղաւ:

Ամբողջ երկու ամիս անցաւ: Թէև Զիան շարու-
կում էր իր ծառայութիւնը Մայր-սուլթանի դրանը
թէի Փաթիմէն յցս էր տալիս, որ անպատճառ ինքը
նպատակին կը համնի, բայց մի սոսկալի բարդ խնդիր
էր, Վիքարային կարառողի եզրօրը արքայագատեր հետ
ամուսնացել: Մայր-սուլթանը ընացելով Սրմա-սուլթա-
նի հետ ունեցած հակասակութեան և վեհանդրու-
թեա՝, ընացելով Փաթիմէի թափանձանքներին և իր
խոսաման, չէր յանդնում այդ մասին մի ծպտուն ա-
նիլ որդու՝ խալիֆի մօտ: Իզգէթը Անիի մահից յետոց
թէև անվերջ յաճախում էր Մայր-սուլթանին շրջապա-
տողներին, Միզհատին, ներքինապեաին, բայց ոչ ոք նրա
մասին այլևս չէր յանդնում բարեխօսութիւն աներւ-
իսկ Սրմա սուլթանը իր ապարանքից զահքքի^բ ոսքերը
դառու իրաւունք, արածնութիւն չունէր: որ կարգանար
մի բան անել: Այսպէս երեքն էլ սպասողական զրու-
թեան մէջ էին, երեքն էլ յուսալի Համանջւռում էին և
հանգամները չէին նպաստում: որ մի կերպ այս
հարցը վճռեր և հալ ու մաշին գերջ առեր:

Օգոստոսի մէջ, գարձեալ այցելեցի չարատանչ
ընկերոջ: Տան դռնից ներս մտնելու պէս ինձ շրջապա-
տեցին Էօմեր բէզը, Զիան և Հասանի զաւակները: Մենք

նրանց պարտէղի քէօշքումն էինք, հովանու տակ, քաղ-
ցըր բուրմունքների մէջ: Սառուցներով լի մի սափորի
մէջ լքցրել էին այդու ամեն ահսակ քաղցր պառողնե-
րից և մենք անխնայ ուտում զովանում և ուրախ խօ-
սակցում էինք: Սաստիկ շոգ էր, բայց մեզմ զեփիւռը,
պարտիզի շատրւանն ու ծառերի թանձը տերևների
հովանին մեզ պատսպարում էին: Յանկարծ յայտնեցին,
որ մի պալատական այցի եկաւ:

Էօմեր-բէզն ու Զիան դիմաւորեցին և ամենայն
խոնարհութիւնով ընդունեցին: Մի քանի հարցերին
ակնածութեամբ պատասխանելուց յետոյ, պալատակա-
նը ասաց.

— Ես եկել եմ երկու խօսք յայտնել Զէմիլէին
ու հեռանալ:

— Ներս Հրամեցէք, շնորհ արէք, ձեր ներկայու-
թիւնով փառաւորեցէք ձեր գերու հարկը, ասաց Զի-
ան սաստիկ խոնարհութեամբ:

— Ոչ պարտիզում ոտքի վրայ աւելի լաւ է. միայն
երկու խօսք ...

Այդ միջոցին Զէմիլէին պարտականին արդէն
ճանաչելով իր ֆէլուծէի մէջ փաթաթւած և իր եաշ-
մազով ծածկւած կանանցի սանդուիներից ցած և
կաւ: Պալատականը նրան դիմաւորելիս, Զէմիլէին ասաց.

— Զէի արժանի, տէր իմ, այդ շնորհին, խընդ-
րում եմ բարեհաճէք ...

— Ոչ, հանրմ, ես անչափ ուրախ իմ, որ կարո-
ղացայ գէսքից օգտուել և ձեզ ձեր տանը գաայ: Ան-
շափ շնորհակալ եմ ձեր եղբօր վարմունքից և ձեզ հետ
ցաւակից՝ նրան կորցնելու համար: Նա Օսմանեան գո-

Հին հասած արատը իր արիւնով մաքրեց. իսլամի խո-
լիքի վրէժը լուծեց, բայց երանի թէ նրան հասկացող-
ներ լինեն:

— Հասանը ամեն մի իսլամի պատշաճ պարտա-
կանութիւնը կատարեց առանց չնորհակալիքներ
ակնկալելու:

— Միփթարւեցէք, նա իսլամի արժան և վայել
եղանակով ընկաւ, նա արժանացաւ խոստացւած վա-
յելքներին: Չեզ ցանկանում հմմիթարութիւն և խա-
զաղութիւն. մնաք բարով: Դուք աւելի խելօք գործ
բռնեցիք, քանի թէ պետութեան զեկավարները:

— Չեր չնորհը մեր վրայից անպակաս լինի, տէրս,
մենք արդէն այս այցելութիւնով անչափ միթթարւած
ենք. գնաք բարով, ասաց Զէմիլէն:

Մինչև այդ պալատականը դլուխ տւեց ու գը-
նաց: Նրան մինչեւ դրսի դուռը հետեւցին: Երբ նրանք
ետ դարձան, իմ նշաններս նկատելով Զիան ասաց.

— Համդի էֆէնդին, սուլթանի եղբայրն է:

— Այս ի՞նչպէս պատահեց, որ ձեզ այցի եկաւ,
ասացի:

— Պարատի մէջ սրտ նման պարզ և խելօք էլ
չըկայ, բայց ափսո՞ս որ խեղճը վանդակումն է, ուր
միայն կարող է ապուշ դառնար:

Երբ առանձնացտնք Զիայի հետ, հարցրի նրան,
թէ ինչպէս զերծացաւ, կամ ուր հասու. իր վիճակը
ասաց նա հառաչելով:

— Յատ վատ, անչափ յուսահատ զրութեան
մէջն եմ: Միդհատը այնքան մեքենացութիւններ սոր-
քեց, որ Մայր սուլթանի դռնից էլ հեռացրին և ինձ

ստիպեցին, որ գաւառներից մէկը գնամ բանակներում
ծառայելու: Հասկացայ, որ ուզում էին աքսորել ես
էլ հրաժարւեցայ: Այժմ պարապ տանը Ճանձ եմ վը-
ոնդում:

— Իսկ ֆաթիմէից տեղեկութիւն...

— Թէկ նա հաստատ կանգնած է վճռին, բայց
իսպառ չեն թողնելու մեզ մեր մուրազին հասնելու:
Չերքէզ-Հասանի եղբայրն արժանանալու չէ այդ փառ-
քին: Մայր-սուլթանը քաշում է, Սրման կլ գաւեր է
սարքում և տանջում թէ աղջկան և թէ ինձ:

— Մայրը իր աղջկան, հարազտա մայրը...

— Ի՞նչ մայր, ի՞նչ աղջիկ... Կաթ է տւել մե-
ծացրեր, քունն է կտրեր, գուրդուրացրել... Նրանք իրանց
քէնը և վրէժը լուծելու համար սաքերի տակ տրոր-
ւած սրտերն երբէք չեն տեսել:

— Բայց և այնպէս մայր է, այդքան անգութ
չի կարող լինել:

— Այս, մայր է, բայց երանի մօրուներին: Դը-
րանց մասին խօսել անգամ չարժէ: Միայն այսքանը
քեզ կասեմ, որ թէկ տանջում է, մաշում, բայց իր
վճռին հաստատ է և յամառութեամբ կուռմ է Փո-
թիմէն բոլորի հետ: Արդէն մի քանի սուլթանէներ նը-
շանւել են և զըլլջ-այալին(թրի հանդէս) պիտի հար-
սանիք էլ լինի: իսկ Փաթիմէն բոլորին մերժել է և չի
ուզում մարդ առնել: Իզզէթը տապակում է, կիսւում
է, բան չի կարող առաջ առնել:

— Վաղուց է չես ահսել ֆաթիմէին:

— Վաղը պիտի Քեաղդ-Խանէի այգին գնամ.
Ճաշից յետոյ այնտեղ է գալու, տեսնենք ինչ կըվճռուի:

Երբ ես Զիային քաջալերելով հեռանում էի, նա ասաց — ո՞ւր ես գնում, ահա երկու ամիս է Գառը-զիւղից չես դուրս եկել մնա մեզ մօտ դիշերս: Ես այնպէս առիթ ունէի, որ չէի կարող Զիային լսեր ուսախ հրաժեշտ առլով հեռացայ, խոսանալով շուտով նորից նրանց այցելել:

Երեք օրեց հետեւեալ նամակը սահացայ Զիայից, երբ ես՝ ըրջուպատւած ընկերակիցներով Բէքմէղների բարկում ուրախութեան մէջ էի:

Աղիղ բարեկամն:

Աշա նո՞ր, մօտ կէս դիշերին գերադարձայ Քեազդ-խանէից և առանձնացած քեզ շատ լու յայտնի սենեակումն, տիրութեւնից ազաւելու, մատծումներիս վերջ տալու և վիշտս թեթեացնելու տենչով՝ վերաբ գիրչ քեզ բանալու սրախս քօղը, որ նկատես առի գիրչ քեզ բանալու սրախս քօղը, որ նկատես վերքիս խորութիւնը: Այս ի՞նչ կեանք է, այս ի՞նչ անգութ բախտանքն է, ո՞ւր են տանելու ինձ այս անգութ բախտանքն է, ո՞ւր են տանելու ինձ այս անգութ բախտանքն է, բարեկ է բաղիւելու և փշուելու եմ ալեքները, ո՞ւրաեղ է բաղիւելու և փշուելու եմ նեարգային նաւը:

«Ինչպէս քեզ յայտնի է, սրտատրոփ սպասում էի. որոշ ժամին գնամ, հասնեմ, աեսնեմ ու լսեմ: բայց այժմ հազար վայ եմ տալիս, երանի այդ ժամը հասած չըլինէր, կամ մի այնպիսի արդեք պատահէր, որ ես, կամ լինէր, կամ մի այնպիսի արդեք պատահէր, որ ես, կամ նա չըկարողանայինք որոշեալ ժամին իրար գանել: Պէտք այն ժամանակ մինչեւ այս կէտիս քաղցր երազների մէջ կըլինէի և յշաս թեկը ոււած ինձ կըսաւառնեցնէր օդային ամրոցներ շինելու:

«Բայց արգէն ուշ է, ամեն բան անցել է և սիրտս եթէ ապակը լինէր, փշուած կը լինէր և եթէ

պողպատ լինէր՝ կոտրտւած կը լինէր, բայց քանի որ նեարգելից է հիւաւած, ամեն բանից գիմացկուն է. նա գեռ արոփում է, շարունակում է ձկւիլ ու ձգւիլ այնպէս որ ես տարտբախտութիւն ունիմ այս անցյա հոգովս ապրել, դիտկա քաշ տալ: Ուղիղ է մեռած չեմ, մարտծ էլ չեմ քանի որ ամեն բան շատ որոշ տեսնում եմ, յսում եմ գոտում և այս լուրջ մաածողութիւնն ինձ խեզգելուց աւելի է տանջում:

«Քեզ պարզ է, որ աշխարհի վրայ ինձ ով կարող է այս վիճակին ենթարկել, կամ ում համար միայն ես կարող եմ այսպէս տանիջւել. նա արգէն իմ ձեռքից թռաւ... Ես յաւիտանականապէս պիտի նորա տեսքից զրկւիմ... Մայր-սութանը նորա մասին տւել է իր վը-ձիուը. նորան էլ Վըլըջ-Աղայի հանդիսից յետոյ պիտի հարս շինեն և այն արիւնուուշ Ալբանացին պիտի հասնի նպատակին...

«Ասա, խնդրում եմ, աղիղ ջան, սրանից յետոյ էլի՞ ապրեմ, սրանից յետոյ էլ ինչի՞ է կեանքն ինձ պէտք: Երեկի վիճակւած է մեզ, ի՞նչ բան է: Այսպէս էլ գառն վիճակ կը լինի՞ այսպիսի էլ անգութ նախասահմանութիւն կը լինի՞: Ի՞նչ մեղք ունիմ ես, որ բախտ ինձ Գաղատանից կաթնակեր ժամանակս հալածեց և հասցրեց խալիքավայրը, այս վիճակին բարձրանալուց յետոյ, այժմ ուշաւոր ապարանքների բարձրունքից զցում է փողոցի սալայատակի վրայ փշելու: Կամ ի՞նչ մեղք ունի նա, որ ծաղկանոցի քնքոյշ թփերի վրայ բողբոջեց, կոկոնեց ու բացւելիս ուզում են իշու տամներին բաժին զցել: Եւ այն էլ ինչի՞ համար, ախ սոսկում եմ, սոսկում... չեմ համարձակում այս թըղ-

թերը անգամ ազտեղի այդպիսի սոսկալի մաքերի արձանագրութեամբ... փողի, ժանգոտ մետաղի համար:

«Յիշում էս, երբ Ժադ-Մոն՝ աշխարհագրութեան ուսուցիչը մեղ պատմում էր Մաւրիտանցի Հռուրիմայի խօսքերը, չորվլը գնելու մասին, և այն յաւելւածը՝ թէ այսօր Թիւրքիսցի պաշտօնականներն էլ պատրաստ են ամբողջ երկիրը ծախելու, միայն թէ գնող չեն գանուհի ես ի՞նչպէս բորբոքւեցի։ Այժմ զըլը լսուս թեքած, խոնարհում եմ և կրկնում։—Այո՛, իրերի այս վիճակում մեր պաշտօնականները էլ աւել ստոր վաճառականութեան պատրաստ են, եթէ միայն իրանց փող առաջարկող լինի։

«Նորան էլ ծախել են, իսկ ծախողը այն կինն է, որ հաւանութիւն ունի ինքն իրան թշւառների, այրիների և որբուհիների խնամակալ—մայր համարերու իզզէթը մի յշնից երեսուն հազար լիրայի փոխունութիւն է արել, կանխիկ երեսուն հազարը վճարել և փառաքը ձեռք է բերեր այնպէս որ ես և նու պիտի տանջւենք։ գուցէ նա չբգիմանայ այս կրակին և ողջ ողջ գերեզման իջնի, միայն այն պատճառով, որ մի քաւթառ երեսուն հազար լիրա է ստացել։

«Ապուշ իզզէթը, ինչպէս քեզ յայտնի է, երեւակայում է, թէ Ֆաթիմէն նման սիրում է և տիմարութիւնը այն աստիճանի է հասցըրել, որ ինչ գործ բռնում է, իր ձեռքով ճշտութեամբ արձանագրում և հասցնում է Ֆաթիմէին, վերջինիս ցոյց տալու համար, թէ ինքը ինչպէս զիշեր, ցերեկ ձգտում է, վաղում է և անխոնջ աշխատում, որ նպատակին հասնի։ Յայտնիքան է, Ֆաթիմէն էլ անմոռունչ ամեն բան լսում է և

անտարբեր թոյլ է տալիս, որ շարունակի այդ ցանցառը իր սխրագործութիւնները։

«Փաթիմէն առաջւայ նման ինձ յուսագրեց, որ ինքը երբէք չկ զիջանի այդ ստորութեան և չի թոյլ տալ որ իրան իրանը գցեն ատելիի ձանկը և այդ յոյն է, որ քիչ թեթևացնում է իմ վիշտը։ Գոնէ հաւատացած եմ, որ եթէ նպատակներիս էլ չըհասնենք, կողմակի ազնիւ սիրով իրար համար պիտի զոհւենք, չըպիտի բծաւորւենք։ Որքան էլ որ հաւատում եմ Ֆաթիմէին, որքան էլ համոզւած եմ, որ նա ինձ չի դաւաճանելու, այնպէս էլ դրականնապէս դատողութիւնը իմ աչքի առաջ ներկայացնում է զարհուրելի ապագան և ես գիտեմ, որ մենք անձնախարութեամբ ենք պարապում։ ոսկիների—ամենաշզօր կուռքերի զօրութեամբ իզզէթը նպատակին հասնելու է, մեր կեանքերը զոհւելով։

«Սոսկալի է այն պարագան, որ Զարիֆիի նըման սեղանաւորը հանում երեսուն հազար լիրա փոխութիւն է անում իզզէթի նման մի տկլորի։ Այսուղ ես նկատում եմ նոր մեքենայութիւններ։ Աւնիի պազելուց յետոյ, իզզէթին ամեն իրիկոն Միդհատի գոներումն են տեսնում։ Երեկի Միդհատ ուղակի կամ անուղղակի կերպով տջակցում է այս գործին, այնպէս որ եթէ Զարիֆիին չըհաւատացնէին, թէ իզզէթի և Ֆաթիմէի գործը զլուխ է գալու, նա միտնագ այդպիսի աշտար գումար չէր զիջանիլ բաց թողնել, այն էլ մի այնպիսի թոյլ վասնգաւոր պարագայում։ երբ երկիրը տակ ու վրայ է և պատերազմը անխոռսափելի։

«Մոռացայ քեզ զրել, որ Փաթիմէն երկար տան-
ջւելուց յետոց, վերջապէս յաջողացրել է և ինձ տեսնե-
լուց մի օր առաջ ներկայացել է երկրպագութիւնների
դէտին: Ամեն բան բացատրել է, ամեն ինչ համարձակ
յայանել է, բայց նրա կողմից ոչ մի բաւարար պատաս-
խան չէ ստացել: Նա ինձ պատմեց, թէ շրթունքներն
անգամ չըբացեց իր ամու որդին և որոշ պատասխան
անգամ չտւեց: Եթէ Փաթիմէն նկատողութիւնը ճիշտ
է, ապուշ արարած պիտի լինի, ցնորւած: Հաւանական
էլ թւում է. քանի որ բաւական չէր նրա տասն և
վեց տարւան վանդակային փակ կեանքը, տիսուր վի-
ճակը և խիստ հսկողութիւնները յանկարծ մէջ զե-
շերին, Աւնիի նման մի գագան նրան ներկայանում
և հրաւիրում է գահ բարձրանալ: Աւնին, որ մի ժա-
մանակ նրան միայն լըտեսել, տանջել և խստութիւնների
էր ենթարկել, զնում է նրան դէպի գահ հրաւիրելու:
Այդ զիշերային իրարանցումը, Գաալ-Քէօից մինչև
էպի-սարայ փոխադրութիւնը, ծովը և զինւորները՝ այն-
պիսի սոսկալի ազդեցութիւն կարող էին ներգործել,
որը ամենափորձառու, ձարպիկ մարզու անգամկարող էր
դժւեցնել, ուր մնաց Ուրադինման մի սոկեայ շղթաների
մէջ կապւած, կաշկանդւած կալանաւորը: Այս կէտը
բոլորովին կարող է կերպարանափոխել մեր վիճակը, եթէ
հաստատ է:

« Զըմոռանամ ասելու, որ այս բանի մասին մի
քանի ակնարկ ևս կար մեր բարեկամի գեկուցումների
մէջ որի շարունակութիւնը տարաբախտաբար էլ չենք
ստանում, այս պարագաները իրար կիսատները պար-
զում են: Վնաշանբեր սպասում ենք քեզ, շտապիր, որքան

շուտ: այնքան ուրախալի, կարօտալիդ Զիա»:

ԺԱ

ՍԱՆՉԻ Ա.Ծ Վ.Ա.ԳՐԸ

Օգոստոսի տօթագին օրերին յաջորդեցին մեղմիկ
եղանակներ և արձակուրդի ազատ օրերից ձանձրացած
պատրաստւեցի և ձանապարհ ընկայ Գադը-Քէօից շոգենա-
նաւով դէպի Ոսկեղծեր խորշը, որպէսզի դիմեմ Լիսէյ՝
Ղալաթա-Սարայ: Երբ կամուրջն անցայ և մայ Ղա-
լաթա, նկատեցի, որ գեռ շուտ էր և ժամանակ ունէի
մի այց անելու ընկերոջս, Զէմիլէ սովորանէին, որոն-
ցից տասն և հինգ օրւայ ընթացքում ոչ մի տեղեկու-
թիւն չունէի: Ժամանակ վաստակելու: Համար նստայ
տրամայի փերնահարկը և անցայ արագութեամբ Ղալա-
թայի, Գաբա-թաշի, Բէշիքթաշի մեծ պողոսայով: Տրամ-
այից իջնելով, երբ մօտեցայ Զիաենց գռներին: Հա-
սան-բէզի որբերը փողոցում ինձն նկատելուն պէս, թողին
իրանց վէգերը և մօտենալով տուն առաջնորդեցին:

Անհոգ և անտարբեր մանուկները, ուրախ, զը-
ւարթ այնպիսի հարցերով յարձակւեցան ինձ վրայ, որ
ևս մօլորւեցի: Կարծես ես նրանց հարազատը լինէի:
Որբերի հրձւալի դէմքերը, անկեղծ յարաբերութիւննե-
րը և համարձակ շարժումները ակամայ ուրախութիւն

Ներշնչեցին և ես արագ արագ քայլերով մտայ նրանց հետ տուն։ Թէեւ շոգը այնքան էլ չէր նւազւած, բայց պարտիզի խիտ ծառերից շւաքներում բոլորովին զովացայ և մի բաղմոցի վրայ նստա, մինչև որ մանուկներից մինը ներս վագեց տեղեկութիւն տալու։ Զիան տանը չէր, Էօմէր-բէզը ագարակ էր դնացել, իսկ Ֆէմիլէն մի քառորդ ժամ ինձ սպասել տւեց այզում, ապա դուրս եկաւ եաշմաղը կապած, ֆարաջէն հագնւած։

— Գառնուկս քանի՞ օր է, ո՞րտեղ ես, ինչի չ՞ու երեռում, ի՞նչի չես հարցնում, փնարում թէ ո՞րտեղ է քու ընկերը։

— Ներեցէք, սուլթանէ, ես զբաղւած էի, տասն և հինգ օր է, քաշւած էի կղզին, այնպէս որ Երեկով բարպարձայ Գալուքէց և այսօր էլ, աշա՞ եկայ ձեզ ներկայանալու և ընկերոջս տեսնելու։

— Արդէն տասն օր է, որ նա չըկայ։ Նրան էլ կորցրի, արդեօք դահիճներս նրան էլ տրեխց զրկեցին, իմ շշուալի կեանքիս օրերը իսպառ խաւարեցնելու համար։ Զիաս չըկայ, Զիայիս կորցրի, նրան էլ աներեցի թացրին, ասաց արտասուքները կաթիլ—կաթիլ հոսեցնելով Ֆէմիլէ սուլթանէն, խեղդւած ձայնով։ Պոպէական լոռութիւնից յետոյ, նա անզերջ արտասւելով և կոկորդի մշջ խղնուած ձայնով աւելացրեց։ Անտանելի է ինձ համար կեանքը, գժոխքի փոխարկւեց այս յարկը, չորս բոլորս սև սուգ, մեռելային տիրութիւնն ու լոռութիւն ախրեց։ Ո՞չ, երանի՞ թէ առիւծիս հետ ինձ էլ պալատի խուլ պատերի տակ խեղդէին և այս տանջանքները կրելու չըդատապարտէին։

— Միիթարւեցէք, սուլթանէ, հանգատացէք,

ասի, տեղ ցոյց տալով, որ նա նստի և ես ոտքի վրայ անտարբելութիւնիկեղծելով՝ որպէսզի նրան քաջալելիմ, վրայ բերի։ Ախար ի՞նչ է պատահել, գուցէ նրան ինչոր գործ են յանձնել և նա պարտաւորւած է մի առ ժամանակ չերելու, մինչեւ պարտաւորութիւնները լլացնելը։

— Ի՞նչ գետենամ, գուցէ լայգպէս էլ է, ութ օր առաջ ստացած սոմսակսէլ այդ էր բովանդակում։ Եւ եթէ այդ յոյսը չը ինչը, ես ինչպէս պիտի դիմանայի։

— Ուրեմն էլ ինչի՞ էք յուսահատում, ի՞նչ էք սրտակտուր լինում համբերեցէք և լլեզ օրինակ տւէք ձեր տոկունութիւնով։

— Այո՛, եթէ կարողանամ, եթէ դիմանամ։ Հասանիս, առիւծիս կորցնելուց յետոյ, սիրտս մաղմրդւել է, չեմ կարողանում զիմագրել և ո՛չ մի ցաւի։ Ես ինչպէս համբերեմ, երբ շուրջս որբուկներս են շրջապատում և ականջներիս՝ հարսիս ողբը բաղնւում։

Մի քիչ լուսուց յետոյ հարցրի։

— Ախար ի՞նչ պատահեց, ուր գնաց Զիան։

— Մի զիշեր եկան և կանչեցին։ Թէեւ ես խորհուրդ չըտեի հեռանալու, բայց նա ինձ համոզեց և գնաց։ Մեղ՝ զրան ծառայողներիս եղկիւզ չի վայելիլ։ Երբ կանչւում ենք, պէտք է, որ գործի զլուխ վազենք, մինչև անզամ մաշն աչքերս առած։ Այդ մեր պարտականութիւնն է, ասաց Զիաս ու գնաց։

— Բայց ո՞ւր գնաց, չըհասկացաք։

— Պալատ գնաց, էլ ո՞ւր պիտի գնար։

— Նամակը ո՞րտեղից էր։

— Նցինպէս մի պալատական թիկնապահ ինձ յանձնեց։ Միայն թէ չըկարողացայ անձամբ տեսներ որ

մի հարց էլ է տայի և անստուգութեան մէջ չը մնայի։
— Ել ի՞նչ կարիք կայ հարց տալու, էլ ի՞նչ
ծանր պարագայ կայ, որ մտածում էք, տանջւում էք։
— Հասանս էլ դնաց, միշտ էլ տեղեկութիւններ
տւեց, բայց արժան չեղայ մի անգամ ևս ձայնը լսելու...
— Քաջալիբւեցէք, սուլթանէ, ամեն դէսկում
չե կարող փորձանք պատահել։

— Ի՞նչ գիտենամ, ինձ ի՞նչ է վիճակւած, ասաց
արտի խորքերից հառաչելով սուլթանէն և եղբօրը զա-
ւակին կոկուծ գրկելով, կրծքին սեղմեց ու համբուրեց։
Արդէն ժամանակ էր և ես պատրաստւած դուրս
եկայ, խոստանարով շուտով վերադառնալ, եթէ
որևէ տեղեկութիւն ունենամ։ Ֆէմիլէն նոյնպէս խոս-
տացաւ, որ ինձ կանչել կրտայ, եթէ կարեռ դէսկը
պատահի, կամ տեղեկութիւն կլստանայ Զիայից։

Վերադարձայ Ղուլաթա սարայ։ Ամբողջ երեք օր
Զիայի թագստեան պատճառների մասին ինքս ինձ
հարցեր էի տալիս, առանց հաւանելու բոլոր ենթա-
գրութիւններիս։ Վերջապէս հինգշաբթի երեկոյեան երբ.
իջանք նախաճաշելու, գոնապանը մօտենալով ինձ տը-
ւեց հետեւալ նամակը, որի ծրաբի երեսին մատիտով
դրած էր։ «**Զըկարողանալով երկար սպասել պարտա-**
ւորւեցայ ծրաբս գոնապանին յանձնել ու հեռանար:
Կիրակի անպատճառ կրտեսնւինք մեր տանը»։

Զիայի զիրը Ճանաչեցի և ուզեցի անմիջապէս
առանձնանալ, բայց կարգերի հակառակ չէի կարող
շարժւել, մանաւանդոր կըզրկւէի նախաճաշից, ուստի
անհամբեր սրտով արագ-արագ հացն ու խաղողը կերպ
և անհանգիստ սպասում էի, որ վերջացնեն ընկերներս

և բոլորս միասին հեռանանք սեղանատնից։ Վերջապէս
դուրս եկանք պարտէց ևս իսկոյն ցատկեցի գէպի մեծ
այգու խիտ ծառաստանները և առանձնացած մի ան-
կիւնում, սկսեցի կարդալ ընկերակցիս զրւածքը։
• «Սիրելիս.

«Վերջապէս ժամանակ գտայ քեզ նկարագրելու
վերջին օրերիս անցքերը, որոնք քեզ կը բացարեն, թէ
ինչի հրաւերդ գէպի մեծ կղզի չըկարողացայ ընդունել
և թէ ինչի այսքան ժամանակ բաղակայում եմ նոյն-
պէս մեր տանից։ **Զըկարութիւն զըկարութիւն է, մէռչ**։

«Այն երեկոյեան պալատականն հիւրին ճանա-
պարհերուց յետոյ, երբ պարտաւորւեցայ Օլլամուրի
պայց կատարել, վերադարձիս ճանապարհս կորեցին եր-
կու թիկնապահներ և հրաւերդեցին «Երւբզ-Քէօզք»։
Յայտնի բան է, մերժելու հնարաւորութիւն չունեի,
մանաւանդոր այնպիսի արամագրութեան տակ էի, որ
պատրաստ էի դժոխք անգամ նետւելու, նպատակիս,
սիրելիս համնելու համար։ Հազեւ թիկնապահները զի-
ջան մինչև մեր դուռը ինձ թոյլութիւն տալու և
ես կարողացայ երկու խօսքով դէսկը մասին քրոջս
տեղեկութիւն տալ։

«Ի՞գէպ, քեզ յայտնի լինի հոգեկից բարեկամս,
որ նա իր վիճակը իր կամքը առաջ տանելու համար,
ոչ մի վտանգից խօյս չի տալու և զիմել է ամենածայ-
րայել միջոցների։ Նա ասաց, հիւրեարը յնորածի նման
մի բան է, վախկոտ և ուշակորցյա երեք-չորս անգամ ի-
րան խոսացել է, որ կըմերժէ բոլոր խնդիրները և ան-
պատճառ նորան ինձ կըհասցնէ, բայց մայս սուլթանին
և ուրիշներին էլ հրամայել է, որ դրանց համար պատ-

բաստութիւն^ա տեսնեն «Գրլըջ-Ալային» հարսանիք անելու և նորան էլ իզգէթին տալու։ Բայց և այնպէս ֆաթիմէն հաստատապէս որոշել է, մինչեւ անդամ մեռնել, քանթէ մի ուրիշելիքինը դառնար։ Այս մասին ես ապահովւած եմ. թէկ մեր պալատականների մէջ գիտեմ; թէ ինչպիսի գերեր է խաղացւում և ինչ բռնութիւններ դորձադրւում ոսկու շնորհիւ։

«Հա, ինձ տարան եըլգըզ։ Մտանք այլ և այլ անցքերից և կամարակապ բակերից, հաստանք վերջապէս մի այնպիսի սրահ, ուր երբէք ես չեմ եղել ձըշմարիտն տասած, երբ ինձ ասացին, որ այդտեղ սպասեմ, սոսկացի. մոռքիս մէջ ի՞նչ կասկածներ ասես իրար ետեւից սահեցան ու անցան։ Ամբողջ կէս ժամ ես համարեա թէ այդտեղ բանտարկւած էի, ոչ ոք չըկար ինձ մօտ և այդտեղից գուրս գնալու ճանապարհներն ինձ անձանօթ էին։ Այս տագնուաս բաւական չէր, հեռւից ինչ որ մրմունջների և ողբերի ձայն էր դալիս, թէկ ոչնչէ տեսնում։ Աշաւոր պարտի առանձնութեան մէջ, այդ ողբալի ձայնի ազգեցութեան տակ կարող էք երեւակայել դրութիւն։ Ամեն մի լուսէ ժամի ազգեցութիւն էր թողնում ինձ վրայ, մինչեւ անդամ զղջացի, որ առանց հարց ու փորձի հետեւ էի։

«Վերջապէս վարագոյններից մէկը շարժւեց, մի ձեռք բարձրացրեց մետաքսի կերպասները և ներս մըտաւ բեղ ծանօթ արքայագունը։ Ես արդէն ոտքի վրայ էի, երբ նրան նկատեցի, իսկոյն խոնարհւեցի և հարդանքս լռելեցի յայտնելուց յետոյ, սպասում էի նրա հրամաններին։ Նա շուրջը մի սուր հայեացքով զննելուց յետոյ, բազմոցի կողմն ուղղւեց և տեղաւորելով

Ճռճացող թիկնաթոռի վրայ, ընկղմեց խոհերի մէջ։ Մի քանի վայրկեան արձանացած մնաց իր տեղը։ Նրա դէմքից կարելի էր նկատել թէ սրտի խորքերում ինչ աշաւոր մրրիկներ էին ծփում։ Նրա երեսի կնճիռները շատ վաղ ակօսւած՝ խոր խորշումները երեսն էին բերում և նա երեւակայութիւնների մէջ ընկղմւած, անթարթ նայում էր, անփստահ և երկիւղալի հայեացքով։

«Այդ մուայլ պատկերը իմ վրայ վհատութիւն բերեց, ես էլ նրա նման սուզւեցի տխուր մաքերի անյատակ անգունդը։ Անվերջ ես ինձ հարց էի տալիս թէ—Միթէ այս է արքունիքի կեանքը, միթէ սուլթանների զաւակները խսպառ գատապարտւած են այսպիսի հոգեկան տանջանքների։ Միթէ երանելի չէին սուլթան Սուլէյմանի, Մուլագի, Մէհմէդի զաւակները, որոնք իրանց հօր մահւան հետ պարտաւորւած էին սրատւել և զերեզման իջնել։ Այս ի՞նչ հոգեկան տանջանքների են մատնում կենդանի արարածներին։ Մի գահակալի քունը չըվրդովելու համար։ Եւ այս մաքերս վերջաւորութիւն չէին գտնել եթէ նա վերջապէս չընդհատէր։

— «Զիա, ասաց ծանրութէամբ, գիտե՞ս՝ թէ քեզ ինչի կանչել տւի։

— Պարասատ եմ, էֆէնդի՛, ձեր բոլոր հրամանները իրազործելու համար և կեանքս զոհաբերելու։

— Այո՛, եթէ կարկք լինի, այդ էլ չըպիտի խնայես, այնպէս չէ։

— Ձեր խոնարհ ծառան եմ և ստրուկը վստահեցիք, էֆէնդի՛, իմ կեանքս ձեր տրամադրութեան տակն է, երգւում եմ ձեր զլխով։

«—Գիշերս պիտի մեծ աչալըջութեամբ հսկես եմ սենհակում, գուռը բաց թողած և ամենափոքր աղմուկից ընկերներիդ հետ գուրս պիտի գտաք ինձ օգնութեան: Մի՛ վախենաք, թէ տասը րոպէ կարողանաւը ազմկելու դիմադրել, իսկոյն ձեզ օգնութեան կրհասնին պարտիզպան զօրքերը, չերքէզների վոհմակներն և արնաւուաները: Ուրեմն հասկանում ե՞ս միտքս, մի տասն րոպէ և ոչ էլ այդքան դիմադրելու քաջութիւն եմ պահանջում: Զորս հոգուց այդքան քաջութիւն պահանջելու իրաւունք ունի՞մ... Մի՛ վախենայ, ամեն բան նախամածւած է և երկիւղի ոչինչ չըկայ, միայն թէ ես հակառակ դէպքն եմ մտածում... Պալստառն ենք, ամեն բան կարելի է ենթադրել և պէտք է, ամեն բանի հակառակ կողմի մասին էլ խորհել... Ես ձեր քաջութեան հետ, անձնանւիրութեանն և հաւատարմութեան տիրել եմ և չորս չերքէզներիդ կեանքս յանձնում եմ, ձեզ եմ յահճնում...»

— «Ձեր խոնարհ սարուկն եմ, տասցի գլուխս թեքելով, պատրաստ եմ...»

— «Ուրեմն հասկացար, թէ ինչ պարտք եմ դընումքու վզին: Եղքորդ արիութիւնն, հաստատակամութիւնը ինձ համոզել են, որ գու նրանից ոչնչով ետչես մնայ: Եւ ինչի՞ պիտի մնաս, քանիոր գու գեռ առաքինութեան տարիներիդ շրջանից գուրս չես թեակիսեր: Իմ ննջարանում ձեզ համար պատրաստւած թաքստեան տեղեր կան: Եթէ յանկարծակի դէպք պատահի, այնաեղից աներևոյթթապէս ամեն բան կրտեսնէք: Այնուղի կարեսը զէնքեր էլ կան:»

— «Պատրաստ եմ ձեզ ծառայելու..., տասցի:

«Նշան արաւ և մտայ այն գոնից ներս, որտեղից դուրս էր եկել ինքը և այնտեղից ննջարան, ուր ինձ սպասում էին երեք ընկերակիցներս, որոնցից միայն մէկի հետ գրաւոր ծանօթութիւն ունէի, որի նամակները քեզ հետ կարդացել ենք: Ճուտով մտերմացանք և իրար սրտերս բացինք, խոստանարով միանգամայն, որ ոչինչ չըխնայենք արքայազունին պաշտպանութեան համար:»

«Բայց մեզ անցայտ էր, թէ ինչ էր կատարւելու, այնպէս որ մէնք բոլորովին անտեղեակ էինք մեր կատարելիք գործից: Իրար հետ միտք փոխանակելիս, ենթադրութիւններս էլ թէկ յայտնեցինք, բայց որոշ եղրակացութեան չըհասանք: Մանաւանդոր արքայազնը ասել էր ընկերակիցներից մէկին, թէ մի ենթադրէք, որ որևէ ոձրագործութիւն է տեղի ունենալու, կամ որևէ անձնաւորութեան վրայ ձեռք է բարձրացւելու:»

Ընդհակառակը, լոկ մի խորհուրդ է կատարւելու, ասել էր նա, իսկ ես անձեցս երկիւղ քաշելով, մինիստրութեան գաղանութեան հետ ծանօթ լինելով, ցանկանում եմ պաշտպանել: Այս խօսքերը մեզ բոլորովին շւարեցրել էին և մենք առանց որոշ եզրակացութեան հասնելու, վճռեցինք կուրաբար գործիք գառնալ և կատարել արքազունի հրամանները, նրա վրայ թողնելով ամբողջ գործի պատասխանատւութիւնը»

«Արդէն գիշեր էր: Ճատ չանցած լսեցինք դահլիճում ոտնաձայներ և իրար ետեից մարդիկ ներս էին մտնում, որոնց թէկ մենք բոլորովին չէինք տեսնում: Երբ արդէն բոլորը պատրաստւել էին, եկան մեր կից սենեակից հրաւիրեցին արքայազնին, որ դաշիճ մտնե-

լուց առաջ, մեզ մօտ եկաւ և ասաց, — Տղե՛րք, աչալուրջ
եղի՛ք, այս պատուհաններից փոփոխակի զննեցէք և
գգօշ կացէք: Այս ասելով պատերի մէջ դտնւած զըս-
պանակների վրայ մատերը դնելով փեղկերը բաց տրեց
և մենք երկու փոքրիկ պատուհանով սկսեցինք աներե-
ւոյթապէս զննել, թէ ինչ էր կատարւում դաշլիճում:

«Այնտեղ հաւաքւել էր մեր Վիւքալան, Միհ-
դատ փաշան և իր արբանեակները: Երբ արքայագունը
դուրս եկաւ, բոլորը սոքի ելան և խոնարհ յարգանք
տալով, սպասեցին, որ նստի և իրանց էլ իրաւունք տայ
նստելու: Մի քանի մօլլայի վլուխ թէւ երեւում էր ժո-
ղովականների մէջ, բայց իզրիսը չըկար: Վերջապէս նը-
շան արաւ, որ ժողովականները նստին և մի ընդար-
ձակ բոլորակ կազմեցին: Այդ ժամանակ Միդհատը զը-
րուխ տալով, խօսք խնդրեց, սկսեց իր հսկողական
ձեւով և շարժումներով բացատրել իր սահմանադրու-
թեան կարևորութիւնները և երկրին հասանելիք օգուտ-
ները: Փողովականները անշարժ լսում էին, ուշադրու-
թեամբ հետեւում էր և ինքն արքայագունը: Այդ ճառը
շատ երկար չըտևեց և վերջացաւ նրանով, որ Միդհա-
տը, ընկերակիցները, խլամի կղերը և ժողովուրդը յոյս
էին տածում, որ այդ բոլորի հետ կըհաշուի իրանց ա-
ռաջնորդը և երկրի զարգացման, բարգաւաճման համար
արքայագունը կերպւի, որ կէտ առ կէտ գործադրել
տայ սահմանադրութեան բալոր յօդւածները: Միան-
գամայն խօսեցան, որ ինքը սուլթան Մուրադն էլ ա-
ռանձին հրովարտակով հրամայել էր իրանց կազմել տալ
մի ծրագիր ապագայ սահմանադրութեան համար:

«Թէր և դէմ մի քանի նկատողութիւններից յե-

այց, Ըէյխ-իւլ-իսլամն տռաջ եկաւ և դուրսնը արքա-
յ սգունին մօտեցնելով կանգնեց նրա առաջ: Արքայա-
գունը թէւ գեղնեց, թէւ գողգողաց, բայց անձարա-
րացած սոքի ելաւ և երգւելով ասաց:

«Ինչպէս իմ սուրբ պարտքս է, այս նւիրա-
կան զուրանի ամեն կէտին հպատակւել, այնպէս էլ ձեր
առաջարկած սահմանադրութիւնից չըշեղւել: Երդւում
եմ միտք Ալլահի անունով և ձեռքս դնելով նրա նւի-
րական դրքի վրայ, աշխատել և սահմանադրութիւնը
հաստատել մեր երկրում: Այդ ժամանակ լուր ուղար-
կեցին և մայր սուլթանին կանչել տւին: Մինչև նրա
գալլ Վիւքալան և կղերը միջոց ունեցան մի քանի
խօսք խօսելու ապագայում իրանց բռնելիք ընթացքի
մասին և մի քանի թուղթ խմբագրեցին, որպէսզի հե-
տեւեալ օրը գործադրութեան յանձնւի: Քիչ յետոյ ե-
կաւ ինքը մայր սուլթանը իր ներքինիների հետ և նո-
րան յատուկ ամենաբարձր վանդակը մտնելովի բազմեց:

— Միդհատ փաշան խօսք խնդրեց, որպէսզի
բացատրէ նրանց իրանց ժողովի նպատակը: Թագու-
հին թէւ ամեն բանի հետ շատ լաւ ծանօթ էր, բայց
այնպիսի գիրք էր բռնել, որ կարծես ամեն բան նոր
էր բառմ: Երբ ճառը վերջացրեց, մայր սուլթանը շէյխ-
իւլ-իսլամին գիմեց, որ օրէնքների համաձայն իր Փէթ-
ւան տայ:

«Ըէյխ-իւլ-իսլամն էլ պատասխանեց, թէ պէտք
է ցնորւած գահակալին իջեցնել և յաջորդին գահ բար-
ձրացներ: Իսլամականութեան զեկը չէ կարելի թողնել
մի խելագարի ձեռը:

«Ես ինքս էլ նկատել եմ, որ որդուս՝ սուլթա-

Նիս մոտաւոր վիճակը քայլքայւած է, երկրին հարկաւոր է մի կատարեալ խելահաս կառավարիչ նշանակել, ութ, տասն օրւան համար և բժշկական քննութիւնների օգնութեանը դիմել: Եթէ այդ միջոցները չօգնեն, այն ժամանակ յաջորդին յանձնել երկրի զեկը:

«Թէե դարձեալ վիճաբանութիւն սկսւեց, բայց արքայազունի բանաձեխ վրայ վճիռ արձակեց զէյխ իւլիսամբ:

«Վարչութիւնը յանձնել տասն օրւան ժամանակամիջոցով՝ նրան՝ արքայազունին, քննութիւններ նշանակել, հմուտ բժիկների խորհրդակցութեան դիմել: Եթէ Հնար ըսդունւի եղբօրը բուժելու, այն ժամանակ գահից վար տոնել: Որոշեցին բոլորովին գաղտնի պահել այդ որոշումը և ամենից կնքւած արձանագրութեան մի պատճենը մայր ոռութանին, միւսը՝ արքայազունին և երրորդը՝ զէյխ-իւլ-իսլամին յանձնւեցաւ, որպէս զի տասն օրից յետոյ գործադրւի:

«Արդէն որոշեալ ժամանակին անցաւ և ամեն բան կարգի գնելով վաղ առաւօտ պիտի յայտարարւի աշխարհին: Մուրադ թ. արդէն ութն օրէ վանդակումն է, թագաւորում է Համիդ թ.ը: Զարունակութիւնը յաջորդ գրովս կիմացնեմ: Քրոջս տես հանգստացուր: Զիա:

ԺԲ

ՄԻ ԱՆԴՐ ՈՎԿԵԱՆԻ ՇՈԳԵՆԱԿԻ

Արդէն սուլթան Մուրադին խելագար հրատարակելով՝ գահից վար իջացրել և չամփթ. թ. հիւնքեարը բարձրացրել էր խալիֆների թալիսաը: Նրա նորանոր հանդէսները, ազմկալի տեսարանները, ժողովրդական իրարացումները կատարւել, վերջացրել էին: Թէե Կ. Պոլսի ժողովուրդը մի քիչ խաղաղել էր, բայց արքունիքում Պայծառափայլ գոնում, սպարապետի ապարանքում և Կ. Պոլսի զօրանոցներում անդհատ մեծ շարժումներ կային, ազմուկներն անպակաս էին և անդադար պատրաստութիւններ էին տեսնեում: Երկրի վիճակը միենոյն էր, ինչ որ էր Աբդիւլ-Ազիզի վերջին օրերում: Սերբիական պատերազմը շարունակում էր, մեծ պատերազմն անխուսափելի էր, փող ըսկար, խրտումները իրար էին յաջորդում, իսկ ապստամբական խմբերը լեկոծում էին պետութիւնը:

Սովորաները, երիտասարդ Թիւրքիայի արժանաւոր ախոյեանները՝ իրանց էշն էին քշում, Միդհատը առանձնացած իւլէմների հետ՝ գիշեր, ցերեկ աշխատում էին սահմանադրութեան յօդւածները թէ եւրոպական օրէնսդրութիւններին նմանեցներ և թէ շէ-

րիաթի հատւածներին յարմարեցներ իսկ Համիդ Բ.
ընկճւած Վիւքեարայի Ճնշումների տակ, իր ապագայ
ընթացքի ծրագրին էր կազմում:

Վերջապէս Մուհամմեդի աթոռակալը զիջել և
հրատարակել էր Օսմանեան սահմանադրութիւնը: Յա-
սածաղէմ երիտասարդութիւնը պլուխն էր տրաքեցնում
դրա յօդւածները ուսումնասիրելու համար և ամբողջ
Կ. Պոլսի հայ, թուրք, վաճառական, թէ խոհարար, ա-
մեն բան երեսի վրայ թողած, արաբերէն տառեւ ով ըն-
թերցանութեան վարժուում էին, որպէս զի պատզամա-
ւորական ժողովին անդամ ընտրւելիս, անդրագիտու-
թեան պատճառով անարժան ըբհամարւեն ազգային
ժողովի սրահում բազմոց ունենալուց:

Աչնան քաղցր և պայծառ մի օր էր: Ծովափում
զքօսնելիս նկատեցի, որ քսանը չորս թիակով փարւած
մի նաւակ մօտենում էր Տոլմա-բաղչէի նաւամուտցցին:
Հատ չանցած նաւակը մօտեցաւ և մի ձայն իմ անու-
նը հնչեցրեց: Տեսնեմ Զիան թաշկինակով ինձ նշան էր
անում, որ մօտենած և մտնեմ նաւակ: Եյդ եղանակին
զքօսնիլը կարող էր հրապուրել արձաններին անդամ:
իսկըն մօտեցայ, մտայ նաւակ:

— Գնանք, ասաց Զիան, քեզ մի անդրովկիանո-
սից եկած նաւ տանեմ, տե՛ս, մտածիր, թէ ինչ յառա-
ջադիմութիւններ է կատարուում արևմուտքում, իսկ
մենք...

— Գնանք, ասացի և արտգ, սահանքով սլացանք
դէպի շոգենաւը, որը կանգնել էր Հայդար-փաշա նա-
ւամատցցի դիմաց:

Հրաշալի եղանակ էր կապոյտ ծովը մեզմ ծրփ-

ծփում էր և արեգակի ճառագայթները շողողացնուս
էին նրա մակերևոյթը: Մենք ուրախ, կարծես երկնա-
մարում ասաղերի մէջ էինք սաւառնում: պալատական
նաւակ, անեղծ զարդեր, թաւշի բազմոցներ, առոյգ
թիավարներ: Ամեն մի վայրկեան նորանոր երկոյթներ,
մի կողմից ձկնորսը կարթը ձգած ծովեց որսն է հա-
նում և նաւի միջի կասկարայի վրայ խորովում: միւս
կողմը մի նւագածու խումբ նաւակում խմբւած, իր
քաղցր երգերով օգն է թնդացնում: Այն կողմը թրքու-
հիները մի նաւակի մէջ լնկղմած՝ թիավարների հետ
հետաքրքիր խօսակցութիւններով են զբաղւած և
իրանց եաշմագների մահիկաձև բացւածքից իրանց սև
սև աչքերով, տխուր հայեացքով և մելամազնու կնճիռ-
ներով ուշք են զրաւում: Այս կողմը մակցիի մէջ հել-
լէնուշիները մաստիկայի բաժակիները ձեռքերին խմում
են, չերողը ծամծմելով երգում և ցնծում:

Վերջապէս մենք հասանք մի վեթիարի նաւ:
Չեմյիշում թէ քանի աստիճանի սանդուխներից վեր
բարձրացանք և սկսեցինք զննել: Նաւի նման բան չէր,
այլ մի ահաւոր բերդ, կամ զօրանոց: Չորս թէ չինդ
կայմ ունէր, որոնց ծայրը երկինք էր համառում: Նա-
ւաստիները և նաւի բոյոր ծառայողները քաղաք էին
գնացել գատարկ նաւը ինձ յիշեցրեց այն վայրկեանը
երբ մտել էի ահեղ պարիսպների միջեց Անիի աւե-
րակները:

Պահապանները մեզ առաջնորդեցին նաւապետի
կայիւտը, որտեղ Զիան ինչ ինչ յայտնելիք ունէր: Ճոք
էր, նաւապետը մեզ պաղպաղակով և գարեջրով հիւ-
րասիրեց: Վերջը Զիայի խնդիրքի համաձայն մեզ տա-
գիրք գլուխ:

րան ման ածեցին շոգենաւ ի կայիւտները, սրաշները և շտեմարանները, որտեղ դարսւած էին յատուկ արկդնեւում երկու հարիւր հազար Մարտինի հրացան, միլիիոնաւոր փասփուշաներով, որոնք բերել էին Ամերիկայից: Արդէն երրորդ օրն էր, որ նաւը նաւահանրիկայցից: Արդէն երրորդ օրն էր, որ նաւը նաւահանրիկայցից: (օսմաննեան դասում սպասում էր, որպէս զե Մալեկից) զէնքերի գինը յանձնւի բանկ 0թթումանին, որ ապա իրանք էլ այդ զէնքերը յանձնեն սպարապետի դրան: Մինչ որ նախապէս փողը ըլ վճարէին, նաւապետը չէր զիջանում մի հրացան անդամ դուրս տալու:

Նազարեանը ցիլինդրը զիսին դրած, ֆէմն աղբանոց շպիտած, Միացեալ-Նաշանդուերի քաղաքացիութեան պասպորտը զրպանում, գեսպանատուն յանձնւած պայմանագիրը ձեռքին, անդադար գնում էր Մալեկից (ֆրանսիական մինիստրի դուռը) Սերասքերի դուռը և պահանջում որ նախ հրացանների արժէքը յանձնւի բանկ 0թթումանին և ապա ստանան զէնքերը: Եւ ամերիկացած արևելքցին ոչ մի զիջումչէր անում, ոտները գետնին էր խփում և թշնամուն ոտքերի տակ առած ամարդի նման, յնծում էր յաղթանակով:

—Այսոեղ մեզ յոզ չըկայ, ասաց Զիան հառաչերվ, թցլ տուր գոնէ քեզ պատմեմ և սրտիս բեռը թեթեանայ: Մեր պետութեան բարին ցանկացող, սահմանագրութիւն պահանջող և Արդիւլ-Ազեզըն կարտող Վիւքեալան, տես ո՞ւր է հասել իր աւազակութիւնով: Ապապրւած մի միլիոն հրացանի համար չորս ու կէս միլիոն ոսկի փող ենք վճարելու, պետական գանձարանը այս ծգնաժամում այդպիսի աշաւոր դումար է վը-

ձարելու, այն ինչ պալատում հաստատ տեղեկութիւն ունին, որ այդ գումարի մի քառորդ մասը միայն գործարանատերերի գրպանն է մաներու, իսկ երեք միլիոնը ուզեցել է կուլ տալ մեր Վիւքեալան... Յիշում ես այդ պայմանագրի համար ստացածներս զրութիւննիրը... Հիւսէին Աւնին իր ընկերներով պատրաստւել էր կուլ տալ այդ երեք միլիոն լիրան, այդ պատճառով պայմանագրիր ամենախիստ և ամենածանր յօդւածներով ստորագրել և յանձնել են Միացեալ-Նաշանգների գեսպանատանը, որտեղից Նազարեանը վեր առնելով, ոչ մի խօսք չի ուզում լսել, ոչ ոքի չէ ձանաչումի ամեն մի ատեան մտնելով՝ համարձակ կրկնում է—փողերը վըծարեցէք, ապա ապրանքն ստացէք, համաձայն պայմանագրի: Եւ քանի օր որ այսոեղ պահենք նաւը, փողերը չըվճարելու պատճառով, օրական հինգ հազար լիրա էլ տու գոնք ենք վճարելու Նազարեանին: Աշաթէ ինչի՞ համար էր Վիւքեալան նաշմանադրութիւն պահանջում: Մեր Վիւքեալան սահմանագրութիւն պահանջում էր և պահանջում է, ո՛չ թէ ժողովրդի իրաւունքները պաշտպանելու համար, ո՛չ թէ հասարակութեան շահերը պահպանելու համար, այլ պարտի հսկողութիւնից ազատելու համար, հիւնքեարի անակնկալ հրամաններից գերծ մնալու համար, պատասխանատութիւնից ազատելու համար և տռանց արգելքի պետական գանձարանը կողոպտելու համար: Մահմանագրութիւնը ոչ թէ իրանց, այլ սուլթանի գործողութիւնների համար են պահանջում, որպէսզի հիւնքեարը չըմիջամտի, իրանց արարքները չըմիջամտի, անձնիշխան կողոպտեն գանձարանը ցանկութեան

թիւններին քաւականութիւն տան: Ո՞գ է իմանում,
թուզ ներքին դաշն են ունեցել թիստակ էֆենդիի հետ,
ո՞գ կարող է գուշակել թէ թուզ կապ ունի նազարեա-
նը այսօր անգամ Միդհատի հետ, միայն այդ կու ռա-
յան այսօր չի զեջանում և կանչում է.

— Ես Միացեալ-Նահանգների քաղաքացի եմ
զբարերը ֆաբրիկատորինն է, պայմաններդ յարգեցէք,
փողերը յանձնեցէք և ապա ասարէք Հրացանները:

— 2ըստանալ... անհնարին է, ահազին տուգանք
պէսք է վճարել այդ դէպքում: Բացի այս թշնամին
դրանն է, պատերազմը բոլբորւտծ, հին զբարերն ան-
պէտք, նորն ապսպիկու ժամանակ ըսկայ... Սրանք
ընդունելու համար կարեռը գումարն էլ չըկայ և այս-
պիսի ճգնաժամում... այս նեղ միջոցում, սահմանա-
դրութիւն, ազատութիւն գոռացողները, միլիոններ են
գողանում առանց այն էլ պետութեան, հասարա-
կութեան դատարկւած գանձարանից: Փողովրդի համար
մոածող, հասարակութեան համար սահմանադրութիւն
պահանջող... Խալիֆին կտրտել տւող վիքեալայի
գողանիքը այստեղ է, նրանց տենչանքն այն է, որ պա-
լառը չըկաշկանդէ նրանց ոտն ու ձեռքը, որպէսզի ա-
զատ կողոպտեն հասարակութեան գանձարանը: Զորս
միլիոն ու կես լիրայի ապսպիւած զբարերից, երեք մի-
լիոն լիրան իրանք են ուզում ուտել Բայց Ալլահի գա-
տաստանը աւելի լաւ էր. Հասանի սուրբ՝ եղբօրս ձեռ-
քերը փշրեց Աւնիի, Քէշիդի և ընկերների ատամները
և այդ գողծունը այսօր մի ռայա է ուտում, մի ռայայի
զաւակներ են վայելելու...

— Վնաս չունի: ասացի, ահաւոր միլիոններ են

կերել միւսի յման վիւքեալաները, պետութեան չորս
հարիւր միլիոն լիրայի պարողի մեծ մասը իսլամ վէ-
ղիրի և մեծամեծների կոկորդն է անցել, թող մի քանի
միլի հո էլ մի հայուսա ուտէ:

— Բայց այժմ գու երեակայիր, եթէ միայն մի
միլիոն հրացանի տռեարից երեք միլիոն լիրա են կո-
ղապտեր, հապա այն աշաւոր քանակութեամբ ապսպիր-
ուած թնդանօթների, զնդակների, փամփուշտների, զո-
րահաւորների, թորապիների և ուրիշ մթերքների գնից
քանի քանի միլիոն են յափշտակել և կուլ տւել: Յի-
շում ես մեր ստացած նամակների բովանդակութիւն-
ները, կողոպտեցին երկիրը և նպատակներին համելու
համար կոշտուեցին ազգեցիներին: Այս թէ թուզ էին
սահմանադրութիւն ուզում... Նրանց ձգումը Հին-
քեարին և նրա պալատականներին կաշկանդերն էր, ոչ
թէ երկիրը կործանումից փրկել...

— Այս, բայց չէ որ ազգային պատղամուսնե-
րի ժողովը տէր կանգնելով պետութեան ամբողջ գոյքին
և հկածուաթին, կըսանձէ մինիստրին, ինչպէս Վիքեա-
լան աշխատում է կաշկանդել պալատականներին, ներ-
քինիներին...

— Ես այդ ժողովի վրայ լու համարում չունիմ
մանոււանդ որ պատղամուսնական ժողովի հարիւր քր-
ոն անդամներից ո՞ր մէկը կարող է ենթադրել, թէ
Աւելին ոչ թէ չորս ու կիսով, այլ մէկ ու կես լիրայով է
գնել ամեն մի Հրացանը: Մանաւանդ տարեկան երեք
չորս տմիս հաւաքւելով, թնչպէս պիտի կարողանան ամ-
բողջ տարւայ եքը ու մուտքը այնպէս քննել, որ կարո-
ղանան այսպիսի գողութիւնների, աւազակութիւնների

առաջն առնելը կըքացւի ժողովն էր, կըտեսնենք:
Արդէն ուշ էր և մենք կամաց-կամաց իջանք
նաւի սանդուխներից և վերադարձանք Տողմաբազէ:

Վ Ե Ր Զ Ա Բ Ա Ց

Մէկ երկու ամիս յետոյ, կրկին քայլելոս ուղղեցի
Չէրքէզ-Հասանի տունը: Աշուն էր, պարտէզի ծառերի
տերեները գեղնել էին և սկսել էին թափւեր: Խաղողը
հասել էր, սաթի նման քայլում էր և կօմէր բէզը: Չէ-
քէզ-Հասանի կնոջ օգնութեամբ տոպրակների մէջ էր
անցկացնում ողկոյզներն, որ թարմ մնան և չփչանան
ձմեռւան ամիսներում, որոնք մօտենում էին: Ծառա-
ների շարժումները շատ աննշան էին, իսկ Հասան-բէզի
աղջիկները և երեխաները գնացել էին մօտակայ ու-
սումնաբանները:

Կօմէր բէզը ինձ աեսնելով, բարեկց և մօտեցաւ,
իսկ Հասանի անընկճելի այրին փաթաթւեց իր սաւա-
նը և սացաւ դէպի կանանց: Կօմէր բէզը մռայլ էր
երեռւմ, այնպէս որ բառերը շատ ծանր էր արտասա-
սանում: Նախ յայտնի բան է Զիայի մասին հարցրի, իսկ
նա հառաջելով պատասխանեց:

Ահա մի ամիս կայ, որ ես էլ նրան չեմ տե-
սել Փաթիմէ սուլթանէի հետ ամուսնալուց յետոյ,
ել մեր տունը չէ եկել Քաշէլ են Գասըլ—փաշայի

Թէրսխանէի ապարանքը և կարծեմ գուլոս չեն գոլիս:
—Ուրեմն բախտին հասաւ: Ծնորհաւոր լինի,
բարով վայելեն, իրար անսպառ սիրեն մինչեւ
գերեզմանի շէմքը:

—Թող Ալլահի կամքը օրհնեալ լինի, ասաց հա-
ռաչելով ծերու կը:

—Ֆէմիլէ սուլթանէն մրտել է, հարցրի աչքե-
րըս յառելով ծերուկի գէմքին:

—Ուր որ Ալլահը կամեցաւ, նորու ճակատին
գրւած է, որ սուլթանէ տպրի և արքոցական փառ-
քերի մէջ շողջողայ: Սուլթան Նամիդը մի ամիս առաջ
նորան կանչել տեսց և առաջի փառքին հասցրեց, ա-
սաց հառաջելով տանց կարողանալու աչքի արտա-
սուքները զոպել ծերուկ սիրահարը:

—Ուրեմն նա իր նախկին բախտին կրկին ար-
ժանացաւ:

—Նյոնտեղ և աւելի բարձր փառքերի մէջ...
Ես միայն տենչացի, ձգտւեցի, բայց ի՞նչ օդու տ, քանի
որ ես խողիֆ չէի ծնւել... Ալլահը այդպէս էր կա-
մեցել:

—Ալլահի կամքն է համար առաջ առաջ ծե-
րուկին:

—Անպատճառ, նա նախասահմանութիւնից վե-
ճակւել էր խողիֆների արքունիքին... Ապա թէ ոչ
քառան տարի յետոյ, ձեռքս անցաւ, խնդացի, որ բաե-
տիս արժանացայ և աչա... մի առաւօտ եկան և
գարձեալ տարան: Եհ, ի՞նչ կարող եմ աներ զիճակս է,
ճակատագիս է, պիտի տանեմ..., Ես էլ յուսահատւած
նիքեանց գրի և Հասանի այրուն առայ... Ֆէմիլէն այն-

քան ստիպեց, անձարացած զիջայ և յոյս ունիմ, որ
վերջին օրերս վատ չեն մթնելու:

Ծերուկի հաւատը զարմացրեց ինձ: Եթէ այդ
էլ չունենար, երեխ կը խելագարւէր և զլուխը մի փոր-
ձանքի կենթարկէր: Նա խոնարհւել էր նախասահմա-
նութեան ծրագրած վճռոների առաջ համոզւած:

Տարի ու կէս յետոյ, մայիսին, պատերազմական
խաղաղութեան դաշը կապւելուց վերջը, Հօրս հեա ըգ-
բօսնելով գնացինք Բէյիւք-գէրէ ամառանոցը: Մի քանի
սովորական այցելութիւններից և Ճաշից յետոյ, անցանք
մեծ պողոտայով հայրս իր հին ծանօթին նկատելով,
ասաց գնանք մի թիստակ էֆենդիին էլ տեսնենք ու
ապա վերադառնանք Գաղը զիւղը: Հօրս կամքը կատա-
րեցինք, երբ մօտեցանք թիստակ էֆենդիին. հայրս ա-
ռողջութեան մասին հարցնելուց և հարկ եղած պա-
տասխանը ստանալուց յետոյ ասաց.

— Թիստակ էֆենդի, մի ժամանակ քեզ առա-
ջարկեցի, թէ մի երկու հազար լիրանոց մագազին գը-
նիր, մերժեցիր, առարկելով թէ վաճառականին չի յար-
մարիր դրամագլուխը պակասացնել և այրի կնոջ նման
կալածատէրի եկամուռով ապրիլ: Իսկ այժմ, այս ի՞նչ
ապարանք է, երկու հարիւր հազար լիրայով չի շինւիր:

— Ճատ Ճիշտ ես նկատում, ասաց թիստակ է-
ֆենդին զլուխը շարժելով. շատ արդար ես խօսում,
բայց ի՞նչ անեմ, եղբայրս եպիսկոպոսացաւ և այժմ
պատիրաբռութեան քւետուփը դրել է հասարակու-
թեան առաջ: Ես պարտաւորւած էի եկեղեցու իշխա-
նին վայել մի այսպիսի ապարանք շինել և նրան
նւիրել...

— Ուրեմն եղբօրդ երկու հարիւր հազար լիրա-
նոց ապարանք ես ընծայելու:

— Ինձի հարցրու, ինձի հարցրու, երեք հար-
իւր հազարից աւելի եմ ծախսել և գեռ կիսատ է...
նոյն աշունքը նազարեանը պատրիարք ընտրւեց:

Բ Ա Ց Ի Ա Ժ Է

ԲՈՒԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
ԱՏՐՊԵՏԻ

ԵՐԿԵՐԻ ԺՈՂՈՎՇԵՄՈՒԻ

ԱՌԱՋԻՆ ՎԵՅ ՀԱՏՈՐԻ ՀԱՄԱՐ

ՊԱՏԿԵՐՆԵՐ Տասը պատկեր Թուրքանա-
յելի կեռարից
գիհն է 1 ր. կամ 5 դր.

ՎԻԼՖ. ԳԱԼՏՆԻՔ վեկ թուրքիա-
յի աշխածներից
գիհն 1 ր. կամ 5 դր.

ԱԼՄԱՅՈ Վեկ Բարձր Հայոց կեռարից Առա-
ջիւ նատ. գիհն է 1 ր. կամ 5 դր.
Երկրորդ նատորդ

ԶԱԻԱՅԻՐ Վեկ վերջին ոռու թէք. պատե-
րազմի, 1877 — 78 արկածներից
գիհն է 1 ր. կամ 5 դր.

ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆՆԵՐԻ

Բառարածոյ թուրքանայելի կեռարից
գիհն է 1 ր. կամ 5 դր.

Գրքերը լոյս կը ՏԵՍԻՆ անպատճառ 19/4
թականի ընթացքում:

Բաժանորդագինն է մեց Հատորը միասին
կը բուրմ կամ 2 թուման պոստի ծախսով:

Բաժանորդագրութիւնը շարունակում է մինչեւ
Օգոստոս սույն 1904 թ.

ԴԻԱԿ ՏԱՒՐԻ ՊԵՐ, ATRPET.

Թ Ո Փ Փ Ո Ւ Զ

Թ Ա Փ Փ Ո Ւ Զ

ՊԱՏԿԵՐ

Որուա-Խուզբական 1877 պատերազմից

ՎԱՆԱՆԻԻ ԴԱՇՈՒՄ

--Ա--

Գարուն էր, սև ու մութ գարուն վանանդեցու-
համար, 1877 թւականի ապրիլի միջերքում։ Զիւնի
քօղը, սառոյցների հեաքը հազիւ վերացել էր Վանան-
դի գաշտից։ Խոնաւ, ցեխոս սևահողը պայծառ արևի
ջերմ ճառագայթների տակ փայլում էր սև—սաթի նը-
ման։ Զնծաղիկը գլուխ բարձրացրած տեղ տեղ տարա-
ծել էր իր սպիտակ—մանիշակի թերթերը գալար տե-
րեների միջով։ Կարծես զննող հայեացըին՝ ուզում էր
ասել—«Որքան էլ խստանաս կարձատես սառնամանիք,
բռնք ու բորսն, ինձ չես կարող ընկՃեր, չես կարող սա-
ռեցներ, քանիոր իմ սոխուկ արմատս սևահողի ծոցում

ապահովւած սառցյաների դէմ, այն ինչ քո բորբուժները քեզ շուտ հայեց ու մաշեց, զու ջրացար, թափւեցար և քո աձիւնդ ցողեց իմ արմատը, պարարտացրեց իմ կերակուրը, որ ես գիրանամ ու քաջանամ և քեզ հետ կուիմ մրցիմ։ Տեղ տեղ արտամիջերքում ձիւնի տակ մնացած, չորացած փթառած խոտերի տակից, արմատից դալարած կանաչի մազածայր ցողունները աչք էին գրաւում, ժպիտ էի բարձրացնում, սիրո էին ուրախացնում, յուսադրում և երիզապատում գութանած ու արօրւած ու արտերի շրջանակները, նորահարսի հագնւած կապայի շուրջը բոլորւած քէօրի ու ոսկեծերսի նման։ Զիւնի մէջ թաղւած, սառած ու փթառած փշերի կոտրտւած—թափւած ցողունները նրմանում էին պատերազմի դաշտում ընկած կենդանիների կմախքներին, որոնց գէշը գազանները, թռչունները կրծոտելով մաքրելուց, կեղւելուց յետոյ, ջարդւած ոսկորները տարիներով դիմադրում են օդին ու խոնաւութեան, մինչեւ իսպառ փթեն ու փոշիանալը։ Ամբողջ դաշտը միապազաղ սևահողից էր կազմւած, աննշան խորտ ու բուրդերը չեն խանգարում, անտառ ու այդեստաններ ել չուներ, որ հորիզոնի հեռաւոր ծայրերը բռնող լեռների տեսարաններն արդելէն։

Դաշտի մէջ հատ հատ ռաչպարներ էին երկում, որոնք իրենց արօրներն էին վարում և կամ ցանում։ Արտերի գյոնի նման ու տիսուր էին մշակների դէմ քերը, նրանք ցանում էին քաղելու յցյսից զրկւած։ Քամին էլ տիսուր էր սուլում և նրա ցրտալի բաղնիւնները էլ սրսփացնում էր հողի հետ կռւող ռաչպարին։ Հարթով պահւած, լղարած կիսակուշտ եղերն էլ

դանդաղ էին քաշում արօրը, դիակակիր կառքերի գընացքի նման, որոնք կարծես զգայով իրենց տէրերի տընուր մաքերը, գուշակում էին, որ նրանց բաժին դարմանը չէր հասնելու այդ ցանքերի բերքից։ Բայց և այնպէս ապագայ ձմռան երկիւղը, սովի տանջանքը, անասունների բառանջանքը, մանր ու խոշորի մորմոքների և հառաչանքների ներգործութիւնը մղում էր շինանականին իւր պարտքը կատարելու, թողնելով բազդին ապագային կատարւելիքների պատասխանատւութիւնը։

Զէրմալի գիւղի հիւսիսային կողմը, Կարս-Վազգմանի ճանապարհին մօտ, մի մեծ արտում թագոսը հողը վարեց, վերջացրեց, ցորենով եքցրած կարմիր գոգնողը վեզը կապեց, բուռը եքցրեց, երկինք նայեց, սփուեց ակոսների մէջ ու ասաց։

— Տէ՛ր Պստւած, քո առատ ողորմութիւնով իմ արտից բերք ու բաժին տուր երկնքի Ճնճղուկներին սարի զաղաններին, գոմիս անասուններին, անցորդին, Ճամբորդին, աղքատին, անականին, որբին ու անճարին, եօթն օտարին, գուռ գրկեցին, չարակամիս, բարեկամիս, թշնամուս, սրտակցիս, գուռս շիտկողին, գզրին, քէհամին, երեցին ու աբեղային, քո ստեղծած ամէն մէկ արարածին և սրանց սալպազա գրանս հոտաղին, բանւորիս, մանրիս ու խոշորիս։ Տէ՛ր, քո անսպառ ողորմութիւնից, մի՛ խնայել, ինձ էլ բաժին տուր, անբաւ ընորհդ մի՛ պակասացնել ստեղծածներիդ վրայից։

Ամէն մի բառ արտասանելիս, թագոսը լիք—լիք բռով շաղ էր տալիս սերմը արտի ակոսները լցնում, քայլ առ քայլ տեղը տուած փոխելով։ Զարատանջ մըշակը ամէն մի խօսքի հետ աչքերն ու գունչը երկինք

Էր բարձրութեամբ արծաթազօծ ամպերի ետևից շոշ-
շողացող լցում վասուա, դուքի ճառագայթների ետևից
անվերջ յուստաւին էր որոնում: Եւ հաստատ քայլերով
առաջ էր գնում, ցանում էր և երկնքից իւր աշխա-
տութեան վարձարտութիւնը պահանջում:

Թագոսը կարծահասակ, պնդակազմ, թխադէմ,
խոժոռ աճքերով, թաւ ունքերով ու պետերով մի շինա-
կան էր: Նրա դէմքը ցոյց էր տալիս, նրա վարած գա-
ժան կեանքը, նկատելի էր, որ նա բաղդի խորդ զա-
ւակներից էր: Թագոսը եօթը տարեկան հասակում
որբ էր մնացել նրա հօրը ჩէհրութովի կռւին թուրքերը՝
որպէս ոռւսական թղթատար-լրտեսի, Կարսի բերդից
դորել էին, իսկ տան գյոքը յափշտակել, ցրւել էին կա-
ռավարչական պաշտօնակալները: Բաւական չէր այս ա-
զէաները, հօրից երեք հարիւր գուրուշ պալուք էր մը-
նացել որի համար Թագոսի ժառանգական այդ միակ
արան էլ գրաւ էր դրւած եալջողլոնց մօտ, որոնք
սպառնում էին տիրել հողը կամ ուրիշի ծախել: Խեղճ
որբը եօթը տարի հոտաղութիւն էր արել, Պապօյի այ-
րին էլ գոնից գուռ բանւորութիւն էր կատարել, որ
կալողացել էին պապական հողը աղատել մի գյու ար-
ջառ առնել և իրենց տնտեսական վեճակը կարգի ցցել
ի՞նչ դառնութիւններ չէին կրել այրին ու որբը ի՞նչ
զրկանքներ չէին տարել մինչեւ կարողացել էին մէկ եր-
կու զյու եզ մի քանի գուռն ոչխար, կով ու մատակ
ձեռք բերելը: Զքաւորութեան մրուրը այնպէս էր խմել,
կուլ տւել Թագոսը, որ այդ մասին նա ոչ մի մրցակից
չունէր ամբողջ գիւղուր և ոչ ոք չէր զգացել նրա նը-
ման զրկանքի գառնութիւնը: Այս պատճառով նա

այնպէս էր զինւած նելքին թէ արտաքին կեղեքինե-
րի դէմ, որ զիւզում, թէ քաղաքում—գաւառում ոչ ոք
չէր յանդգնել Թագոսի փշին անդամ ձեռք տալ, համոզ-
ւած լինելով, որ նա իւր հակառակորդներին տասնա-
պատիկը տուժել կը տար:

Թագոսը այնքան վաղ էր եկել արտ ու գործի
կպել, որ կէսօրին նա ցանքը վերջացնելու մօտ էր, այն
ինչ դրացին՝ Մագօն այնպէս ուշ էր եկել այնքան դան-
գաղ էր շարժել որ դեռ ցանքը չէր էլ սկսել: Երբ
ձաշ կերան, պրծան, անասուններն հանգստացան և
ուզեցին կրկին գործի կպչել Մագօն ձայն տւեց.

— Թագոս աղբէր, գործդ որ պրծնես, եկ, ինձ
օգնիր, շուտ վերջացնեմ, միասին տուն դառնանք:

Թագոսը ընդհանրապէս ծոյլ դրացիներին չէր
սիրում, մանաւանդ Մագօյին, որը հայրական ահագին
կարողութիւնը վատնել էր թուրութեամբ, ուստի
ասաց.

— Տանը գործ ունիմ Մագօ՛, չեմ կարող գալ
քեզ մօտ: Ճտապում եմ:

Այդպէս էլ արաւ Թագոսը, նա եղները քշեց
արտամէջ արածելու և հանգստանալու, ինքն էլ ցանքը
շարունակեց, վերջացրեց, ջւալներն ու գործիքները
կապեց եղների լծին, առաւ մահակը ձեռքը, ճանա-
պարհ ընկաւ դէպի տուն: բայց հարիւր քայլ չէր հե-
ռացել արտեց, որ լսեց զրացի Մագօյի աղաղակները
և իր լուծը եօթը տարեկան տղի յոյսին թողած, մա-
հակը ձեռքը, գաշցնը գօտուց կախած, ետ գարձաւ:

F

Թագոսը առանց ետ դառնալու, առանց նայելու իւր եզներին, որոնք յանձնել էր եօթը տարեկան տըղային՝ Պապօյին, անմիջապէս տուն հասցնելու պատերով, վազում էր բոլոր ոյժով դէպի Մագօյի արտը, դէպի իւր զրացին, որի արօրի լուծից քուրդերը քանդում էին եզները, որ տանեն: Այս որ տեսաւ, Թագոսի աչքերը բոլորում իցւեցին, զլուխը կրախ առաւ և դէմքը շիկացաւ քուռայից հանած երկաթի նման: Նա վազում էր ամբողջ թափով և աշխատում էր աւազակներին հասնել դեռ զրացու արտից դուրս չեկած: Քուրդերը նյյնպէս նկատել էին Թագոսին. ծանօթ լինելով նրա մտրակի հարւածներին, շտապում էին նրան չը գիմաւորելու համար: Աւազակների և Թագոսի մէջ հազար քայլից աւել տարածութիւն կար, ուստի քուրդի լամուկները մահակի անխնայ հարւածներով քշում էին յափշտակւած եզները դէպի Խէյրաթի խորդ ու բոլդ խրամատները:

— Թագոս ջան, տարան, Թագոս, հասի՛ր հաւարիս, աղբէ՛ր, երեխաներիս վեզը կտրեցին այս անօրէնները, մեզ սովով են խեղգելու, գոռում էր Մագօն առանց տեղից շարժւելու: Նրա ձեռքն ու ոտքը թուլացել էին, իսկ ընկերակից մանուկի լեզուն բռնւած՝ կսկծից լալիս էր: Այս տեսարանը աւելի զրացում էր Թագո-

սին, նա անմոռւնջ վազում էր նպատակին հասնելու, քրդերի ճանապարհը կտրելու, թէև աւազակները երկու հոգի էին հրացանով զինւած, իսկ ինքն անզէն: Քուրդերն շտապում էին, ձևացնելով իբրև թէ չէին տեսնում Թագոսին և չէին լսում Մագօյի հաւարի կանչը: Բայց և այնպէս դեռ հինգ հարիւր քայլից աւելի տարածութիւն կար յափշտակողների և Թագոսի մէջ, այնինչ քրդերը դուրս եկան Մագօյի արտից և դիմեցին դէպի ապառաժուածը:

Թագոսը անընդհատ շարունակում էր իւր ընթացքը, բոլորովին ինքնամոռացութեան մէջ, քրդերը առաջ էին մզում լծկաններին չարաչար հարւածներով, այնպէս որ անվախ զրացու ընթացքից խրախուսւած Մագօն ու որդին էլ սկսեցին նրան հետեւել գորգուալով վազել աւազակների ետեից, անվերջ հաւար, օգնութիւն ազազակելով: Բայց զիւղը արդէն աչքից անհետացել էր, հանգում մարդ չէր մնացեր, տեսարանը ականատես չունէր, իսկ ապառաժները միայն արձագանք էին տալիս, առանց կարեկցելու: Թագոսը յոդնել չը զիտէր, քուրդերն արդէն ուժասպառ էին եղեր, հարւածներն էլ չէին ներգործում դադրած լծկաններին, նրանք չէին կարողանում այլևս քայլ փոխել: Յուսահատ քուրդերը կանգնեցին, ետ դարձան և զոռացին:

— Մագօ՛, ի՞նչ ես ուզում, ի՞նչի ես հաւար կարչում.

— Ուր էք տանում լծկանս, անաստւածներ, պապասիանեց Մագօն հեիշէ:

— Դու քու կամքով տւիր, չես ուզում, արի՛, ետ դարձրու: Մէնք եկել էինք քեզ լաւութիւն անե-

լու, մեղի Հասօ բէզը՝ հօրդ քերւան էր զրկել, որ քո Ճկանը աղատենք: Երբ լաւութիւն չես հասկանում, արի՛, գարձուր եղներդ: Առաւօտ վաղ կը գան բերդից զարթիչները, կը տանեն, որ մորթեն, կշացնեն քաղցած նիղամին:

Ասին ու թողին լծկանը, առաջ անցան քուրդի, լամուկները, շարունակիլով իրենց ճանապարհը: Հասաւ Թագոսը, ձեռը մեխեց, բռնեց եղների եղջեւրից, սկսեց շփել նրանց ճակատն ու աչքերը, երբեմն երբեմն հայեացըն ուղղելով խոյս տւող քրդերի կողմը: Մադոն էլ մօտեցաւ եղներին, շնչասպառ համբուրում էր իւր աշխատութեան ընկերակիցներին, շշյում էր, նրանց վիզը, ձգում էր ականջները, զննում էր գրացուն, որը քրտնաթոր, հեքչեքի հասած չէր կարողանում խօսիլ: Երբ քրդերը բաւական հեռացան ետ գարձան, հետապնդողներին զննեցին, նրանցից մէկը գոռաց:

—Ես քու մեռեն եմ լացնելու, Թոփփուզ, դու իմ վայս տուր...: Դու իմ ձեռքից եղներ խլե՞ս, մատնիչի տղա, ես քո կաշին թէ քերթել չտամ, կնորդի անւանի՛ր ինձ: Քեռիդ դալիս է, քեռիդ Արփա-չայն անցել է, հան, զրանից ես թէ տուր: Նրա երեսն առանց տեսնելու քեզ դժոխք զրկեմ, ինչպէսոր հայրդ էլ չը տհսած, կախաղան բարձրացաւ:

Թագոսի արհամարական հայեացքը, անտարբեր շարժումները աւելի զրդեցին և նրանք նախատինքներ, հայոյանքներ տեղացնելով անհետացան: Երկու զրացիները քիչ հանգստանալուց յետոյ, կամաց կամաց դարձան դէպի գիւղ, լծկանների դանդաղ քայլերով: Մինչ այդ Պապօն եղները տուն էր հասցըրել, գիւղացի-

ներին ոտք էր հանել, քշել Մադոյի հաւարին: Հեռուից սրանց աղմուկն ու աղաղակը լսելով՝ Մադօն քաջալերւեց, առաջ էր գնում աւելի վստահ, պատմելով անցքի մանրամասնութիւնները Թագոսին:

—Անհաւատները բարեկամաբար մօտեցան, առում էր Մադօն, Հասօ-բէզից շատ բարեյայնեցին: Պատմեցին, թէ Կարսի մէջլիսը որոշիլ է, որ Ծաշեդ բէզը իւր քուրդ ձեաւորներով կազմ ու պատրաստ պաշտպանէ Վանանդը թշնամու միլեցիայի դէմ: Յետոյ աւելացրին, թէ արդէն վճռել են, որ ամէն գեղ պաշտօնական զրկեն և զօրքի համար օգնութիւն—նպաստ հաւաքէն: Ասացին, թէ Մանսուրին ու Ծաշեդ բէզը գալու են մեր գեղը, որ ոյայաթի ձեռքն եղած, չեղածը ժողովին, տանեն քաղաք: Այս խօսքերից սաստիկ թուլացայ: Քրդի լամուկներն աւելացրին, թէ Հասօ-բէզը նրանց զրկել էր, որ իմ եղներս աղատէին, սար փախցնէին, նրա նախիրին խառնէին: Աշմարիտը՝ ես հաւատացի, բայց երբ սկսեցին մարախներս լծից արձակեր, սիրտս լցւեց ու քեզ ձայն տւի:

Թագոսը չէր էլ լսում Մադոյի պատմութիւնը: Նրա խելքն ու միտքը քուրդի լամուկների շետ էր: Նա համոզւած էր, որ նրանք սնպայման վրէժ էին լուծելու: Թագոսը մտածում էր, թէ արդեօք, հակառակորդները նրան տապալելու համար, ի՞նչ Միջոցների կարող էին զիմել: Զէր գախենում ոչ քուրդի զէնքերից, ոչ նրանց աւազակութիւնից, ոչ գիշերային զողավայել լսելեան յարձակումներից, ոչ էլ յանկալծակի վրա տալուց, կամ մի ապառաժի ետելից արձակւելիք զընդգակից: Նրան թւում էր, որ քուրդերի մէջ գաղտնի

Խորհուրդներ էին կատարւում, ծրագիրներ էին կազմում՝ յարձակւել իրենց անդէն դրացիների վրայ, կողոպտել նրանց գոյքը, նոյն իսկ կանայքն ու աղջիկները։ Զերմալիին այնքան մօտ Խէյրաթցի լամուկների այս համարձակ քայլը, նրան ստիպում է ենթագրելու, համոզւելու, որ այդ անփորձ ջահէնները կանխել էին փորձառուների կատարելեքը և եղջ Մադօի արջառների վրա փորձելու։

Գիւղ հասնելուց յետոյ, երբ տուն ու գուռ գննեց, ապահովւեց, Թագոսը գնաց քէհաի օդախը, խնդրեց, որ համիաններին ժողովի կանչէ, գեղի վերաբերեալ հարցերը քննելու և որոշումներ տարու։

Գիւղացիք երկար վիճաբանութիւնից յետոյ, վաթսուն տղայ նշանակեցին, որ քսան հոգի ով երեք հերթով գիշերները մինչեւ լցոս հսկին գիւղի շուրջը։ Թագոսին էլ դրանց վրայ դիսաւոր նշանակեցին։

Գ

Գիշեր էր Լուսինը իւր գէմքը երբեմն երբեմն դուրս էր բերում տիտուր ամպերի ետեւից, յուսաւորում էր Վանանդի դաշտը։ Զերմալիի հանգերը և շտապում էր մոայլքողերի ետեւը թագնում, կարծես նա էլ վախենում էր անօրէն արիւնարբու քուրդերից, որոնք թուրքական զինազգեստ հագած, մտել էին հայի գիւղերը կեղեքելու և սգացնելու։ Երբեմն երբեմն անձրեւ էր կաթկաթում, կարծես երկնքում կարեկից ոգի-

ները յաց էին լինում և ողբողների արտասուքները կէնտ կէնտ զըրտում, թափւում էին երկրի վրա ապրողների բորբոքած սրտերը զովացնելու համար։ Սուդ ու շիւանը տիրել էր ռանչպարի խրճիթին. նրա օջախից այնքան ծուխ չէր բարձրանում, որքան նրա երթից—սրտի խորքերից արտափիժած հառաչանքները երկնք էին վերանում, դէպի Ամենազթածը՝ բազոքելու իրենց զարհուրելի վիճակը։ Թէև ապրիլը վերջանալով էր, բայց վանանդեցին վիճակւած դաժան ցուրտը, սառը քամիները դեռ չէին ձեռք քաշել թշւառի օձիքից։ Բուղա-թէփէից, Սիւրդիւզից սուլելով ու մնչելեվ փշում էին դառնաշունչ հողմերը և կդատեցնում էին կիսամերկ ու կիսակուշտ շինականներին, որոնք տունն ու տեղը, մանր ու խոշորը կթան ու լծկանը անակնալյալ աշխատակողներից փրկելու յցսով, անուշ քնից ու հանգստից զրկւած, բոլորւել էին թիթէներով բորբոքւած կրակի շուրջը, գիւղի ղալաղների մօտ։ Եւ որպէսզի զիմազրեն նեհրի բնական պահանջներին, նրանցից ճարպիկներն ու փորձառուները պատմում էին այն զարհուրելի, բայց խիստ հետաքրքիսարկածներից, որոնց ականատես էին եղել քսան երկուտարի առաջ թէփութովի կուին՝ Քիւրագ-գարայի ձորում և Փալդրւանի դաշտում։ Եւ պատմութիւններին վերջ չըկար։

Յանկարծ ձորամիջից աղմուկ բարձրացաւ, որին հետեւեց մի ատրճանակի պայթուն։ Խսկյն գիւղի պահապանները ոտքի ելան և ամէն մէկը իւր որոշ գիրքը բռնեց։

— Տղա, Մադօ՛, շուտ լուր տար Թոփուզին,

ասաց խմբապետը, հրացանը քննելով:

— Սաքօ՛, ախար ես ինչպէ՞ս երթամ, ասաց կակաղելով Մադօն:

— Աշու, էլ մարդ չը գուաք, ասաց հեռւից Թագուը, որ այդ կիսամեռին էք ուղարկում եմ ետևից: Մի՛ վախենաք, ես եմ, ուղեցի ձեզ փորձել:

— Տնաշէ՛ն, քիչ է մնում սիրաս բնից դուրս թռչի, այդպէս էլ վախեցնել կարելի՞ է, ասաց Մադօն մօտենալով կրակին և նստելով իւր տաքցրած տեղը:

— Հայ քեզ ողջ ողջ թաղէր քու մերն ու հօրդ օջախի զլիսին քեզ պէս բէդովլաթ չը կանգնէր, ասաց Մադօն: Այ տղա, սրառումք իսկի կրակ չը կայ:

— Տղերք, ասաց Թագոսը սրանց խօսքը կորելով, ձեզ կրակի շուրջը հեքիաթ լսելու չեն դրեր, ամէն մի բոպէ պէտք է գեղի շորս կողմը պտտէք ու քննէք, զննէք, ականջ կախէք հեռւից լսող ուսնաձայններին, չների ոռնոցին:

— Բան չունի՞ս, Թագոս աղբէր, այս եղանակին այս բքին օձն իր ծակից, սովոծ գայլն իր բնից դուրս չի դալ: Գնահ, հանգիստ քնիլու: Տղերքը շատ արի են:

— Այս ցլոտին օձն ու գայլը ուղիղ է չեն դուրս գալ իրենց բնից, բայց կողոպտելու դուրս գալող դող—աւաղակին, յափշտակելու տենջով բռնկած քուրդի լաճին ու թուրքի զաբթիէին չե կարող ցուրտն ընկճել: Նրանք էլ այսպիսի գիշերի են սպասում, որ մեզ քննեն ու գան իրենց բեռը բառնան, ուանեն: Տղերք, կրակ ունիք, յարեց Թագոսը:

— Երեք հատ շշխանայ, մէկ էլ չախմախի, ասաց խմբապետը:

— Գիշերս քէալաշս ինձ չը թողեց հանգստանալու, անդադար դոփեց ու դոփուակից Զիս երբէք զուր տեղն ինձ չի անշանգստացնի: Պէտք է անշափ արի գտնւինք: Մաշիդ բէզի մարդիկը դարտակ ձանապարհելը քաջութիւն չէ, նրանց անարգանքը քուրդ-բէզը չե կարող մարսել ահա երեք օր է գնացել են. ես կարծում եմ, որ գիշերս նրանք մօտենալու էն մեր գեղին, ասաց ծանրութեամբ Թագոսը:

— Քու էլ բանդ, Թագոփուզ աղբէր, ասաց Մադօն, գեղը կանգնեց, չը կարողացաւ քեզ կոտրել « Զը տալ» ասիր, ուրիշ խօսք չընդունեցիր: Նրանց ութը եղը պիտի երկու սոմար ցորեն տանէր, խո. մեզ քանդելու չէր: Յամառեցար, «ո՛չ ասիր, բայց հիմի զզացել ես, դու էլ ես վախենում:

— Դու էլի բերանդ բացիր, դոնդրշած, ասաց խմբապետը, քեզ որ գեղը լսէր, ոչ թէ մեր երեխաների զերջին պատառը քուրդերի ու զաբթիէների բուգը պիտի լքցնէինք, այլ մեր քայլերը, կիներն էլ նրանց գիրկը պիտի զցէինք:

— Երկու հարիւր անւորը, եթէ երկու սոմար ցորեն տար, տան գլուխ մի բուռ հացով կազատւէր, այն ինչ հիմի....

— Հարցը մի բուռ ցորենի մէջ չէ, Մադօն, խօսքը կորեց թագոսը, եթէ Մաշիդ բէզի եղները բեռնաւորւած ձանապարհէինք, Հասօ-բէզն էլ, Օսման-բէզն էլ, Սուլո-բէզն էլ իրենց եղներն ու մարդիկը կուղարկէին, կը պահանջէին: Առաջ ցորեն կուզէին, յիշոյ գարի, իւղ, մասցու՝ ոչխար, կով և վերջապէս մեզ պոպկելուց յետոյ, մեր պատիւն էլ կը պահանջէին:

— Դու ամէն բանի վատ կրղմո ևս մտածում, սղբէր: Այս գազանին, որ կշտացնէինք, ձանապարհ դնէինք, նա մեզ հետ կը բարեկամանալ և չէր թողներ, որ ուրիշները մեզ մօտենան, պնդեց խօսքի վրա Մագոն: — Կարո՞ղ է գայլը գառի հետ բարեկամանալ, Մագո՞: Նա գիշեր ցերեկ մտածում է մեզ կուլ տար, Զէրմալիի տափերը խլեր, հանդերին տիրել և ամբողջ բերքը քաշել-տանել: Նա մեզ հետ կը բարեկամանայ: Նրա միտքն ի՞նչ է, կարգ դնել և մեր գեղից տարեկան բաժ տանել: Թէ մի-երկու տարի բաժը ստանայ, Էլ երբ մենք ու մեր աղերքը կարող կը լինինք նրա ձորտութիւնից ազտուել:

— Տնաշէ՞ն, էլ ի՞նչ մէկ երկու տարի, մէկ երկու ամսից քեռին կը հասնի. Արփա-չայը անցել է, ամբողջ զորագեալ, Աղբաբա ոտքի տակն է առել: Կը գայ կազատւինք:

— Ո՞վ գիտէ, նրա դալը բաղտի խաղն է, ի՞նչ վախճան կունենայ: Երկու անդամ եկել տիրել է բերդին, բայց որ էլի թողել, հեռացել է: Մեր սկ բաղար մեզ հետ է, եթէ նրա վրայ յօյս կապենք, մինչեւ հասնիլ՝ սրանք մեզ հում հում կուտեն: Թէ քեռու վախը չը լինէր, սրանք մեզ դադար չին տար, բայց առանց մեր ջանքին քեռին ի՞նչ կարող է անել: Նա ի՞նչ է իմանում թէ սրանք ի՞նչ գաղաններ են, ինչպիսի ժանիքներ ունին և ո՞րտեղ է սրանց ունն ու բունը: Այդ բոյորը եթէ մենք չը ցոյց տանք, սրանց առամները չը փշենք, կարծում են՝ թէ սրանք քեռուն հեշտութիւնով գլուխ կիջեցնին:

— Թոփիփուզ աղբէ՛ր, խօսքի մէջ մտաւ խմբապետը, ձշմարի՞տ է, որ ասում են, թէ ոուսի զոշունի բո-

լոր մենծաւորները հայեր են:

— Տո՛, եթէ հայերը չը լինէին, թուրքի, քրդի, թարաքամի, թաթի ու զարափափախի լեզւից ոուսը կարող էր բան հասկանալ: Այս գազանների բարքն ու վարքը ի՞նչ է իմանում ոուսը: Եթէ Լազարովը, Բէհ-բուզովը, Լորեցին ու իրենց մարդիկը դոշունի գլուխ շանցնէին, ամբողջ հայ ազգը ոտքի կը բարձրանալ և ձանապարհ ցոյց կը տար ոուսին.....

— Բե՛դ, թմբ՝ Հրացանի գնդակներ որոտեցին..



Հրացանների որոտը բաւական չեռւից էր: Ըլ-ների ոռնոցը սաստկացաւ: Մի բոպէ բոլորը չնչերը կը ուրած, ոռքի կանգնած սպասում էին գնդակների որոտի շարունակութեան, բայց բայի շների անվերջ հաջոցը, ոչ մի ձայն չը կար: Թագոսը պառկեց գետին, ականջը գրեց հողին և ուշքը կենտրոնացած ուղում էր գուշակել՝ թէ ո՞ր կողմից էին գալիս թշնամի ձիւտորների ոտքերի գիրտոցը: Ամէնքը ոտքի վրա լրւու լարւած գլութեամբ սպասում էին Թագէոսի կարգազլութեան:

— Տղե՛րք, գիշերս խրամատի կողմը ո՞վքեր են պահապան, ասաց Թագոսը դեռ ոտքի չելած:

— Զքէն ու Մարգարը, Գալոնց Պողոսը Վասիլի տղան, Մայիլենց Պողոլը, եօթ թէ ութ հոգի են, ասաց խմբապետը:

— Դու այստեղ մնա, ասաց Թագոսը, Արդոսի

Ճանապարհից մի' հեռանաք: Դաւիթ, Մքո', թւանք-ներդ առէք, առաջ գնանք խրամատը: Արդէն Խէյ-րաթցիք մեզ հանդիստ չեն թողնելու: Մադօ', գնա տուն, ձիդ թամբիր, մեր Պապօյին ասա, քեալաշին հեծնի միասին արիք: Քէհային ձայն տուր, Սաքօյին էլ ձիաւորւած մեր հաւարին հասցնէ:

Տասը բոպէի ընթացքում Թագոսը ընկերների հետ թաթերի վրա ման գալով անշշուկ հասան ձորի բերանը, մտան խրամատը: Բայց ընկերներին հանգող կրտկանի շուրջը չը գտան: Տղերքն անպատճառ դիրք բռնած պիտի լինին, մտածեց Թագոսը և քայլերը ուղղեց այն ժայռերի կողմը, որտեղից որոշւած էր թշնամիների մուտքը կտրել: Նա հազար, կանդ առաւ փոնշտաց, ապառաժներից և ոչ մի ծպտիւնով արձագանք չեկաւ: Կրկին հազար, նստեց, ապա այն տեղից թշլ սուլոցով պատասխանեցին:

—Զքէ՛, ձայն տւեց Թագոսը մի ժայռի մօտենալով:

—Այստեղ ենք, արձագանք տւին և իրար մօտեցան:

—Գնդակի որոտը ո՞րտեղից էր, հարցրեց շշալով Թագոսը

—Խրամատից եկաւ: Խոկցն զիւք բռնեցինք և կր-րակը ծածկեցինք: Երկու ձիաւորների աղմուկ էր, ո-րոնք մօտեցան մինչև Սալի-զլոււին ու ետ դարձան: Ընչերս կտրած սպասում ենք, բայց ձայն ծպտուն չը կայ:

—Նրանք փորձել են, իմանալու համար, ար-դեօ՛ք պահապաններ ունինք, թէ ո՛չ: Դիւթերդ լաւ

պահեցէ՛ք, լուռ ու անշշուկ: Գրանք անպատճառ վե-րադառնալու են: Քիչյետպ, յարեց.—Մքօ', դու դար-ձի՛ր, գնա քէհայի տունը և մերոնց ասա, որ ձիերը զզրենց գոմը քաշեն, էլ առաջ չը դան: Ինքդ էլի շտա-պի՛ր, դորձիր տեղդ բռնէ: Առւի ափերով գնա ու դարձի՛ր, որ շարժումներդ չը նկատւի:

Մքօի գնալուց քառորդ ժամ անցաւ, բայց ոչ մի ձայն, ոչ մի գփոտոց չէր լսւում: Տիրաշունչ հող-մերը որքան որ վիզում էին հիւսիսից, չէին կարողա-նում մռայլ ամպերը երկնքից հեռացներ, որ լուսինը լրւաւորէ ու աղջամուխջից ազատէ պահապաններին: Փոշենման սփռւող անձրեկի հատիկների առաջն էին առնում այդ քամիները, չէին թողնում, որ շազ գան երկրի երեսին և ցողեն ռանչպարի ցանքսը-միակ յշսը:

Յանկարծ հեռւից լսւեց ձիերի սմբակների դը-փոտոցը, որոնք սրբնթաց առաջ էին գալիս գեպի գիւղ: Պահապանպաններն իրենց դիրքում ամբողջապէս աչք ու ականջ գարձած, հետամտում էին թշնամու ար-շաւանքի քայլերին: Մքօն առանց աղմուկի գիւղից պատասխանը բերեց ու մտաւ իր ապառաժի որջը: Ա-ւազակները առանց տատանւելու մօտենում էին գիւղի սահմանին, պահապանների պատապարանին:

—Տղե՛րք, ասաց Թագոսը, աշխատեցէ՛ք, ո՞ւ ձեր գնդակները ձիերին չը մնասկն:

Երբ աւազակներն այնքան մօտեցան պահա-պաններին, որ սրանց շէխսանայ հրացանների գնդակ-ները էլ չէին կարող նշանից վրիպել Թագոսը շշալով հարցրեց:

—Տղե՛րք, կարող էք համրել քանի՛ հոգի են:

— Եօթն, ասաց Զքէն, որ ամենից սրատեսն էր և վաղուց հետամտում էր աւազակների արշաւախմբին:

— Ոչ, ասաց Դաւիթը, ինը հոգի են, առաջաւոր երկու ձեաւորները զուգնթաց են գնում, նշյապէս և վերջինները:

— Տղե՛ք, ասաց կրկին Թագոսը, գնդակներդուղեցէք առաջի և վերջի զցկերին: Եթէ կրանցից մէկն ու մէկին զլորենք, մնացողները կը փախչին: Թաւանքերդ ուղղեցէք, երբ շւացնեմ, միասին կրակեցէք:

Թագոսը այնպէս էր բորբոքւած, որ իւր նշանը ուղղելուց յետոյ, մոռացաւ շւացնելու, կրակեց և գնդակը հասցրեց առաջնթաց զցկին: Զքէն ու Դաւիթը ոգեւորւած դարտկեցին իրենց հրացանները, որոնց հետեւլով մնացորդները սասանեցրին արշաւախմբին: Իրար յաջորդող հրացանների որոտները և գընդակների վերքերը կանգնեցրին աւազակներին, որոնք շւարած մի վայրկեան տեղերումը անշարժ, սպասում էին փախճանին: Թէև քամին չէր թողնում, որ աւազակների ձայնը լսւի, բայց այնքայն խիստ աղաղակ բարձրացրին, որ պահապաններն համոզւեցան, թէ իրենց գնդակներն ապարդիւն չէին անցել, բոլորովին չէին վրիպել:

— Դատարկեցէք, յանկարծ ձայն տւեց Թագոսը հրացաններդ, լքցրէք ու սպասեցէք:

Վայրկենական դադարումից յետոյ, արշաւախումբը չուղեցաւ խայտառակ ետ դառնալը երեք ձիաւոր կանգնած տեղերը մնացին, վեց հոգի առաջ անցան պահապանների կողմը, գնդակները որոտացնելով: Թագոսի ընկերակիցները պատասխան չը տւին պյու

գնդակներին: Նրանք առաջ էին քաշում քուրդերին:

— Նամարդնե՛ր, առաջ արիք, թագստից չեն յարձակւում, գոռացին քուրդերէն լեզւով:

— Թաշեղ բէզի մարդիկն են, ասաց Թագոսը, տեղերից մի շարժէք, թո՞ղ քիչ է առաջ դան:

— Զմարդի ֆլաշնե՛ր, թագստից կռւելը նամարդութիւն է, առաջ արի՛ք քաջի նման զարկւենք, թէ չէ, ձեռք ընկածին ալիւրի նման ենք մանրելու: Քաջ էք, ասպարեզ մաէք:

— Թէ գուք նամարդ չէք, ի՞նչի առանց իմացնելու, կէս զիշերից յետոյ, յարձակւել էք անկողիներում քնած խեղձ ժողովրդի վրա, ասաց Զքէն քուրդերէն լեզւով:

Թագոսը շւացրեց և տասը հրացանների վընդակները խկցն որոտացին, սլացան քուրդերի կողմբ: Արշաւախումբը ըմբռնեց, որ պահապանները նրանց դիմադրելու էին մինչև վերջին շունչը, ուստի էլ կանդչառին, ետ դարձան ու սլացան: Երեք-չորս հարիւր բայլ հազիւ ետ դարձած լինէին, որ նորից կանգնեցին քուրդերը:

— Երեկի վերաւորների վերքերն են, կապումասաց Զքէն:

— Թո՞ղ կապեն, բայց ես նրանց հանգիստ չեմ թողնելու: Մքօ՛, վաղիր ձիերը բերէ՛ք:

Այդէն հրացանների որոտից դղրդացել էր ողջ գիւղը և Սաքօն հասել էր կռւողների հաւարին: Խոկցն ձիաւորւեցին ու հետամուեցին փախստականներին: Այս միջոցին այն փոքրիկ ամպերն էլ որ բռնել էին լուսնի սկաւառակը սլացան և պարզ լրսի մէջ Թագոսը նշանակից արշաւախմբի ձիաւորներին: Թէև

մի քանի գնդակներ ևս արձակեց, բայց անօգուտ, նրանք այնքան հեռու էին, որ շեշտանան նրանց գնդակ չէր կարող հասցնել:

— Սաքօ, ասաց Թագոսը, այնալուս տուր տեսնեմ և երբ հրացանն ուզգեց ու արձակեց արշաւախմբի կողմը, քրդերը վիրաւորներին թողին ու փախան:

— Հրացանն այսպէս պէտք է, ասաց Թագոսը, որ աչքդ կտբածին հասցնես: Ցղերք, քշեցէք: Գոնէ այդ վիրաւորներին բռնենք:

— Թոփիփուղ ջան, հոգիդ սիրես, թող կորչին ասաց Մադոն: Բան չունի՞ս, նրա դիմակը պիտի՞ քաշ տաս: Նրանք իրենց բաժինն ստացան:

— Ելի դու մէջ ընկար, դոնդրշած, վրա տւեց Դաւիթը, Թագոսին հետեւով:

Ե

Առաւօտ էր, գարնանային ամպամած տիսուր անձրեակալ օր: Խոնաւութիւնը մռայլել էր թէ բոյսը և թէ կենդանութիւնը. ոչ միայն մարդիկ, այլ անասունները, գազաններն անդամ կնճռոտել էին դէմքերը: Երեք օր ու գիշեր պարբերաբար շաղ եկած բարակ անձրեկի փոշենման հատիկները թափանցել էին ու ոզողել սար, ձոր, գաշտ ու ապառաժ: Հողը փափկել էր, գեղի մէջ մանգալը անդամ դժւարացել: Այն աստիճանի ցեխ ու տիլ էր, որ կթաններն անդամ նախեր չէին կարողանում տանել հոգիւները, մինչև ծնկները

խրւում էին կենդանիները զետնի մէջ: Հողը փափկել էր: Բաւական չէր օդի ճնշող ներգործութիւնը, արշալցախին թուրք կոմաւոր ձիաւորների զօրապետը՝ Ղարափափախ Մանսուրը, որը Ռուսական գատաւորներին ազմինիսարաւորների ձեռքից փախել եկել մասել էր Օսմանցիների ծառայութեան, քսանը հինգ ձիաւորով հասել էր 2էրմալի, իջել էր քէհամի տունը: Անձարացած քէհան ոչխարներ էր մորթեր, պղնձներով փլաւ էր եփել, ձու, ձւածեղ, կաթ, մածուն, սէր, զայֆայ, շարբաթ ու չալխամայ, զանազան պատրաստութիւններ էր տեսել օդայի շէմքին մօտ ոտքի վրա կանգնած՝ սպասում էր ձիաւորների առաջնորդի հրամանին: Քէհամին այնպէս էին տիրել տիսուր մռքերը, այնպէս ալեկոծւել էր նրա հոգին, այնպէս էին ընկճել նրան չարգուշակ ենթագրութիւնները, որ նա պատանձւած ընկղմել էր տնեզր երեակայութեան անսահման ովկիանի անյատակ անդունդը:

Մանսուրը բազմած քէհամի հիւրասենեակի աւագ բազմոցին, բորբոքւած օջախի տուած՝ չորացնում էր գիշերը թրչւած շորերը, տաքացնում էր մրսոծ իրանը և անընդհատ հասաչում էր՝ անչափ մեզմ արտաշնչութիւնով: Ընկերակիցներից ոչ մէկը չէր համարձակւել նրա ներկայութեան նստիր, խօսիր, կամ շարժւել շտահը էր ուրիշ բնակարան գնացած: Թրչւած շորերն էին չորացնում, հանգստանում, կամ քնում: Ինչպէս նըկատելի էր, նրանք ամբողջ գիշերը չէին քնել: Մանսուրը թէև զլուխը բարձին չէր գրել, ացքերը չէր փակեր, բայց յոզնածութիւնը, անորոշ վեճակի սոսկալի: Ճախորդ գուշակութիւններով պաշարւած՝ այնպէս էր

սու զւել տիտուր մտքերի մթին անդունգը, որ նստած տեղը անշարժացել, թմրել ու անզգայացել էր: Քէհան չէր կարողանում թափանձել Մանսուրի ներքին աշխարհը, նա այդպիսի թուրք պաշաճնակալի երբէք չէր պատահած և չէր էլ կարող ենթագրել, որ արիւնարբու, դիշակակ Մանսուրն էլ կարող էր իրեն նման արխուր մտքերով պաշարւել և զլու Խը-դատողութիւնը կորցնել:

Այս անորոշ վիճակը կարեց լայնասերտ, վըշտատար քէհաի համբերութիւնը և նա երկու քայլ առաջանալով անկանոն ձիաւորների հրամանակալին ասաց.

—Աղա, ախար կէսօր է, մեղք էք, մի պատառ հաց անուշ արէք:

Մանսուրը առանց շարժւելու կամ սթափւելու շարունակում էր իւր քունը, բորբոքելով քէհաի զինում զանազան ենթագրութիւններ: Չեռները գոտին դրած սպասեց քէհան, զրգուած երեք չորս անգամ հազար, փոնշտաց, բայց հիւրը անտարբեր, շարուկում էր ախուր երազներով պաշարւած քունը:

Բաւական չէր տանուտէրի կրած անարգանքը, ջղերի բորբոքումները, անընդհատ դրացի համբաները մօտենում, հարցնում էին, թէ ինչի՞ էր եկել այդ արիւնարբու դագանը Այս հարցերը այնպէս էր զլուում քէհաին, որ նա չորում, ձանապարհ էր զցում այդ անտեղի հետաքրքրողներին: Փէհահի վարմունքը սաստկացնում էր դիշացիների ենթագրութիւնները և սարսափը: Ամէնքն համոզւած էին, որ Մանսուրն եկել էր երեք դիշեր առաջ պատահած դէպքը քննելու, աւա-

զակներին դիմադրողներին ձեռքականու և գիւղը աւրի տալու:

Ամէն մարդ պատերազմ յայտնելուց առաջ գաղեր, խորել էր իւր գանձը, թանգակին զարդերն ու ապրանքը, բայց և այնպէս դարձեալ քննում էին տան բոլոր խորշերը, որ քաշով թեթև, գնով ծանր առարկաները նցնպէս թագցնեն, աւարառուների ձանկից ազատեն: Տարաբաղտութիւնն այն էր, որ կթանն ու լծկանը արածելու չէր ուղարկւած: Սիլուն հարս, աղջիկ ունեցողները, նորանց փակում էին գոմերի խորքերի մարաքները, կամ ամբարները ու դռները ծեփում կամ աթարով շարում, որ անօրէնների ձիրաններից փրկեն: Անտանելի էր դարձել զարհուրելի վիճակը, մթնել էր բոլորի աչքերը, թմրել էր միտքը—դատողութիւնը անհետացել, ոչինչ չէին կարողանում զանազանել: Քէհաի անից յուսահատութիւն և լքումն էր տարածւում ամբողջ գիւղում:

Վերջապէս Մանսուրն սթափւեց և հարցրեց, առանց երեսը ետ դարձնելու.

— Ռաշիդ-բէգն եկաւ.

— Ոչ աղա, գալող չի եղել ասաց քէհան դողդալով: Քիչ մտածելուց յետոյ յարեց.

— Թոնը խիստ վրա է, խէլլաթի ձանապարհից դժւար թէ հնար գտնեն անցնելու:

— Ըհը ասաց Մանսուրը առանց ետ դառնալու:

Աղա, կէսօրն անցաւ, սուփրէն զցենք, ասաց քէհան:

— Լաւ, ասաց Մանսուրը, միայն ինձ համար, առանձին:

Երբ սպասները դարսում էին, Մահսուրը դի-
տելով քէհափ անվրդով դիրքն ասաց.

— Թէշիդ-քէզին ճանաչում ե՞ս.

— Ինչք չը պիտի ճանաչեմ, աղա, մեր դրացին
է, ելլիդի քէդ է, առաջաւոր մարդ է:

— Գիտե՞ս, որ նա էլ նշանակւ եց քուրդ ձիա-
ւորների գնդապետ: Ի՞նչպէս համարձակւեցաք և նրա
եղները առանց ցորենի ճանապարհեցիք: Զէիք իմա-
նում, որ նրա մարդիկը հիմի պետութեան ծառայող-
ներ են:

— Ղուրբան, մենք պետութեան ծառայողներից
չենք ինայիլ մեր հացը: Մի ամիս չկայ, որ ձեր ներ-
կայութեան գեղը միաբերան տւեց իւր կարողութիւ-
նից շատ աւել ցորեն, գարի, իւզ, մասցու, ինչոր կա-
րողացաւ: Գիւղացին Թաշխդ-քէզին ու նրա ծառայող-
ներին է մերժել: Երկու սոմար ցորենն ի՞նչ բան է, որ
մենք մերժէինք, բայց մեր նպաստակը և Թաշխդ-քէզինը
շատ տարբեր է: Մենք պետական հարկի, պատերազմա-
կան նպաստի համար խօսք չունինք, միշտ էլ պատ-
րաստ ենք, բայց ձրիակեր քուրդերին չենք կարող
վարժեցներ, որ տարին տասներկու ամիս մեր արիւնը
ծծեն: Տասը տարի է Թաշխդ-քէզն աշխատում է մեզ
սորկացներ, ձորտացներ մեր վրա հարկ գներ բայց
մենք պետութեան ռայտաթն ենք, ոչ թէ Թաշխդ քէզի:
Եթէ մենք էլ տանք, համոզւած եմ, որ դուք ըսպիտի
թողնեք:

— Ուրեմն նա վաղ է աշխատում, ձեզ վրա հարկ
դնելու:

— Իսկապէս ցաւն այս է, այդ ենք լալիս:

— Որ այդպէս է, լու էք արեր չեք տւել:

— Երկուսի փրկարէն չորս սոմար, եթէ հրա-
մայէք, պատրաստ ենք քաղաք բերել և պետական ամ-
բարին յանձնել:

— Օ՛ձ, խարդախ, լու էք արեր որ չեք տւել:
Այս բանը ես բանակի հրամանառարին՝ Մուխթար-
փաշային եմ յայտնելու:

— Զեր ծառան ենք, տերութեան համար ինչ-
քան որ պէտք է: Մեզ քուրդերի ձանկը մի զցէք:

Քէհայի գէմքից անհետացաւ մռայլը, թակի-
ծին յաջորդեց յշոսի նշոյներ և նա համոզւեց, որ ու-
րիշ առաջարկ չէր բերել Մահսուրը: Սրան յագեցնելը
տւելի գժւար էր, քան թէ Թաշխդին: Բայց քէհան
վասահ էր, որ մի անգամ վճարելով ընդմիշտ աղաստե-
լու էին զարաֆափախի ծիրանից, այն ինչ Թաշխդ-քէզը
ամէն տարի պահանջելու էր:

— Ո՛չ, դուք միայն ձեր հարկն ու տուրքը պետու-
թեան պիտի տաք, ասաց Մահսուրը, պատառը կուլ
տալով: Զեր բէզն էր, ձեր տէրն էլ ես եմ:

Զ

Դեռ Մահսուրը ճաշից չէր բարձրացել, երբ հա-
սաւ Թաշխդ-քէզը, բանակի հրամանակալ՝ Մուխթար-
փաշայի թիկնապահ՝ Թաւուդ-քէդի հետ, իրենց սովոծ
սպասաւորների վրհմակով: Քէհափ, չերմալեցիների ու-
րախութիւնը փՃկեց ու ցնդեց օճառի պղպջակի նման:

սարսափը տարածւեց բոյորի սրտում։ Պատերազմի ընթացքում այսպիսի այցի նպատակը շատ պարզ էր։ Խոչ չէին եկել թշւառ հային կողակի մարակից և արտիերիայի ռու մբերից պահպանելու, այլ նրա մաշին եին ուզում հաներ, որ տանին թուրքական բանակի թմբուկներին երես քաշին հայի կաշին անշափ դիմացկուն է, ասում էին, իսկ ձայնը ահեղ, այդ էր իսկապէս նրանց հարկաւոր։

Դաւուգ-բէզը դեռ ոտքը ասպանդակից չը հանած, հրամայեց քէհամին, որ իրիկնայ հաց պատրաստեն պաշտօնականների համար Բանակի Հրամանակալի թիկնապահի այս լակոնական պատւերը շատ ընդգարձակ մանրամասնութիւններ ուներ, որը միայն կարող է Խոլամի եօթը դարու լուծը քաշած հայ դեղջուկն ըմբռներ։ Զըմբռնող պնդաղուխներին հասկացնելու, զդացնելու համար կարեոր զէնքերով զինւած էին անկոչ հիւրերը։

Քէհան խո՞ կախարդական անսպառ ամբարներ ու մառաններ չուներ, մի տան ուժից անշափ բարձր էր, անասելի ծանր էր այդ բեռը։ Այսպիսի հիւրերի հաճոյքը բաւականացնելու համար, քէհան գզոի միջոցով դարտակում էր զրացիների մարաքն ու ամբարը, մառան ու քիւրարը, իւղի բղուղները, պանրի տկերը, քաշում տանում էր անձարի ոչխարը, գառն ու մաքին, հաւն ու սազը, մինչև անգամ թշւառի բնկալը։ Երեք հոգի չէին, եօթը չէին, եօթանասուն բերանը, եօթանասուն ստամբուր լցնելը հեշտ չէ, այն էլ կուի տարին։ Անզգայ գզիրը դահճի նման մահակը ձեռին կարում էր սրա—նրա դուռը և անողոք առնելիքի տի-

րոջ նման պնդերես՝ պահանջում հայցում, լացացնում մորմոքեցնում էր չարատանջ մայրերին ու քաշում տանում քաղցած երեխաների յետին պատառը, մերկ կոյսերի վերջին շիւղը՝ աղիողով արասառուքի հեղեղների մէջ խեղդելով, յուսահատեցներով թոյլ արարածներին։ Ամբողջ գիւղը մանր ու խոշոր ժախով, զոխով, բոխով, երիմնակով ու սնձով պիտի լքցնէին ստումոքսները, սրտերը պիտի մաշէին, աղեքները տանջէին, իսկ նրանց ամբողջ արած պատրաստած բարին պիտի լափէին, թափէին, կողոպտէին ու յափշտակէին անկոչ հիւրերը, անխիղջ աւարառուները, որոնց Ալլահը նախասահմանել էր թշւառ—անտէրի զիսին իշխան գատաւոր։

Մինչ գզիրն ու քէհամի որդին իրիկնահացի պատրաստութեամբ էին զբաղւած, Դաւուգ-բէզը կանցեց քէհամին, նախատեց, հայցից և մտրակեց, սպառնալով կախաղան բարձրացնել, եթէ ամէն հարցին ձըշմարիտ պատրասխաններ չը տայ։ Ծեծը նրա համար էր, որ Ալլահի-շքի՝ խալիֆի լիազօրը ցցց տայ, թէ ինքն անստհման իշխանակալ է ռայայի գցքի և կետնըի վրա, մանտուանդ պատերազմի գէպքում։ Ռայայի կաշին եօթը դարում այնքան էր թակւել, դաղւել, որքան եթէ թակի ենթարկւեր խաղաղորդի պատրաստած մաշը, կը մանրւեր ու փոշիի կը փոխարկւեր։ Տքաց, հառաչեց ու մզկտած ալեւոր քէհան, բայց ի՞նչ կարող էր անել լռեց, սպասեց դահճի որոշման, յայտնի բան է յամառած իւր սկզբունքների վրա։

— Եթէ կախւել չես ուզում քէհա, Ճիշտն ասա, ո՞վքեր կային այս գիւղում չորս գիշեր առաջ, ուստ տունն էին իջած և քանի հոգի էին։

— Բէդ, ի՞նչ եք հարցնում, ո՞ւմն եք փորձում, ո՞վ կը յո՞նդգնի մեր զիւղը դար, ո՞վ կընդունի թշնամուն:

— Մի՛ ստիլ, թէ ոչ ուղղակի քեզ բանտ եմ զրկելու, քէշա՛, մենք շտա լաւ զիտենք, դու մեզ կըսկնիր միայն ձշմարտութիւնը:

— Որ գուք ամէն բան զիտէք, ել ինձնից ինչի՞ եք հարցնում: Եթէ ես եմ զիւղի վերատեսուչը, զիշեր ցերեկ հսկողը, ես մարդ չեմ տեսել զեղը մարդ չէ մըտել, չեմ լսել և այսքանն ել զիտեմ, որ երկնքից թրոշող աղունակներին անգամ հսկել եմ, որ չը լինի մի փորձանք գայ զիխիս:

— Թէ որ ճիշտն ես խօսում, հապա ո՞վքեր էին սրանից չորս զիշեր առաջ խրամատում հաւաքւած երիտասարդները և ի՞նչ գործ ունէին:

— Մենք ամէն զիշեր պահպան ենք դնում, որ հսկեն և մեզ պահպանին թշնամու աւարից: Գիշերս ել եթէ գուրս գաք, պիտի համոզւիք: Կարսի Միւթէսսարիֆի և «օրդուի-միւշուրի» Մուխտար փաշայի հրամանն ել այդ է, որ ամէն զիւղ զիշերապահներ ունենայ, ասաց քէշան բորբոքւած:

— Այո՛, բայց զիշերապահները գնդակներ են արձակել և Ռաշեգ-բէգի մարդերին զիրաւորեր:

— Ել ի՞նչի են դրւած զիշերապահները: Ո՞վ կէս զիշերին, պատերազմի տարին, զողէզող մանում է զեղ ու գեղջուկի գոմի պատը ծակումյայտնի բան է գնդակահար ել է լինում, սպանուում է էք Աւրեմն այդ աւագակները Ռաշեգ բէգի կլիզից են եղել, որոնք աքնել էին Գալյունց Եղները տանել:

— Լոիլ անհաւատ, իմ մարդիկը գող չեն և ոչ

էլ պատ ծակող ասաց բորբոքւած Ռաշեգ բէգը:

— Եթէ գող չեն, կէս զիշերից յետոյ ի՞նչ գործ ունէին մեր զեղը: Այն էլ իննը հոգի ձիաւոր, զինւած: Ինչի՞ քանդիցին Գալյունց պատը: Զէք հաւատում, հըրամայիցէք, գնանք ու տեսէք:

— Նրանք արշալցյախն են եկել ոչ թէ կէս զիշերին: Նրանք երբէք չեն կարողացել զիւղ մաներ, ուր մնաց պատ ծակել:

— Մինչեւ հիմա Գաւուգ-բէգն ասումէք, որ զիշերն են եկել յայտնի բան է, նա ձեզնից եր լսել այդ բանը: Ես ստախօս, գուք ձշմարտախօս, թէ նրանք արշալցյախն էին եկել: Բայց եթէ ես քառասուն հայ զիսյ ցոյց տամ, Ռաշեգ-բէգ, գուք չէք ընդունելու, այն ի՞նչ մեր բազաից այդ զիշեր երկու պատկառելի մուսլիման հիւր ունէինք, որոնք ազմուկից զարթնեցան, ամէն բանի ականատես եղան և ականջներով լսեցին: Գաւուգ-բէգ, ես խնդրում եմ, զրեցէք և մի թուղթ արշեք մեզ, որ չորս զիշեր առաջ զեղի վրա յարձակողները Ռաշեգ-բէգի մարդիկն էին եղել որոնցից մէկն ել վիրաւորել է: Այդքանը ինձ բաւական է: Ես կը զիմեմ զինւորական տաեանին, եթէ զիւղն է մեղաւոր, թօ՞ղ ի՞նձ Կարսի բէրդի վլխից զլորեն, եթէ Ռաշեգ-բէգի մարդիկն են մեզաւոր, ես համոզւած եմ, որ Մուխտար փաշան արդար գատաստան կը տեսնէ: Հերիք չէ մեր տանջանքը, մեր զրացիք ել կուի տարին, պարագաներից օգտւին, զան մեզ կրզոպտելու: Վերջն էլ զրպարակների տանել:

— Գեաւուց, ես քու լեզուն վզակոթից հանել կը տամ, լոիլ թէ իմ մարդիկս ո՞չ թէ կողոպտելու, այլ

Լորիսից քեզ յօտ եկած լըտեսին բոնելու էին եկել
ասաց բորբոքւած Ռաշիդ բէզը:

—Այդ գատարանում կը պարզւի, թէ Լորիսի
մարդիկը մեր գեղն են եկել թէ ձեր գեղը: Եթէ դու,
կամ մարդիկ պետական դաւաճան չէք, ինչք թո-
ղիք, որ լրտեսները ձեր առաջից ողջ, առողջ անցնեն
և գան մեր գիւղը Դատաւորները Ալլահի անունով են
դատելու, թո՞յ մեղաւորը զրկւի Ամենազթածի տեսու-
թիւնից, կեանքից: Գողութիւնները ծածկելու համար
զու հերիաթներ շարադրիր, իսկ արդարութեան Տէրը
թշլ չի տալ որ դաւաճանները փառաւորւին:

—Ես դրան կտոր-կտոր անել կըտամ, Դաւուդ-
բէդ, ինչի՞ էք թողնում, որ ինձ նախառ, այդ անհաւատը:

—Համբերեցէք, հանգստացէք, բէդ, ես ամէն
բան պարտաւորեմ պարզեր: Քէհա, եթէ ձեր մէջ թըշ-
նամու կողմից մարդ չը կար, հապա այն ի՞նչ հրացան
էր, որ հինգ հազար արշին հեռաւորութիւնից գնդակ
էին հասցրել բէզի մարդուն:

—Այդ ո՞վ չափեց, բէդ, կէս գիշերին ի՞նչպէս
իմացան, թէ իրարից այդքան հեռու էին:

Ե

—Գուք միւսլիմի խօսքը չէք հաւատում, ասաց
Ռէշիդ բէզը, լոռում էք քեաֆիրներին, որոնք դրաբ-
ուում են, որ մեզ իրար ցցեն և պարագաներից օգտւին:

—Բէդ չափդ անցկացրիր, ասաց Մանուրը:

Եթէ քեզ պատւում են, դա չի նշանակում, որ դու
պետութեան շալակն էլ բարձրանալու իրաւունք ու-
նիս: Ամէն բան պարզւեց և շատ ճշմարիտ է, որ դու
ուզում ես վրէժ լուծել գիշեր ցերեկ տքնում ես հա-
յերին կեղեքել:

—Միթէ շէրիաթի հակառակ բան եմ անում,
ասաց Ռէշիդ-բէզը: Ալլահը նրանց շնորհել է մեզ, որ
ծառայեն մեր համշյներին:

—Խորամի համշյնքին, բայց ոչ թէ անհատների,
այլ համայնքին են ծոռայելու:

—Անհատը համայնքի անբաժան մասն է կազ-
մում, հետևաբար համայնքի ընդհանուր գյոքի Տէրն է՝
իւր բաժինի չափով: Հետեւ աբար ես իմ իրաւունքս եմ
պաշտպանում:

—Ոչ, պետութեան իրաւունքներն ես ոտքի
տակ տալիս, Ռաշիդ-բէդ:

—Պետութիւնն էլ ինձնով ու քեզնով է կազ-
մած: Եթէ մենք դրանց քամենք տոզւինք ու փար-
թամանանք, պետութիւնն էլ ձոխութեան մէջ կը լիցւի,
իսկ եթէ սոված տառապինք, պետութեան նեցուկ ով
պիտի դառնայ:

—Կործանւի այն պետութիւնը, որ դու նրա
նեցուկն ես համարւում, ասաց Դաւուդ-բէդը վրդով-
ւած: Չես լսել մեր նոր սահմանադրութիւնը, որը հա-
ւասարացընէլ է մեզ նրանց հետ: Դու հայից ի՞նչով ես
առաւել:

—Բէդ, չափաւորեցէք ձեր խօսքերը . . .

—Լոիր, լեռնական վայրենի, դու չես կարող իմ
քթից բռնել և զարարաւութիւններիդ եղանակով պարա-

ծել Եթէ հայը դիմագրում է, չի թողնում, որ իր լծկանն ու կժանը յափշտակէք, միթէ այդ ընդդիմագրութեամբ նա ըմբռատ է դառնում, կամ լլաես ու մատնից իսկ դուք, իսլամի քաջամարափկ զինւո՞ր:

Կօ՛ռօ՛, Մստօ՛, զոռաց Թաշիդ բէզը, ձիերը դուրս քաշիր, որանք գեաւուր են գարձեր, ասաց ու դուրս գնաց Թաշիդ բէզը:

Պնօրէն, քուրդն ի՞նչ գիտէ, թէ պետութիւնն ինչ է, հպատակին ինչպէս պէտք է հովանաւորել սաց Մանսուրը բորբոքւած:

Թաշիդ բէզը ձիւորւած հեռացաւ խմբով: Երբ գիւղի սսհմանից անցել էր, տասց հետեւորդներին,

— Ես ոցց կը տամ Մուխտար-փաշային, թէ ինչպէս են կրմանջները վրէժ լուծում:

Քէհան ուրախացաւ, որ կարողացաւ քուրդ բէզին հեռացնել գիւղից, զրաւել Մանսուրին, մանաւոնդ քանակի հրամանատարի թիկնապահի սիրառ Բայց Թագոսն արդէն համոզւած էր, որ գեղի վրա տժան չէր նստելու այդ ծառայութիւնը: Գաւուդ-բէզի որկորացին պահանջների առթիւ արւած հրամանները, նրա խոհարարի անվերջ պահանջները, վատ էին աղգել Թագոսին, սա արդէն զգացել էր, որ կըքերին ըստիկացած էր Բոսֆորի տփերից ու զարկւած պաշտօնակալը և գիւղն տժան չէր ազատելու բազտից երես առած ձրիակերից:

Թաշիդ բէզի շնուանալուց յետոյ, գաղանի խորհուրդ կազմեցին Գաւուդ-բէզն ու Մանսուրը, իրենց ներքին որոշումները կայացրին, ծրագրները կազմեցին: Այս ժողովը թէւ կէս ժամից աւել չէ տեսեց, բայց

քէհաի ու Թագոսի համար ամսից երկարեց: Սրանք սրգէն յուսահատութեան գաղաթնակէտին էին հասեր երբ սրանց ներս կանչեցին և ասին.

— Քէհա, զուք գիւղի, որ պետութեան բարձրագոյն դռից ամէն օր հրամաններ ենք ստանում, որ ձեզ պահպաննենք, լեռնականներին և բաշիբոզուկներին զիմագրենք, որ ձեզ չը կողոպտեն: Գուք համոզւած էք, որ կենտրոնական վարչութեան հրամանների համաձայն, եթէ մենք գիշեր-ցերեկ չը հսկենք, այս վայրենիները ձեզ կուլ կը առն: Գիտէք, որ եթէ մենք աչքերս զոցենք; Ի՞նչ խաղեր կարող են խաղալ այս արիւնկըզակները: Այս բոլորը ձեզ քաջայանի լինելուց յետոյ, դուք եւ փոխադարձաբար պիտի նպաստէք մեզ, շահէք մեր սրտերը, մեր զինւորականներին պիտի գոհացնէք, կերակրէք և օգնէք, որ անձնելիրաբար շարունակեն իրենց գործը: Այս բոլորը յայանեցէք ույաթին, պահանջեցէք, որ չը խնայեն և իրանց նպաստը առատութեամբ հասցնեն վարչութեան, որ զիմագրում է, թէ արտաքին թշնամին, թէ ներքին չարագործներին, որոնք սպառնում են խաղաղ ազգաբնակութեան: Թո՛ւ ամէն մարդ իւր յիսլի նւիրատւութեամբ մասնակցի պետութեան այս ճգնաժամին:

Այս Ճամին ըսութեամբ պատասխանեց քէհան, զլուխը քաշ գցած, աչքերը գետին յառած, արձանացած մնացել էր կտնդնած տեղում՝ ձեռքերը գօտիից կախած: Մի քանի վայրկեան այնպէս էին մնջել բոլորը, որ օճախում վառւած թիթէնի թսթոցի ձայնն էր թագաւորում տանուտիոջ ընդունարանում: Ոչ ոք սիրտ չէր անում յոսութիւնը խանգարել մոլորւոծը չէր

իմանում ի՞նչ պատասխանել, ապուշանգայ էր դարձել:

— Քէշա, յարեց Մանսուրը, թիկնապահ բէզի յորդորը հայրական խրատի ու օրհնութեան փոխարէն ընդունիր, է՛լ մի' կանգնիր, մի' ժամանակդ վատնիր, գնա առաջ և նրա պատգամնիրը կատարիր: Ամենից գիտուրը մեզ մի' մոռանալ, եզը կալից, մշակը դէզեց պիտի կշտանայ: Մեր ատամնավարձը առանձնապէս կը պատրաստես, թէ չէ, ձեր պատրաստած սեղանից պատառ չենք վերցնել: Դու ես իմանում, լաւ լսիր, որ վերջը ըլ զզջաս:

— Մանսուր աղան լաւ ասաց, շարունակեց Գաւուդ-բէզը, մենք այսօր ձեր հովիւներն ենք, օրէնքը մեր ձեռքն է, դուք էլ մեզ էք յանձնւած, ինչպէս ցանկանք, այնպէս կը դարձնենք գործը: Հետեւարար ամենից առաջ դուք պարտաւորէք մեզ շահեր, գոհացնել կշտացնել, որ մենք էլ մեր կեանքը ձեզ համար չը խնայենք: Դէհ, է՛լ մի' սպասեր, քէշա, գնա գործիտ, շտապի՛ր:

Քէշան խսկապէս արձանացաւ, նա ոչ միայն չըմբոնից վերջին հրամանները, այլ մինչև անդամ տեղից չէր կարողանում շարժւել: Թագոսը չէր յանդինում պաշտօնականների ազքին երկել, բայց չէր էլ կարողանում քէշաի տխոռից հեռանալ: Նա մթնումը կանգնած լսում էր և խորհուրդներ էր տալիս քէշաին: Երբ վերջինս ուշակորոյս արձանացել ոչինչ չէր լսում, բորբոքումից քիչ էր մնում Թագոսի սիրտը ճաքէր: Է՛լ չը կարողանալով դիմանալ, Թագոսը առիքից կախւած գերանդին ցած իջեցրեց, նրա պոչով երկու երեք անգամ այնպէս խիստբոթեց քէշաի կողերին, մինչև սթափեցրեց ու ճարպիկ յուշարարի նման թելաղրեց, որ

պատասխանի: Քէշան ուզզւ եց և ողորմելի ձայնով ասաց:

— Բէզե՛ր, ախար մի ամիս ըլ կայ, եկաք մեր գեղը, եղած-չեղած ցորեն, գարի, կորկոս, ալիւր, իւղ, պանիր, կով, ոչխար, փող, ինչ որ ունէինք-չունէինք տարիք: Մենք կտրեցինք մեր մանուկ-մատղաշների բերանից, տւինք, որ Սուլթանի զօրքը նեղ չապրի: Մի ամսի ընթացքում ոչ կալ ենք կասեր, ոչ կովերս են ծներ, ո՛չ էլ դռներում գառ, կամ ուլէ մնացեր որ անխնայ առաստառատ տանք: Տան գլուխ մի մի զյկ արջառ է մնացել եթէ ուզում էք, որ քաղերս հանդում մնայ, կալերս էլ անկաս, մենք էլ սովից կոտորւենք, քաշեցէք, տարիք: Մնում ենք մենք ու մեր մանրուքը, թէ պէտք է, մեզ էլ տարէք, ծախեցէք, պրծնենք:

— Տո՛, անհաւատ, խո՛զ, գոռաց թիկնապահը, այդ է քո պատասխանը:

— Զեր հախից միայն քրտերը կարող են գար ասաց Մանսուրը, ոտք ելաւ ու շարունակեց: — Զարժէ ձեզ հետ պատւով վարւել պէտք է թակել ձեր գոռւխը, որ ըմբոնէք ձեր պարտականութիւնը:

— Յո՛ւն, անօրէն, գոռաց Գաւուդ-բէզը, գնա՝ ժողովուրդին յայտնիր իմ կամքս և պահանջու: Արել մայր ըլ մտած եթէ ըլյանձնես ուզածս, գլուխդ գետկիցդ կացնով բաժնել կը տամի

Ը

Քէշան ընկճւած գանգազում էր ընդունարանից դուրս գալու, որից Մանսուրը բորբոքւած՝ զիրքից առաջացաւ, մի քանի սոսկալի մարտակի հարւածներ տեղաց թշւառի դէմքին ու զլմին, թարտքամի վայել հայոյանքերով, որպէսզի սարսափ ազգէ և նպատակին հասնի: Թագոսը չը կարողանալով զսպել կրքերը, առաջ անցաւ, բանեց Մանսուրի կուռն, ոլորեց և խլեց մարտակը, միջոց տւեց ծերուկին ընդունարանից դուրս սողալու:

— Անօրէն, գեավո՛ւր դու յանդդնում ես ձեռքիցս մտրակս կորդել, ասաց ու գաշցինը պատեանից քաշեց Մանսուրը, մզեց թագոսի փորի կողմը, որ աղիքները դուրս թափէ, բայց սա այնպէս սոթաց, որ հարւածը սայթաքից: Էլ համբերութեան սահմանն անցել էր, գատողութիւնը չէր իշխում, թագոսի աչքերը դարձան, նա իր պողպատի թաթերով կանեց Մանսուրի գաստակը, մի այնպիսի կից հասցրեց աւազակապեաի աճուկների մէջ տեղը, որ նրա շունչը կարւած, թաւալեց ընդունարանի միջի հող յատակի վրա: Թաւուգ-բէգը երկիւղից սկսեց բորբոռալ ձիաւորներին ու ծառաներին կանչել: Թագոսը Մանսուրի գաշցինը ձեռքին շողշողացներով դուրս ելաւ, կարեց աւազակների խումբի շղթան, զիմեց տուն: Սրան նկատելու պէս քարացան աւազակները, — «Կարձ թոփիուզն է,» — շր-

շնջացին և ոչ ոք սիրո չարաւ նրան դիմադրելու:

— Մանսուր-ազան մեռաւ, Մանսուր աղախն սպանեց, հասէք, օղնեցէք, բռնեցէք այդ գեաւուրին, այդ խոզին, թէն գորգառում էր Գաւուգ-բէգը, բայց նրա աղաղակը, հրամանները ոչ մի ազգեցութիւն չը թողին, լսող չը կար Թէարաքէամա ձիաւորները վազուց ճանաչում էին Թագոսին, նրանք փորձւած էին, այդ հայի հարւածների յետքերը նրանց մարմից գեռչէին անհետացել:

Մանսուրի դիմակնացած, տարածւած վիճակը, ձիաւորների քարացած անշարժութիւնը այնպէս վասներգործեցին, որ Գաւուգ-բէգը զդալով ճգնաժամի սաստկութիւնը, դուրս եկաւ հիւրասինեակից, գոռաց.

— Ի՞նչ էք սառել, մնացել իսլամի ախոյեաններ, ո՞ւր է ձեր հաւատը, քաջութիւնը: Միթէ ձեր մէջ մի խոկտան միւսիմ էլ չէ մնացել, որ ջէշէննէմի հիւրի փէրիի և վայելքների բաղձանքով անձնազոհ առաջ մրցւէր և տապալէր այդ կինձին, որ անտառից փախել, մտել է մեր անսասունների վոհմակների մէջ: Միթէ դուք արժանի էք միւսիմ անւան, քսնիոր վախենում էք ձեր մի ողբումելի ույափից: Եթէ ձեր աչքը սարսափեցրել է մի գեաւուր սարուկ, ինչպէս պիտի դիմաւորէք մեր կրօնի թշնամուն և նրա գնդակներին:

— Բէ՛զ, ասաց ձիաւորներից մէկը, սրան Թոփիուզ էն կանչում, ում հետ որ ընդհարւի, փշրում է, տապկացն ում է: Սա հասարակ ույափիթ չէ, ջինի սերունդ է, սուրն ու գնդակը չեն ներգործում դրա կաշու վրա:

— Միթէ չէք իմանում, որ «ջիներին» էլ հրա-

մայում է մեր մարդարէն և Ալլահը թզլ չի տալ որ
«չէ յթանը» մօտենայ իրեն հաւատացեալներին:

—Մարդարէն շատ հեռու է, Ալլահն էլ եր-
կնքումն է, մինչև նրանց հասնելը, Թոփիտովը աղում
է ալիւրի նման, խարբալում, թողնում, ասաց քժի
տակ ձիաւորներից մէկը:

Մանսուրի անգղայ վեճակը բոլորովին հիասթա-
փեցրել էր նրա ընկերակիցներին, որոնք կարծում էին,
թէ իրենց առաջնորդը զոհ էր գնացել Թագոսի դա-
շյնին:

—Զեղ մօտ ո՛չ թէ միւսիմի, այլ տղամարդու
նորհք էլ չէ մնացել: Ափսոս, որ ես չէրքէզներիս
հետս վեր չառի: Նրանք գեաւուրից երես գարձնող չեն:

—Զեր չէրքէզներին շատ ենք աեսել, մրթմը-
թաց մի ուրիշը, այնտեղ, որտեղ Ղարափափաղն ու
Թէարաքեաման սուր չեն կարող շարժել, չէրքէզը եօթը
փարսախ հեռու է փախչում:

—Քարացել էք, անզգայացել էք, անամօթներ,
ասաց Գաւուգ-բէզը, թողէք, ետ դառնա այդ գեա-
ւուրը, ինձ էլ սպանէ, դուք էլ Մուխտար-փաշախն լուր
տարէք, թէ այնքան անձրկած էք, որ ձեր աչքերի
առաջ մի սարուկ հայ սպանեց ձեր հրամանակալին:

Այդ միջոցին Մանսուրն սթափւեց, թէև հար-
ւածի ցաւից չէր կարողանում շարժել, բայց լսելով
Գաւուգ-բէզի վերջին խօսքերը՝ ներսից խեղդւած ձայ-
նով, կցկոտը բառերով ասաց.

—Այ իօմէլ, չասան, Օսման, Մուսա՛, այ ձեր
կանանց լաշակը փաթաթեմ ձեր զիսին, հայ: Տո՛, ա-
նամօթներ, այ անթասիբներ, մրթէ այնքան էլ աշ-

խոյժ չունիք, որ գոնէ կարողանաք մի քարի ետև
անցնել և մի գնդակ էլ է ուղղել այդ օձի ծնունդի
թիկունքին:

Մանսուրի ձայնը ոգեորեց նրա ընկերակիցնե-
րին, որոնք համոզւած էին, թէ Թագոսի հարւածն ոչ
միայն անբուժելի, այլ անմիջական մահառիթ էր: Նը-
րանք իսկոյն այնաշունելը ձեռքերն առան, իրար ետե-
ւից գիմեցին Թագոսի տան կողմը, գնդակներ արձակե-
լով, գիւղը սարսափ տարսափ տարսածելով:

Թագոսը դեռ տուն ըլ հասած, արդէն զգացել
էր ձղնաժամի ահաւորութիւնը և շտապել էր զլուխը
տուներով փախչելու: Նա տունն ու լծկանը մօրն ու
կուջն յանձնեց, կարեոր հրամանները տալրոց յետոյ,
ձիաւորւեց, Պապօին էլ գաւակն առաւ, մինչև Ման-
սուրի աւարառուների յարձակման քոպէն, ճանապարհ
ընկաւ դէպի Արասու: Քէշափ որդին՝ Սաքօն, Զքէն, Գա-
ւիթն, ու Մուքօն անմիջապէս հետեւցին Թագոսին,
բայց դեռ գիւղի կալերից գուրս չեկած աւարառունե-
րը գիւղի անցքերում որոտացրին իրենց հրացանները:
Մանսուրի մարդիկը փախստականներին տեսներով, քա-
ջալերւեցան, ձիաւորւեցին, որ նրանց հետեւն, բռնե-
լու, կամ բոլորովին փախցնելու մտադրութեամբ: Բա-
րեբազառութիւնը այնտեղ էր, որ Թէարաքեամանները ցըր-
ւած էին զիւղում, ձիերն էլ սաստիկ յոզնած: մինչև
պատրաստւեցան, ճանապարհ ընկան, Զէրմալի գիւ-
շերապահները մտան ձորը և ապառաժում պատսպար-
ւեցին: Մանսուրի կամաւորների յոդնած ձիերը չէին
կարողանում ցեխերը կարել-անցնել, համնիլ փախող-
ներին, այնպէս որ գիւղից կէս փարսափ հեռանալուց

յիտոյ, ետ դարձն իրենց առաջնորդի և ընկերակիցների մօտ, կասկածելով որ նրանք աւարի չաղ բաժինը իրենց կը պահեն և ձեռքելր բան չի մնայ:

Մօտ յիսուն հոգի ձիտւոր ընկել էին գիւղի փողոցները, մորակում էին պատահած ծերին էր պառաւին էր երեխային էր պատանուն էլ գազանի նման յարձակում և գահիճի նման վիրաւորում, կորատում էին դիմագրողներին էր անձնատուր լինողներին էր փախչողին էր յանձնողին էլ Սուզն ու շիւտնը տիրել էր գիւղին, նրանց մորմոքի, հառաջանքի ու ողբի ձայնը տարածւել էր ամէն կողմէ Երիտասարդ գիշերապահները գիւղից հեռանալուց յետոյ, Դաւուդ-բէզը դուրս էր եկել քէհափի բնակարանից և անձամբ էր առաջնոլ դուռ աւագակ-ընկերակիցներին: Նրա աղաղակներից խրախուսւած, Թէարաքեամաները լրբարար մանում էին սրա-նրա տունը կողոպաելու, քաշելու, տանելու ինչ որ ձեռներն ընկներ:

թ

Մանսուրը այնքան էր թակ տւել քէհային, որ թշւառն անզգայ տարածւել էր ընդունարանի կողքի տիսոսի սալայատակի վրա: Ծնչում էր, բայց կենդանութիւն և զգացում չէր մնացել նրա ջղերում: Ցաւն ու կսկիծը այնպէս էր շմացրել, որ ուշքը կորցրած, չէր ըմբռնում, թէ ինքը գանակոծ գլոււած էր ախոռի անկիւնում: Նրա փոքր եղբօրը՝ Խաչօխն նոյնպէս արիւ-

նաքամ շղթայած զլորել էին ախոռի քովի մարաքի հողայատակի վրա և գուռը վրան փակել: Արանց հասած որդիքը մշակները, հոտաղներն ու նոքարները փախել, հեռացել, թագնւել էին՝ զլուխները փրկելու յուսով, իսկ Սաքօն հետեւել էր դիշերապահների խմբին:

Տանը՝ երկու եղբօր կիները արտասուքներն աչքերին, ողբը, մորմոքն ու հառաջանքը շրթունքերին, յաշակներով երես ու գունչը կալնած, շուռ էին գալիս թոնրի շուրջը, կերակուրներ պատրաստում, որ իրենց ամուսինների գահիճների որկորները յագեցնին, քմքերը քաղցրացնին, ջղերը զօրացնին, որ վերակազդուրւելով, էլ աւելի անզթօրէն մտրակին իրենց սիրելիներին: Պառաւ նանին սաքիւն նստած օրորում էր կաթնակեր թոռի օրոցը, անդադար հրամաներ կարգութիւններին, որոնք եռացրած ջուրը տաշտն ածած մի տասնեակ հաւեր էին փեարում, որ խորովին: Օրը վերջանալով էր, իրիկնայ հովերն սկսել էին, երթիքից յուսաւորւած աշխանան արդէն մթնել էր, հաղին բան անողները իրար նկատում էին:

— Աղջէ՛ Շողե՛ր, մութն է, վեր կաց ճրադ վասնի՛ր, ասաց պառաւը սաքիւից—նստած տեղից: Հաւերի բնրուները լաւ մաքրեցէք, թէ չէ անօրէնները պատճառ են փիսուում աներո կրակ զցելու և մընացորդին էլ վառելու:

— Հողեմ ու թաղեմ ես զրանց զլուխը տասց քթի տակ զողերը, հօրս ցաւը ուտեն, երթան հանգստարան պառկեն: Անգութ սկեսուր, տե՛ս, հէ՛ս պէտքըն է, թէ անհաւատները, սարի ողէս տղերքըն զլորել են շղթայի տակ տքացնում են: Գոսացել ընկել է

սաքիւն, առանց խղճահարւելու հրամաններ է տալիս:
Զո՞ռս լակեն, գոռ՞զս լափեն, թող քիչ էլ փետրոս ու-
տեն, խո՞չ ծակել փետուրը փորելը ու չի՞ դուրս գար:
Աստւած, էս ի՞նչ սոսկալի տանջանք ես զրկել մեզ հա-
մար:

— Նազեր, ասաց պառաւը, բմբուլները մի ցրիւ
տայ. թոնրից խանձահոտ բարձրացաւ: Մեղք է, ափսո՞ս
է, փետրածդ լից սոսկակը: Զարչին բնբուլը կըգայ
աշունը կտանի, ասեղի, թելի, կոճակի ու մանոցի գե-
նը դուրս կը բերէ:

— Երկաթ է, քա՞ր է էս քաւթառը, շարունակեց
զողերը մրթմաթալով: Ասլանի պէս այնիքը մեռնում են
շղթայւած, թոռները ցրւել են, կթանն ու լծկանը քա-
շել տարել են, տուն, գուռ գարտկել նա թելի ու ա-
սեղի հոգան է քաշում: Ո՛, անզդայ կո՞իկ, խեղան ունեցիր
է, գոնէ լոիր, ձայնդ մի՛ բորձրացնիր, ձեթ մի՛, լցնիր
էրւած սրտիս:

Նազերը մեծ ներոջ մօտ չէր յանդգնում խօսիր,
նա միայն հառաջում էր, արտասունքները զլորւսւմ
էին այտերով, ուշքը, միտքը հեռաց ած, կենալոնացել էր
Խաչոյի շուրջը, նրա վերքերով ու շղթաներով էին
զրաււած: Նազերը հառատացած էր, որ անօրէնները
կալանանաւորներին քազաք էին տանելու և զլորելու
միջնարերդի անդունդից: Այս տիսուր մաքերով նա երե-
ւակայութեամբ տեսնում էր Կարսի միջնարերդի տակ-
ռաժների դադաթից գլորւած թշւառների պատառուտած
գիտեները, արիւնողող քարքարոտները և ազռաւների
խնձոքը՝ այդ անթաղ գիտեների շուրջը:

— Նազե՞ր, ասաց յանկարծ զողերը, վեր կաց,

Հերիք թափես էդ արտասուքները: Գնա, գնա, ձրաղը
բեր, մութն է, գիտես, թէ մեր դուռը զարկին:

Մինչեւ ձեթի ձրաղի բերելը, յուծկին վառե-
լը՝ աղմուկը սաստկացաւ և դուռը բացին: Այդ յար-
ձակման վաղ էր սպասում պառաւը, նա մանուկ հա-
սակից ո՛չ միայն Բէհրուդովի ու Պասկեիչից պատերազմ-
ներին վկայ էր եղել, ո՛չ միայն տկանատես էր եղել
Լեզգին, Զերեզդ, Ղարափափախ, Քուրդ աւարտուների
անթիւ յարձակումներին ու սրածութիւններին, այլ
մինչև անգամ գերի էր վարւել Թաւրիզ ու Գաղստան
և ետ էր եկել շնորհիւ հօրը հնարագիտութեան: Նո-
րա տեսած սև օրերի համեմտու այս աղէտը հարսնիք
էր: Մերկ սրերով ներս խուժող աւազակներին նկատելու
պէս՝ ոտք ելաւ ու ասաց:

— Զողե՞ր, նազե՞ր, թոնրանից դուրս մի՛ դաք,
աներկիւղ ձեր հաւերը պոպկեցէ՛ք:

— Ո՛վ երկնաւոր թագաւոր, էս ի՞նչ սև օրը
թողե՞ր, ասաց զողերը:

— Զը մեռանք էլ է, որ պրծնէինք, հառաջելով
մրմիջաց նազերը: Ի՞նչ էր կամենում, բէդե՞ր, ասաց
սուքիւց պառաւը, միթէ շէրիաթը թոյլ է տալիս, որ
անծածկոյթ կանանց յարկի տակ խուժեք, տռանց
կանխապէս ազգարարելու:

— Լոի՞ր, կախարդ, լեզու գ կարել կը տամ, մո՞ւր-
տար: Դու չե՞ս կարող մեր շէրիաթը բերանդ առներ
կամ մեզ յիշեցներ: Ցած իջի՞ր, պատասխան առ՞ւր, ա-
սաց Գաւուզ-բէդը կատաղած:

Իսկայն աւարտառուները ծակեից վար իմափեցին
դօշակ, բարձ, գորք, փոեցին, իրենց առաջնորդի համար

տեղ պատրաստեցին։ Պառաւին չը թողին, որ իրեն ոտքով ցած գայ, քաշեքաշ բերին, չոքեցրին տան մէջ՝ բէզի առաջ։ Դաւուգ-բէզը առանց նստելու մարակը օդի մէջ շարժեց մի քանի անգամ և մի լու հարւած տալով խղձալի պառաւի թիկունքին առաց։

—Այս գերեզմանից փախած վհուկ, ասա՞ ինձ, ո՞րտեղ էք գաղել ձեր գանձը՝ ոսկին ու արծաթը։ Ասա, թէ չէ այս լուսէիս աչքիդ առաջ կարտակլ իր տամ երկու զաւակիդ, հարսներիդ, թոռներիդ էլ գրանց հետ։

—Աղա ջան, ոտքերիդ մատաղ, առ հոդիս, պիաի սպանել տաս՝ շուտ արամ, կարել տուր տղիրքիս էլ մանր ու խոշորիս էր հերիք տանջւենք, աղատի՛ր մեզ, բէք, մի ժամ առաջ պրծնենք։ Բէ՛զ, հերիք առանց սրի մեզ մորթէք ու քերթէք, առանց չւանի կախէք ու խեղդէք։ Մենք ձեր ույսաթն ենք, ձեր սրի տակից անցած, ձեր իրաւունքն է, երբ կոմենաք, կարող էք մեր զլուխը առանց դանակի՝ հաւի ձագի նման պոկիլ, թալիլ։ Մեր տունն ու տեղը, ապրանքն ու անսունը, մենք էր, մեծով պատիկով ձերն ենք, տիրեցէք, տարէք եղած-չեղած, մեզ էլ աղատեցէք, հերիք խորոշէք մեզ այս թէժ կրակում։ Առէ՛ք հոդիներս, կարեցէք շնչերս էր, ձայներս էր, պարձնենք։

—Քաֆթառ, ձձում նստած վհուկ, հերիք, լեզիդ տաս, գոռաց աւազակներից մեկը, քեզ ասում են, գանձը տեղն ասա՞ ոչ թէ……

—Լոիր, ասաց Դաւուգ-բէզը, այսպիսի կախարդներից ես շատ եմ ստացել պահանջածս պատասխանը, թողէք, խօսի սիրաը հովացնի։

—Եօթանասունը եօթը տարի է, ամբողջ կեան-

քըս՝ զօր-դիշեր աշխատել եմ, զառը դատել եմ զբաստի նման, հօրս, եղբօրս, մարդիս, սկեսուրիս, սկեօրարիս, տաքերս, ներոջս և տղերքիս հետ, թքրել ձեր անկուշա փաշաների, զարթիէների ծոցն ու որկորը, կիսակուշտ, կիսամերկ ողբով անցկացրել ենք կեանքերս ու օրերով։ Ե՞րբ կարողացանք մուբաշիրի, աշնաի, սուբաշիի ու զարթիէի կոկորդից բան ազատել, պահել որ կարողանայինք արծաթ, ոսկի ձեռք բերել ու գաղել։ Մեր գանձը, մեր հարատութիւնը մեր լծկաններն ու կթաններն են եղեր, մենք էլ գրանցից հազար անդամ էլ դառն ենք աշխատել, որ կշացնենք ձեր անկուշա զարթիներին։ Կալից ու հանդից լծկաններիս կեր հասել է, իսկ մենք կեանքերիս մեծ մասը սարի խոտով, աղւած ու թթւած կանաչերով ենք անցկացրել և աղիքներս մաշել։ Մեր մեղքը շատ է, Աստած չի ետ առնում աւած «աւմանալթը», որ աղատելինք, գոնէ գուք բարի եղէք, աղատեցէք մեզ գերութիւնից, շնչելուց։ Այս որքան աներեսն ենք եղել, որքան պինդ է եղել մեր երեսի կաշին, որ գիմացել ենք այնքան տանջանքներին։ Եօթանասուն եօթը տարւան մէջ եօթանասուն տնգամ փոխւել են մեր լծկանները, իսկ մեր զգերը կը րում են ձեր կապած լուծը՝ առանց թեքւելու։

—Պրծմիր, քաֆթառ կախարդ, սիրտգ հովացաւ, գէ՛հ, հիմի ասա՞ Ճիշտն ասա՞ ո՞րտեղ է գանձերդ։

—Բէ՛զ, որ սորան կարատես, Ճշմարիտը չի խոստավնիլ։ Պէտք է հարսներին ձնշել, ասաց աւարտուներից մէկը, մի քանի մարակի հարւածներ աեղալով պառաւի զիսին։

—Զարկ, բէ՛զ, զարկէք, սպանեցէք, ասաց պա-

ռաւը շունչը կտրւած, հեկեկալով, չերիք շնչեմ, զարկէք
էլ բաւական, է, ինչոր տեսել եմ արևի երեսը:



Այս միջոցին աւազակները մտան թոնրատուն
և դուրս քաշեցին քէհաի և եղբօրը կնոջը, որոնց սոս-
կալի մորմոքին ու աղազակին մարակի հարւածներով
էին պատասխանում անգութ դաշիճները: Անխնայ
մարակեցին, մինչև անդամ թշւառ արարածների կա-
շները պոպկւեցան: Անշափ ստիպեց Գաւուդ-բէզը,
բայց ոչ մի բառ չը կարողացաւ դուրս կորզել սորանց
բերանից: Հարսները սկեսուրի ներկայութեամբ չը բար-
ձրացրին իրենց ձայնը, չը բացին իրենց լեզուն և ոչ
մի պատասխան չը տւին անօրէններին: Վերջապէս ան-
ձարացած Գաւուդ-բէզը հրամայեց, որ քէհաին ու եղ-
բօրը ախոռից բերեն և նրանց ներկայութեան կինե-
րին տանջեն, խօսք դուրս կորզելու տենչով: Գանակոծ-
ւած զառաման մոյրը, երբ տեսաւ իւր գառնաշխատ
որդիքը կիսամեռ վիճակում, ուշքից ընկաւ, մարեցաւ:

Թէև զողերն ու նազերը ուշքերը չէին կորց-
րել, բայց այդ սոսկալի տեսարանից քարացել, արձանա-
ցել մնացել էին: Գաւուդ-բէզը դարձեալ չը կարողացաւ
նորանցից պատասխան կորզել: Այդ ժամանակ նազերի մա-
նուկը աղմուկից զարթեց, սկսեց բարձր ձայնով յար նա-
զերը սթափւեց, դողդղաց, ուզեց գնայ նրան կաթ տար,
բայց աւազակներից մէկը նորան կանխեց, ասելով:

— Բէ՛դ, չե կարելի խօսացնել այս յամառ հայ
քածերին, պէտք է սորանց երեխաներին տանջել, որ ան-
ձարացած խոստովանին: Ասաց ու բալուլի միջեց գուրս
շորթեց մանուկը, բռնեց նրա ազդրից, գլխի վայր կա-
խած ու գառնալով նազերին ասաց:

— Ե՞ր, յամառ քած, թէ չես ասիլ գանձի տեղը,
լակոտիդ բոխկի պէս կը բրթեմ:

Նազերը փաթաթւած չարագործ դաշճի որ-
րունքներին աղերսում էր լալազին:

— Աղա, Աստծու սիրուն, խնայի՛ր երեխայիս,
գտ անմեղ է, ինձ կարարի: Հաւատա՛, արեւ վկայ, որ
մենք գանձ չունինք, խղճա՛ անմեղին, սուրդ փորձիր
իմ վկիս:

— Զայնդ, հեռացի՛ր, գարշելի, դու ինձ ասա,
մւր է դանձերը, թէ չե բրդեցի խոճկորիդ:

Նազերը համբուրում էր դաշճի ոտքերը, ազդըը
աղերսալի ողբով, աղազում էր, բայց անողոք ոճրագոր-
ծը սկսեց մօր աչքի առաջ կարտել մանուկը, որի
սուք առք արին նով ներկւեց ինչպէս չարագործի ձեռ-
քերն ու շորերը, նոյնպէս թշւառ մօրը երեսն ու մա-
զերը: Ել յուսահատութիւնից կատաղած մայրը չը դի-
մացաւ, թիսի նման դաշճի վառ յարձակւեց, որ խլէ երե-
խային, բայց դաժան դաշճը կարեց նորա թեւերն ու ձեռ-
քերը և երբ խերակորցս մայրը յամառաբար մարտնչում
էր չարագործի հետ, կորզելու մանուկի ոսկորները, դաշճը
մոլեգնած խրեց սուրը որդեկորցս մօր կուրծքը...

Տեսարանը զարհուրելի էր: Զողերը մանուկի
անգամների կտոր կատր թափւածը, նիրոջ արիւնի մէջ
շազաղւած գէմքը գիտել չը կարողացաւ, ուշքից ընկաւ

Թաւալւեց գետին, ամուսնի ու սկեսուրի մէջ տեղ։ Գա-
ժան պահապանները ոչ ոքի չէին թողնում տուն մըտ-
նելու։ Ամէն մարդ իր տան խորքում իրենց ցաւով էր
տապակւում։ Քէհափ տանը էլ մարդ չը կար, որից կա-
րողանային բան հասկանար, ուստի աւազակնելին իրենք
սկսեցին տուն, դուռ, բակ ու մարաք խորդարկել, գանձ
որոնել։ Տակ ու վրա արին քէհափ բնակարանը, դուրս
կրեցին, ինչոր ձեռքելն անցաւ………

Ինչպէս Գաւուգ-բէզը խուզարկում էր քէհափ
տունը, նրա ձիաւուրները նոյնպէս քրքրում էին գեղի
համփանների և հոստազների բնակարանները։ Ոչ միայն
յծկանն ու կթանը, այլ մինչև անգամ շինակի անկողինի
տաքից քաշեցին կարպետն ու ջէջեմը, վերմակն ու
բարձը, պղինձն ու պնակը, ինչ որ աչքերը զբաւեց։
Ամբողջ գիւղը ողբի ու սգի մէջն էր, տուն չը կար, որ
կողոպուտի ենթարկւած չըլինէր, վերաւոր չունենար։
Ամէն շրթունք անէծք էր կարգում դաշիճների առաջ-
նորդին՝ իսլամի խալիֆին և ամէն սիրտ հառաջում ու
մրմիջում էր. «—Ախ Ռւսո՞ւս, վախ Լորիս. Ե՞րբ ես գա-
լու, մեզ այս անօրէններից ազատելու։»

Կէս զիշեր էր. Աւարառուները գիւղի կօղոպու-
տը հաւաքեցին քէհափ կալը պատրաստւեցին բանակ
քշելու։ Նիւթերը բոլորը բարձին եղնելին, ձանապահ
դցեցին քսան ձիաւորի հսկողութեամբ։ Գաւուգ-բէզը
Մանսուրի կամքի հակառակ դեռ չէր ուզում գիւղեց
դուրս գալ. Աւազակները ձեռք էին դցել դժոնդրշկած
Մագօին, որին խօսացնումէին մտրակի հարւածներով և
ստիպում էին ցցյ տալ սրանրա թաքստի որջերը։
Գաւուգ-բէզը հարթած գոռում էր.

—Մագօ', կաշիդ քերթել կտամ, եթէ ցցյ ըլ-
տաս, թէ ուր է պահէլ քէհան իւր Զախար աղջկան։

—Բէգ, արեգ վկա, ես չեմ գիտեր, ես երթ ու
դալ չունէի քէհափ հետ։ Նրա տան գաղանիքը դեկրն
անգամ չը գիտեն, ուր մնաց գրացիները։

—Եթէ չես ցցյ տար, գարմաննոցին կրտկ կը
տամ, քեզ էլ մէջը կը վառեմ, գեաւուր։ Առաջ անցիր,
ցցյ տուր։

—Այլում ես, քո կամքն է, բէգ, սպանել հս
տալիս, դու գիտես, բայց զլիսովդ եմ երգւում, որ
չը գիտեմ։

Քէհափ տան ամեն մի պատից ու անկիւնից
ծակ էր բացել աւել Գաւուգ-բէզը, որ նրա թագստեան
որջը և գանձարանը գանի, բայց բոլոր ջանքը զուր էր
անցել։ Նա հաւատացած էր, որ քէհան աղջկայ ու
հարսի հետ գաղել էր իւր թանկագինները, որ այդ
խորանենդ ույան յանդգնել էր այնպէս խոր թագնել
իւր գանձը։ Մագօն գլուխն փրկելու, անօրէնների մը-
տրակներից ու սւիններից ազատելու համար, պատրաստ
էր քէհափ գանձարանն ու թոյլ արարածներին մատնե-
լու, բայց իսկապէս չը գիտէր անցը։

Աւազակները մտան քէհափ քիլարը քրքրեցին
բոլոր թթւի բգուզները, եղի փարչերը, պանրի պու-
տուկները, կաթի տաշտերը դուրս տւին գրանց միջի
բարին, որեւէ թանկագին իր կամ փող գանելու յուսով։
Գաւուգ-բէզը, կաթի տաշտերի ետևի պատի վրայի
խոնաւ ծեփը նկատելով՝ հրամայեց իսկըն պատը քան-
դել, որտեղ մի նեղ անցք բացւեց գէպի ապառաժի
խորքը։ Ոչ ոք չը յանդգնեց այդ անցքից ներս սողալու,

աւազակների հրամանակալը աչքերը ուղղեց Մադօի դէմքէն և ասաց. — Եթէ այս բոպէին ներս չես սովալ ու դուրս բերել եղած-չեղածը, աչքերդ դուրս կը թափեմ:

Այնպիսի հրեշային հայեացք էր ուղղել Պաւուգբէգը, որ Մադօն դւերին մոռանալով՝ սողաց անցքից և ներս սլացաւ: Անցքի միւս ծայրին գտնւում էր քարայրը, որտեղ թաղցրել էր քէհան ինչպէս իր սիրելի աղջկոն ու հարսին, նոյնպէս ազգականների մատաղահաներին, որոնք ողբում էին իրենց ու բազար: Որպէսպի մատաղահաները ըզգախենան, քէհան այնաեղ պահապան էր գրել իր քրոջը, որը գեռահամներին խրախուսում էր: Մադօի մուտքը սարսափ սփռեց քարայրում, որը մթնումը բան ըլ կարողանալով նշմարել անմիջապէս ետ դարձաւ, լուծկի և ճրագ պահնջեց: Երբ նրա ուզածները տեին, ասաց.

— Մի վախենաք, այստեղ են աղջիկները, ինձ հետեցէք:

Աւազակները հետեհցին Մադօին և մի սոսկալի ողբ բարձրացրին այրի մէջ: Քիչ յետյ, Պաւուգբէգի անվերջ պահանջների համաձայն, դուրս քաշեցին թըշւառ արարածներին: Քէհափ Զախուլ-աղջկան՝ Լուսիկին հրամանակալը յափշտակեց, միւսներին էլ աւազակները բաժանեցին իրենց մէջ և Մանսուրի հետ ճանապարհ ընկան դէպի բանակ, հետեկնով աւար տանողներին:

ՃԱ

— Խիստ շատ ուշացանք, ասաց Մանսուրը Պաւուգբէգին, երբ աւազակները որսերը գաւակներին գուգած դուրս եկան գիւղից: Աչա առաւօտ է, մի ժակապած գուգը եկան գիւղից: Աչա առաւօտ է, մի ժակապած գուգը կը բացւի, իսկ մենք տհագին ճանապարհ ունինք կտրելու:

— Ոչի՞նչ, կը հասնենք մեր իջևանը, ասաց Պաւուգբէգը, գաւակի բեռը ձեռքով շոշափելով: Քանի ողբ բէգը, գաւակի բեռը ձեռքով շոշափելով: Քանի ողբ նպատակիս հաւայ, էլ ո՛չ մի արգելք չի կարող ճանապարհ կտրել:

— Մի Զախալ աղջկայ համար արժէ՞ր այդքան սիրտ մաշել: Բանակը Ալաջայից Ղուրդ-թափէ անցկացնենք, ես՝ ամէն իրիկուն Գիւմրիից մի մի շաղալ ուռւնենք, ես՝ ամէն իրիկուն Գիւմրիից մի մի շաղալ ուռւնենք, ովքիցիկ բերել տամ քեզ համար, ո՛չ թէ զայ: Սև աչեայներին դու ձեռ մի ատի, նրանք Ղարավափախներին են, կապուտաչեաները բոլորը ձեզ — զօրականներիդ, պոլսեցիներիդ:

— «Իշալահ», Արփա-չայը կանցնենք, ոռւս աղջիկներին էլ կը տեսնենք, բայց մինչեւ անցնիլը: Այս քափուր աղջկայ համբաւը սիրտս կրակ էր գցել, հիմա հանգստացայ: Սրանից յետյ, որ ուզում էք, ձին քըշեցէք, ես՝ պատրաստ եմ ձեզ հետեկու: Միայնթէ մինչեւ լուսաբացը Գալօյի-գեղ հասնէինք, քիչ քնէինք, հանգստանայինք:

— Մինչեւ Գալօյի-գեղ երեք ժամի ճանապարհ ունինք. էլ մի դանդաղիք, քշեցէք, ասաց Մանսուրը

և մարտակեց ձին՝ առանց ետեւը նայելու:

Նրանք գնում էին սրբնթաց, թէե ձիերը մինչև ծնկները խրում էին ցեխի մէջ: Մանսուրը ուշը կենարոնացրած, ականջները սրած՝ հետամտում էր առմէն մի ձայնի ու շշուկի: Գաւուդ-բէդն անմոռնչ նըրան էր հետեւում:

— Տղերքի ձայն էլ չի դադիս, ասաց Գաւուդբէդը, երբ նրանք փարսախից աւել հեռացած էին 2էրմալիից:

Մանսուրը առանց պատասխան տալու Գաւուդբէդին շարունակում, էր ընթացքը ամբողջ ուշը և լըսիլքը ուղղած դէպ իրենց աւարտառուները: Գաւուդբէդը հարցին պատասխան չտանալով, կրկնեց,

— Ես կարծում եմ, որ այժմ մեր տղերքը աւարդէն Գալօի-գեղ հասցրած կը լինին:

— Դժւար, ասաց Մանսուրը մեքենաբար շարուկելով իր ընթացքը:

Մանսուրն ուշըն հաւաքած, աչքերը չուած գնում էր ճանապարհը, անվերջ սրբնթաց քշելով ձին, որը կարծես տիրոջ խորհուրդն ըմբռնելով առանց ազմուկի վռազում էր ճանապարհը կարելու: Գաւուդբէդի ձին հետամտում էր Մանսուրին, ըստ կարողանալով աքոցը զսպել որից վրովվում էին աւարտառուները: Երկինքը տեղ տեղ ամպամած էր, լուսինը երբեմն լուսաւորում էր աւազակների ուղին, երբեմն էլ մանում ու ամպերի ետեւը, մռայլելով փախստականների հոգին: Հակառակի նման քամին սուլում էր, անվերջ շւշացնում, հեռւից զանազան ձայներ էր բերում ու վրդովում Մանսուրի հոգին: Աւարտառուները փռազում էին,

որպէսզի իրենց բացակայութիւնից օգտւելով աւարը չո գաղեն ընկերակիցները:

Գաւուդ-բէդը չը կարողանալով երկար գիմանալ սրբնթաց երիվարի անվերջ ցնցութեաներին, կամաց կամաց արշաւախմբի ետի կողմը մնաց, այն ինչ Մանսուրը խմբից էլ հարիւր քայլ առաջ էր անցել: Աւազակները Ղանի զիւզի հիւսիսի դաշտից անցան, մտան Մաղարաջզի ձորը և առանց բնակութեան վայրերը մտնելու, զիմեցին Վէզին-զիւզ: Երկու անգամ Գաւուդբէդը մարդ զրկեց Մանսուրին, պահանջեց Մաղարաջզի իջևաներ բայց նա անակնկալ վտանգներն առարկելով Ճանապարհը շարունակեց, որ ժամ առաջ հասնի իրեն ձիաւորներին՝ Գալօի-զիւզում:

Մաղարաջզի արհելեան լեռնալանջի գլխից նոր էր անցել աւարառուների խումբը, երբ ապառաժներից զնդակը սուլելով զրորեց մի ձի, որը կրում էր Մանսուրի ընկերներից մէկին, 2էրմալեից յափշտակած մի տասն ու չորս տարեկան աղջկայ հետ: Այս զնդակին հետեւեցին մի տասնեակ զնդակներ ևս, որոնցից մէկը միայն կպու աւազակներից մի ուրիշին, որը ճշաց ու զրորեց: Մանսուրը բաւական առաջ էր, նա մտրակեց ձին ու սրացաւ, իսկ Գաւուդ-բէդի երիվարը յոդներ քըրտինքի մէջ կորել էր, բանի որ հասաւփոր տէրը չէր ուզում բաժանել ձեռք բերած աւարից՝ բէջափ 2ախալ-լուսիկից: Գնդակները կրկնեցին և երեքնեցին վայրկեանական արագութեամբ: Աւարտառուները ըմբռնեցին, որ զնդակները շէշխանայ թւանքներից չէին կարող այգքան արագ կրտկւել: Գաւուդ-բէդը կասկածելով թէ ինչ որ ուստական մելցիայի զնդի հետ

զործ ունի, որոնք միայն այդպիսի կատարելագործւած զէնքեր ունեին, հրամայեց.

— Բեռները թեթև յրէք, աղջիներին վար իջերէք և սաստիկ մուսակեցէք, որպէսզի զբանց ողբեձայնով զբազւի թշնամին և ձիերը մորակելով առաջ անցէք:

Թէարաքեամաները անմիջապէս իրենց գաւակներից վար բերին յափշտակւած աղջիներին և խուրչիներից թափեցին ծանր բեռները, անդադար նժոյգները մորակելով դէպի Վէպին գիւղ։ Ապառաժից գնդակները գագարեցին, մի քանի ձիաւոր առաջացան և ըսկան հալածել փախստականերին, որոնք անգագար մըտակում էին իրենց երիվարներին։ Սրանց հետեւց մի ուրիշ խումբ, որը շեզւելով հետապնդողներից, գիմեցին բարձրաձիչ ողբացողների կողմը։

— Մուքօ՛, ասաց Սաքօն, տեսնես աղջիներին ամէնին էլ թափեցին, թէ հետները տարան մի քանիսին։

— Թոփիփուզը Զքէի հետ պիտի գաղաներին հետեւի մինչեւ բանակ։ Ջտապի՛ր, հասնինք, թէ չէ հեմի աղջիները սրառածաք եղան։

— Չեմ կարծել, որ բոլորին էլ թողած լինին։ Երեխ վիրաւորւածներին վլորեցին, իրենք սպացան։ Հարկաւոր է նրանց համնել թէ աղջիները առողջ են, մինչի լոյս նորանց չոռ չի դիպչի, թէ վիրաւոր են, Լողմանն էլ գտնես, չի կարողանալ ազատել։ Պէտք է աւազակներին հետամտել և նրանց զրուելով ամբողջ աւարը ազատել։

— Թոփիփուզը Զքէի, Դաւթի ու տղերքի հետ նրանց հետեւերու է մինչեւ բանակ։ Ջտապի՛ր, թէ չէ

աղջիները մեղք են, լեզունք կը լինին։

Սաքօն հինգ ըսպէից Մուքօի ու Ղաղարի հետ հասան թշւաս աղջիներին և դադարեցրին նորանց աղիողորմ սուշն ու ողբը։ Ինչափ շւարած, մնացին երբ իմացան, որ բալորին թողել-փախել էին չարագործները։

Լոյսը բացւում էր, արշալոյսը շողշողալով մանիշակի բոցերով պատել էր Արագածը և բարձունքից նազելով յածրանում, տարածւում էր Ջիրակի գաշտում։ Արդէն ազատ բողոքն իրար տեսնում և զանազանում էին ամէն բան։ Տղերքն իսկոյն նկատեցին ճանապարհի այս ու այն կողմը թափւած իրերը, որոնք աւազակները շպրտել էին, իրենց բեռնը թեթեացնելու նպատակով։ Երբ Սաքօն քննեց բոլորը և իմացաւ, որ նրանց հետ էլ աղջիկ չէր մնացել ասաց։

— Մուքօ՛, ժամանակն ուշ է, նստիր ձիս, քշե՛ր, հասիր թոփիփուզին, ասա, որ աւարն ամբողջապէս ազատւած է։ Թո՞ղ շտապի, վերագառնայ։ Լոյսը բացւեց, կարող են փորձանքի հանդիպել։

Կէս ժամ յետոյ թափուը խմբով ետ դարձաւ ընկերների մօտ, խորհուրդ արին, զնացին Եահնիների այրերում պահւելու, մինչեւ գիշերային խաւարը։

ՃԲ

Առաւօտ էր, երկինքը պայծառ, օղը զով ու քաղցր, արեխ ճառագայթները բիւաւոր ցողերով պէծեր էին սփռում, փայլնցնում, զւարթացնում բոյս ու

կենդանութիւն։ Գալարը վարթամացել ճոխացեր երկարել ու ցողուններ եր տւել, խոռը սկսել եր՝ գեղներ, կապտեր, արակերի մէջ հասկերը իրենց փնջիկներին եին ցըց տալիս և մեղմիկ անընդհատ հօվի հետ ատրուքերւելով շնչում էին ու սուլում, աղների կողըին շարւած պառաւների նման վահեն իրար պատմելով։ Ջինականը պատրաստում էր խոռհարքի դուս գալու, հերկողները հանգից գուրս չեն դալիս, թէ կեանքը վանդի մէջ էր, անչափ որ ապրելուց զղւած էին։ Այդ դարնանը հերկողներն էլ շատ քիչ էին, քանիոր 2էրմալեցիներից շատ քերը միայն կարողացել էին նորից լրձկան ճարել կամ մօտակայ գիւղերից վարձով դութան բերել։ Ծերերը զլիները ժաժելով խոռհարքի համար գերանդիներ էին սարքում, իսկ երիտասարդներն ու գեռահանները բարձր կոռւրներում հաւաքւած զնում էին հեռաւոր բարձունքներից անցը, դարձր, ականջ դնում թնդանօթների թոյլ թնդիւնների ձայնին, խօսում, պատհում էին իմացածներն ու լածները և ժամանակամ սպասում պատերազմի նորութիւններին։

Յանկարծ հեռուից երեաց մի խումբ ձիւոր, որը սրբնթաց իրենց կողմն էր արտառում։ Այսպիսի խմբակներից պատերազմի առարին շնչականը երբէք լուրան չէր կարող յուսար։ Պարզ էր, որ եկողները պիտի կեղեքէին, քամէին թշւառի արտառուքը, քաշէին, առնէին իրենց ցժերի պատած չափով։ Իսկ թշւառից որքան էլ որ քիչ պոպկէին, ինչքան էլ որ աննշան բան յափշտակէին, գարձեալ իր կշռով խեղձին անչափ զրկանքների ու գառնութիւնների էին մատնելու, քանիոր ձքաւորը ինքըստինքեան տապակում էր կարօտու-

թիւնների մէջ և գալարւում էր քաղցի, սովի ժանիքներում։ Խումբը գեռ գիւղի հանդը ըս հասած, մտատանջութիւն ներշնջեց գիւղացիների սիրալ։ Մի քանի բոպէից յետոյ արշաւախումբը մասու զիւդ գիմեց քէհարի բնակարանը, զարհուրանք սփոելով շնչականների հոգիների խորքերում։

Քէհան ու եղբայրը հիւանդ տանջւում էին անկողինում, այնպէս որ տզգուկան-դրացիները, ծառաները զիմաւորեցին և ընդունեցին Կարսի սատիկանական աստիճանաւոր Ալի-աղային և տեղաւորեցին նրա բոլոր ձիւորներին։ Էլի զգերը պարտաւորւած ընկաւ անից-տուն կողոպտելու սովատանջի թագցրած պատառը, որպէսզի հիւրասիրէն զարթէի աստիճանաւորին և ձիւորներին։

Ալի-աղան քննութեան չէր եկել, բանակի հրամանատարի թիւնապահի և արտակարգ քննիչ Պաւուգ բէզի զեկուցման համաձայն, երբեանի-հարբը (զինւորական դատարանը) որոշել էր 2էրմալիի քէհան, տասը համբախի, քսան երիտասարդի բոնել և յանձնել զինւորական բանալը որպէսզի տանջեն, մինչեւոր խոստովանին, թէ ինչ ոռւս զօրտական է եկել 2էրմալի, ովքեր են արձանագրւել նրա մօտ ոռւսական միլիցիայի շարքը մտնելու և ինչ զէնքեր են ցրւել գիւղական երիտասարգ զիշերապահներին։ Երբեանի-հարբը հրամանագրի էր Կարսի միւթասարիթին (գաւառապետ) Պաւուգ-բէզի ցուցակում նշանակւած անձնաւորութիւններին անմիջապէս յանձնել Կարսի միջնարերդի վերտեսուչին։ Ալի-աղան գեռ ըս հանգստացած հիւրներդներին առաց.

— Ա՞վ է ձեր բէհան:

— Աղա, տասց քէհափ քրոջ ամուսինը՝ ծերունի Սուքօն, նա անկողինում անզգայ տարածւած է: Այնքան նրան տանջեց ու ծեծել աւեց Մանսուրը, որ ուշք չը կայ վրան, լեզու չունի, որ կարողանայ ձեզ բան խօսել:

— Այս բոպէիս, նրա զիտկն էլ է, այստեղ բերէք:

— Աղա, նա ոչ միայն չի կարող ոտքի կանգնել, այլ մինչև անգամ չի ըմբռնում, տասց ծերունի Սուքօն, բայց նրա խօսքը կարեց տատիճանաւորը:

— Տղե՛րք, գնացէ՛ք, մաէ՛ք տունը, թէ չը դայ, քաշեցէ՛ք լաշը, բերէ՛ք:

Անմիջապէս սոված զարթիէները ներս խուժեցին, սկսեցին անկիւններում բան որոնել, որ իրենց աշխատութեան վարձի փոխարէն փերջեն, բայց Մանսուրի մորդիկը այնպէս էին գարտակել, որ հիւանդին կոտրած կժի տակով էին ջուր խմացնում: Սուքօն նրան արաւ տղերքին, որոնք հիւանդի գօշակի չըրս ծայրէց բռնելով բերին ընդունարան քէհափ անզգայ մարմինը և դրին սատիկանի առաջ: Թշւասը մի միայն շնչ չում էր, ոչ կարողանում էր խօսիլ, ոչ էլ նշաններ առեր: Ալի աշան զգւեց նրա տեսքից և կատաղեց, երբ յայսնեցին՝ թէ տունը բոլորսին կողոպաւած է:

— Լաւ, գուրս տարէ՛ք, բայց տանից գուրս չը հանէք: Յեսայ քթի տակը մրմնջաց.— Ճո՛ւն, թէտրաքեամաները և քրդերը հացերս կտրեցին: Տները դարտկեր, քաշել տարել են, մի բան չեն թողել, որ դոնէ մարդ կարողանայ մի ամսայան ապրուստ գուրս բերել Խոճիկ չը կայ, թոշակ չեն տար այնպիսի գործ են յան-

ձնում, որից հնար չը կայ տասը փարայի օդուած քաղեր: Այս էլ եղաւ ծառայութիւն: Անօրէն Մանսուրը հաւաքել, աւիլել ու տարել է, տականքն էլ է չե թողել այս նեխւած լաշեց ինձ ի՞նչ շահ, որտեղ քաղաք տանելուց մեծաւորներիս ի՞նչ օգուտ: Այսպէս էլ վիճակ կը լինի, ևս մեռելաթաղ եմ, ի՞նչ եմ, որ այսքան աանջանքից յետոյ, մի սպանւած դիակ տանեմ քաղաք: Այսպէս էլ կառավարութիւն կը լինի. ոռջիկ չեն տար, բաւական չէ, մարդու աշագին ծախսերի են ենթարկում և այնպիսի գործի են զրկում որտեղեց մի սկ փողի էլ շահ չը կայ: Հողեմ ևս ձեր զլուխը, «Երքեանի-Հարբ» չէ, զահը ու մար, իբրև թէ եթէ այս զիտկը տանէք Կորս, բերդը պիտի ազատէք Խուժների ձեռքից: Փոխանակ թշնամու հետ կռւելու, խեղճ ռայտմի հետ են կռւում: Բայց ևս զատարի չեմ կարող գուրս դարպէտք է այս անօրէնների կաշին քերթեր, փող գուրս բերել: Էյ, Օսման, Վելի, գնացէք, շռւտ մտէք համիաների աները և բոլորին քաշեցէք, բերէք: Ամէն մէկի տունը, հասկացաք, ներս մտէք և քաշէքաշ բերէք……

Երեկոյ էր, արեգակը թերւել էր Աղ-Բաբա տարերի զագաթին, հազիւ մի նիզակաչափ էր մնացել նրա ետել թագւելուն և երեսը ծածկելուն: Տօթը մեզմել էր, զեփիւը մեզմ մամուն ջներով սահում իջնում էր Զալիաւորի բարձունքից և, վիրաւոր որդու վերքերը համբուրելով, արտասուքով թուչելով կտորով գորովալիր

ու վշտալից մօր նման՝ հպելով Վանանդի գաշտի ցանք սերին՝ հովայնում էր առքից, արևից բորբոքւած զետինը: Աղ-թաթաների և Կարաղալէի միջի ահաւոր գաշտում ո՛չ մի անցնրդ, ո՛չ մի կենդանութիւնը, նոյնիսկ երկնքում ո՛չ մի թռչուն չէր երևում: Ըէնը անապատի էր փոխարկէ եր կենդանութիւնը հանգել էր: Կարծես փայրի անասուններն էլ թնդանոթների աշեղ որուներից խռովիր փրտովէ եր զգւած հեռացել էին, խոյս էին տւել իրենց դարերից ու բներից:

Դաշտի մէջ քաղաք առնող Ճանապարհին զուգնթաց առւակի խրամատում երկու լզար արջառ մի սայլ էին քաշում, որի անիւները առւակի հունի քարքարօտների մէջ չէին շարժւում: Սայլի շուրջը քսանի չափ հայ սանչպարներ իրենց անվերջ խրախոյսներով արջառներին առաջ էին մղում, բայց սովոր անասունները քայլերը չէին կարեզանում փոխել, կարծես զգում էին, որ իրենց տէրերին զնդան էին առաջնորդում: Սայլի վրա պառկած էր Զերմալիի քէհան մի պատուսած վերմակի տակ, զարձեալ անդգայ ու անմռունջ, որին շրջապատող կալանաւորները անվերջ հառաջում ու մռնչում էին: Կալանաւորների ոռքերը շղթայւած էր, թեերը հասա պարաններով միմեանց կապիկած: Արանց շրջապատել էին չիւնքեարի՝ Ալլահի աշխարհի վրա թողած շքի պաշտօնակարները—երեսունից աւել ձիաւորւած զարթիէներ, որոնք անդադար մարակում, հայոյում և ստիպում էին արագ առաջ շարժւերու և մինչև արևի մայր մանելը բերդ հասնելու: Ար ազան սասատիկ կատաղութիւնից անդերջ մռնչում և զռում էր զարթիէներին, անդադար մարակել այդ գեաւուրներին,

որ չէին կարողացել Մանսուրի Ճանկից բան ազատել իրա համար բաժին պահեր: Որպէսզի գաժան գահիձների հարւածներից ազատւէին, կալանաւորները իրենք էին քաշում, բարձրացնում, տանում սայլը:

Նցն զիշերը Ալի-աղան կալանաւորներին քաղաքային բանառում պահեց, սայլին, արջառներին իւրացրեց: շինականների արժէքաւոր հագուստելը թիկունքներից հանեցին զարթիէները և առաւոտ վաղտարին յանձնեցին Միջնաբերդի վերատեսչին:

ՃԳ

Մոայլ զիշեր էր ազամի մութը պատել էր աշխարհին: Երկինքը ամպամած, ոչ լուսին կար, ոչ էլ աստղեր էին երևում, մառախուզն էլ պատել էր եահներին: Թէ և թոն չէր գալիս, բայց խիստ անձրե էր սպասւում: Երեք քայլ հեռաւորութիւնից ընկեր ընկերի չէր կարող նշմարել, չէր կարելի քայլ փոխել ու առաջ գնալ: Քամին խսպառ գագարել էր, ո՛չ ձայն, ո՛չ ծպաիւն էր լսում, կենդանութիւնը խաղաղեր, հանգել էր, միայն ամէն չինդ վարկեանից մի անգամ լսում էր

աշեղ թնդանօթի խուլ բոմբիւնը, որտնք արձակւում էին Ալաջյի գագաթներից: Թէև զիշերից երկու ժամ էր անցել բայց ոմբակոծութիւնը անընդհատ շարունակւում էր:

Մեծ — Եաշնիի հարաւարեկեան լանջի մեծ այրի մուռքում նստած էին քրա-հինգ հոգի, ախուր ու անշշուկ դիտում էին շրջակայքը և երկինքը, առանց մի բան նկատել կարողանալու: Ամէն ոռումբի ձայնից յետոյ նրանք էլ հառաչում էին և շնչասպաս սպասում հետեւալ որոտին:

— Սաքօ՛, ասաց նստողներից մէկը, պառկիր մէկ անդամ էլ ականջ գի՞ր, լսիր, թէ սանաձայն չը կաց:

— Հարիւր անգամ ականջ գրի, որ չը կաց, ես էլ չեմ կարող բռնի նրանց քաշել-բերել Այսքան էլ ուշանալ, այսպէս էլ անհրաժեշտիւն, աշա երրորդ օրն էլ լըրացաւ, մեզ այսակա քաղցած, ծարաւ, սրատարով տանջում են, առանց մասձելու, որ փառնդը ամէն բռպէտ մեզ է սպասում կարող են դաշիճները մեզ որոներ, գտնել ու արից անցկացներ թրի ճարակ աներ:

— Լաւ, Սաքօ՛, մի՛ այդպէս էլ յուսահատաւիր, այդքան էլ հեշտ չէ քեզ նման դապաներին արի քաշել:

— Մուքօ՛ ջան, թէ մենք ու մեր դպուիր լինենք, ո՞վ կապասէր այսակա մի բռպէ, լցու ցերեկով, պարզ արեւի տակ, հագարաւոր թէարաքեամի աչքի տուածից էլ կը քշէի, կերթայի, բայց այս աղջեկներին ես ի՞նչ անեմ, ո՞ւր ասեմ, ի՞նչալէս թողնեմ ու դնամ:

— Համբերիր, ուր որ են, զիշերս կը վերադառնան: Քա՞նի որ թօփիփուզը նրանց հետ է, համոզւիր, որ նա անհօգ չի կարող մնար: Անպատճառ մի անակին-

կալ գեպք արգելեց, թէ չէ, նա մի զիշեր առանց մեզ չէր կարող հանգիստ քններ:

Այս միջոցին ներսից մի կանանցի ձայն ասաց.

— Մուքօ՛, Աստուծու սիրուն, մի թաս ջուր գտիր, մեռանք Է: Անձրեւ չի զալիս, որ ամանները գուրսը գնէք ու լցնէք: Թէարաքեամաներից ազաւեցանք, հիմի ծարաւից պիտի կոսորունք, ո՞վ երկնաւոր թագաւոր, Գու այս ի՞նչ ու ճակատագիր ես սահմանել մեզ համար:

— Լաւ, հերիք մրթմրթաս, քէւ էլ համբերեցէք, թէ չեկան աղերքը, գարձեալ իջնեմ, Խալիֆ-օղլու ձորից ձեզ համար ջուր բերեմ:

— Տղերքին ինչի՞ն ես սպասում, ասաց Մարջանը, թէ շուտ եկան, քեզ կապասէնք, թէ ուշացան, դու ետ գարձած և մեր պապակը զսվացրած կը լինես: Ըստ պի՞ր, Սաքօ՛, Աստծու սիրուն, Լուսիկի ուշքն անցաւ, մի պուտ ջուր հասցլու:

Սաքօն այս որ լսեց, էլ չը կարողանալով գիմանար, զէնքերը զննեց ու շխտեց, աւարառուներից խլած աջեմի գիւգիւմի ուսմն դրած զնաց Խալիֆ օղլու ձորից ջուր բերելու:

— Զքէ՛ ասաց Մուքօն, երբ Սաքօն արդէն յիսուն քայլ հեռացել էր այրից, ետեւ գնա, կարելի է որ ևէ փորձանքից օգնելու կարիք լինի:

Զքէն շատպով հետեւեց Սաքօն: Յիսուն քայլ հեռացած չէին, երբ հեռաւից մի ատրճանակի պայտ թոցի ձայն լււեց: Մուքօն անմիջապէս ոտք ելաւ, զէնքերի խաղերն ու կապերը զննեց, սկսեց մտածել, թէ ինչ գիրք բռնէ: Գնդակի երկրորդ հարւածից ըսթէ ինչ գիրք բռնէ:

թափւած, երկիւզը փարատած ձայն տւեց
—Թոփիո՛ւզ...: Հեռւից ընկերը արձականք ար-
ւեց քայլերը արտգացներով:
—Ես եմ՝ Մուքօ՛:

Մի քանի լուպէից հասաւ Թագոսը և ժպատի
բարեւց: Զիուց սողարով յանձնեց Գոզորին, որը անմի-
ջապէս տարու այրի խորքը: Քառորդ ժամից հազիւ
հասան նրա ընկերակիցները և տարածւեցին հանդս-
տանալու:

—Թաւիթն ո՞ւր մնաց, հարցրեց Մուքօն, երբ
նրան ընկատեց դալողների շրջանում:

—Նո գնաց զիւզ, տեղեկութիւն բերելու, ա-
սաց Թագոսը: Տեսնենք մեռան, կոտորւեցան, ո՞վ է ի-
մանում ինչեր չանցան նրանց գլխով:

—Մենակ գնաց, կրկնեց հարցը Մուքօն:

—Ընկերով աւելի վաճառաւոր է, մանաւանդ
նո չի սիրում աւելորդ բեռ շալակեր:

—Այսպիսի ժամանակ միթէ անխոչեմութիւն
չէ թողներ, որ....

—Լաւ է, թո՞յ վարժւին, խօսքը կարեց Թա-
գոսը: Բայց նո որտեղ որ է կը զայ: Նո իրիկուն ձա-
նապարհեց, զիշերը հասաւ, ցերեկը քնից, հանգստա-
ցաւ, իրիկուն վերագարձու: Կէս զիշերից վաղ նո
կը հասնի: Տեսնենք ինչ լուր պիտի բերէ մեր ծե-
րունիներից և պառաւներից:

—Վաս երազներ եմ աեսեր, Թոփիո՛ւզ, կաս-
կածում եմ, թէ հօրս մաշւան բօթը բերէ:

—Երանիշ չէ, մեռնի ու ազատւի: Ել քանի մէկ
պիտի գատի, անօրէնների փորը կշացնի, նրանց գէմը

ծառայի: Կենդանի գիտենու թիւնից կազմաւի կը պրծնի:
— «Կենդանի գիտեկ» ասաց Մուքօն ու
հասաչեց սրտի խորքից, որին արձականք տւին ընկե-
րակիցները և լուցին:

Մուքօն ու Զքէն եկան, ծարաւածներին զովաց-
նելուց յետոյ, ընկերների բերած պաշարը բացին, աղ-
ջիկների բաժինը ներս ուղարկեցին, իրենք նստան հա-
ցի: Մէծ ախորժակով լափում էին սովալուկները: Ճան-
կերը զցած պատառը, պանիր, ձու, հաւի միս, կարմը-
րացրած ոչխար, սարդարի ու հաց, բաքսիմաթ, կե-
րան ու լափեցին:

—Զքէն, գնա, աղջիկներին ասա, որ կուշա ու-
տեն, շտապին կապոցները կապեն, կէս գիշեր չե-
զած ճանապարհ ընկենք: Լուսը չըբացւած պիտի
Կարմիր-Վանք հասնինք, թէ չէ, կարող ենք վտանգի
ենթարկելք:

—Կարմիր-Վանք ի՞նչ գործ ունիք, ասաց Մո-
ւքօն ուղիղ քշենք Ալեքսանդրապօլ ազատւինք:

—Ամենից ապահով այդ ճանապարհն է, աղ-
ջիկներին քաղաք աեղ պահելը գժւար է: Գիւղացին
քաղաքացու նիստ ու կացին սովոր չէ, նորանք էլ այն-
տեղ կը ճանձրանան: Երկու-երեք հոգի նորանց կը տանին
կը յանձնեն մեր Տէր-Մարտիրոսի իրիցինոջը, նորանց
տանը կը մնան, մինչեւ աեսնենք աշխարհը ինչ կը լինի:

—Գիներալ Քիշմիշովն էլ այդպէս խորհուրդ
տւեց, ասաց Պողոսը:

—Մայրս սրտածաք կը լինի, ասաց Մուքօն, նո
տռանց հարսի ու աղջկայ.....

—Թէ արդէն չէ մեռել, խօսքը կարեց Մուքօն:

ԺԴ

— Զոռ էլ չի գիտչի, ասաց Թագոսը, կիները
սովորել են, բերեն էլ գիտեն, թաղեն էր Մի քանի
օր կը լան, կերերան և կը մոռանան.....:

— Լծկանն ի՞նչ արիք, ասաց Զքէն, երբ խօսքի
թէլը կարւած, բոլորն էլ ընկզմւած էին ախուր մըտ-
քերով:

— Տարինք անվնաս, ծախսեցինք լիքը գնով գօր-
քին միս ուռող մկիտաններին:

— Հապա կալն ի՞նչով պիտի ծեծենք.

— Տօ՛, թուրքը քուրդերը պիտի թողնեն, որ
արտերը հասնին, ասաց վորովւած Թագոսը: Նիմի անօ-
րէնները արդէն իրենց անասունները քշեցին մեր ար-
տերը ու կերցրին կանաչ-կանաչ: Ուզում ե՞ս գեղը նո-
րից լծկան առնել, որ էլի գան քաղցած պաշտօնա-
կանները ու առնեն:

— Քանդւեցանք, պրծանք էլի՛: Մեր գեղը աւե-
րակ պիտի մնայ: Թո՞ղ հեղեղը դայ մեր պառաւներին
էլ տանի, մեր բներն էլքշէ, հողի հետ հաւասարէ, ա-
զատւինք, ձեռք քաշենք, պրծանք:

— Քանդել են՝ առանց մեզ հարցնելու, ցրւել
են՝ առանց մեր կամքն իմանալու, տարել են՝ հակա-
ռակ մեր կամքի: Ի՞նչ կարող ենք անել, երբ ցժերս չի
պատռմ: Բայց խո՛ աշխարհն այնպէս չի մնալու, ասաց
Մարգարը: Քիշմիշով ասաց, Տզե՛րք, մի՛ վախենաք, դոչաղ
եղէք: Բերդն, որ այս անգամ առնենք, էլ ետ տալ չը կայ:

— Դու էլ հաւատացի՛ր, ասաց Մուքօն:

— 2է, աղքէ՛ր, այս վրա երբորդ անգամն է, ի՞նչ-
պէս երեսում է, էլ դուրս չեն գալու:

Կէս գիշերից մի ժամ առաջ ձիերը գուրս քա-
շեցին, նստան ու ճանապարհ լնկան: Տղերքը գաւակ-
ներին նստեցրին աղջիկներին և մորակելով իջան զա-
րիվայրը: Նրանք Սուբաթան գիւղից կէս փարսախ հեռ-
ւից անցան և ուղղւեցին դէպի ձալա: Թագոսը յանձն
չառաւ Քէտրոշի զաւակը ծանր-աւելորդ բեռ բառնայ
նա առաջ անցոււ, որպէսզի ճանապարհները խուզարկէ
և անակնկալ վատանզի առաջն առնէ: Մութ գիշեր էր,
թէկ երկինքը պարզ պսպղում էր, բայց աստղերի
ցողքը չէր կարող երկրի խաւարը լուսաւորել: Անմռունչ
զնում էին հալածւածները, ո՛չ մի ձայն, ո՛չ մի խօսք
չէր գուրս թաշումնրանց շրմունքներից: Կարծես ձի-
երն, զգալով իրենց տէրերի սրտի խորհուրդները, ան-
մռունչ զգուշութեամբ սմբակները մեզմ էին գետին խը-
փում և առաջ սլանում: Քամին անդադար սուլում,
շշում և ճոճացնելով բուսականութիւնը սահում, անց-
նում էր արհամարելով ոռումբերի որոտը, որոնք Ալաջայի
բարձունքից սլանում էին աջ ու ձախ: Քամիի բերած
անհասկանալի աղաղակները բաղխւելով հալածւածների
ականջներին սարսափ ու սոսկում էին ազդում, սախ-
պում էին ուշագրութիւնները կենարոնացներ, որել ա-
կանջները՝ աջից, ձախից եկած ձայները զանազանելու:

Թէւ անտկնիալ յարձակման ենթարկելու երկիւղով լցւած էր հալածւածների ոգին, բայց նրանք կոխւն ու մաշը աչքերն առած վաազում էին ժամ առաջ ձալա հասնելու:

Դեռ կէս փարասից աւելի ճանապարհ ունէին հալածւածները ձալա հասնելու, յանկարծ մի շանթացած ուոմբ որոտալով և սուլելով Ալոջայի բարձունքից պահադով իջաւ գէպի խումբը, որոնք մի բոպէ ձիերը կանգնեցրած զիտում էին, թէ ինչ վախճան կունենայ: Երբ ոումբը ուզուեց ճանապարհի ձախ կողքի ապառաժին, հալածւածները մի հանդիսա շունչ առին, բայց գեռ իրար երես նայելու ժամանակ չանցած ուոմբը հարիւր բայլ հեռաւորութեան վրա ապառաժին բաղիւեց, պայթեց, ցրւեց և մի կոտրը թռաւ, զիպաւ Գոգորին և նրա գաւակը նստած Սէյրանին զլորեց գետին, իրենց նստած ձիու հետ: Ոումբի ահեղ որոտը, վայրկենական արագութեամբ պայթողը պյնպէս զարհուրեցրեց, որ բորբը, նոյն իսկ անասունները միառժամանակ շւարած կանգնած մնացին, չէին իմանում, թէ ինչ անեն: Թագոսը որ հարիւր բայլ խմբից առաջ էր անցած, իսկոյն ետ գարձաւ, նկատելով թաւաւածներին, իջաւ ձիուց, մօացաւ վիրաւոր ընկածներին, որոնք անզգայ նւազեր մնացել էին:

Ոումբի կոտրը զիազելով Գոգորի ազգին էր բաժանել մարմից, որը մկաններից կախւած մնացել էր, ձիու ողնաշարը փշրելով՝ անմիջապէս մահացրել էր, իսկ թշւառ Սէյրանի որունքն էր կարել-զցեր: Գոգորը անթշւառ Սէյրանի որունքներին յենած, զգայ տարածւել էր, պուլսը ձիու որունքներին յենած, թշւառ աղջիկը կոկծից մորմոքում էր, երկիւղով ք

կարողանալով ձայնն անգամ բարձրացնել: Թագոսի օրինակին հետեւեցին անմիջապէս ձիաւորները և մօտեցան տանջւած վիրաւորներին: Որը զիսի էմբը աւեց, որը գօտին քակեց, ազջիկներն էլ իրենց զիտակապը, որոնցով իսկոյն կապեցին վիրաւորներին: Մութն էր, խաւարի մեջ մի կերպ փաթաթեցին վերքերը, արիւնի առաջըն առան: Թագոսը ձին նստերով զրկեց Գոգորին, Սէյրանին էլ Մութօն զիրին առաւ և սրբնթաց զիմեցին ձալա:

Թէւ Թագոսը աջ թէկովը սեզմել էր և պահպանում էր Գոգորի ազգիը, որ արիւնաքամ ըլ գառնայ, բայց ըլ հարողացաւ զսպել բորբոքւած արիւնը, գեռ ձարա ըլ հասած իւեղձ աղան վերջին շունչն էլ փշեց ու հանգստացաւ: Այս օրը ձալայում մնացին հալածւածները, որտեղ մի յաւ վերբայժ կապեց Սէյրանի վերքերը, որի խնամքին թողնելով խեղձ աղջըն կան, հալածականները երիկնազէմ ձիաւորւած, աարին Կարմիր-Վանք հասցրին իրենց բեռները—ազջիկներին, յանձնեցին Տէր-աերին ու գարձան, զիմեցին Թուսական բանակ:

Ճանապարհին նրանց պատահեց Գաւիթը որը նկարազեց, թէ ինչպէս Ալի-ազան եկել և զիւղացիներին աարել էր Կարս, որոնց բանատիկել էին Միջնաբերդում Այս բօթը աւելի բորբոքեց 2էրմալիցիներին, որոնք սրացան գէպի բանակ և ներկայանալով միլիցիաի աւածնորդին, մատն ծառացաւթեան: Աչ մի բան այնքան հաճելի չէր 2էրմալիցիներին, որքան նրանց զւարձացնում էր և ոգեսրում Միջնաբերի և Մանսուրի ձիաւորների հետ ընդհարումը: Տղերքն անընդհան յաւաբնք. ԳԱՂԱ.

փշտակում էին նրանց ձեռքից այն աւարը, որոնք կեղեքելով քաշում, տանում էին հայի զիւղերից դէպի բանակ, կամ քաղաք՝ Խոլամի զօրքը կերակրելու։ Այսպիսի ընդհարումներով աղերքը ոչ միայն ընկճում, թուլացիում էին Օսմանցուի ձիւորների խումբերը, ոչ միայն մանում էին իրանց առաջնորդի աչքը, ոչ միայն ստանում էին մետաշ, խաչ, տեմլաք, այլ աւարի կենդանիները ծախելով բանակի մարկիուանութերին, լաւ փող էին շահում։



— Թոփիուզ, ասաց բանակի հրամանատարը իրեն վրանում, Կարսի փողոցները լաւ ճանաչում են։ Ինչպէս մեր գեղի աները, ասաց ինքնավատահ միլիցիոնի շորերի մէջ զարդարւած Թոփիուզը, անուն-անուն կարող եմ համրել։

— Եթէ քեզ Կարս ուղարկեմ, ո՞րտեղից կարող ես մանել, որ չը բունեիս։

— Եթէ հրամայում էք, որ չը նկատեմ, ինձ երբէք չեն կարող բոնել։

— Ես վստահ եմ, գիտեմ, որ ո՞նչից չես վախենար բայց գնալդ ու վերագառնալդ անշրաժեցա է, որ մարդ չը նկատէ, որպէսզի կարեոր տեղեկութիւններ ստանամ։

— Խօսք եմ տալիս, որ ընկերներս ել չիմանան և քաղաքում բացի ձեր նշանակած մարդուց, ոչ ոքի չըրեիր, չը խօսիր։

— Թուրքերի պահակների աչքից ի՞նչպէս ես խցս տալու։

— Ճանապարհով չեմ դնալ, Մէլիք-Քէօլի ձորից կը մանեմ։

— Աւելի գտտ, այնտեղ վիստում են Օսմանցուի գորքերն ու լրտեսները։

— Նրանց միջից աւելի ապահով և աներկիւղ կանցնեմ, քան թէ ամսյի դաշտից։

— Հասկացայ, ապրիս ինձ գեներու Քիշմիշովը վստահեցրել է և ես հաւատացած եմ, որ խոստումդ կը կատարես ազնիւ հայի և ճշմարիտ քրիստոնիայի նման։ Գիտես, որ այս կուրու կատարում է գթած, մարդասէր և բարեպաշտ Կայսրը, որ ձեզ ազատէ, մեզ ազատէ, հայոց ազգը փրկէ Օսմանցուի գորշումից։ Մէնք էլ միասիրա և անձնուիրաբար մինչեւ մեռնելը պիտի կույնուք, որ խեղճ ժողովուրդը թուրքի ու քուրդի ճիլանից աղաւաւի։ Ել բան չեմ ասում, գու հասկանում ես ինձ։ Բազարին մօտենալիս այս կարկատած չստերը հազիր, երիկնադէմ գնաւ ժամ, մթանը մտիր առաջնորդարանի բակը, տես Աղւանեան վարդապետին և նրան յանձնիր գրանք։ Զգոյշ, ուրիշ մարդու ձեռք չը գցես, թէ չէ, գու ել կը կորիս, վարդապետին ել կարող են կախել և ամբողջ հայոց ազգը սպացեր։ Դէ՛հ, քեզ տեսնեմ, շատպիր ու պատասխանը բեր։

— Աչքիս վրա։

— Զգոյշ, չը բանւիս, թէ չէ, քեզ ել հօրդ նման կախաղան կը բարձրացնին և խիղճն կը ծանրաբեռնւին

— Թո՞ղ աղաւանք այս անօրէնների լծից, թո՞ղ փշուի մեր ուսերին, մեր վզերին կապած Խոլամի ուա-

յաթական լուծը, ես յօժարութեամբ կախաղան կը
բարձրանամ: Թօ'զ ազջիկո, կինո, հարսս ազատւին
թուրքի ու չէրեզի լիպիրշ Ականքներից, ես յօժար եմ
վեզս գահձին երկնյնելու:

— Քու կեանքը և գործն է պէտք, եթէ սիրում
ես ազատութիւնը, պիտի աշխատիս ողջ ետ դառնալ
և կարեոր տեղեկութիւնները բերել:

ԺԵ

Օսմանցուի առարջինների (Հեծելազօր) մի վաշ-
ար՝ չորս հարիւր հօգի, վրան եր խփել Կարսի ձորում,
քաղաքից մօտ մի փարասխ հեռու, Սադօյի-ջայիլում
(մարդ), որտեղ թէ ձիերն էին արածացնում և թէ
(մարդ), որտեղ թէ ձիերն էին արածացնում և թէ
հսկում ձորի մուտքին: Թէեւ ամառը վերջնալով եր,
բայց շնորհիւ Խարաբա-Քիլիսէից հոսող վճիտ աղ-
բիւնների, գետի ներգործութեան, առուների դիրքին,
բիւնների, գետի ներգործութեան, առուների դիրքին,
ձիերի դադար ճարտակն անպակաս եր, թէ մարգում և
թէ լեռնալսնջում, իսկ հրամանատարների լայնարձակ
որկորից բան չէր աւելանում, որ զինուրներին էլ փշանք
հասներ, մանաւանդ Կ. Պոլսի Վիսրեալսյի ձիրաննե-
րից բան չէր կարելի կորզել պատերազմի դաշտում
տանջւողներին կերակրել: Պատերազմի ըրջանում ոչ մի-
այն ոռօճիկ չէին վճարում, այլ հացի փոխարէն ալիւր
էին մատակարարում, խղճալինները շաբաթը մի անգամ

մսի հոտ չէին առնում, սատկած այծի, լղար կովի,
լծւած եղի, կամ պառաւած գոմէշի լաշով էին կերակ-
րում և առաւօտից մինչև իրիկուն տանջում: Հեռա-
ւոր նահանգներից բռնութեամբ հաւաքւած այդ
զինւորները առաւօտից մինչև իրիկուն ամէն քայ-
լափոխին ողբում էին իրենց և իրանց ընտանիքի
վիճակը, երգելով կամ նւագերով զան զան գործիքների
վրա: Այս շարքաշ-սովածները քանիոր յիշում էին ի-
րենց տներում թիււած հացը, պատրաստաւած կերա-
կուրները, մաքրւած շորերը, հառաջում էին սրտի խոր-
քերից, նախատում էին բռնաւարներին ու սգում....:

Իրիկուն էր, արեւ թէեւ մտել էր ձորը պատող
բարձունքների ետելը, ոչ մի ճառագայթ չէր նկատ-
ում լեռների գարաթին, բայց դեռ երկնքը այնքան
լուսաւոր էր, որ մթութիւնը չէր կարողացել տիրել ձո-
րին: Զինւորները քայւած իրենց վրանների շուրջը
պազել ախուր եղանակներով ողբում էին իրենց վիճա-
կը, անգագար աչքերը երկինք և չորս բոլորները պը-
տըացնելով: Այդ ժամանակ մի ձինորս ուրկանը ձեռքը
զցելով ու քաշելով ցածրից վեր էր բարձրանում թու-
գեալի հունով: Նա շարշալիր հաներ ծայրերը կապեր
պարկի ձեռվ թիկունքին էր զցել, կապերը ուսից թի-
ւերին անցկացնելով դագերին, գուլպաները և կօշեկնե-
րը լցուի էր շալւարի սրունքների ծայրերում: Մինչև
ծունկները մերկ մտել էր ջուրը և որսուծ ձիները լց-
նում շալւարի մէջ ու համրաքայլ բարձրանում էր:
Ամէն անգամ ուրկանը քաշելիս նա կիսով չափ ջուրն
էր մտնում, որ ըլ պատուէ և ըլ վնասուի: Նորից ուրկա-
նը աւրածելու համար նա մի քանի ըոսէ անտղում

էր գետի հոսանքը, ապաս ամները, սահմանքները և
չախրախները, միշտ ձիների բների վրա բոլորակ սփռե-
լով ցանցը, որի պարկերը յցւում էին մուրծեր, կա-
պյաներ և լոքներ: Նա երեք լիար ձուկ ուներ շալտ-
իին, պարբերաբար ուրիշնը զցելով բարձրանում, մօտե-
նում էր քաղաքին:

Սովոր զինւորները ձկնորսին նկատելու պէս
խկցին վրա թափւեցան, բռնեցին և ձուկերը ձեռքից
խեցին Զինւորներից մէկը շալւարը վերցրեց, մի որ
կօշիկները ոտքն անցրեց, երլորդը զաղէքին հագտւ,
չորսորդը գուլպաները զբանեց: Տասնապետն էլ ուր-
իանը ձեռքից լոլեց ասելով:

— Թոռը մեզ պէտք է, ամէն որ ձուկ կորսանք,
քաղցած չենք զիստալ:

— Աղա, Ալլահի սիրուն, ասաց ձկնորսը յուսհա-
տական ձայնով, եօթը զուլս թիւլֆամթ է նայում այս
թռուին: Եթէ օրսական մէկ-երկու լիտր ձուկ չը տանեմ
քաղցաք, չը ծախեմ քաղցած կը կոտորւին երեխաներա-
կապիր:

— Խղճացէք, աղա, խնայեցէք, ես զիշերւանս
հացը չեմ տարել տուն, երեխաներս ինձ են սպասում
սոված.....

— Կորի՛ր, շուքդ քաշի՛ր, թէ չէ կոտոր—կոտոր
կանեմ քեզ, ասաց տասնապետը:

— Աղա, տռաւօտ վազ մաել եմ ջուրը, մինչե
հիմի որսածս ձկները այդ է, բոլորը եթէ այդ էլ խը-
լում էք, ես զիշերս ո՞րտեղից հաց տանեմ և երեխա-
ներիս մորմոքը դադարեցնեմ: Ցուրտը մտել է ոսկոր-

ներիս ծուծը, շորերս եթէ չը դարձնէք, ես կըսառիմ,
կը մնամ ջրի տփին, երեխաներս էլ կը փետանան իբանց
մօր զրկում Գթացէք, դարձրէք ինձ ուրկանս, ետ ոը-
ւէք շորերս: Աղ ներ, աչքերդ երկենք բարձրացրէք,
Ալլահին աշեցէք և խնայեցէք: Գուք բոլորդ էլ առն
ունիք, բուն ունիք, երեխան ունիք թողած ձեր ծննդա-
վայրում, կին ունիք, որ սպասում է ձեր ձանապարհը,
մայր ունիք, որ ողբում է ձեր սոսկալի վիճակը և
գտանազի արտասուրներ է թափում ձեզ Համար: Յի-
շցէք ձեր սիրելիները, ձեր երեխաները և նրանց ա-
րկին ասդարձ խղճացէք զաւակներիս, որ Ալլահը
զթայ ձեզ վրտ, որ առաջ ողջ, առաղջ ձեզ էլ հասցնէ
ձեր բնատանիքին: Երեխանցեցէք, որ երեք չորս տարե-
կան մատղաշներս առաւօտից մինչեւ հիմի լոլիս են մի
կար հացի համար և սորմոքեցնում իբանց մօր ու
կար հացի համար և սորմոքեցնում իբանց մօր ու
մամի սիրուը: Խնայեցէք, կարեկցեցէք, որ Ալլահն էլ
խղճայ ձեր մանր ու խոշորին և ձեզ բարի ճանապարհ
առյ, որ առաջ սիրելիներիդ համնելու և միթարելու:
Կարեցէք երեխաներիս ձայնը, որ Ալլահը ըլլազաց-
նէ ձեր սիրելիներին, կամ ինձ էլ մորթեցէք, կարեցէք,
որ սասիմ չը մնամ տանջանեն երի մջ, չզգամ և
չը լիշեմ: Ճեւ տանը մորմոքելով ինձ են սպասում:

— Աչմէզ, ասաց զինւորներից մէկը խղճահար-
ուծ, Աչմէզ, եթէ այս բուդիս ուրկանը չես դարձնել,
դուխով կը վշրեմ: Ցուտ, դարձրու:

Տասնապետը կոտազած ընկերակցի աչքերից սոս-
կոլով, ցանցը ձեռքից բաց թողեց:

— Մեզք է, ասաց մի ուրիշ զինւոր լացուկո-
ւած, դարձրէք շորերը, թո՞ղ դնա իրեն մատղաշներին

կերակրէ: Զիները տռիք, խորովցեցք, խաշեցէք, զսիւ-
տւեցէք, բաւական է, դարձրէք շորերը, գոզզողում է
շան: պէս:

— Իմ շալւարս քրքրւել է, ես ցրտահար լինել
լուն, թող այդ անհաւատ շունը ստոի, տասց շալւարը
իւրացնողը։ Գետու ուրի այսպէս տաք շալ ար ունենայ,
իսկամի զինուորս ցրտին զողգողաց։ Ես չեմ տար։

—Քեզ ասում եմ, անմիջապէս դարձրու, թէ
չէ……: Տո՛, ձեր սրտում խսկի խղճի նշոյ չէ մնացեր
առ դուք թշւառութեան մրուրի բաժակը մինչև տակը
չեք խմել: Մի՛ վրդովէք հոգիս, ձեզ որ ասում եմ,
դարձրէք, էլ մի՛ հակառակիք: Թողէ՛ք անցնի, զնո՞
իւր զաւակների մօտ: Գտ տակն ու վրա արտւ սիրաս,
զարթեցրեց, բորբոքեց թմրած լիշտակներս:

— զանը խղճում է, իսկ ընկերակցին մասին չի
մտածում, ասաց յամառած շար արբ իւրացնողը:

— Տո՛, շանը կարելի է սատկացնել, անխօնի զՃ,
տո՛, ձագեր կերակրող շանը կարելի՞ բաժանել իւր
կունտաներից: Տո՛ւր, աւէքք, ասում եմ ձեզ, ասաց,
քաշեց և դարձրեց ձինորսին իւր իրերը և յարեց.

—Առ ու գնամ, բարեկամ, Ալլահը քեզ չետ:
Հեռացիր սրանցից, սրանց մէջ քարտացել է Խիզգը:

Զենոբալ հաւաքեց իրերը և գնաց շարունակելու իւր որսը, անդադար վեր բարձրանալով և քաղաքին մօտենալով:

—Մի քանի զինուղներ նստել էին առևակի տ-
փին, խշտիկներով մաքրում էին ձուկերի թեփերն ու
աղեցնելը: Արիշները չորացած փուշ ու ձող էին հա-
ւաքեր, կրակ վառել կաթսայով ջուրն էին եռացնում

Ճիները եփելու։ Մութը ասաիձանաբար սատկանում
էր, իսկ ճինուրաք ցրտից դոգալով կզահները իրար եր
բաբախում, չափելուհացնում և զանցը պարզելով ու
քաշելով որում էր ճիները, զիմելով նպասակին։

४२

Կարսի միջնաբերդի ապառաժուածուածու լիանաբանջում;
աշեղորոտ թնգումնօթների շարքից հարիւրյանը աս-
տիճան ցած, Ժամանն մնանչի դիմին բաձրացած էր
«Կարուց-Հայոց» բարձրակառուց ու ուաջնարդարանը, ո-
րը միջնաբերդի զօրանոցից ու բանահրից յետոյ քա-
ղաքի ամենաբարձրազդիլ շինութիւնն էր: Թէ՛
վազո ց բանակայ աշխարհակաները կօսորել ու բնա-
ջինջ են արել մեր աշխարհի ասպարակիր և փարսակա-
լուոր բնիկ իշխաններին, բայց չեն կարողացել անհետացել
մեղարաւոր և գուազանակիր առաջնորդներին, որոնք
խում բանակաների հետ գուզընթաց՝ միշտ պահպանել
են իրենց աթուալը, հսկանաւորեր պատսպարել և միսի-
թարել են իրենց հօտը: Կարսի վեճակի ժողովուրդին
աջըը թշւառի հայեացքը միշտ աղջւած էր եղել միջնա-
բերդին կպած այս կախարդական շինութեան վրա, որի
հիմքը խալիքները չեն կարողացել առաներիու գա-

լում խարիսկի, կործանել չայ, թուրքման, եղիդ, ասորի և ուրիշ թշւառ ու անօդնականները միշտ սպասել են նրա պատգամին։ Աղքատ է այդ շինութիւնը, ու յեռ քարից են պատերը, միայն ճակատն է տախտակով զարգարւած և գոյնզգոյն ներկւած։

Այդ բարձր շինութեան մէջ ապրում էր մի ծերուկ Վարդապետ, թէև ալեւոր միւսուքով, բայց վիթիւարի մարմնով, յայն թիկունքով, բարձր հասակով, ուժեղ մկաններով ու ջղերով։ Նա գանւում էր շինութեան վերնայարկի հարաւ արեմտեան սենեակում, ման էր գալիս, անդադար դիտում էր քաղաքի շրջակայ բլուրները և, ծխերով հաստ սիզարէթը սաթ մնաշտուկից, մտազքաղ կանգնում էր այս ու այն լուսամուտի առաջ, տչքերը յառած որոշ բլուրի, լեռնարնջի կէտի վրա, մտածում էր ուշը-միաքը կենտրոնացրած։

Երեկոյ էր, արեւ արդէն թէքւել էր Թէմուր-Լէնկի աշաւարակի կողմը, հայ-թուրք երկիւղից մտել էին իրենց բները և սրտատրոփ սպասում էին պաշտոնների արձակած ուումբերին, որոնք անխնայ քանդում, աւերում, կործանում էին քաղաքի շինութիւնները, մարտկոցներն ու զօրանոցները և կոտրում անգթօրէն անասուն թէ մարդ։ Հայր-սուրբի տչքերը անդադար շուր էին գալիս շեկացած ուումբերի կողմը, որոնք սլանալով օդի մէջ գրաւում էին հազարաւոր աչքեր և ընկնելով աջ, ձախ պայթում ու սարսափ էին սփռում։ Հայր-սուրբը առաւօտից մինչեւ իրիկուն էին սփռում էր այն աւերւած աները, այն անշնչացած համբում էր այն աւերւած աները, որոնք զոհ էին գնացել սոսկալի ոսումբեռովով, որոնք զոհ էին գնացել սոսկալի

րին և սրտի խորքերից հառաչելով մնջում, մնում էր կանդեած տեղում արձանացած։ Եւ այդ բարձր գիտարանից երեսում էր ամէն բան, ամէն աղէտ այդ թշտեսչին, որի սիրաը մզկտում, մորմոքում էր, բայց հնար չուէր օգնութեան հասնելու։

Երկար մտածութիւնից յետոյ, նա ձայն տւեց սպասաւորին։

— Տղա Յակո'ր, գնա Խաչատուրին կոնչեր, ասա՛, շուտ գոյ։

Սպասաւորը առանց հայր-սուրբի խուցը մբանելու, գնաց պատերը կատարելու։

— Խաչատուր, առաց վարդապետը, երբ վերջինս ներս մտաւ զրասենեակը, ուր էիր ինչ՞ այսօր ուշացար։

— Հայր-սուրբ, առաց ներս մանելով երիտասարդը, ուումբն ընկաւ մեր Համբարի օդիի գործարանը գլեց, տակը մնացին Արսէնն ու Մինասը։ Գնացինք ու գիտիները հանեցիք, իսկ կահ կարստիք, մթերք և գիտիները հանեցիք, իսկ կահ կարստիք, մթերք և ապրանք բոլորը վշացան։ Աշազին մնաս հասաւ, իսկ զաղերքի գիտիները տուն տարոն լւանալու։

— Քանի մարդ էր մնացել հարցրեց վարդապետը վրդովւած գեմքով։

— Երկու հոգի փախել էին, երկունս էլ ապաւեցան, իսկ երկու ուղղերանի տակ էին մնացել։ Խեղձերի ընտանիքը, ծնողները Բաղէշում սպասում են, որ սրանք մարդ գառնան, հաց աշխատին և նրանց էլ փոստի ուղարկեն, բայց չեն իմանում, որ այս անգութ բերդի ախաղը էն, բայց չեն իմանում, որ այս անգութ բերդի ախաղը էն զետեղւած։

— Պանդուխտը կամքարի, կամպատի տակ կը ֆեայ: Հազար քարոզէ, որ լսող չը կայ

— Քաղցածի փորը քարոզը չի կշացնէ: Գործ ստեղծեցէք, հացի ձանապարհ ցոյց տւեք, այն ժամանակ ոչ չի բաժանւի հայրենի օջախից և սիրելիներից: Կոտորածը մնչափ է, օր չի անցնում, որ մի քանի մարդ զոհ չը գնայ ոռումբերին: Գիշերս ելի չորս հինգ մարդ մնացել են փլատաների տակ:

— Թուրքի՞ր:

— Այո՛, Հայր-սուրբ, ելի մենք համեմատաբար փառքի մէջ ենք, մեր թաղերը ապահովւած է, թուրքի թաղերում մեծ կոտորած կայ: Գիշերս մի ոռումբ պատը ծակել, մտել է Լարախանենց տունը. բայց տըւած կորուստը չիմացայ:

— Ուրիշ ի՞նչ վեաս է հասցրել, ասաց վարդապեար ուշքը կինարոնացնելով զէպի Սուլափու, որտեղ այդ միջոցին նորից ոռումբ ընկաւ և պայթեց.

Կարելի՞ է ցուցակ պահել, աջ ու ձախ կրակ է մազւում, ասաց Խաչատուրը մի ասժամանակ լռեց, մինչև որ ոռումբի որոտը, պայթոցի ձայնը վերջացաւ, քանիւած տանից բարձրացած փոշին տարտաւեց և ցրւեց:

— Մարտափը այն աստիճանի է սաստիացել որ պարսկական վիսկօնսուլը երկեւզից մտել է կոթոլիկների եկեղեցու ետեի ժայռի տակ դանւած այլու որտեղ և ապրում է գիշեր ցերեկ:

— Վրագիրներով մի խօսիլ, Խաչատուր:

— Հաւատացեք, Հայր-սուրբ, եռ այսօր ըսրս թաթանի հազիւ կարողացայ մտնել ոյրը, նրան աեսնելու:

2ի էլ կարելի մեղագրել: Խեղձն ի՞նչ անէ, երբ ոռումբի կտորը նրա աչքի առաջ, իւր բնակարանից չորս հինգ տուն ցած ծակեց Քնչատենց Մահուկի տունը, ցրւեց վերնայարկը:

— Տղա, Յակո՞ր, ո՞ւր ես, Ճրագ ի՞նչի չես վառում:

— Սրբազն, այս ձինորսը ցանկանում է անպատճառ ձեզ տեսնել: Սրբան խօսեցայ, որ առաւօսգայ, չի լսում, ոյժով վեր եկաւ, ներս դալ է ուզում:

— Ո՞վ է, թո՞ղ վաղը դայ:

— Սրբազն, ծառայ եմ կարգիդ, կարեոր գործ ունիմ, ձեզ խօսելու, բան ունիմ....

— Թողէք, ներս դայ, Հայր-սուրբ, ասաց երիտասարդը, Յակո՞ր, թո՞ղ ներս դայ:

Սպասաւորը անձարացած ձանապարհ տւեց, իսկ ձինորսը ցանցն ու պարկը նրբանցքում թողնելով, կօշիկները հանեց, դրեց թեկի տակ, մտաւ առաջնորդի գրասենեակը գուռը փակելով: Նա զուտիր բացեց վարդապեատի աջն տռաւ և իր կօշիկները դրեց հոգեորականի ոտքերի առաջ, զիսով բարեկելով երիտասարդին:

— Տղա, ի՞նչ ես ասում, ասաց առաջնորդը կասձանքների մէջ սուզւած:

— Սրբազն, ասաց Թագոսը, ինձ Խաչատուրը ձանաշում է, բանակից եմ գալիս և այս կօշիկները Լորեցի-Մէլիքը ձեզ ուղարկեց:

— Լորեցի-Մէլիքն ո՞վ է, ի՞նչ ես խօսում, ասաց հոգեորականը լլջութիւնը պահպանելով:

— Լաւ, Թագո՞ս, դու զնա, ասաց երիտասարդը, Յակոբի հետ բերածդ ձկները մաքրեցէք, դրէք խա-

շեցէք: Ընթրիքեց յետոյ քեզ հետ կը խօսինք:
 — Գլուխ վրա, բայց ևս անպատճառ դիշերս
 ետ եմ դառնալու, ինձ հրամայեցին շուտ...
 — Քեզ պէտք եղածը կասեմ:
 Թագոսը գուրս գալու պէս, Խաչատուրը վեր
 ցրեց կօշիները, լաւ քննելուց յետոյ, հանեց զբար-
 նից գրչահատը և քանդեց չուստերի տակի ներքին
 աստառը, որտեղից գուրս քաշեց մոմշորի մէջ պատաժ
 թուղթը: Սրբազնը կամաց դռան նիդը ամրացրեց,
 սրտաւրոփ զննում էր Խաչատուրի գործողութիւնը:
 Թուղթը պարզելուց յետոյ, վարդապետը դատիկ աս-
 տակից հանեց մի ուրիշ թերթ, աւեց խաչա-
 տուրին և ինքը նստեց պիհը ձեռքն առած: Խաչա-
 տուրը նամակի տառերը բանալիի հետ փոխանակելով
 թերթը էր, իսկ վարդապետը գլում: Ընթիւցումը
 աւարտելուց յետոյ, վարդապետը կանխօրէն պատրաստ-
 ած սեպութիւնը և բանալին ձեռքն առաւ, զրին
 ու թանաքամանը Խաչատուրին ներկայացնելով թե-
 րդից Գրեցին պատասխանը, զրին նցն չուստերի
 մէջ և լուսադէմին թագոսը ուրկանը շալակը գետի հու-
 նի ընթացքով վերադարձաւ բանակ:



ՃԵ

Առաւօտ էր, աշնան մթնակալած օր: Արեւ ա-
 ներեղթացել էր թանձր ամպերի ետեր, մառախուզը
 այնպէս էր պատել սար ու ձոր, որ հինգ քայլ հեռա-
 ւորութեան վրա չէր կարելի բարեկամն ու թշնամին
 զանազաներ: Հոկտեմբերի միջերքն էր, թէև սառնամա-
 նիքը չէր տարածել իւր գերիշխանութիւնը, բայց ըզ-
 գացնում էր գօրութիւնը և սպառնում էր նւաճել ամ-
 բողջ երկիրը:

Արշալոյսին կանուխ Մարդա գեղի փողոցները
 բռնել էին միլիցիականները, զիւղացիներից հաց, ձու,
 կաթ, խաշած հաւ, խորոված գառի միս էին առնում,
 որ նախաճաշին և գնան ներկայանան իրենց մեծաւոր-
 ներին: Ամէնքը շատապում էին մի բոպէ առաջ կշանար,
 կէսօրի պաշարը դնել խոհըջիննը և հասնել գործի:
 Թրքուշիները փողոցի անկիւններում զետեղւած եռաց-
 րած կաթի կաթսաներից, անդադար թասերը լցնում:
 տալիս էին ձիաւորներին և աբասանոցները (20 կոպ.)
 գրպանում: Զիաւորները իրենց ձիերի սանձը ձեռքին
 պինդ բռնած, չորացած լոշը ողորում թաթախում էին
 կաթի մէջ և հապճեպ կուլ էին տալիս, նորանոր ա-

պապրանքներ տարով նախաձաշ մատակարարով թթռու-
հիներին: Նորահարսները անդադար գաստավ լոշը թռն-
րածնից գուրս էին բերում, յանձնում վաճառողներին
և նորանց նորանոր պատեհները կատարում: Թուրքե-
րը երկիւզիւղից թէ ամօթից թէ տանից գուրս չէին
գալիս, չէին երես մ միլիցիականներին, բայց առուտու-
րի զրամը շրթելու համար գաւթում կարում էին կի-
ների մուտքը և կորզում էին գանձւած զրամները:
Ամբողջ զիւղը փանայիրի (աօնավաճառ) տեսք էր բա-
տացել և ամեն մարդ աշխատում էր ժամ առաջ կաթն-
ու մածունը, հաւն ու հաւկիթը, հացն ու պաները
հնչուն զբամի փոխարկել Բանակից եկած չարչներն էլ
սակարիում էին և իրենց սայլերը բեռնաւորելով շատ-
պում էին վերադառնալ և զօրքին մատակարարել ի-
րենց ձեռք դցած թարմ կաթնեղինը:

Հարիլ-գէօլի սարադրշտում սուսները թնդա-
նօթները շրել, սումբեկերը պարերաբար արձոկում է-
ին դէպի Արաբ և Ինկիզ մարտկոցները որոնց գըզ-
դիւնը սարսեցնում էր, թնդացնելով սարերը և ցտակր-
տացնում էր միլիցիականների ձիւքը: Թիւքական սում-
բերն էլ թէ մշուշը պատառելով, կայծակի նման
փայլակունելով գալիս էին, բայց մեծ մասամբ
բացիւում էին սպառաժներին և կամ գըլուռում էին
Հարիլ-գէօլի (լիձ) ձախճախուտ անդունդը: Ուսումբերի
ամեն մի որոտից յնցում էին միլիցիականները, շատ-
պում էին ժամ առաջ վերադառնալ բանակ մեծաւոր
ներին ներկայանալու:

Յանկարծ բանակից հնչեցրին փողերը, որի ձայ-
նը լսելու պէս, միլիցիականների սպան գոռաց:

— Տղե՛րք, նոտե՛ք ձիերդ, տռաջ անցէք:
Քոպէտկան արագութեամբ ամէնը կիսատ Բա-
ղին իրենց ձեռքերի կաթի թասը, պատառը և ցտակե-
լով նատան ձիերն ու մարտկեցին: Դաւիթը կերած
հայի խմած կաթի փողը չէր վճարել թթռուհին թո-
ղեց ապանքը Շուեցաւ, բանեց ձիու սանձը փողը
պահանջելով: Դաւիթը նախատիւքից բորբոքուած մըտ-
րակից ձին, մարտկելով գեղջկուհին, որն ընկաւ ձիու
ոսքերի տակ, քաշէրաշ զնաց հինգ տասը քոյլի մին-
չե վիրաւորւեց և բաց թողից սանձը: Բարբաքած
ձիաւորները վրա տւին, պառաւի հացը պանիրը կար-
միցրած հաւերը յափշտակեցին սրացնն, թոփիրով կա-
թը կոտրելով մածնի փարչերը: Թագոսը հեռւից որ-
կածը նկատելով՝ մօնեցաւ Դաւիթին և մի քանի մըտ-
րակի հարւած տեղաց թիւներին տանը:

— 2հս ամաջում, ի՞նչի չես տալիս նորա հացի
ու կաթի փողը, թէ ուզում ես թուրք ձիաւորների
նման ձրակիր գառնալ: Ուզում ես կաշիդ պոկ տար...
— Ես նորա տքանին խո՛ չէի ուզում կուլ
տալ...: Անիծւածները այս վիճակումն էլ աշխատում
են զիմագրել... նորա բնդզիմութիւնը ինձ....

— Ուրեմն զու մաածում ես թուրքերին կե-
ղեքեր ինչպիս նրանք մեզ կողոպտում էին: 2հս ամ-
չումն խիզճդ մնուել է: Քեզ զուր էր զալիս, երբ ձրիտ-
կեր զարթիւները և քրդերը զալիս էին մեզ կեզիքելու:
— Հէնց նրանց վրէժը...
— Նրանց վրէժը իրենցից առ, իլի՛ր նրանց
ձեռքից իշխանութիւնը, արգէն նրանք ինգծ են....
— Խեղձ են, քիչ մնաց ձանդոտէր և ազքս հա-
զարք. ԴԱՂ. 19

նէր թխսի պէս մի թաս կաթի համար...

— զուտ, վողերը տուր, հանիր, երեք մանէթ տուր, վետար գարձրու, երթանք, ասաց Թագոսը:

Դաւիթը անձարացած մի երեք բուրիտանոց կանանչ թղթագրամ շպրտեց գեղջկուհին, որի մրմունջները գեռ չէր գարդարել և սլացան, հասան ընկերներին:

Դեռ միլիցիականները չէին հասել իրենց հրամանակալի վրանի առաջ, երբ երկրորդ տնգում փողերը հնչեցրին և մի ձիաւոր վրագում էր ցրւած միլիցիականներին կանչելու: Ձիաւորները մարտկեցին հասան, կարգով շարւեցան, սրտատրով սպասելով հրամանակատկարունք հրամանակալն եկաւ, շրջապատւած լի գալուն: Ըուտով հրամանակալն եկաւ, շրջապատւած ձիաւորներով, թիկնապահներով և աստիճանաւորներով, մօտեցաւ, զննեց միլիցիականների շարքը նրանց երի-վարներին ու հագուստները, կարեռ նկատողութիւնները անելուց յետոյ, կանգնեցրին ձիերը, խորհրդակցերը անելուց յետոյ, կանգնեցրին ձիերը, ձիուհին օրւայ համար հինգ րոպէի չափ, կարդացին նոյն օրւայ համար բանակի հրամանատարից ստացւած պատւելները և աստիճանաւորները ետ գարձան, ամէն մինը իւր զնդի մօտ:

— Տղերք, ասաց միլիցիական սպան, ձեզնից ո՞վ լաւ է ձանաչում ձորի լանջերը, ձիու ձանապարհները և գետի անցքերը, մինչեւ Մուխլիս մարտկոցը

— Ես, ես, ես, ես.... Գոռացին քառասուն տեղից: Սպան ոգեւորւած այդ «ես» երից, առանց կառողանալու հրճւանքը զսպել ասաց:

— Ո՞վ յանձն կարող է առնել մի սպայի առաջ նորդութեամբ իջնել ձորը, բարձրանալ Մուխլիս մարտկոցի լանջերը, աներկիւդ ձին առաջ փարելով,

կուրծքը թշնամու զնդակին ու ոռւմբին ուղղած.

— Ես, ես, ես, ես.... կրկնեցին ձիաւորները ոգեւորութիւնից ձիերը շարքից առաջ մղելով և ոգեսրելով իրենց սպային, որը շւարել էր, թէ ինչպէս ուրախութիւնն ու գոհունակութիւնը յայնէ:

— Հրամանատարը գնացողներին Գէորդի Խաչ է խոստացել, տեսմակով: Զեղ տեսնեմ, քաջերս, հաւատացած եմ, որ ինձ չկը ամաչայնելու, ես ել եմ գալու ձեզ հետ: Ասուած մեր կայսրի թուրի երկու կողմին էլ կարուկ անէ: Ուրահ, ուրահ, աղաղակեցին ձիաւորները՝ հետեւելով իրանց գնդի սպային:

Ճ

Մարտխուղը գեռ չէր վերացած, Թագոսը, Սաքօի, Գաւթի, Զքէի և ընկերակիցների հետ կարեցին բանեկը անցան սարագաշտից, հասան ձորի բերանը և, առանց երկար զննելու, քշեցին գարիվար: Այնքան մշուշապատ էր, որ հազիւ կարողանում էին իրար նկատել և

մէկ մէկի ետևից իջնում էին տպառաժների և քար-
քարոտների միջից գէպի ցած՝ Ռահի ափերը։ Զիերի
ոտքերին դիպած ամին մի քարի կառը զլորւում էր
մինչեւ ձորի յատակը, իրեն հետ գլորուուվ ժայռի
մանրուքը, որոնց բարձրացած անսովոր իշխառոցը ցըն-
ցում է միջինների առաջնորդին, որին ծանօթ չէին
երկրի սովորական երեցիները։ Սպան կանգնում էր,
սպասում էր խշռացն գաղարելուն, ուշի ուշով լը-
սում էր աղմուկները, նրանց ընդհատումը և տպա շա-
րունակում էր հետեւել ձիաւորներին Թագոսը Զքէի
և Գաւթի հետ առաջ ընկած՝ կածաններ էին փընտ
ուում, որոնց հետեւում էր խումբը, որ երեսուն ձիա-
ւորից էր բաղկացած։ Քանի քանի անգամ շփոթւե-
ցան, կածանը կորցրին, քիչ մնաց որ սրակող ժայռե-
րից մինչեւ ձորի խորքը զլորւին, ջարդ ու կտուր լինին
և վայրի գաղանների կեր դառնան, բայց մի կերպ
զսպեցին ուշիմ երիփարները նրանց սխալ ընթացքը։

Մինչեւ ձիաւորների ձորը իջնելը մառախուզը
չէր անհետացել, երբ արդէն Ռահի ափին հասան, մի-
այն բարձունքի գաղաթներն էին մշուշով պատաճ։
այն զօրականը զիտակը ուղղեց Խարաբա-Քիլիսէի և
Մուխլիսի բարձունքի կողմը, բայց նիստ վայրան ում էր,
որ չէր կարողանում բան նկատել։ Զորը ամսի էր,
ուռարինելլը վաղուց իրենց վրանները հաւաքել և
Մուխլիսի փաշայի հետ փախել էին Արցուրում։ Արշա-
ւախումբը գետը անցաւ, ուղղեց Խարաբա-Քիլիսէի
գարիվերով գէպի Մուխլիս։ Երկինքը ամպամած էր,
թէւ անձրւ չէր գալիս, բայց այնքան խոնաւ էր օդը
ու ձիաւորների եափուածինները նամացաւ։ Զիերը աղ-

մըկալի շնչառութեամբ անընդհատ բարձրանում էին,
աչքերը և ականջները ուղղած՝ հիտելով շշուկներին։
Կարծէս թէ անասուններն էլ ըմբռնում էին, որ հո-
ղաթումբերի ետեւ թշնամին գարան էր լարած։ Թնդա-
նօթները կըցրած սպասում էր իրինց, որ կլակէ ու
ցրէ…… հողի, մոխրի հետ հաւասարեցնէ…… Բայց ա-
նասունները պարաւորւած էին քալի, սմբակները մեղմ
ժայռերին խփելով բարձրանում էին, բարձրացնում էին
իրինց շալակի բեռը…… Խուզարկու խումբը տառանց
իրինց շալակի բեռը…… Խուզարկու խումբը ուղղած Մուխ-
լիսի կողքով գէպի Զահմախ։ Մուխլիսի թումբերից
հազիւ երեք հարիւր քայլ հեռու էին, երբ մարտկոցից
հազիւ երեք հարիւր քայլ հեռու էին, երբ մարտկոցից
արձակեցին մի զարհուրկիլ ուռմբ Արշաւախումբ ա-
ռանց ընդհատելու շարունակից ճանապարհը։ Խումբ
այնքան նպանցից շեղ չանցաւ, որ ոչ միայն վնաս ը-
տւեց խուզարկուներին, այլ սրանք հնմթազրեցին, թէ
հարւածը իրինց չէր ուղղւած։

Բայց գեռ հարիւր քայլ չէին հեռացած, որ
երկրորդ ուռմբն եկաւ և սրանցից յիսուն քայլ հիռա-
ւորութեան խփեց, տրաքւեց և ցրւեց։ Այս որ տեսան
տղերքը, փառք տալով վռազեցին հեղեղատը մտնելու,
բայց երլորդ ուռմբն եկաւ, զլորեց Գաւթին իր ձի-
ով և թաղւեց փափուկ սկահողում։ Թագոսը առանց
ձիուց իջնելու ձգւեց, բոնեց Գաւթի կաշի գօտուց և
տապար քայլի չափ քաշ տւեց իրամատը։ Ապան և ձիա-
ւորները հետեւեցին Թոփիփուզին, որը անմիջապէս ձի-
ուց իջաւ, ընկերոջ վերքերը խնամելու տեսնջով. բայց
իսկազ Գաւթիթը շանթահար էր եղեր կողը ծակւել և

աղիքները դուրս էին թափւելու...: Թէև պատերազմի գաշտում առաւտափակ մինչև իրիկուն արիւնի հոսանքին, սպանութիւններին տկանտաես լինելով վարժւել էին զօրականները, սպանւտները չեին ներգործում նրանց ջղերի վրա, նրանք գիտեներ կոխրձելով էին դիմում իրենց վեհ նպատակին, ույյաթի վեճակից ազատւելուն, բայց այնքան քսամնելի էր Գաւիթի գին, որ ակամայ սոսկալի կերպով ցնցեց հանգիսականներին, խլելով նրանց սրտի խորքերից աջեկէղ հառաջներ: Գըլ խաւոր սպան ըլ զիմունալով ցնցումներին, կոնխակի շիշը դուրս հանեց զրպանից, մի մեծ բաժակ խմելուց յետոյ, առաջարկեց միլիցիական սպային և ձիաւորներին: Գաւարուէ լի շպլանելուց յետոյ, ձիաւորները համարձակ բուտէլ շպլանելուց յետոյ, ձիաւորները համարձակ բայցին խուրջնը և մի-երկու բառդիլ իրար եաւելից գատարկեցին, ամբանալու տեսնջով:

Թաղոսը ահմօռունջ առանց շրթունքը խմբքին
խփելու, սկսեց հեղեղատի կողքի հողը փորել որ ըն-
կերոջ դիակը յանձնէ նրան, գազաններին և թռչուն-
ներին բաժին ըստանայ: Տղերքը և սպանը նրան օգ-
նում էին, որպէսզի շուտ վերջանայ և շարունակին ի-
րենց ընթացքը: Հեղեղատը այնքան խորն էր, որ ձիու
վրա նատած էլ սպան ըստ կարողանալով դիակ Մուխլիս
մարտկոցը, և քարերը ճանկրտելով քիչ բարձրացաւ և
դիակով ու զգեց, թշնամիի ընթացքը դիտելու: Մարտ-
կոցի թնդանօթաձիկ զօրքը զէնք չուներ, որ կարողա-
նար պատնեշից դուրս գալ ճակատ ճակատի մարտն-
չելու:

չելու: Այս միջոցին սպան նկատեց մի մարդ, ձեռքին
բաշը, կուչ էր եկել քարերի մէջ և աշխատում էր ա

Ներկեցյթանալ: Զիաւորներին նշան տւեց, որոնք խեղ-
ճին բոնեցին և լեզաձաք առաջնորդեցին իլենց հրա-
մանատարի մօտ: Բահը շատ պէտք եկաւ Թաղոսին, ո-
րըն անմիջապէս փորեց Հորը, վերջացրեց և Գաւթի
ոսկերոսահիքը ղետեղելով, հողո վրա տւեց: Մինչ այդ
հրամանատարը հարցաքննեց կարանաւորին:

— Տղա՛, որտեղացի՞ ես, հարցիր սրբագրական
կապանաւորից, այստեղ ի՞նչ գործ ունիս:

սպան կարստալորդց, մասնաւութիւնը բաշխեց
—Աղա ջան, մեզայ, Աստուծու սիրուն բաշխեց-

Տունը կնիկները, երեխաները չնն հասկանում կռիւն
ու կոտորածը, հաց են ուզում, բաղադր փակէ, զիւղե-
րի ճանապարհը բռնւած, շինականն էլ Ճոթի ու հա-
գուստի համար քաղաք չի գալիս, որ կարով մի բրդում
զողոցու գնենք, անձարացած եկել եմ թագաւորական
այս ոռոմբերի ետին ընկեր որ գոնէ հացի փող հա-
նենք, մինչեւ տեսնենք, երբ էք բերդն առնելու, մեղ իս-
լամի զուլումից աղատելու: Հողի մէջ կորած դնդերի
վրայի կապարը վուխանակ փթելու և անպէտքանալու,
եթէ ատնենք մեր լակոտների համար չոր ու ցաւ զը-
նենք, կշացի ենք, թագաւորը կորուստ չի ունենալ
նրանք էլ կը մեծանան, տէրութեան կը ծառայեն: Աղա-
շում եմ, բաշխեցէք, խնայեցէք երեխաներիս....

—Այ տղա, մեզք ես, գնա՛, ուրիշ գործ արա:
Այդ ոռոմբը մի օր յանկարծ կարող է քեզ ալիւրի
պէս մանրել.....

—Ազա ջա՞ն, գործ չը կայ, քաղաքի բոլոր ար-
շիստանոցները փակ են: Մասա՛ղ ձեր ոտքերին, շո՛ւտ
արէք, աղատւինք:

—Առ, առ քեզ փո՛ղ, գնա՛, տունդ, տսաց հայ
սպան, մի քսան հինգ րուրլիսանոց թշւառին գցելով և
մարակելով ձին՝ վերադարձան:

Թշւառը աչքերը յառած գնացողներին՝ աղած
մնաց տեղը, մինչեւ արշաւախումբը աչքից անհետացաւ:

ԺԹ

Կէս զիշեր էր, ցուրտ, պարդ լուսնացով: Կա-
տաղի քամին սուլելով, մանչելով իջնում էր լիոներից
ձիւնի հատիկներ ցած զլորելով, կարծես բողոքում էր
պատերազմողների գէմ որոնց ոռոմբերի, գնդակների
որոսը, սուլոցը, աղմուկն ու աղաղակը խանգարում էին
հովի մելամազոտ մեղեղիներին: Լուսինը կարծես լցուը
զովի մելամազոտ մեղեղիներին: Լուսինը կարծես լցուը
զօրեղացնելու, սաստկացնելու տենջով՝ կրկնակի բակով
կանգնել էր երկնակամարի գլխին, լուսաւորում էր բեր-
դան էլ էր երկնակամարի գլխին, լուսաւորում էր բեր-
դան ու մարտկոցները, սարալանջերն ու ձորերը, որ-
պէսզի պատերազմողները իրար լու հետեւն և կոտո-
րեն: Երկիրը տեղ-տեղ ծածկւած էր ձիւնի բարակ շեր-
տերով, որը բաց կանաչ գոյնով ծփծփում էր լուսնի
շողքի տակ, բեւրաւոր բեւրեղիկներից ցոկքեր արձակի-
լով: Օզի միջով անցնում էին և սլանում գէպի քաղաք
շում: Օզի միջով անցնում էին և սլանում գէպի քաղաք

— Զինուական ոռոմբերը, որոնց պարբերաբար պատաս-
պաշտրողների ոռոմբերը, որոնց պարբերաբար պատաս-
պաշտրողների թողնելով ոմբածիգնե-
րին իրենց դիրքերում առաջացել էին գէպի բերդը
մտել էին Սօւարի, Համբիլ-փաշա, Կանլի մարտկոցները,
որոնց բերդապահ զինուորները թողնելով թնդանօթնե-
րը, իջել էին մարտկոցների տակ, թումբերի, պարիսպ-
րը, իջել էին մարտկոցների տակ, թումբերի, պարիսպ-
րը, նելքին և արտաքին գաւիթները, կռւի

Էին բռնւել յարձակոցների հետ և իրար կոտորում էին թշրով ու խշտիկներով։ Ոչ միայն հեծելազօրը իրենց երիվարները մարտկում, առաջանում էր իրենց եղբայրների և թշնամիների գիտկների վրայով, ոչ միայն մատեանների սմբակներն ու սրունքները կարմիր ներկւած էին թշւառ վերտորների արիւնով, այլև հետեւակների սոքերն, ու ծնկները, ձեռքերն ու կրծքերը ներկել էին մարդկային արիւնով։ Զինւորները արիւնի դժյնից ու հոտից շշմոծ, քարացած, կոփրճում էին վերտոր ընկածների կուրծքն ու գանկը, գիմում էին գեպի վեր, գեպի մարտկոցների գազաթը, թշնամիի գրօշակը յափշտակերու և իրենց արծւիկը բարձրացնելու……

Կէս զիշերը քիչ անցած Սօւտրի, չափիկ, և
Կարսգաղ մարտկոցների զօրքը՝ առանց դլիսի միա-
ցած, թողել, փախել յրեւել և մնացորդն էլ անձնա-
տուր էր եղել թնդանօթները, մթերքը և զօրտնոցնե-
րը յանձնելով։ Հետեւկ զօրքը աշխատում էր դիրք
բռնել, ամրանալ մարտկոցներում, իսկ միշտիտկանները
գրագուներին առաջնորդում էին դեպի միւս մարտկոց-
ները, քաղաք ու միջնաբերդ։

— Տղերք, առաջ անցէք, Կիբուկնօրեայ լոյսը
բերդում քաղաքում թող բացւի մեր վրա, ասաց մի-
լիցիսկանների գորապեար շիջապատզներին և զոռաց.
— Տղերք, միջաբերդի բանաբարկեալները առանց քննելու,
աչքերը լուսամնաներից գուրս յառած ձեզ են սպա-
սում, առաջ, ուրախ, ուրախ, ուրախ....

Միլիցիականները առաջացան, Սուտրի մարտկոցից, դրագուններին առաջնորդեցին Հաֆիզ-փաշայի մօտով, անցան Բայրամ-փաշա մաշեկի միջով, մոտան քաղաքի պարսպի դռնից, առաջ գնացին, սարսյի ետեց թէքւէլով հասան միջնաբերդի պարսպի տակ: Միջնաբերդի յամառ կառավարիչը ոչ միայն չէր զիջանում անձնատուր լիներ, այլ մինչև անգամ ուսումբ էր արձակում յաղթանակների դէմ և քարեր զլորելով կոտորել էր սպառնում պարխապը շրջապատողներին: Բայց դաժան կառավարչի խօսքը չէր ներգործում, ընկճած զօրքը չէր լուսում նրա հրամանները, յուսահատ առկէտը արհամարտում էր անխիղճ դաշճին, որ նրանց տանջել իր ամբողջ ամսար, հասել էր սրտի մազձը թափւէլու ժամը Թշնամիի աշեղ գոչինը, համար ձակ քայլերը սարսափ էր սփոնի և յուսահատացրել էր նցյան իսկ բերդի վերատեսչին, որի բորբոքումները լոկ ծաղը էր առաջացնում: Գերքը պաշտպանելու, ընկճած զօրքին խրախուսելով առաջ մզելու, քաջալիրելով կռւի գորքին խրախուսելով առաջ մզելու, քաջալիրելով կռւի առավարեղ գուըրս հանելու հնար չէր գանում բազմա փորձ զօրականը: Իսկ միլիցիականները, դրագունները անվերջ բազիսում էին բէրդի երկաթապատ գռանը, արհամարելով միջնաբերդի հրամանատարի սպառնալիք ներբու

Ներբւ Միթէ ձեր մէջ միւսուլման չը կայ, գոռա-
լով տատչ եկաւ հրամանատարը բերդի պարսպի դլխին,
միթէ մեռել է ձեր սրառում արիութիւնն ու համար-
ձակութիւնը, միթէ ձեզնից ո՞չ ոք չի ցանկանում թե-
սիշտուալ հօթանասունը հօթը հիւրի փէրիի տիրանալ:
Ի՞նչու էք զարհուրեր, ի՞նչ էք քարացեր, ամօթ չէ, որ

թողնում էք իսլամի մի այսպիսի անառիկ բերդը, որ գեաւուրները գան ու տիրեն։ Ի՞նչ էք պատասխանելու միւս կեանքում այն մարտիրոսներին, որոնք երեք հարիւր տարի առաջ այս բերդը տնօրէններից Խլել և ձեզ ժառանգութիւն էին թողեր։

— Զեմ ուզում, էֆէնգե՛, քո խոստացած յենիշտի երանութիւնները, ասաց մի զինւոր ծամածռելով դէմքը։ Կասկածում եմ, որ գու, որպէս պարագանանչ և ջերմեռանդ միւսիւրման, այնաեղ գարձեալ մեր վրա հրամանատար նշանակւիս և այն կեանքումն էլ յափշտառիս մեր բաժին հացը, միսը, բրինձը, վառելիքը, սաւպոնը, մոմը, կօշիկն ու հագուստը, մինչեւ անգամ մշտակյս հիւրի-փէրին։ Մթերանոցից յափշտակած վառօթի, գնդակի, հրացանի ու ատրճանակի փողերը ինչպէս միայնակ կերպ, հասարակական գանձարանից դուրս քաշած դրամները գաղտագողի սեփականացրիք, այնպէս էլ մենակ կարող էք զիմադրել թշնամիի բառնակին։ Բաւական է, որքան երկրի վրա սոված ցրուածակար ու յոգնած տանջւեցանք ձեռքիդ տակ, գու առատ կերար լափեցի՛ր, մենք սոված ծառայեցինք, այժմ էլ գնա, ինքդ գիմազրի՛ր մենակ խալամի թշնամիին, մալուսիրութի՛ր, գու միայն արժանացիր հիւրի-փէրիի յաւերժաշարսներին։ Այդ փառքն էլ քեզ, միայնթէ թօղ մեզ, գուրս դանք բերդից, ազատութինք ոռուի սըրից, հասնենք մեր ընտանիքին, սրբենք նրանց աչքերի արտասուքը, մի կտոր հաց աշխատինք, ուտենք։ Հերիք աչքերս անկենք թշւառ ու անիբաւի բանտարկւածներին բերւած հացի ու կերակրի վրա, հերիք այն թըշը առների պատառը յափշտակելով մեզ հետ ծոմի ու սո-

վի մատնենք նրանց էր, մոլորքեցենք։

— Տղամ, անմիտնե՛ր, և թէ թշնամին յաղթանակով բերդ մանի, էլ համարձակ կառաջանայ ու կը տիրե ողջ երկրին։ Այն ժամանակ գուք գեաւուրի ույած կը դառնաք։ Ինչպէս այսօր հայերը մեզ են կշտացնում նրանք աշխատում են, մենք ենք ուտում, ձեր երկիրին տիրանալուց յետոյ, գուք էք դատելու, որ ոռուի չիններին կշտացնէք։

— Անխիղջնե՛ր, անհաւատնե՛ր, ինչի՞ այն աստիճան կեղեցիք ու սգացրիք քրիստոնիայներին, որ նըրանց ողբին ու կոծին ոռուը չը կարողացաւ անտարբեր մնալ ու բանս կները քշեց ձեր ձեռքից թշւառներին ազատելու։ Ինչպէս յափշտակում էիք անզէն քրիստոնէի շապիկը մարմնից, աղջիկը զրկից, այնպէս էլ տոնէի շապիկը մարմնից, զինւած քրիստոնեաներին, որոնց գուք դիմադրեցէք զինւած քրիստոնեաներին, որոնց գուք դափեցիք մեզ վրա յարձակելու…… թէ չէ, մենք բերդի գուռը կը բանանք, կազատենք……

— Մենք բերդի գուռը կրանանք, ոռուները քեզ նման անխիղջ չեն, նրանք մեզ մահից կողատեն…… ասացին զինւորները, յարձակեցան փշեցին կողաննքները և բացին երկաթի գուռը։

— Արշալոյսի հետ միլիցիականները և զրագունները մտան բերդ և բարձրացրին արծուի զրօշակը……

۲

Մինչ զօրականները զբազւած էին միջնաբերդի
հրամանատարին գերելու ցերեմոնիայով, անձնատուր ե-
ղած զօրքի զէնքերը ստանալով, մթերանոցները զբա-
ւելով, թնդագոթները մեխելով, Թագոսր ընկերակիցնե-
րի հետ յարձակւեցան միջնաբերդի պետական դաւա-
ճանների—կարծեցեալ մատնիչների բանախ վրա, փըշ-
րեցին գոնիկը, ուրախութեան աղողակներով և ու-
րահներով նիրս մտան: Բանախի խորքերն ել հասել եր
ուռհաների ձայնը և հրճւանքի մէջ լքցրել տառապեալ-
ներին:

Տղերը թէւ խոնւեցան բանափ գուան առաջ,
թէւ ու բախութիւնից թռչկոտում էին, սրտերը ուռել
արագարագ տրոփում էր, բայց բանափ գոները բանա-
յու հնարքը չէին գտնում: Պահապանները ներսից, զըր-
սից փակել էին հեռացեր, պահել իսկ երկաթապատ
գոները փշրելը հեշտ չէր: Միլիցիականները լսում էին
իրենց ազգականների ձայնը հարազատները իրար
հարց էին տալիս, պատասխանում բայց իրար տեսնե-
լու և թշւառներին ազատելու ձարը չէին գտնում:
Երբ միլիցիականները մղղորւած չէին իմասնում իրենց
բօննելիք ընթացքը:

—Թողիփուց, ասաց Սաքօն, հայրո որտաճաք ե-
զաւ, կոտրենք գուռը, ես Էլ չեմ կտրող համբերել:

—Կոտրե՞նք, կոտրե՞նք, վրա տւին տղերքը և
սկսեցին քարով, փայտով, կոճղով, ռումբով խփել դը-
ռանք: Այս միջոցին բերդի գաժան հրամանատարը
հազնւած ու զարդարւած շքանշաններով՝ տռաջ
եկաւ, մօտեցաւ գրադունների հրամանատարին, թու-
րը, բերդի ու բանտի բանալիները յանձնեց: Թոփիու-
զը սցդ նկատելով, մօտեցաւ, խնդրեց գնդապետից, որը
բանտի բանալիները խսկցն նրան յանձնեց:

— Գնանք, շտապինք, ասաց Թաթոսը բանալի-
կեայներին, զնանք ձեզ տեղաւորինք, քանի քաղաքը չեն
սկսել ծաշալիւթեալ թէ չէ, այլևս ոչ ոք գուռը չի բանալ
ձեր առաջ և կարող ենք նորից վտանգի ենթարկել:

— Ըստ Հակալ Ենք, Թագոս ջան, ասաց Քհան
փառք, Հազար փառք մեր աիլովը: Ես անչափ ուրախ
եմ, որ բերդի հրամանակալի իղձը փորը մնայ, չկարո-
ղացաւ մեզ անդունդը դոլել: Ազատւելուց յետոյ, բո-
լորպին ցաւ չէ, եթէ ընկնենք պատերազմողների
շահակեռ, Թագոս ջան, աղջեկները ուր մնացին...:

զնդակից: Թագոս չամ, աղջւու և հետո հետու են, ա-
-գիհանք, արդէն փողերը հնչում են, ա-
սաց թոփփուզը փշելով բէհայի սաքերի չղթան:
Բերդը-քաղաքը ազատւեց Խալիֆի Ճիրաններից, Օս-
մանցուի սարսափներից: Անհոգ եղի՛ր, ազջիկները Կար-
միր-վանք են, կը բերինք: Եկեղեցու զանգակը ազատ
հնչում է, մեզ կը աւելիում է գոհութիւն ապառ Երկնա-



Դնանք, փշուեց Լուսինն ու աստղը,
ջալբանց խալիթի լուծը, ել մեր կիներին ու աղջիկ-
ջալբանց չեն կարող քաշել քուրդերն ու թրքերը, ել մեր
ցոյենի զէզերը չեն կարող տանել զարթիէները, գնանք,
այս ուրախութիւնից յետոյ, աշխատենք օր ու արի
տեսնել և մեր սգաւոր ծնողներին ու կիներին խաղա-
ղացնենք:

—Թոփփուղ ջան, շատ ապրի՛ս, կրկնեց քէհան,
երկար ապրի՛ս և սրտիդ մնարազին համնիս: Ինձ նե-
րի՛ր, ես քեզ շատ եմ հայհայեր, շատ եմ վնուեր. որ իմ
տանջանկներին պատճառ գարձար: Բանաի պատերը,
Փէյզուլլա փաշայի շղթաները, գտշճի սպառնալիքը,
քաղցի տանջանկերը ինձ շատ Ճնշեցին և ընկճեցին:
Բայց անչափ ուրախ եմ, որ քու ձեռքով ել ազատու-
թիւնս գտայ, ազատութիւն ոչ միայն բանախց, այլ Օս-
մանցուի-խալիթի զարթիէներից: Քանի որ ույտթի
վիճակից աղատւեցանք, ես բաղա եմ համարում այն
տանջանկները:

—Ել մի՛ հառաչել եղբայրութեան, հաւասա-
րութեան և սիրոյ խաչը պարզւեց, կապուտ-կողոպու-
տից պրծանք, մեր կրօնը անարագւելուց աղատւեց,
մենք անասնութիւնից մարդկութեան արժանաւոր-
ութեան աստիճանին բարձրացանք:

„ 7 “ Մարտ 1890 Թւականին.
Սեւ—Քաղաք:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԱՏՐՊԵՏԻ

ԵՐԿԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒԻ

ԱԹԱՋԻՆ Գ. 63 ՀԱՏՈՐԻ ՀԱՄԱՐ

ՊԱՏԿԵՐՆԵՐ

Տասիր պատկեր Թիւրքանա-
յինի կեսարից
զինն է 1 ր. կամ 5 դր.

ՎԻՀՖ. ԳԱՂՏՆԻՒՄ

Վիպ արկածներից
զինն 1 ր. կամ 5 դր.

ԱԼՄԱՅ

Վեպ Բարձր-Հայոց, կեսարից, երկ-
րորդ Տպագ. երկու նատոր, իրաւ-
րանչիւր նատորը 1 ր. կամ 5 դր.

ԶԱԻԱՅԻՐ

Վեպ մերջին ուսւ թոր. պատե-
րազմի, 1877—78 արկածներից
զինն է 1 ր. կամ 5 դր.

ԴՐԱՄԱՆԵՐԻ

Տակարածոյ թուրքանայերի
պատմական կեսարից
զինն է 1 ր. կամ 5 դր.

ԳՐԱՄԱՆԵՐԻ

Գրեթե լոյս կը տեսնեմ անպատճան 1904

թականի թիւրացնում:

Բաժանորդագինն է վեց հատորը միասին
4 ըուբի կամ 2 թուման, պոստի ծախսով: Ընտիր
թղթի վրա 7 ըուբի կամ 4 թուման:

Բաժանորդագրութիւնը շարունակում է մինչեւ
օդոսուսի վերջը սույն 1904 թ.

Դիմել TAURIS (PERSE) ATRPET.

ՀԵՂԻՆԱԿԻ ԵՐԿԵՐԸ ՏԱԽԻՈՒՄ Են

Վ Ի Պ Ա Կ Ա Ն

ԱԼՄԵԹԸ	ԹՐՔԱՀԱԼԵՐԻ	ԿԵՎԱՆՔԻՑ	ԵՐԿՐՈՐԴ	ՄԱԼԱԳՐՈՌԺԻՒՆ
ԵՐԿՈւ	ՀԱՄՈՐ	ԻՐԱՔԱՆՑԻՒՐԻ	ԳԲԻՆ	1 ր. 5 դռ.
ԽԵԲ - ԿԸՆՔՊԵՏ	ԹՐՔԱՀԱԼ.	ԿԵՎԱՆՔԻՑ	"	1 ր. 5 "
ՔՈՒ - ԵՎԻՆ	"	"	30 կ.	30 շՆ.
ՅԵՄԵԹԸ	"	"	30 կ.	30 շՆ.
ԺԵՄԵՆԳՆԵՐ	"	"	30 կ.	30 շՆ.
ԲԵՐՍԵՒ ԵՐԵՎԵԼ	"	"	25 կ.	25 "
ՄՈՒԼՈՒՄԵՐՁԲՆԵՐ	"	"	10 կ.	10 "
ՎԵԽԵՐԵԼՅԵՐ ԳԵՂՏՆԵՐԸ	"	"	1 ր.	5 "

ՀԱՄԻՔ ԹՂԺԻ ՎՐԱ 2 ՐՈՒԲԼԻ - ԿԱՄ 10 դՐԱՆ
ԶԱՒՀԵՐ 77-8 թ. ՄՈԱՆ ԹՈՒԲՔ ԿՈՒԿԻՑ ԱՐԿԱԾ 1 ր. 5 դռ.

ՀԱՄԻՔ ԹՂԺԻ ՎՐԱ 2 ՐՈՒԲԼԻ - ԿԱՄ 10 դՐԱՆ
ԳԵՏՈՒԵՐՆԵՐ ԹՐՔԱՀԱԼԵՐԻ ԿԵՎԱՆՔԻՑ 1 ր. 5 դռ.
ՀԱՄԻՔ ԹՂԺԻ ՎՐԱ 2 ր. 10 դռ.
ՎԻԳՇԱՆԵՐ ԹՐՔԱՀԱԼԵՐԻ ԿԵՎԱՆՔԻՑ 1 ր. 5 դռ.

ՀԱՄԻՔ ԹՂԺԻ ՎՐԱ 2 ր. - ԿԱՄ 10 դռ.

ՈՂԲԵՐԳԱԿԱՆ

ՅԱՐԵՐՆ ԵՐԵՔ ԱՐԱՐԱՏԸ. ԹՐՔԱՀԱԼ ԿԵՎԱՆ. 1 ր. 5 դռ.
ԱՅՐԵՎ ՀԵԽԴ 30 կ. 30 շՆ.

ԽԵԼԻՖԵԹ ՊԱՏՄԱԿԱՆ ՄԵԽՈՌԺԻՒՆ. 30 կ. 30 "

ԴԻՄՆԼ ԹԻԼԻՍԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱճԱՌԱՆՈՋԸ
և ԿՈՎԼԱՆԻ ՔԱՂԱՔՆԵՐԻ ՀԱՅ ԳՐԱՎԱՃԱՌԱՆԵՐԻՆ :
ԳՐԱՎԱՃԱՌԱՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՆ ՊԻՄՆԼ ՆՈՅՆԱՊէԱ.

TAURIS (Perse) ATRPET

ՈՐՈՌԸ ԿՐ ԱՐՆԻ ՄՈՎՈՐԱԿԱՆ 20 ° զԻՉՈՒՄՆ :

«Ազգային գրադարան



NL0321692

27152